ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

www.syuniacyerkir.am

Սյունյաց երկիր

№ 11 (661)
10 ՕԳՈՍՏՈՍԻ 2026Թ.

Կապանի երախտավոր ավագները, ովքեր մեզ հետ են



Դավիթ Բեկի հուշարձանի բացումը Կապանում, 8 հոկտեմբերի 1978 թ.:

ISSN 1829-3468

Իմ Կապան

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՍՔԸ՝
ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Սյունյաց սեգ լեռների գրկում
Չքնաղ Կապանն է վեր խոյանում՝
Ժայռերը անտառներ հագած,
Հսկա Խուստուփ սարին թիկնած,
Ծաղիկների փայլից շիկնած:
Ուր էլ գնամ միշտ հետ կգամ
Իմ մանկության դու՛ օթևան,
Երջանկության իմ կյանքն ես դու:

Ի՛մ Կապան, դու Սյունիքի պարծանք ու սուրբ մատյան,
Իմ Կապան, քաղաք իմ հերոսության, փառքի աղբյուր անսպառ:
Միշտ հիշենք Դավիթ-Բեկին, որ կյանքն իր զոհեց հանուն ազգի,
Եվ լինենք պատրաստ մի նոր սխրանքի, Կապա՛ն, քո դրոշի առաջ:

Չքնաղ Կապան դու միշտ կապրես
Երջանկության ու բերկրանքի մեջ,
Քանզի գործերն են քո բարի,
Նվաճումներդ՝ պանծալի:
Զավակներդ՝ կամքով արի,
Մի անաղարտ երգ են սիրո,
Երգ՝ շինարար ու բերկրալի,
Կապան քաղա՛ք, Կապան քաղա՛ք:

Մասիսի ու Սյունիքի պարծանք ու սուրբ մատյան,
Ի՛մ Կապան, քաղաք իմ հերոսության, փառքի աղբյուր անսպառ,
Միշտ հիշենք Դավիթ Բեկին, որ կյանքն իր զոհեց հանուն ազգի,
Եվ լինենք պատրաստ մի նոր սխրանքի, Կապա՛ն, քո դրոշի առաջ:

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Ձեր ապրած կյանքը հայրենի եզերքին անմնացորդ նվիրվածության օրինակ է

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
Կապան համայնքի ղեկավար

Սիրելի հայրենակիցներ

Որդիական հպարտությամբ տարիներ շարունակ հետևել ու հետևում եմ մեր բնօրրան Կապանի անկանգ և մշտահոլով ընթացքին, նրա վազքին ու վեհությանը:

Եվ միշտ էլ, միաժամանակ ու զուգահեռաբար, ինձ ուղեկցել է աներկբա այն միտքը, որ այդ ամենը կապանցիների՝ սերնդեսերունդ, ստեղծարար ու կարող ձեռքերի, հայրենատեր ոգու, նաև մտքի ու ջանքի արդյունքն է:

Այդ զգացողության մղումով է, որ գործնական խոսքս ու երախտագիտությունս եմ այսօր փոխանցում Կապան քաղաքի ու համայնքի զյուղերի երախտավորներիդ՝ ավագ սերնդից, ովքեր այսօր էլ մեզ հետ են՝ մեր նորագույն պատմության ներկայիս ոչ սովորական հանգրվանում:

Անշուշտ, խոսքիս հասցեատերը մեր համայնքին հարյուրավոր նվիրյալներն են: Բայց, հաշվի առնելով «Այունյաց երկրի» ձևաչափն ու սահմանափակ հնարավորությունները, ներկայացնում ենք ոչ բոլորին:

Այս նախաձեռնությունն իր տեսակի մեջ առաջին քայլն է՝ մեր բազմերախտ հայրենակիցներին գնահատելու վաստակած հանգստի օրերում՝ իմաստավորված անցած ճանապարհով, բեռնավորված արարումի արժեքավոր փորձով:

Նախաձեռնությունն առաջին փորձն է՝ ստեղծելու հանրագիտարանային կամ սկզբնաղբյուրային նյութերի հավաքածու այն մարդկանց մասին, որոնց անձնական ներդրմամբ, ջանքով ու ձիրքով է նաև հայ ժողովրդին ու աշխարհին ներկայանում Հայաստանի Հանրապետության հարավային մայրաքաղաքը՝ նորօրյա Կապանը:

Եվ, այդուհանդերձ, ասվածին կուզենայի ավելացնել՝ սիրելի հայրենակիցներ, Կապանա տան ավագներ, ձեր ներկայությունը ոգեշնչման ակունք է բոլորիս համար, իմաստնության աղբյուր, իսկ ձեր անցած ուղին՝ հայրենի եզերքին անմնացորդ նվիրվածության օրինակ:

Այդ դուք եք, որ շարունակելով նախորդ սերունդների, մեր փառահեղ նախնիների գործը՝ ձեր բաժին ժամանակի հոլովույթում նոր ձև ու կերպարանք եք տվել ու տալիս մեր լուսառողող քաղաքին և սահմանապահ-ամրոց գյուղերին:

Մի հանգամանք էլ. այսօրվա երիտասարդությունը ստեղծարար ձեր ընթացքի արժանավոր ժառանգորդն է: Առանց չափազանցության՝ ձեր ոգու ցոլքը փոխանցվել ու փոխանցվում է նրանց: Եվ եթե Կապանն այսօր արժանապատվորեն է իրեն դրսևորում ժամանակների ու արժեքների այս խաչմերուկում, մեր ժողովրդի համար բախտորոշ հանգրվանում, ապա դա նաև՝ ձեզանից յուրաքանչյուրի հետագծի, մարդկային և քաղաքացիական անբասիր կենսակերպի շնորհիվ:

Ուրեմն և՝ վերստին ձեզ եմ հղում իմ երախտագիտությունը:

Բոլորիդ և յուրաքանչյուրիդ՝ առողջություն, արարումի ձեր շունչը գալիք սերունդներին փոխանցելու հետևողականություն, ձեր փորձով և իմաստնությամբ մեր ընթացքը զորացնելու կարողություն:

//

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2 Իմ Կապան (երաժշտությունը և խոսքը՝ Գառնիկ Խաչատրյանի)

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

3 Ձեր ապրած կյանքը հայրենի եզերքին անմնացորդ նվիրվածության օրինակ է (Գևորգ Փարսյան)

ԽՈՍՔ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

5 Կապանա տան մեր պատվական, սիրելի և օրինյալ երախտավորներ (Մակար եպիսկոպոս Հակոբյան)

6 Կապանը՝ գեղանկարներում

10 Խոսք Կապանի մասին (Մարի Առաքելյան)

11 Էջեր Կապանի պատմությունից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏՆԵՐ

12 Բարսեղյան Էդիկ Սամսոնի

15 Նավասարդյան Ռոման Շմավոնի

ՀԻՆԳՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

17 Հայրապետյան Վլադիմիր

Ասատուրի

21 Սարգսյան Մուրազ Սարուխանի

ԿԱՊԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

23 Ղոնյան Ռոլանդ Սուրենի

28 Մկրտչյան Կարեն Սամսոնի

ԿԱՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐ

32 Կարապետյան Արմեն Սերգեյի

34 Սարուխանյան Ռադիկ Ռուբենի

ԿԱՊԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

37 Գևորգյան Սվետլանա Մամբրեի

39 Հակոբյան Լիանա Գրիգորի

41 Համբարձումյան Հասմիկ Մուշեղի

43 Քյարունց Սվետլանա Արշակի

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

44 Աբրահամյան Հենրիկ Մուշեղի

46 Բալասանյան Սեյրան Շամիրի

48 Սմբատյան Գրիշա Սերյոժայի

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

50 Մարգարյան Անդրանիկ Շմավոնի

52 Մարտիրոսյան Ռազմիկ Արշակի

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

53 Անդրեասյան Կարո Սերյոժայի

54 Մնացականյան Ժորա Արմենակի

55 Ավանեսյան Ռուզաննա Արմենակի

56 Գաբրիելյան Գրիշա Հայկի

58 Գրիգորյան Սեյրան Մխիթարի

59 Դավթյան Ռիտա Արարատի

61 Հարությունյան Լյուդվիգ Գուրգենի

62 Մկրտչյան Իրմա Սուրենի

63 Սարդարյան Մարատ Աբիստոլի

ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

64 Ավետիսյան Սեդա Արտաշեսի

65 Դունաևսկայա Օլգա Գեորգիի

67 Ղազարյան Արկադի Սուրենի

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

68 Առաքելյան Լեռնիկ Մեխակի

70 Դավթյան Գագիկ Տիգրանի

72 Դավթյան Ստեփան Անդրանիկի

73 Բալայան Վալտեր Իվանի

74 Էլչյան Հրանտ Լորիսի

76 Խաչատրյան Վահրամ Վարշամի

78 Մարտիրոսյան Սուսաննա Ասատուրի

81 Մինասյան Բորիկ Անուշավանի

83 Մինասյան Սուսաննա Շմավոնի

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

85 Թադևոսյան Ռիտա Ռուբենի

87 Հարությունյան Ռաֆիկ Արտեմի

89 Ղահրամանյան Սոս Ժորայի

90 Ջհանգիրյան Լարիսա Սերբյայի

92 Ջհանգիրյան Ֆլորիդա Միքայելի

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

94 Դանիելյան Սամվել Դանիելի

95 Նազարեթյան Նելսոն Արշավիրի

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ և ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

97 Բալասանյան Յուրի Վարշամի

99 Հարությունյան Սիլվա Միխայելի

101 Ղազարյան Ռազմիկ Պատվականի

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

102 Գևորգյան Մագդա Նիկոլայի

104 Միքայելյան Գարեգին Մովսեսի

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՉՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

106 Աթայան Օնիկ Տիգրանի

108 Բենիամինյան Յուրիկ Արտաշեսի

110 Գյունաշյան Յուրի Աշոտի

111 Կարապետյան Արարատ Սերգեյի

113 Համբարձումյան Ռաֆիկ Արտաշեսի

115 Հովհաննիսյան Էդիկ Լևոնի

116 Մարտիրոսյան Վլադիկ Շմավոնի

118 Ուստաբաշյան Արշակ Թորգոմի

120 Օհանջանյան Ալբերտ Անդրանիկի

121 Հայոց մեծերը Կապանի և կապանցիների մասին

123 Կապանը՝ լուսանկարներում

127 Կապանի նորագույն պատմություն. դրվագներ հիշարժան իրադարձություններից

131 Հալիձորի բերդը՝ Հայոց գահերեց իշխան Դավիթ Բեկի գլխավոր ամրոցը և Սյունիքի իշխանության կենտրոնը 1720-ականներին

132 Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
Գրանցման վկայական՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 16.5 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1300: Ստորագրված է տպագրության՝ 01.08.2026թ.:

ԽՈՍՔ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Կապանա տան մեր պատվական, սիրելի և օրինյալ երախտավորներ

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ
Այունյաց թեմի առաջնորդ

Ողջունում ենք ձեզ հայրական սիրով և առաջնորդական մեր օրհնությունը բերում ձեզ՝ Կապանա տան ավագ և բազմավաստակ զավակներիդ:

Ձեր կյանքի անցած ճանապարհը եղել է առ Աստված և առ հայրենիք անմնացորդ նվիրումի ու հավատարմության հաստատուն ապացույց:

Ձեր արդար վաստակով շենացել է Այունյաց աշխարհը, ամրացել են մեր ընտանիքները, զորացել է հայրենի հողը:

Ինչպես Սուրբ Գիրքն է վկայում. **«Պսակ պարծանաց ծերութիւն, եւ ի ճանապարհս արդարութեան գտանի»** (Առակաց 16:31):

Ձեր ծերությունը մեզ համար պարծանքի պսակ է, քանզի դա արդարության ճանապարհին հաստատ մնալու մասին է խոսում:

Սաղմոսերգուի աղոթքը մեր աղոթքն է ձեզ համար. **«Դու ես համբերութիւն իմ, Տէր, Տէր, յոյս իմ ի մանկութենէ իմմէ... Մի՛ ընկենուր զիս, Տէր, ի ժամանակի ծերութեան, ի պակասել զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս»** (Սաղմոս 70:5,9):

Թող Տերը, որն առաջնորդել է ձեզ կյանքի բոլոր հանգրվաններում, այսօր ևս Իր ամենազոր աջով պահպանի ու զորացնի ձեզ:

Սիրելի ավագներ, ձեր ներկայությունն օրհնություն է մեր թեմի համար, իմաստության աղբյուր, ձեր խոսքը՝ ուղղություն և խրատ, ձեր լուռ հավատարմությունը՝ օրինակ ու պատգամ:

Դուք այն արմատներն եք, որով սնվում և զորանում են մեր զավակներն ու թոռները:

Աղոթում ենք, որ Ամենակալ Տերը խաղաղություն պարգևի ձեր հոգիներին, առողջություն և զորություն՝ ձեր մարմիններին, մխիթարություն՝ ձեր սրտերին:

Թող Քրիստոսի շնորհը բնակվի ձեր մեջ, և Սուրբ Հոգու մխիթարությունը լիացնի ձեր օրերը հույսով ու լույսով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ: Ամեն

//

ԿԱՊԱՆԸ՝ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Փանոս Թերլեմեզյան,
«Խուստուփ»

Փանոս Թերլեմեզյան,
«Խուստուփ լեռը»
31,7x49,8սմ,
կտավ, յուղաներկ

Փանոս Թերլեմեզյան,
Ղափան, 1929թ.

ԿԱՊԱՆԸ՝ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Հրանտ Էլչյան, *«Շիկահող», կտավ, յուղաներկ, 50x55, 2015 թ.*

Ռուբեն Կոստանդյան (Ուբակ), *«Հին Կապան», կտավ, յուղաներկ, 150 X120, 2011 թ.*

Հրանտ Էլչյան, *«Ձմեռը Կապանում», կտավ, յուղաներկ, 40X50, 2010 թ.*

Վահրամ Խաչատրյան, *«Հին Կապան. 1910 թ.», կտավ, յուղաներկ, 70X60, 2018 թ.*

ԿԱՊԱՆԸ՝ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Լորիկ Մինասյան,
«Խաչմերուկ սրճարանը», կտավ, յուղաներկ, 40x60, 2019 թ.



Վահրամ Խաչատրյան,
«Բաղաբուրջ գյուղը», կտավ, յուղաներկ, 60X44, 2004 թ.

Լորիկ Մինասյան,
«Հալիձորը», կտավ, յուղաներկ, 60x70, 2017 թ.

ԿԱՊԱՆԸ՝ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Հրանտ Դանիելյան,
«Կարապետի լիճ», կտավ, յուղաներկ, 65x46, 2021 թ.

Հրանտ Դանիելյան,
«Խուստուփ սար», կտավ, յուղաներկ, 78x60, 2021 թ.

Հրանտ Էլչյան,
«Գեղանուշ», կտավ, յուղաներկ, 60x65, 2013 թ.

ԽՈՍՔ ԿԱՊԱՆԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կապանիս ու Խուստուփիս

Մի ոստան ունեմ, որ միշտ է գերում.
Ծվարած հյուլե՝ լեռնապարերում,
Անլուր աշխարհի աչքերից հեռու,
Ուր Ողջին լռին ափերն է քերում...

Կապանում ես Խուստուփ ունեմ,
Որին միշտ կրում եմ ներսում՝
Իմ հոգու ծալքերում խորունկ,
Իմ սրտի զարկերում խոսուն:

Խոսում եմ՝ խոսում է ինձ հետ,
Հայացքով՝ իմ հալը կիսում,
Թվում է, թե մոտ է գալիս
Որպես հույս, որպես թանկ հուզում:

Նայում եմ՝ նայել է տալիս,
Իր մասին գրել է տալիս,
Հրճվանք-հիացք խառնվում են իրար,
Հրճվանքից՝ լացելս է գալիս...
Թվում է՝ նվեր է տալիս,
Թռչելու թևեր է տալիս,
Ինքս ինձ՝ հաղթելու հնար,
Հավատի սարեր է տալիս...

Ուզում եմ ապրել հավիտյան,
Ու նորից ծնվելս է գալիս,
Եվ ցավը փախուստ է տալիս,
Իսկ դարդը՝ գլուխը՝ պատին:

Հոգսն էլ դարդին վրադիր
Հանձնում եմ «կարճողի» դատին –
Վստահ, որ էլ չեն ընդհատի
Երթը՝ ոչ գոյիս, ոչ էլ հավատիս...

Իր մտքին դարեր են գալիս,
Իմ խինդը լափին է տալիս,
Հեռահար հայացքի ներքո
Հավերժը ծնկի է գալիս...

Աներկբա իմ Սեր, Լեռ իմ վեհանիստ,
Ինձ պահող Հավատ,
Իմ հզոր Խարիսխ...

Հզոր Կապան

Հզոր Կապան, իմ հաղթական,
Խուստուփ լեռան լանջին թիկնած,
Ողջի գետի շառաչի հետ՝
Արցախ– մարտում սուրդ շողաց:
Որդիքը քո հայրենատան,
Քաջ Նժդեհի շնչով վառված,
Թուՙնդ զարկեցին նեռի ճակտին
Ու տուն դարձան հերոսացած:

Դառնամ ու քեզ փառաբանեմ
Մատաղ սերունդ նվիրական,
Մրցույթներում՝ միշտ հաղթական.
Պարծանքն եք դուք Կապանատան.
Յոթ բերդերի քաղաք Կապան,
Միշտ նորօրյա ու պատմական
Խուստուփի պես՝ հավերժական
Դու՝ մեզ սատար, մենք՝ քեզ պաշտպան:

Ինչ որ զենքով չենք նվաճել,
Մենք արվեստով պիտ նվաճենք,
Որ շենանա այունաց ոստան,
Հզոր Կապան, մեր հաղթական:

ԿԱՊԱՆ, իմ անուշ ծննդավայր

Հայրենի՛ երկիր, եզե՛րք հայրենի,
Կապանա աշխարհ, իմ սեր բարձրագույն, իմ սեր անթերի
Խոսքեր չեն սրանք կարոտի պահի,
Այլ ինքնաթարգման շշուկ ու շշունջ,
Որ մրմնջում եմ աղոթքի պահին՝
Որպես ինքնաբավ մենախոսություն.
Անունկնդիր ու անհանդիսատես,
Առաջին սիրո դող ու թրթիռով ասված խոսքի՛ պես՝
Երկյուղածությամբ ու ակնածանքով,
Որ չանէանա, չցնդի հանկարծ
Իմ սերը խորունկ ու հավատն առ քեզ...

Կապանատուՙն իմ, ամենից առաջ՝ հոգուս շքերթն ես,
Իմ խորունկ շերտն ես, ինձ պահող հենքն ես,
Ծնող մորս պես՝ իմ թաք ու կենտն ես, իմ կենսակերպն ես...
Իմ մեջքին՝ թիկունք, անառիկ բերդն ես,
Իմ Խուստուփ լեռն ես, իմ Ողջի գետն ես,
Իմ Դավիթ Բեկն ես, իմ Բաղաբերդն ես,
Նաև՝ ինձ զգոն, հաստատուն պահող այն խորունկ վերքն ես,
Որից ամրանում, առաջ են մղվում. դու իմ վերելքն ես...

Իսկ ես նվիրյալ հերթական մեկն եմ,
Քո բանաստեղծն եմ, դուստրդ այունաց,
Առանց քեզ մերկ եմ, առանց քեզ՝ մրսած,
Գրկիր ինձ, և թող ես էլ քեզ գրկեմ իմ սրտի ուզած–
Իմ Կապան յա՛ռն ես, կապանա– երգն ես,
Այլապես՝ ես քեզ սիրահարվածս,
Ես քեզ հավիտյան սիրահարվածս,
Առանց քեզ ինչպե՞ս իմ սերը չափեմ,
Առանց քեզ ումո՞վ իմ սերը չափեմ,
Դու չափ էլ չունես, ի՛մ անչափելի,
Իմ հոգու համար՝ դու ՏԻԵԶԵՐՔ ես...

ԷՋԵՐ ԿԱՊԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կապանի ծննդյան վկայագիրը

առաջին գրավոր հիշատակությունը

...Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ձուկ շնորհել:

Տեսիլքով մի լուսավոր տղամարդ երևաց, որ քայլում էր գետափով, գավազանը կախել էր ջուրը, եւ գավազանի ծայրից դուրս էին գալիս ձկների անբավ ու անհամար խմբեր. ինքն էլ նրան բացատրում էր որսի հանգամանքները: Եվ այսպես վանքին արտոնվեց գետի ձուկ որսալ:

Մ.Թ. 5-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ, ԸՍՏ ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԻ

Կապան քաղաքի նոր ծնունդը՝ 1938 թ. հոկտեմբերի 1

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1938 թ. հոկտեմբերի 1-ի հրամանագրով՝ ստորագրված նախագահության նախագահ Մ. Պապյանի եւ նախագահության քարտուղարի պաշտոնակատար Ռ. Գյանջեցյանի կողմից, Ղափանի շրջանի Ղափան բանվորական ավանը փոխակերպվեց քաղաքի՝ պահպանելով նախկին անունը: Ավելի վաղ՝ 1928 թ. հուլիսի 26-ին, Հայաստանի կենտգործկոմի նախագահությունը մերժել էր Զանգեզուրի գավգործկոմի եւ Ղափանի գործկոմի առաջարկը՝ Ղափանի գավառակը եւ կենտրոնը Մարտունավան վերանվանելու մասին: Իսկ ահա 1963 թ. հունվարի 12-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության որոշմամբ՝ ստորագրված ՀՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Շ. Առուշանյանի եւ Նախագահության քարտուղար Ա. Գալստյանի կողմից, շրջանային ենթակայության Ղափան քաղաքը դասվում է հանրապետական կատեգորիայի քաղաքների շարքին:

1930 թ. սեպտեմբերի 9-ից մինչեւ 1995 թ. դեկտեմբերի 5-ը Ղափանը համանուն շրջանի վարչական կենտրոնն էր: Այդ մասին իմանում ենք ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահության **«ՀՍԽՀ գավառները վերացնելու հետեւանքով նոր շրջանների կազմակերպման հիմնական սկզբունքների մասին» որոշումից:**

1991 թ. Ղափանը վերանվանվել է Կապան:

1995 թ. դեկտեմբերի 4-ից Կապանը Սյունիքի մարզկենտրոնն է: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», ըստ որի՝ Կապանի, Գորիսի, Սիսիանի եւ Մեղրու նախկին վարչական շրջանների հիման վրա կազմավորվեց Սյունիքի մարզը: //

Ղափան

Երկնքին մոտ - անտառներից
Դեղին լեռներ գահավիժող,
Նրանց դեղին պաստառները
Ես տեսնում եմ – թե՞ արթմնի, թե՞
երազում:

Դեղին գույները չեն մեղմվում
Աշնան ճերմակ սավաններից,
Որ հասել են լեռնակողեր:
Լվացքատան տոթ կա այստեղ
Ու սավաններ շոյող քամի:

Քաղաք, քարե քո պատերի,
Քո ուղղաձիգ սահմանների
Ներսն եմ թողել – ինձ ու սերս:

Երկրիս քարե սրտում – քաղաք:
Քաղաք – որ ձույլ երակներով
Ամուր կառչել է այս երկրի
Առողջ սրտին – մոլիբդենե եղունգներով –
Ու պղնձե կաթ է ծծում – կաթ առնական:

Իմ մանկության քաղաքն ահա -
Խստադեմ է ու մանկադեմ:
Եվ պղնձե մարմին ունի – կանաչ մազեր:
Երկու ճամփա գիտի միայն – որ
մանկանը
Հեռացնում են – տանում հեռու,
Այլ աշխարհներ –
Մի զույգ այրվող, երկաթյա աչք,
Նաեւ մի հին,
Մի տաք երկինք,

Որի աստղերը ցերեկով են երեւում:
Իսկ գիշերը - դեղին գույներն
Արտացոլվում են լեռներից –
Թե՞ երկնքից:

Քո երկինքը կայծակներ ու օրհնանքներ է
հեղում –
Կախված ծեր Խուստուփի մի հայացքից:

Ես հիշում եմ լեռն առնական
Ու ծածկում եմ հոգիս մի տաք
Կափարիչով,
Որ դրված էր իմ քաղաքին,
Որպես տանիք, որպես երկինք,
Որպես սահման –
Իմ սիրո եւ հիշողության:

ՌՈՄԻԿ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏՆԵՐ

Բարսեղյան Էդիկ Սամսոնի

Նախ հիշենք գեներալ-լեյտենանտ Էդիկ Սամսոնի Բարսեղյանի գործունեությունն Արցախյան 1-ին հերոսամարտում:

Պատերազմական ամենադժվարին շրջանում՝ 1990-94 թթ., ոչ միայն Կապանի ներքին գործերի բաժնի ղեկավարն էր, այլև Կապանի արտակարգ դրության շրջանի պարետը: Եվ պատասխանատու էր տարածաշրջանի բնակչության անվտանգության, հայ-ադրբեջանական շփման այդ հատվածի անխոցելիության համար:

Շրջանի ոստիկանական ուժերն էլ այնտեղ էին, որտեղ առավել լարված էր, որտեղ ինքնապաշտպանական ուժերը կենաց և մահու կռիվ էին տալիս:

Հիրավի, հերոսական օրեր էին... Բազմաթիվ հրամանատարների մեջ այդ գոյակռվում տեսանք նախորդ բոլոր ժամանակներից եկող հայոց զորական կամքի և հմտության նորօրյա հառնումը:

Էդիկ Բարսեղյանն այն արժանավորներից էր և այն հրամանատարներից, ովքեր 1990-ականներին Սյունիքում, որ թիկունքն էր Արցախ աշխարհի, մեր առջև բացեցին հաղթանակի ու ցնծության հրապարակը:

Ես այդ ժամանակ Գորիսի շրջանի «Զանգեզուր» թերթի խմբագիրն էի և Էդիկ Բարսեղյանի մասին լսել էի հեռվանց: Սակայն երկու անգամ վիճակվեց Գորիսի շրջանը ներկայացնող Ռոբերտ Ալեքսանյանի հետ մասնակցել Ադրբեջանի՝ Սյունիքի հարակից շրջանների ղեկավարների, զինված ջոկատների հրամանատարների հետ բանակցություններին (Դավիթբեկ և Եղվարդ գյուղերի սահմանամերձում), որտեղ ներկա էր նաև ինքը՝ Կապանի արտակարգ շրջանի պարետ Էդիկ Բարսեղյանը: Եվ անհնար է մոռանալ, թե «ժողովրդական դիվանագիտության» այդ հարթակում ինչպիսի համառությամբ և հետևողականությամբ էր պայքարում՝ տվյալ պահին հայկական կողմին մտահոգող հարցերի շուրջ ողջամիտ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար:

Այդպիսի բազում դիպվածները, սահմանային բախումների ընթացքում նրա դրսևորած վարքը թույլ են տալիս ասելու, որ հայոց հողը, հայոց պետությունն ու պետականությունը պաշտամունք դարձած հասկացություններ էին Էդիկ Բարսեղյանի համար:

Պատահական չէ, որ Սպարապետ Վազգեն Սարգսյանը բարձր էր գնահատում և կարևորում նրա կարծիքն ու փորձը Սյունիքի ինքնապաշտպանության կազմակերպման հարցերում:

* * *

Էդիկ Բարսեղյանի կյանքի մի հատված անցել է ներքին գործերի (ապա և ոստիկանության) համակարգում:

Թեև սկզբնապես այլ նախասիրություն ուներ և ծննդավայրի դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակեց Գորիսի գյուղտեխնիկումի մեխանիզացիայի բաժնում (1962-67 թթ.), սակայն խորհրդային բանակում ծառայելուց հետո (1967-69 թթ.) նախընտրեց ներքին գործերի համակարգը:

Այդ համակարգում ծառայելուն զուգահեռ՝ 1974-79 թթ., սովորեց ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ակադեմիայում:

Ոստիկանական համակարգում նրա անբասիր ծառայության մասին է վկայում իրողությունը, որ տարիների ընթացքում շարքային ծառայողից հասավ Կապանի ՆԳ բաժնի պետի (1990-95 թթ.), ապա Արմավիրի տարածաշրջանի ՆԳ բաժնի պետի (1995-96 թթ.), այնուհետև Սյունիքի մարզի ՆԳ վարչության պետի պաշտոններին:

Կապանի ոստիկանությունը (դրանից առաջ՝ Կապանի պետավտոտեսչությունը) գլխավորելու ժամանակաշրջանին առնչվող մի դրվագ... 1988 թ. Կապանն ու կապանցիները հայտնվեցին միջէթնիկ սրացող հարաբերությունների հորձանուտում: Ըստ ժամանակակիցների՝ կապանյան հանրահավաքներում (հատկապես սկզբնական փուլում) ադրբեջանցիների հասցեին թշնամական ու նվաստացնող արտահայտություններ չէին հնչում: Չգրանցվեց ադրբեջանցիների հանդեպ բռնության որևէ դեպք: Կապանի շրջանից հեռացող ադրբեջանցիները հնարավորություն ունեին իրենց հետ տանելու նաև սեփական ունեցվածքը: Դա, իհարկե, պայմանավորված էր կապանցիների հանդուրժողական էությամբ, բայց և չափազանց կարևոր էր շրջանի միլիցիայի դերը:

Այդ ամենի հետ մեկտեղ Կապանն ընդունում էր Ադրբեջանից բռնագաղթվող մոտ հինգ հազար հայի...

1997-ից Էդիկ Բարսեղյանի փորձը, գիտելիքներն ու ներուժն օգտագործվեց հանրապետության մասշտաբով: Երեք տարի գլխավորեց Հայաստանի Հանրապետության պետավտոտեսչությունը, իսկ 2000 թ. մարտից ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալն էր:

Տարիներ անց նորից աշխատեց հանրապետության ոստիկանական համակարգում. 2013-14 թթ. Հայաստանի Հանրապետության ոստիկանապետի

գլխավոր խորհրդականն էր:

Ներքին գործերի և ոստիկանության համակարգում նրա արգասավոր ծառայության մասին է վկայում մեկ այլ փաստ ևս. տարիների ընթացքում հասավ գեներալ-մայորի (2000 թ.), ապա գեներալ-լեյտենանտի (2006 թ.) կոչման:

* * *

Էդիկ Բարսեղյանը 2004 թ. մարտի 26-ից մինչև 2010 թ. հուլիսի 16-ը գլխավորեց Հայաստանի փրկարար ծառայությունը, որն այդ ընթացքում քանիցս կառուցվածքային փոփոխության ենթարկվեց՝ դրանից բխող պաշտոնի անվան փոփոխություններով:

Նախ՝ ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության պետն էր:

2006 թ. մարտի 2-ին նշանակվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն:

2008 թ. կրկին փոխվեց կառույցի կարգավիճակը, որի արդյունքում նշանակվեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրեն:

2009 թ. մայիսի 14-ից, ՀՀ վարչապետի որոշմամբ, միաժամանակ կատարել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալի պարտականությունները:

Այդ պաշտոնները վարեց մինչև 2010 թ. հուլիսի 16-ը:

Ոլորտի մի շարք մասնագետների վկայությամբ՝ Էդիկ Բարսեղյանի գործունեության շնորհիվ 2004-2010 թթ. արտակարգ իրավիճակների և հատկապես

ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի հետ

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի և ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հետ

փրկարար ծառայության համակարգում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ:

Այդ ամենի համար է նաև, որ 2009-ին արժանացավ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալի:

* * *

Էդիկ Բարսեղյանի կենսագրությունն ուղղակիորեն կապված է Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու կառուցման հետ:

Դեռևս 1996-ի նոյեմբերի 26-ին էր կատարվել եկեղեցու հիմնարկեքը:

Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսն էր կատարել հիմնօրհնեքը:

Այդ օրն էր, որ օծվեցին Քրիստոսի 12 առաքյալների և աստվածաշնչյան չորս ավետարանիչների անունները խորհրդանշող քարերը:

Այդ օրվա նշանակությունը յուրովի իմաստավորեց Գարեգին Ա կաթողիկոսը. **«Այսօր երկինք և երկիր միանալու են, և մեր հոգիներից բխած հավատքը պիտի բարձրանա, շոշափելի արտահայտություն գտնի այս եկեղեցու կառուցումով»:**

Սյունիքի առաջին մարզպետ Սուրեն Աբրահամյանի և Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ վարդապետ Մկրտչյանի նախաձեռնությամբ սկսած աստվածահաճո այդ գործը 1998-ից շարունակեց Սյունիքի մարզպետ Ռոման Նավասարդյանը, իսկ 2000-ից՝ Սյունիքի նոր մարզպետ Էդիկ Բարսեղյանը:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի աջակցությամբ հսկայածավալ աշխատանք կատարվեց կառուցվող այդ տաճարում:

Եվ 2001 թ. դեկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու օծման արարողությունը (ճարտարապետ՝ Արծրուն Գալիկյան):

Եկեղեցու օծումը կատարվեց Գարեգին երկրորդ ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ:

Էդիկ Բարսեղյանն էլ իր խոսքում արժանին մատուցեց կապանցիների վաղեմի երազանքն իրականացրած անձանց և կազմակերպություններին:

* * *

2000 թվականից Էդիկ Բարսեղյանի կյանքում մի նոր փուլ սկսվեց:

Երկրի ղեկավարությունը նպատակահարմար գտավ նրա ուժերն օգտագործել տարածքային կառավարման ոլորտում:

Օգոստոսի 17-ին նշանակվեց Սյունիքի մարզպետ՝ այդ պաշտոնը վարելով մինչև 2004 թ. մարտի 25-ը:

Առաջին իսկ օրերից երևաց պետական այրին բնորոշ նրա կազմակերպչական ունակությունները, երկրամասը զորացնելու պատրաստակամությունը:

Տեղին ենք համարում հիշել նրա աշխատաոճի ու վարքագծի մի քանի բնորոշիչ:

Առաջնահերթ խնդիր հռչակեց մարզում քաղաքացիական համերաշխության ապահովումը: Հարաբերվում էր բոլոր կուսակցությունների, հասարակական ուժերի հետ: Խորապես համոզված էր, որ ամենատարբեր գաղափարներ դավանելով հանդերձ՝ բոլորն առնվազն մի քանի հարցում ընդհանուր շահեր ունեն՝ մեր նոր պետության հզորացում, հետպատերազմյան Սյունիքի հիմնախնդիրների լուծում և առհասարակ Սյունիքի ամրապնդում բոլոր առումներով:

Ակտիվ կապը հասարակության հետ նրա ուշարժան հատկանիշներից էր և նրա հեղինակության գլխավոր ակունքը: Չկար շաբաթ, որ չայցելեր մարզի որևէ գյուղ, աշխատավորական որևէ կոլեկտիվ: Ընդ որում՝ նախապես վեր էր հանում տվյալ բնակավայրի, տվյալ կազմակերպության հիմնախնդիրները, նախորդ այցելությունից հետո կատարած-չկատարածը: Պատահական չէ, որ մարզի բնակավայրերում նրան ընդունում էին սիրով ու ջերմությամբ, անկեղծորեն ներկայացնում իրենց մտահոգությունները:

Այսօր կարելի է թվարկել հարցերի այն մեծ շարքը, որ նրա պաշտոնավարման ընթացքում լուծվեցին տարածաշրջանի գյուղերում:

Մեկ ուրիշ բնորոշիչ ևս՝ օրվա բոլոր ժամերին հասանելի էր մարդկանց, հատկապես շարքային մարդկանց: Հեռավոր բնակավայրերից մարզպետարան այցելած մարդիկ (առանց ձևականությունների) արժանանում էին մարզպետի ընդունելությանը, ով էլ խորանում էր նրանց հոգսերի մեջ:

Մի խոսքով՝ մարզպետարանը դարձել էր բոլոր սյունեցիներինը:

Աշխատանքի այդ ոճը նրան բնորոշ էր նաև Արարատի մարզը գլխավորելիս (15 հուլիսի 2010 թ. – 10 հոկտեմբերի 2013 թ.):

* * *

Էդիկ Բարսեղյանի կյանքի ու գործունեության ընթացքում արձանագրված հաջողությունները, կատարված մնայուն գործերը, անտարակույս, պայմանավորված են եղել նաև ընտանիքի աջակցությամբ:

Ամուսնացել է 1970 թվականին՝ Ռոզա Հայրապետյանի հետ (ծագումով՝ Կապանի շրջանի Խլաթաղ գյուղից):

Ունեցել են երեք զավակ:

Սպարապետ Վազգեն Սարգսյանի և ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ Միքայել Խոյլունցի հետ

Սիսիանի քարերի գործարանում, ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ

Տոհմը Գորիսի տարածաշրջանի Տանձատափ գյուղից է: 1920-ականներին տեղափոխվել և հանգրվանել է Կապանի տարածաշրջանի Աղվանի (Խողվանի) գյուղում, որտեղ էլ 1947 թ. հունիսի 10-ին ծնվել է Էդիկ Բարսեղյանը (ընտանիքում չորս զավակ էին):

Ընտանիքի հոր՝ Սամսոն Բարսեղյանի մասին, ով շուրջ երեք տասնամյակ հայրենի Աղվանի գյուղի (նաև Տանձավերի հետ համատեղ) տնտեսության ղեկավարն էր, հետաքրքիր ու դրվատանքով լեցուն զրույցներ են փոխանցում ժամանակակիցները. ազնիվ ու ազնվական մարդ էր:

Պատմում են նաև՝ տարածաշրջան այցելող նշանավոր մարդիկ հաճախ հյուրընկալվում էին Սամսոն Բարսեղյանի օջախում: Հյուրընկալ այդ օջախում եղել է նաև Հայոց մեծ գուսան Աշոտը: Համագյուղացիների վկայությամբ՝ Գուսանը Սամսոն Բարսեղյանի հետ հաջորդ օրը շրջագայել է մոտակա սարերում՝ մինչև Ինջաբել ու Տափասար, որի արդյունքում ծնվել են Գուսանի մի քանի ստեղծագործություններ:

Եվ ուրեմն՝ նախնիներից եկող որակներն են, որ ավելի բյուրեղացած դարձել են Էդիկ Բարսեղյանի մարդկային նկարագրի բնորոշիչներ՝ ասպետականություն, պարզություն, բարություն, իրականության հետ առերեսվելու քաջություն, ընկերասիրություն:

* * *

2014 թվականից անցել է հանգստի, բայց նրա վարքուբարքի շատ-շատ հատկանիշներ (հատկապես մարդկային, ընկերական հարաբերությունների, հայրենի եզերքին նվիրված լինելու և հայրենակիցների հանդեպ ուշադիր լինելու տեսակետից) ավելի ցայտուն են դարձել:

Թեև բնակվում է մայրաքաղաքում, բայց (նաև որպես Կապան համայնքի պատվավոր քաղաքացի) նրան տեսնում ենք մարզկենտրոնի գրեթե բոլոր նշանակալից միջոցառումներին:

Տեսնում ենք համերկրացիների կողքին՝ հատկապես դժվարին պահերին, երբ մարդկանց կարեկցելու, նեցուկ լինելու կարիք է լինում:

Տեսնում ենք հանրային ամենատարբեր վայրերում՝ հայրենակիցների հետ շփվելիս: Եվ ամենուր նրա ներկայությունը սպասված է...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏՆԵՐ

Նավասարդյան Ռոման Շմավոնի

Կապանի և Քաջարանի պատվավոր քաղաքացի Ռոման Նավասարդյանը տնտեսական ղեկավարի երկար ճանապարհ է անցել:

Ծնվել է 1947 թ. հունվարի 15-ին Կապանի Եղվարդ գյուղում, ծառայողի ընտանիքում:

1954-1965 թթ. սովորել և ավարտել է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցը:

Դպրոցական տարիներին հրապուրված էր ֆուտբոլով: Պաշտպանում էր Ղափանի «Լեռնագործ» ֆուտբոլային թիմի դարպասը: 1963 թվականին թիմի հետ նվաճել է Հայաստանի ֆուտբոլի գավաթը:

1965-ին ընդունվել է Լենինգրադի լեռնային ինստիտուտի էլեկտրամեխանիկական ֆակուլտետը, ավարտել 1970 թ.՝ ստանալով լեռնային ինժեներ-մեխանիկի որակավորում:

Ինստիտուտն ավարտելուց հետո գործողվել է աշխատանքի Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատ: Աշխատանքային գործունեությունը սկսել է կոմբինատի ճոպանուղում՝ հերթափոխի էլեկտրիկ, այնուհետև՝ վարպետ:

1972-1974 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո նորից աշխատանքի է անցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ ճոպանուղու գլխավոր էներգետիկ:

1979-ից աշխատել է Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայի Քաջարանի նոր կազմակերպվող մասնաճյուղի տնօրեն, 1982-ին նշանակվել է Զանգեզուրի պ/մ կոմբինատի փոխտնօրեն, իսկ 1985-ից գլխավոր ինժեներ:

Գլխավոր ինժեներ եղած տարիները կոմբինատի գործունեության կայացման ու հետագա շարունակական առաջընթացի համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, հանրապետության ու համաշխարհային տնտեսության մեջ դանդաղ, բայց հաստատուն ներգրավման ժամանակաշրջան էին:

1990 թ. ավարտել է ԽՍՀՄ նախարարների խորհրդին կից ժողովրդական տնտեսության ակադեմիան:

Մինչև 1998 թ. մայիսի 7-ը, երբ նշանակվեց Սյունիքի մարզպետ, եղել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն (1994-1998 թթ.):

Նրա պաշտոնավարման օրոք կոմբինատն ինտեգրվեց միջազգային տնտեսությանը:

Հայաստանում նա առաջինն արժանացավ «Ոսկե գլոբուս», «Ոսկե աստղ» մրցանակների: Իսկ դրանց հասնելու համար անհրաժեշտ էին ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, կառավարման փորձ և հմտություն, այլ նաև հեռատեսություն, կամք ու սառնասրտություն, բարդ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, անվրեպ գործելու կարողություն:

Կոմբինատի տնօրենը բարեբախտաբար ուներ այդ հատկանիշները…

1998-2000 թթ. եղել է Սյունիքի մարզպետ: 2000 թվականին կամավոր հրաժարվել է այդ պաշտոնից:

Լեռնահանքային արդյունաբերության զարգացման գործում ունեցած ակնառու հաջողությունների, Կապան համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանն ակտիվ աջակցություն և օգնություն ցուցաբերելու, հասարակական-քաղաքական բեղմնավոր գործունեության համար արժանացել է «Կապան համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանը:

Նա «Կապանի բիզնեսի օժանդակման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահն էր:

Մարզպետի պաշտոնը թողնելուց հետո զբաղվել է մոլիբդենի խտանյութի վերամշակման հիմնախնդիրներով, ուներ մոլիբդենի վերամշակման արտոնագիր:

Ռոման Նավասարդյանն ունի երկու զավակ, չորս թոռ. որդին՝ Վիլեն Նավասարդյանը փաստաբան է, իրավաբանական գիտությունների թեկնածու, բնակվում է Սանկտ Պետերբուրգում: Դուստրը՝ Նարինեն, բժշկուհի է: Կինը՝ Իրինա Ստեփանյանը, մանկական բժշկուհի էր, այժմ՝ կենսաթոշակառու:

* * *

Ռոման Նավասարդյանի մասին շատ թե քիչ հանգամանալից տեղեկություններ ենք ստանում նաև իր իսկ հարցազրույցից:

Ահա՝ «Ծնունդով Եղվարդ գյուղից եմ, տեղի բնակիչներն այդտեղ են եկել

ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանի և «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի հետ

և հաստատվել Պարսկաստանի Ղարադաղի շրջանից (հին հայկական աղբյուրներում հիշատակվում է որպես Իրանի տարածքում կազմավորված առաջին հայաշատ գավառ): Մայրս՝ Արաքսյա Սևաչյանը, վաստակաշատ մանկավարժ էր: Ասեմ, որ աշակերտներին սեփական երեխաներից չէր տարբերում, ֆանատորեն սիրում էր իր աշխատանքը: Հայրս Մեծ հայրենականի հաշմանդամ էր, երեք եղբայրն էլ պատերազմի մասնակից էին, ցավոք պատերազմից վերադարձել են երկուսը:

Պապս գյուղի կոլտնտեսության նախագահն էր: 1946 թվականին՝ Հայրենական մեծ պատերազմից հետո՝ սովի տարիներին, գյուղի պահեստներից հանել է հացահատիկի սերմացուն և որոշ մասը բաժանել գյուղացիներին, ինչի համար էլ պատասխանատվության է ենթարկվել՝ 10 տարի ազատազրկմամբ: Իր ճակատագրից երբևէ չբողոքող, չտրտնջացող մարդ էր: Երբևէ չբարձրաձայնեց, որ պատժվել է սովամահ լինող մարդկանց փրկելու համար, կամ, որ երեք տղան պատերազմի բովով են անցել: Այսքանը՝ իմ գերդաստանի մասին:

Իմ պատանեկության տարիներին բոլոր բակերում սպորտով զբաղվող պատանիների և երիտասարդների թիվն օրեցօր էր աճում...

Ես շատ սիրեցի ֆուտբոլը, 16 տարեկանում՝ 10-րդ ավարտական դասարանում, «Լեռնագործ» ֆուտբոլային թիմի դարպասապահն էի: Եվ 1963 թվականին՝ առաջին անգամ, մեր թիմը նվաճեց Հայաստանի գավաթը:

Հետագայում ևս իմ կյանքում շատ մեծ դեր է ունեցել սպորտը. այն պայքարել էր սովորեցնում, անխնա աշխատել և արդյունքի հասնել:

Մեզանից շատերը սպորտում հաջողության հասնելու մեծ պոտենցիալ ունեին, սակայն խորհրդային ժամանակներին բնորոշ՝ առաջնային էր կրթությունը, սպորտն ուղղակի հոբբի էր, որ սովորեցրեց ձգտել և հասնել առավելագույնի՝ կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Աշխատանքային առաջին քայլերս կոմբինատում էր...

Լենինգրադում բուհն ավարտելուց հետո գործուղվեցի Քաջարանի կոմբինատ: Ծնողներս Կապանում էին, և ես մտադիր էի հետ գալ, աշխատել, նրանց մոտ լինել:

Սկսեցի բանվորությունից. Էլեկտրիկ, հերթափոխի պետ, ապա՝ էլեկտրամեխանիկ, գլխավոր էներգետիկ: Քաջարանում կանանց աշխատանքով ապահովելու խնդիր կար, առաջարկ ստացա համակարգել տրիկոտաժի ֆաբրիկայի աշխատանքները: Այնուհետև կրկին կոմբինատ՝ փոխտնօրեն, գլխավոր ինժեներ, ապա՝ կոմբինատի տնօրեն:

ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ճանաչված պետական գործիչ Վլադիմիր Մովսիսյանի և Սյունիքի 1-ին մարզպետ Սուրեն Աբրահամյանի հետ

Ես համարում եմ, որ իմ կարիերայի հիմնական «մեղավորները» եղել են կոմբինատի մարդիկ՝ թե մասնագիտական և թե մարդկային առումներով: Նրանք այնքան նվիրված էին ձեռնարկությանը, որ մնում էր նույն նվիրվածությամբ աշխատել ու ղեկավարել: Այդպիսի միջավայրում, բնականաբար, հաճելի էր աշխատանքը, որտեղ բարեխղճությունն ու նվիրումը վեր էին ամեն բանից. այդ սկզբունքները կոմբինատի ստեղծման ակունքներից են եկել:

Հավանաբար լսել եք կոմբինատի ճոպանուղու տեղամասի մասին, որն ապամոնտաժվեց հետագայում: Այն հանքաքարն օդային ճանապարհով տեղափոխում էր ջարդման տեղամաս:

Այդտեղ աշխատանքը, ինչպես և մյուս արտադրական օբյեկտներում, ուշադրություն ու անվտանգության կանոնների հստակ պահպանում էր պահանջում: Վթարի դեպքում, երբ ճոպանուղին կանգնում էր, արտադրական պրոցեսը խաթարվում էր: Գիշեր-ցերեկ բանվոր ու ղեկավար անքուն մնալով՝ արտադրական պրոցեսի դժվարություններն էին հաղթահարում՝ ընդհանուր գործն առաջնային համարելով:

Եվ ողջ իմ պրակտիկայում մի անգամ էլ չլսեցի, որ վարձատրություն պահանջեն հավելյալ աշխատաժամանակի դիմաց: Նման մարդկանց հետ ճանապարհ անցնելը հաճելի էր և պարտավորեցնող:

Աշխատանքային հաջողությունների իմ պատկերացումը...

Հաջողության գրավականը մասնագետ լինելն է: Միջակությունը յուրաքանչյուր աշխատանքում ընդունելի չէ, այն տանում է կործանման կամ հակառակ դեպքում՝ տեղում դոփելուն:

Երկրորդ կարևորագույն պայմանն աշխատանքդ սիրելն է: Եվ դա վերաբերում է ցանկացած ոլորտի: Սիրել աշխատանքդ և նվիրվել. այս պարագայում գործում է բումերանգի էֆեկտը:

Հինգ տարի եղել եմ կոմբինատի փոխտնօրեն, տասը տարի գլխավոր ինժեներ, գրեթե հինգ տարի՝ կոմբինատի տնօրեն: Աշխատանքային առումով բավարարվածության զգացողություն ունեցել եմ միայն գլխավոր ինժեներ աշխատելու տարիներին: Ասեմ ինչու՝ արտադրությունում անբասիր ու մաքուր մարդկանց հետ ես աշխատում: Դա այն միջավայրն է, որտեղ երբեք քո խղճի դեմ ոչինչ չես անում:

1990-ականներին, երբ բարդ տարիներ էին կոմբինատի և հանրապետության համար առհասարակ, հաջողվեց «փրկել» կոմբինատը, որոշակի պարապուրդից հետո շատ կարճ ժամանակամիջոցում վերագործարկել այն...

Հսկա ձեռնարկությունը պարապուրդի տարիներին օր ու գիշեր հսկել են բանվորները: Եվ կատարել են գործը՝ այնպիսի պատասխանատվությամբ, որ երկու տարի տևած պարապուրդից հետո կարողացանք կոմբինատը վերագործարկել մեկ շաբաթում:

Իհարկե, արտադրական հսկան ղեկավարելը հեշտ չէր: Լինում էին պահեր, երբ իրավիճակը դուրս էր գալիս վերահսկողությունից, կամ, օրինակ, նույն 1990-ականներին՝ էլեկտրաէներգիայի սակավության պատճառով եղել են արտադրական բազում պարապուրդներ և այլն: Քաղաքը հոսանքազրկվում էր՝ էներգիան կոմբինատին փոխանցելու պատճառով, իսկ արտադրական հսկայի աշխատանքը երկրի քայքայված տնտեսության համար ստրատեգիական նշանակություն ուներ»: //

ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Հայրապետյան Վլադիմիր Ասատուրի

2011 թ. սեպտեմբերի 21-ին Երեւանում եւ 2012 թ. մայիսի 9-ին Ստեփանակերտում տեղի ունեցած զորահանդեսների ժամանակ հատկապես ցնցող տպավորություն թողեց արդիական տեխնիկայով զինված հրթիռային եւ հրետանային զորքերի երթը: Զորահանդեսներն ապացուցեցին, որ «Պատերազմի աստված» հրետանին, որը վճռորոշ դեր է կատարել Արցախյան ազատագրական պատերազմում, այսօր էլ շարունակվում է գտնվել հայ հրետանավորների նոր սերնդի հուսալի ձեռքերում եւ ամեն պահ պատրաստ է ջախջախիչ հակահարված տալ հակառակորդին: Զորահանդեսներից մեկի ժամանակ, երբ հրապարակով անցնում էին հրթիռահրետանային զորքերը, հաղորդավարն առաջինը, որպես այդ զորատեսակի հիմնադիր, նշեց գեներալ-մայոր Վլադիմիր Ասատուրի Հայրապետյանի անունը, ով եղել է ՀՀ ԶՈՒ հրթիռահրետային զորքերի վարչության առաջին պետը, եւ նրա անունը սերտորեն կապված է այդ հզոր զորատեսակի ստեղծման, Արցախյան պատերազմում տարած հաղթանակի եւ խաղաղ տարիներին հրթիռահրետանային զորքերի ամրապնդման ու կատարելագործման հետ:

Վ. Հայրապետյանը ծնվել է 1942 թ. հունիսի 25-ին՝ Կապանի շրջանի Շիշկերտ գյուղում: Հայրը՝ Ասատուր Ջհանգիրի Հայրապետյանը, 1944 թ. զոհվել է Հայրենական մեծ պատերազմում: Հետմահու պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով: Դառը մանկություն բաժին ընկավ փոքրիկ Վոլոդային: Դեռ նոր էր հասցրել դպրոց գնալ, երբ 1949 թ. մահացավ մայրը: Նրա խնամակալությունը ստանձնեց հայկանուշ հորաքույրը, որի ամուսինը նույնպես զոհվել էր Հայրենական մեծ պատերազմում՝ կնոջ խնամքին թողնելով չորս անչափահաս երեխա: Հինգերորդը դարձավ Վոլոդյան: Մինչեւ 1956 թ. Վոլոդյան հորաքրոջ երեխաների հետ սովորեց Շիշկերտ գյուղի յոթնամյա դպրոցում, աչքի ընկավ բարձր առաջադիմությամբ, հատկապես մաթեմատիկայի իմացությամբ: 1956 թ. հայկանուշ հորաքրոջ ընտանիքը Շիշկերտից տեղափոխվեց Երեւանի Շահումյանի շրջան (Մալաթիա) եւ բնակություն հաստատեց այնտեղ: Վոլոդյան նոր վայրում ուսումը շարունակեց N 90 միջնակարգ դպրոցում, որն ավարտեց 1960 թվականին: Ընտանիքի հոգսերը որոշ չափով թեթեւացնելու նպատակով Վոլոդյան մինչեւ 1961 թ. հուլիս աշխատեց Մալաթիայի տրիկոտաժի ֆաբրիկայում, իսկ երբ եկավ բանակ զորակոչվելու ժամանակը, ներկայացավ զինկոմիսարիատ: Հաշվի առնելով ֆիզիկապես առողջ եւ մաթեմատիկական առարկաներից դպրոցը գերազանց գնահատականներով ավարտած զինակոչիկի դիմումը՝ նրան ուղարկեցին սովորելու Կովկասյան Կարմրադրոշ զինվորական օկրուգի Թբիլիսիի հրետանային ուսումնարան: Ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո 19-ամյա պատանին ընդունվեց հարուստ ավանդույթներ եւ լավ համբավ ունեցող այդ զինվորական հաստատություն:

1964 թ. հուլիսի 28-ին Վլադիմիր Հայրապետյանը կարմիր դիպլոմով ավարտեց ուսումնարանը՝ լեյտենանտի կոչումով: Այնուհետեւ ծառայությունը շարունակեց Անդրկարպատյան զինվորական օկրուգում՝ Ուժգորոդ քաղաքում տեղաբաշխված գնդում, որպես հրետանային դասակի հրամանատար:

1966 թ. սեպտեմբերի 13-ին լեյտենանտ Վ. Հայրապետյանը ծառայությունը շարունակեց Գերմանիայում տեղաբաշխված խորհրդային զորքերի խմբում, սկզբում՝ 120 մմ ականանետային դասակի, ապա՝ մարտկոցի հրամանատար:

1967 թ. նրան շնորհվում է ավագ լեյտենանտի կոչում: 1967 թ. Մագդեբուրգ քաղաքում ծնվում է նրա առաջնեկը՝ Ասատուրը: Վ. Հայրապետյանն ամուսնացել էր դեռեւս 1965 թ. Երեւանում՝ իր դպրոցական ընկերուհու՝ Խաթուն Գուլյումջյանի հետ: Հաշվի առնելով երիտասարդ, խոստումնալից հրետանավոր սպայի մարտավարական եւ հրամանատարական ունակությունները, հրամանատարությունը 1968 թ. օգոստոսին ավագ լեյտենանտ Վ. Հայրապետյանին թույլատրեց քննություններ հանձնել Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) Մ. Ի. Կալինինի անվան հրետանային ռազմական ակադեմիա ընդունվելու համար: Հաջողությամբ հանձնելով ընդունելության քննությունները, ավագ լեյտենանտ Վ. Հայրապետյանն ընդունվեց ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետը: Չնայած Վ. Հայրապետյանը չուներ ռուսական կրթություն (ավարտել էր հայկական դպրոց), բայց նա յոթ տարի բանակում անընդմեջ ծառայելու արդյունքում ազատ տիրապետում էր ռուսերենին: Ուստի պատահական չէ, որ ակադեմիայում սովորում էր միայն լավ ու գերազանց գնահատականներով: 1970 թ. նոյեմբերի 18-ին՝ հրետանու եւ հրթիռային զորքերի տոնի նախօրյակին, նրան շնորհվեց կապիտանի զինվորական կոչում: Ակադեմիայում սովորելու տարիներին կապիտան Վ. Հայրապետյանը պարգեւատրվեց նաեւ «Զինվորական արիության համար» եւ «Անբասիր ծառայության համար» 3-րդ

Գարեգին Նժդեհի հուշահամալիրի բացման ժամանակ

աստիճանի մեդալներով:

1972 թ. հունիսի 23-ին լավ եւ գերազանց գնահատականներով ավարտելով հրետանային ակադեմիան՝ կապիտան Վ.Հայրապետյանը նշանակում ստացավ Բելառուսական զինվորական օկրուգում՝ հրետանային դիվիզիոնի հրամանատար, որը գտնվում էր Օսիպովիչի քաղաքում:

ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանի հետ

1974 թ. օգոստոսին կապիտան Վ. Հայրապետյանը զինվորական ծառայությունը շարունակում է Հեռավորարեւելյան զինվորական օկրուգում՝ կործանիչ-հակատանկային գնդի հրամանատարի առաջին տեղակալ-շտաբի պետ:

1975 թ. նոյեմբերի 21-ին առաջ քաշվեց նույն օկրուգի 378-րդ հրետանային գնդի հրամանատարի պաշտոնին, որը տեղաբաշխված էր Պրիմորիեի Պանտելեյմոնովկա բնակավայրում: Միաժամանակ Վ.Հայրապետյանին արտահերթ շնորհվեց փոխգնդապետի կոչում: Գնդի հրամանատար եղած ժամանակ փոխգնդապետ Վ.Հայրապետյանը պարգեւատրվել է «Անբասիր ծառայության համար» 2-րդ աստիճանի մեդալով եւ «ԽՍՀՄ զինված ուժերում հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 3-րդ աստիճանի շքանշանով:

1980 թ. նշանակվեց Հեռավորարեւելյան զինվորական օկրուգի 25-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի եւ հրետանու շտաբի պետ, մեկ տարի անց՝ նրան շնորհվեց գնդապետի կոչում: Այդ պաշտոնում ծառայեց մինչեւ 1982 թ. մայիսի 25-ը: Նոր պաշտոնում Վ.Հայրապետյանն իրեն դրսեւորեց որպես գործիմաց եւ ենթակաների նկատմամբ պահանջկոտ, բայց հոգատար հրամանատար: Բանակային կորպուսի հրթիռային զորքերի եւ հրետանու շտաբի աշխատանքները

հաջողությամբ կազմակերպելու համար 1982 թ. հունվարի 12-ին պարգեւատրվեց «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով:

1982 թ. մայիսի 25-ին գնդապետ Հայրապետյանը նշանակվում է Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգի 12-րդ բանակային կորպուսի հրթիռային զորքերի եւ հրետանու շտաբի պետ: Կորպուսի շտաբը տեղակայված էր Կրասնոդար քաղաքում: Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգում գնդապետը ծառայում է մինչեւ 1986 թ. սեպտեմբեր:

1986–1989 թթ. գնդապետ Վ. Հայրապետյանը նման պաշտոն է վարում 28-րդ բանակային կորպուսում, որը տեղակայված էր Չեխոսլովակիայի Օլոմուց քաղաքում: 1989 թ. առաջ է քաշվում նույն կորպուսի հրթիռահրետանային զորքերի գլխավոր հրամանատար, որը համարվում էր գեներալական պաշտոն: 1990 թ. մարտին կորպուսը Չեխոսլովակիայից տեղափոխվում է Սիբիրյան զինվորական օկրուգ եւ տեղակայվում Կեմերովո քաղաքում:

Չնայած գնդապետ Վ. Հայրապետյանը ծառայությունն անց էր կացնում Հայաստանից հեռու, բայց մշտապես հետեւում էր հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին: Սումգայիթի եւ Բաքվի հայերի զանգվածային սպանությունները, Հյուսիսային Արցախի հայերի բռնի տեղահանումներն ու կոտորածները, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի դեմ ադրբեջանական զորքերի հարձակումները, մարզի քաղաքների ու գյուղերի ռմբակոծումները, հայրենի Կապանի եւ շրջանի սահմանամերձ բնակավայրերի դեմ սանձազերծած ագրեսիան հանգիստ չէին տալիս հայրենասեր բարձրաստիճան սպային: Նա սրտի կանչով 1992 թ. հունվարին եկավ Երեւան, որտեղ հանդիպեց ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին եւ առաջարկեց իր ծառայությունը հայկական բանակում: Վազգեն Սարգսյանը մեծ սիրով ընդունեց նրան եւ տվեց իր համաձայնությունը: Դրանից հետո գնդապետ Հայրապետյանը դիմեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարին՝ իրեն ուղարկել Հայաստանի Հանրապետության նորաստեղծ զինված ուժերում ծառայելու: Նույն թվականի մայիսին հարգվեց այդ դիմումը, եւ նա վերադարձավ Հայաստան:

ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, հաշվի առնելով գնդապետի 31 տարվա անբասիր ծառայությունը հրթիռահրետանային զորքերում, իր 1992 հունիսի 13-ի հրամանով Վ. Հայրապետյանին նշանակեց ՀՀ ՊՆ հրթիռային եւ հրետանային զորքերի վարչության առաջին պետ: Իրեն հատուկ եռանդով գնդապետ Վ. Հայրապետյանն անմիջապես ձեռնամուխ եղավ հայոց

Կապանյան տոնակատարություններից մեկի ժամանակ

բանակի ամենակարեւոր կրակային ուժի ձեւավորման եւ Արցախյան ազատագրական պատերազմում հրետանու մասնակցության ապահովման գործին: Հարկավոր էր ամենից առաջ կարճ ժամանակամիջոցում համալրել հրամանատարական կազմը հրետանային ուսումնարաններ ու ակադեմիաներ ավարտած սպաներով, ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ հրանոթներ, զենք եւ զինամթերք՝ ի հաշիվ Հայաստանում տեղակայված ռուսական 7-րդ գվարդիական բանակի զորամասերի եւ զինանոցների, կահավորել ձեռքի տակ եղած զորանոցները, ստեղծել հրետանային ստորաբաժանումներ ու զորամասեր, հրաձգարաններ եւ վարժակայաններ: Միաժամանակ հարկավոր էր Հայաստանի սահմանամերձ շրջաններում եւ Արցախում մարտնչող նորաստեղծ զորամասերը համալրել հրետանու մարտական ստորաբաժանումներով, որոնք պետք է իրենց հուժկու կրակային ուժով սատար կանգնեին մարտնչող ֆիդայիներին ու մոտոհրաձիգներին:

Հրթիռահրետանային զորքերը համապատասխան կադրերով համալրելու գործում գնդապետ Վ. Հայրապետյանին մեծ օգնություն ցույց տվեցին ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, նրա տեղակալ, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը, ՀՀ հանրապետական եւ շրջանային զինկոմիսարիատները՝ գեներալ-մայոր Արտյուշա Թադեւոսի Հարությունյանի գլխավորությամբ:

Հայկական հրետանային առաջին ստորաբաժանումները լեռնային պայմաններում տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ իրենց դրսեւորեցին գերազանց՝ հուսալի կրակային վահան ստեղծելով ֆիդայական ջոկատների ու մոտոհրաձիգների համար եւ մեծ դեր կատարեցին Արցախյան ազատագրական պատերազմում տարած հաղթանակում: Հրետանային եւ հրթիռային զորքերի վարչության պետը բազմիցս անձամբ է մասնակցել մարտական գործողություններին եւ իր խիզախությամբ օրինակ հանդիսացել հայ քաջորդիների համար: Նա 1992-1994 թթ. ակտիվորեն մասնակցել է Լաչինի, Քարվաճառի, Օմարի լեռնանցքի, Կապանի շրջանի եւ այլ վայրերում տեղի ունեցած վճռորոշ գործողություններին: 1992 թ. հոկտեմբերի 8-ին, լինելով առաջին գծում եւ ղեկավարելով հրետանու կրակը, գնդապետ Վ.Հայրապետյանը նպաստեց Լաչինի (այժմ Բերձոր) շրջանում տարած հաղթանակին: Այդ մարտում՝ չնայած վիրավորվեց ձեռքից, սակայն չթողեց հրամանատարական կետը մինչեւ մարտի

ավարտը: Իր խիզախությամբ գնդապետ Վ. Հայրապետյանն աչքի ընկավ նաեւ 1994 թ. հունվարի 1-ից մինչեւ փետրվարի 25-ը տեղի ունեցած Քարվաճառի 2-րդ գործողության ժամանակ, որն ավարտվեց Օմարի լեռնագագաթի գրավումով: Մարտերից մեկի ժամանակ՝ թշնամու կրակի տակ ամեն վայրկյան վտանգի ենթարկելով կյանքը, Վ.Հայրապետյանը վարորդի հետ միասին «Կամազ» ավտոմեքենայով Սեյիդլարից տեղափոխում է լքված 4 միավոր «Դ-30» հրանոթ, վերացնում դրանց անսարքություններն ու սպանիչ կրակ բացում թշնամու վրա՝ խուճապ առաջացնելով նրա շարքերում: Քաջալերվելով կատարվածից, հայկական ուժերը շարունակում են հարձակումը, թշնամուն ցած շպրտում Օմարի բարձունքից, ազատագրում հարակից բնակավայրերը:

Նրա նախաձեռնությամբ Ջրվեժում բացվեցին հրետանավոր սպաների վերապատրաստման առաջին դասընթացները եւ Լուսակերտում կազմավորվեց առաջին ուսումնական հրետանային գունդը: Իսկ երբ բացվեց ՀՀ ՊՆ բազմաբնույթ ռազմահրամանատարական բարձրագույն ուսումնարանը (այժմ՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ), նրա համառության եւ ակտիվ գործունեության շնորհիվ ստեղծվեց հրետանու ամբիոնը, որը դարձավ հզոր ուսումնամեթոդական բազա հրետանավոր սպաների պատրաստման համար: Այդ հարցում Վ. Հայրապետյանին մեծ աջակցություն ցույց տվեց ինստիտուտի առաջին պետ, գեներալ-մայոր Սերգեյ Սահակի Մարտիրոսյանը: Պատերազմական պայմաններում, բնականաբար, շարքից դուրս էր գալիս հրետանային տեխնիկան: Հարկավոր էր դրանք շուտափույթ վերանորոգել տեղում: Այդ նպատակով Վ. Հայրապետյանի առաջարկությամբ ստեղծվեցին հրետանային շարժական արհեստանոցներ, որոնց միջոցով վերանորոգվեցին սահմանամերձ վայրերում շարքից դուրս եկած հրանոթներն ու օպտիկական նշանացույցերը: Վերանորոգման գործում հատկապես աչքի ընկավ փոխգնդապետ Միքայել Նազարեթյանը:

Ինչպես հայտնի է, մարտական գործողությունները շարունակվեցին մինչեւ 1994 թ. մայիսի 16-ը, երբ ադրբեջանական կողմը նորանոր կորուստներից խուսափելու համար ստիպված էր դադարեցնել իր իսկ սանձազերծած պատերազմը եւ զինադադար կնքել:

Հաշվի առնելով գնդապետ Վ.Հայրապետյանի կազմակերպչական մեծ ընդունակությունները եւ կատարած շնորհակալ աշխատանքը հայկական զինուժի հրետանային եւ հրթիռային զորքերի կազմավորման ու ղեկավարման գործում, Արցախյան պատերազմում նրա ակտիվ մասնակցությունը՝ 1994 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության տարեդարձի օրը, ՀՀ նախագահի հրամանագրով Վ. Հայրապետյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

Զինադադարի կնքումից հետո մինչեւ 2003 թ. հոկտեմբերի 16-ը գեներալ-մայոր Վ. Հայրապետյանը ՀՀ ԶՈՒ հրթիռահրետանային զորքերի վարչության պետի պաշտոնում իր ողջ ուժերն ու կարողությունները անմնացորդ նվիրաբերեց այդ կարեւոր զորատեսակի կատարելագործման եւ ամրապնդման գործին: Գեներալ-մայոր Վ.Հայրապետյանն արժանի է եղել էլ ավելի բարձր պաշտոնների, դեռեւս 1995 թ. ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Նորատ Տեր-Գրիգորյանցն առաջարկել էր նրան նոր պաշտոն՝ պաշտպանության նախարարի տեղակալ՝ սպառազինության գծով, եւ տվել ժամանակ՝ մտածելու առաջարկի մասին ու տալու համաձայնություն, սակայն նա համառորեն չի ցանկացել կիսատ թողնել սկսած գործը, մեծ շնորհակալություն հայտնելով իր անձի նկատմամբ ուշադիր լինելու համար, եւ շարունակել է բարձր պատասխանատվությամբ զարգացնել ու հզորացնել հայկական բանակի գլխավոր կրակային ուժը՝ հրթիռահրետանային զորքերը, որին նվիրված է մնացել մինչեւ վերջ: Հրթիռահրետանային զորքերը գեներալ-մայոր Վ.Հայրապետյանի ղեկավարությամբ հասան զգալի հաջողությունների՝ մարտական պատրաստականության ամրապնդման, կարգապահության բարձրացման եւ անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը բարելավելու ուղղությամբ: Հետեւելով մեծ զորավար Սուվորովի՝ «Դժվար ուսման մեջ, հեշտ՝ մարտում» նշանաբանին, գեներալն անձամբ էր կազմակերպում եւ մասնակցում հրթիռահրետանային զորքերի ճամբարային հավաքներին, որոնց ընթացքում մեծ ուշադրություն էր հատկացվում զորամիավորումների եւ զորամասերի դաշտային պատրաստվածության, մարտավարական, մասնագիտական եւ տեխնիկական ուսուցման որակին, անձնակազմի, հատկապես սպաների հրետաձգության եւ կրակի կառավարման հմտություններին: Հրետանու ուսուցումը դաշտային պայմաններում առաջին նախադեպն էր ՀՀ ԶՈՒ-ում, որը կիրառեց գեներալ-մայոր Վ. Հայրապետյանը, եւ որին հետեւեցին մյուս զորատեսակները: Նրա նախաձեռնությամբ Լուսակերտի հրետանային ուսումնական զորամասի տարածքում կանգնեցվեց Գարեգին Նժդեհի արձանը:

2003 թ. հոկտեմբերի 23-ին, 60 տարին լրանալու կապակցությամբ, գեներալ-մայոր Վ.Հայրապետյանն անցավ թոշակի: Սակայն հաշվի առնելով նրա 42-ամյա զինվորական անբասիր ծառայությունը, գիտելիքներն ու հարուստ փորձը, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի որոշմամբ գեներալ-մայոր Վ. Հայրապետյանն ընդգրկվեց ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի կազմում:

Բացի նշված հանձնաժողովում կատարած աշխատանքից, գեներալ-մայոր Վ. Հայրապետյանը, սկսած 1995 թ., երբ հիմնադրվեց ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» հանդեսը, նրա խմբագրական խորհրդի անդամն էր: Հանդեսի մի շարք համարներում գեներալն արժեքավոր հոդվածներ է տպագրել հրետանու մարտունակության պահպանման առանձնահատկությունների, փողային հրետանու զարգացման ուղղությունների ու հեռանկարների եւ այլ հիմնահարցերի մասին, որոնք անգնահատելի օգնություն են ցույց տվել հրետանավոր սպաներին՝ խորն ուսումնասիրելու հրետանու մարտական կիրառման հիմունքները: Գեներալն ակտիվորեն թղթակցել է նաեւ ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ «Հայ զինվորին» եւ նրա էջերում տպագրել հոդվածներ՝ նվիրված հայկական զինուժի ստեղծման ակտիվ գործիչներ, գեներալ-լեյտենանտներ Քրիստափոր Իվանյանի, Հրաչ Անդրեասյանի, հրետանային վարչության առաջին պետ, գնդապետ Առնո Արշակի Տատինցյանի հիշատակին, տվել հարցազրույցներ՝ կարեւոր հիմնահարցերի շուրջ:

Հայրենիքը բարձր է գնահատել գեներալ-մայոր Վ.Հայրապետյանի ծառայությունը հայկական զինուժի կազմավորման, մարտական գործողությունների ժամանակ ցուցաբերած խիզախության եւ խաղաղ շինարարության տարիներին բանակի անձնակազմի ուսուցման եւ մարտունակության բարձրացման գործում՝ նրան պարգեւատրելով «Վարդան Մամիկոնյան», «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշաններով, ՀՀ եւ ԼՂՀ «Արիության համար», «Մարշալ Բաղրամյան», «Ծովակալ Իսակով», «Անդրանիկ Օզանյան», «Գարեգին Նժդեհ», «Դրաստամատ Կանայան», «Վազգեն Սարգսյան», «Հայկական բանակի 20 տարին» մեդալներով, խորհրդային մի շարք պարգեւներով:

2003 թ. հուլիսի 30-ին Կապանի քաղաքապետարանը՝ ռազմական գործողությունների ընթացքում Կապան քաղաքի պաշտպանության գործում ունեցած ծառայությունների համար, գեներալ-մայոր Վ. Հայրապետյանին շնորհել է «Կապան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Սարգսյան Մուրազ Սարուխանի

Սպարապետ Վազգեն Սարգսյանի հետ

Ծննդավայրը Կապանի շրջանի Ներքին Խոտանան գյուղն է:

Տոհմածառը սկիզբ է առնում դեռևս 1700-ականներին Սիրիայից Հայաստան տեղափոխված Տեր Դավթի ընտանիքից:

Հորը գրեթե չի հիշում. ավագ որդու հետքերով նա մեկնում է ռազմաճակատ ու այլևս չի վերադառնում (զոհվել է Մոզդոկի մոտակայքում տեղի ունեցած ծանր մարտերից մեկի ժամանակ):

Մուրազ Սարգսյանը վերջին մի քանի տարվա ընթացքում ձեռնամուխ եղավ մի կարևոր և մնայուն գործի. թղթին հանձնեց իր ապրած կյանքի հուշերը երեք գրքով՝ **«Դժվարին մանկություն», «Անձնուրաց ծառայություն» և «Ծառայությունս նորաստեղծ հայկական բանակում 1992 թվականից»:**

«Դժվարին մանկություն» գրքում հեղինակը ներկայացնում է իր ծննդավայրը, գերդաստանը, ծնողներին և եղբայրներին (ծնվել է 1943 թ. օգոստոսի 1-ին):

Մինչև երրորդ դասարանը հաճախել է Ներքին Խոտանանի դպրոցը. այնուհետև ուսումը շարունակել Շրվենանց գյուղի միջնակարգ դպրոցում:

Դպրոցն ավարտելուց հետո նպատակասլաց պատանին որոշում է զինվորական կրթություն ստանալ, ապացուցել, որ որբ ու զրկանքներով մեծացած փոքրամարմին տղան կարող է իրականացնել իր

երազանքը և գտնել իր տեղը կյանքում:

1962 թվականից կյանքի մի նոր շրջան սկսվեց կապանցի պատանու համար. իր նման 12 պատանու հետ մեկնում է Թբիլիսի՝ ուսանում Թբիլիսիի հրետանային ուսումնարանում:

1965 թվականին Մուրազ Սարգսյանն ավարտեց Թբիլիսիի հրետանային ուսումնարանը. նրան շնորհվեց լեյտենանտի զինվորական կոչում, և որպես լավագույն շրջանավարտ՝ գործուղեցին Հեռավոր Արևելք՝ զինվորական ծառայության:

Իրենց հարևանի աղջկա՝ Վալյայի հանդեպ անտարբեր չէր դեռևս 7-րդ դասարանից: Վալյան ընդունեց նրա՝ ամուսնության առաջարկը, և նրանք ամուսնացան: Շքեղ հանդիսություն չեղավ, նույնիսկ ամուսնական մատանիներ չփոխանակեցին (միջոցներ չունեին). գրանցեցին իրենց ամուսնությունը, հարազատներով նշեցին և վերադարձան Խաբարովսկ: Ծնվեցին զավակները՝ Աշոտը և Աննան: Շատ դժվարություններ հաղթահարեցին, միասին կիսեցին հաջողություններն ու անհաջողությունները:

Մինչև 1969 թվականը Մուրազ Սարգսյանը ծառայեց Հեռավոր Արևելքում:

1969-1974 թթ. ծառայությունը շարունակեց Լեհաստանում:

1974 թ. Մուրազ Սարգսյանն ընդունվեց Մոսկվայի Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, որտեղ խորացրեց ռազմական գիտելիքներն ու հմտութ-

Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի կիսանդրու մոտ

յունները: Ակադեմիայում ուսումնառության տարիներն արդյունավետ էին նաև շփումների ու ծանոթությունների առումով (իր ծանոթություններն ու կապերը հետագայում ծառայեցրեց ի նպաստ հայրենիքի):

Նույն ակադեմիայում հետագայում սովորել է նրա որդին՝ Աշոտը:

1983 թ. Մուրազ Սարգսյանին նշանակել են Մոլդովայի Կագուլ քաղաքում տեղակայված դիվիզիայի հրամանատար:

Այն ժամանակ, երբ պատրաստվում էր մեկնել ուսումը շարունակելու գլխավոր շտաբի ակադեմիայում, նրան կրկին գործուղեցին Հեռավոր Արևելք:

Մուրազ Սարգսյանին 1987 թ. նշանակում են Հրեական Ինքնավար Մարզի կենտրոն Բիրոբիջանում տեղակայված բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ: Այդ պաշտոնում էլ Մ. Սարգսյանը լիովին արդարացրեց իր հանդեպ ցուցաբերված վստահությունը: Այնուհետև նրան նշանակեցին Սամարղանդի կորպուսի հրամանատարի տեղակալի պաշտոնում:

Նրա՝ Սամարղանդ մեկնելուն նախորդեց հայոց մեծ ողբերգությունը՝ 1988-ի երկրաշարժը: **«Ինչպես ողջ հայության, այնպես և ինձ համար 1988 թ. դեկտեմբերի յոթը դաժան և ողբերգական էր: Անմիջապես դիմեցի ղեկավարությանս, որպեսզի ինձ ուղարկեն Հայաստան, բայց մերժում ստացա: Փոխարենն ինձ վրա դրեցին արագ և օպերատիվ կերպով շինարարական բրիգադներ կազմելու և Հայաստան ուղարկելու գործը: Մեր կորպուսում ծառայող լենինականցի, կիրովականցի և սպիտակցի զինվորներին արձակուրդ ուղարկեցին Հայաստան»,**– հետագայում հիշում է Մ. Սարգսյանը:

Հայ մարդու համար հեշտ չէր խորհրդային բանակում գեներալի կոչում ստանալը, բայց աշխատող մարդուն վաղ թե ուշ գնահատում են. **«Ինձ գեներալի կոչում շնորհելիս հաշվի էին առել տարիների իմ բազմամյա փորձն ու գիտելիքները: Եվ համարում եմ, որ այդ կոչումը ես վաստակել եմ սեփական խելքով և տարիների քրտնաջան աշխատանքով»:**

Գեներալ-մայոր Մ. Սարգսյանը նույնպես 1992 թ. վերադարձավ հայրենիք: Ներկայացավ Պաշտպանության կոմիտե (այն ժամանակ Հայաստանի ՀՈՒ-ն դեռ չէր կազմավորվել): Նրան գործուղեցին Կապան, քանի որ լավ ծանոթ էր տեղանքին: Մյուս գեներալների հետ համախմբելով ուժերը՝ կազմակերպեցին Կապանի ինքնապաշտպանությունը: Քաղաք մտնող գլխավոր ճանապարհը թուրքերը կրակի տակ էին պահում, և ճանապարհն անանցանելի էր: Մուրազ Սարգսյանի նախաձեռնությամբ ճանապարհի ողջ երկայնքով պաշտպանիչ բարձ հողաթմբեր կառուցեցին՝ ճանապարհը դարձնելով երթևեկելի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Գեներալ–լեյտենանտ Վլադիմիր Հայրապետյանի հետ

Վազգեն Սարգսյանի կողմից գեներալ-մայոր Մ. Սարգսյանը գործուղվեց Լաչինի միջանցք: Հակառակորդը կարևոր դիրքեր էր զբաղեցնում, ինչի արդյունքում միջանցքը և Արցախի մուտքը կարողանում էր պահել հսկողության տակ: Մուրազ Սարգսյանին և մեր մյուս գեներալներին հաջողվում է օպերատիվ գործողությունների շնորհիվ միջանցքը պահել մեր մշտական հսկողության տակ և ազատագրել հարակից տարածքները:

1992-2008 թթ. Մ. Սարգսյանը եղել է ՀՀ ՊՆ մարտական պատրաստության վարչության պետը: Նրա կազմակերպչական և զորավարական հմտությունները մեծ ներդրում եղան հայոց բանակաշինության գործում և Արցախի ու հարավային սահմանի ազատագրման համար:

Մ. Սարգսյանի անցած ուղին ռազմական գիտելիքների շտեմարան է յուրաքանչյուր հայ զինվորի ու սպայի համար: Մեր բանակի զորամասներն այսօր էլ ղեկավարվում են նրա մշակած կանոնագրքերով ու մեթոդական ձեռնարկներով:

2008 թ. ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով Մ. Սարգսյանը ստացավ գեներալ-լեյտենանտի կոչում և զորացրվելուց հետո դարձավ նախարարի խորհրդական:

Արժանացել է Պատվո շքանշանի, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի, Արիության, Մարտական ծառայության մեդալների, բազմաթիվ պատվոգրերի ու մեծարանքների:

Վաստակած փառքն ու պատիվը, ղեկավարության բարձր վստահությունն ավելի են պարտավորեցրել նրան և երբեք չեն ստվերել նրա պարզ հոգին ու համեստ բնավորությունը:

Գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանն անթաքույց հպարտությամբ է խոսում իր ընտանիքի մասին: Հեշտ չէր կերտել այդպիսի կենսագրություն և ունենալ այդպիսի հրաշալի ընտանիք: Ճշմարիտ հայր, ճշմարիտ զինվորական, ճշմարիտ այուսեցի: Ծառայել է փառքով, իրեն համարում է հայազգի զինվոր, հավատում է իր երկրի ապագային, հայ մարդու ներուժին, մատաղ սերնդին, որի դաստիարակության սուրբ գործով էլ, իր կյանքի փորձով հարստացած, շարունակում է զբաղվել այժմ...

ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՊԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

Ղոնյան Ռոլանդ Սուրենի

Ծնվել է 1945 թվականի հոկտեմբերի 31-ին Ղափան քաղաքում:

1965 թվականին ավարտել է Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, ստացել տեխնիկ երկրաբանի, 1971 թվականին՝ Մոսկվայի լեռնային ինստիտուտը, ստացել լեռնային ինժեներ-ի որակավորումներ:

1965-1966 թթ. աշխատել է նմուշարկող բանվոր, տեխնիկ-երկրաբան Ղափանի պղնձահանքային կոմբինատի հորատման արտադրամասում:

1966-1972 թթ.՝ տեխնիկ-երկրաբան, տեղամասային երկրաբան Ղափանի երկրաբանահետախուզական արշավախմբում:

Արշավախմբի մասնագետների ուժերով այդ տարիներին հաջողությամբ իրականացվել են Ղափանի պղնձի հանքավայրի պաշարների գլխավոր հաշվարկման, պետական մարմիններում այն հաստատելու և Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի մանրամասն հետախուզման աշխատանքները, պաշարների առաջին փուլի հաշվարկման, հաստատման գործընթացը:

Դրանցում իր համեստ մասնակցությունն է ունեցել նաև երիտասարդ մասնագետ Ռոլանդ Ղոնյանը:

Ինչպես ցույց տվեց հետագա աշխատանքների ընթացքը՝ Ղափանի կոմբինատի հորատման արտադրամասի բազայի հիման վրա ստեղծված Ղափանի երկրաբանահետախուզական արշավախմբի՝ 1965-1990 թվականներին 300-ից ավելի աշխատող ունեցող կոլեկտիվի ջանքերով, հմուտ և փորձառու երկրաբաններ Գևորգ Համբարձումյանի, Կարլեն Աղամիրյանի, Յուրի Ավետիսյանի, Շահումյանի տեղամասի լեռնային աշխատանքների պետ Ժորա Սարգսյանի ղեկավարությամբ հաջողվել է ամրապնդել Ղափանի պղնձահանքային կոմբինատի հանքահումքային բազան, որը և հիմք

Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը ծանոթանում է Երևանի «Էլեկտրոն» գործարանի Ղափանի մասնաճյուղի կոլեկտիվի հետ

է հանդիսացել ընդլայնելու ու վերակառուցելու այդ ձեռնարկության հզորությունները, ապահովելու Ղափան քաղաքի հիմնաստեղծ ձեռնարկության արդյունավետ գործունեությունը:

Ռոլանդ Ղոնյանը ՍՄԿԿ անդամ էր 1970 թվականից:

1972-1980 թվականներին եղել է ՀԿԿ Ղափանի շրջկոմի հրահանգիչ, արդյունաբերության բաժնի վարիչ, 2-րդ քարտուղար:

1980 թ. սեպտեմբերին ընտրվել է ՀԿԿ Ղափանի շրջկոմի 1-ին քարտուղար: Շարունակելով կառավարման դրական օրինակներ ունեցող ՀԿԿ Ղափանի շրջկոմի նախորդ տարիների փորձը, շրջկոմի բյուրոն 1980-1988 թվականներին՝ Ռոլանդ Ղոնյանի ղեկավարությամբ, ունեցել է ակտիվ մասնակցություն շրջանի տնտեսության համակողմանի զարգացման և հատկապես շրջանի բնական ռեսուրսների, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման գործում՝ նպատակ դնելով հասնել շրջանի տնտեսական և սոցիալական խնդիրների համալիր լուծմանը:

1982-1985 թթ. եղել է ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեին կից Մոսկվայի հասարակական գիտությունների ակադեմիայի ունկնդիր, ստացել բարձրագույն կուսակցական-քաղաքական կրթություն:

1985-1990 թթ. եղել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ՝ ընտրված Ղափան քաղաքի թիվ 190 օկրուգից, ապա՝ Գերագույն խորհրդի արդյունաբերության հանձնաժողովի նախագահ:

1981-1990 թթ. Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ էր՝ ընտրված ՀԿԿ XXVII և XXVIII համագումարներում:

Որպես միութենական գունավոր մետալուրգիայի նախարարության համակարգում երկու հանքարդյունահանող ձեռնարկություն ունեցող շրջանի կուսակցական ղեկավար, հանրապետության գունավոր մետալուրգիայի վարչության, «Հայգունմետ» գիտահետազոտական ու

Մեղրու լեռնանցք, Քաջարան-Մեղրի ճանապարհի բացումը ՀԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար Կարեն Դեմիրճյանի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի մասնակցությամբ (2 նոյեմբերի 1980թ.)

նախագծային ինստիտուտի ղեկավարների, ինչպես և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի այդ տարիների տնօրեն Գևորգ Գասպարյանի հետ Ռոլանդ Ղոնյանը 1981 թվականին հրավիրված է եղել Մոսկվա՝ մասնակցելու գունավոր մետալուրգիայի միութենական նախարարության կոլեգիայի ընդլայնված նիստին:

Իր և Գևորգ Գասպարյանի խնդրանքով ընդունելության են եղել նախարար Պյոտր Լոմակոյի մոտ: Կարևոր համարելով Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի հզորությունները 80-ական թվականներին ավելի քան 40 տոկոսով ընդլայնելու պահանջը, Ղափանի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հետախուզումից հետո այն ստորգետնյա եղանակով շահագործելու ու արդյունահանվող հանքաքարը Ղափանի պղնձահանքային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայում հարստացնելու համար նոր հզորությունների ստեղծման ծրագիրը, ոլորտի առաջին դեմքի մակարդակով խնդիրներ են առաջադրել երկու ձեռնարկությունում կարողությունների ընդլայնման ընթացքում տեխնիկական ժամանակակից սարքավորումներով հագեցած տեխնոլոգիաների օգտագործման, բնապահպանական միջոցների համալիր կիրառման հարցերի վերաբերյալ: Միաժամանակ, նախարարին են ներկայացվել Ղափանի շրջանի երկու քաղաքի սոցիալական ամենահրատապ խնդիրները՝ ձեռնարկությունների ընդլայնման նախագծային համալիր փաթեթներում ընդգրկելու համար:

Արդյունքում՝ արտադրական այնպիսի հիմնարար խնդիրներ են լուծվել Քաջարանում, ինչպիսիք են Ողջի գետի աջ ափին հանքաքարի ջարդման հզոր արտադրամասի կառուցումը: Ժամանակին այն իրականացվել է այնպիսի հագեցվածությամբ, որ մինչև այժմ էլ հնարավորություն է տալիս նախագծվածից մեկ ու կես անգամ ավելի հզորությամբ արտադրություն կազմակերպել:

ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանի կողմից Սյունիքի տարածաշրջանի գյուղատնտեսության հրատապ հարցերին նվիրված փնջային սեմինարից հետո՝ Սիսիանի (Շ. Դավթյան), Մեղրու (Թ. Դիլանյան), Գորիսի (Ռ. Ալեքսանյան) շրջկոմների առաջին քարտուղարների հետ

Բարձրացված խնդիրների շարքում էին Գեղի գետի վրա ջրամբարի կառուցումը, որը հնարավորություն է տվել Քաջարանի ֆաբրիկային՝ մինչև օրս ապահովելու արդյունաբերական ջրի մատակարարումը՝ բավարարելով վերամշակող հանքաքարի ծավալները՝ ավելի

քան կրկնապատկվելուց հետո անգամ:

Մոսկվայում բարձրացվել էին նաև Ղափանի երկաթգծի ապրանքային կայարանի շինարարության, էներգամատակարարման համալիրների վերազինման, այլ արտադրամասերի արդիականացման խնդիրները:

Համալիր նախագծերում ներառվել էին մի շարք կրթական, առողջապահական, մշակութային նոր օբյեկտների, Ղափան և Քաջարան քաղաքներում բնակելիների շինարարության ծավալների ավելացման հարցերը ևս:

Հենց այդ ծրագրերի շրջանակում՝ Ղափան քաղաքի Արամ Մանուկյան փողոցի հացի գործարանի շրջակայքում, կառուցվեց բարձրահարկ հինգ շենքով բնակելի թաղամասը, ձմեռային լողավազանային համալիրը, Ղափանի պիոներ պալատը՝ ընդարձակ սպորտային դահլիճով ու աստղադիտարանով, կենտրոնական հիվանդանոցի թերապևտիկ բաժանմունքի մասնաշենքը:

Այդ ամենը՝ փորձառու լեռնային ինժեներներ, կոմբինատների տնօրեններ Ֆրունզ Պետրոսյանի, Համլետ Ոսկանյանի, Գեորգի Գասպարյանի, Գևորգ Համբարձումյանի, Գրիշա Թադևոսյանի, կուսկոմիտեի քարտուղարներ Կարեն Մկրտչյանի, Գառնիկ Առաքելյանի, Սոս Թումանյանի, գլխավոր ինժեներներ Բորիկ Մկրտչյանի, Ալբերտ Բաբայանի, Կառլեն Հակոբյանի, Ռոման Նավասարդյանի, Ալբերտ Ստեփանյանի գլխավորությամբ իրականացված աշխատանքների շնորհիվ:

Հիվանդանոցի մասնաշենքը, ի դեպ, սկզբնական տարբերակով միայն եռահարկ էր նախագծված, բայց կառուցման ընթացքում՝ շինարարությունն իրականացնող վարչության ղեկավարներից Էռնեստ Քարամյանը՝ վերահաշվարկելով կառույցի կոնստրուկցիոն հնարավորությունները, նախաձեռնեց և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի դիրեկտորի պաշտոնակատար Ալբերտ Բաբայանի ու տնօրենի տեղակալ Գրիշա Պետրոսյանի ջանքերով հնարավոր դարձրեց մասնաշենքի 3-րդ հարկին ավելացնել ևս մեկ հարկ՝ այն դարձնելով քառահարկ՝ պահպանելով գործարկման ժամկետը և արդիական հագեցվածությունը:

Օգտագործելով հանրապետական-կուսակցական-խորհրդային ղեկավար օրգաններում շրջկոմի քարտուղարի ընդգրկվածությունը, շրջանային և քաղաքային խորհուրդների գործկոմների նախագահներ Սերյոժա Օհանջանյանի, Կարեն Մկրտչյանի, Ալեքսեյ Գասպարյանի, Համլետ Մինասյանի, Արարատ Գևորգյանի, Արտաշես Պետրոսյանի, Սամվել Խաչատրյանի հետ հիմնավոր և բազմակողմանի ուսումնասիրված հարցադրումներ են ներկայացվել հանրապետության ղեկավարությանը, նաև միութենական նախարարներին՝ քաղաքում տարբեր միավորումների մասնաճյուղեր բացելու նպատակով:

Կառուցվող այդ համալիրներում ընդգրկվել են նաև Ղափան քաղաքում ինչպես բնակելի շենքեր, այնպես էլ սոցիալական այլ օբյեկտներ:

Այդ տարիներին արդյունաբերական նոր մասնաշենքեր են կառուցվել և արդիականացվել: Ընդլայնվել են Ղափանի լուսատեխնիկական, «Էլեկտրոն», «Ռելեի», ավտոնորոգման գործարանների, տրիկոտաժի ֆաբրիկայի, «Քաջարանշին» տրեստի երկաթբետոնյա կառուցվածքների գործարանի, շինանյութերի արտադրության կոմբինատի, մսի, կաթի, պահածոների գործարանների, գյուղտեխնիկայի, նյութատեխնիկական մատակարարման բազայի, էլեկտրացանցի, կենցաղսպասարկման կոմբինատի կարողություններն ու հզորությունները:

Այդ ամենին զուգահեռ՝ նշված բոլոր արտադրական համալիրներում՝ կոլեկտիվների ղեկավարներ Յուրի Բենիամինյանի, Կարեն Նուրիջանյանի, Գարուն Սարգսյանի, Նորիկ Սաղաթելյանի, Արմեն Աբգարյանի, Համլետ Ալեքսանյանի, Դերենիկ Մարգարյանի, Վոլոդյա Աբրահամյանի, Ռաֆիկ Համբարձումյանի, Խուրշուդ Վարդանյանի, Կոլյա Խաչատրյանի, Շավարշ Գևորգյանի, Ռաֆիկ Դավթյանի, Արշավիր Նազարեթյանի, Վարդան Կարախանյանի, Սվետլանա Գևորգյանի և մյուս ղեկավարների հետևողական աշխատանքի շնորհիվ, կառուցվել են բնակելի շենքեր, մանկապարտեզներ, ճամբարներ և այլ սոցիալական օբյեկտներ:

Զարգացող արդյունաբերական ու այլ արտադրական համալիրներում բնակելիների շինարարության նման ծավալների ներառումը հնարավորություն է ստեղծել՝ 1000 մարդուն ընկնող բնակելի մակերեսի, դպրոցների և մանկապարտեզների տեղերի ցուցանիշներով Ղափան և Քաջարան քաղաքները տարիներով համարելու ամենապահովվածներից մեկը հանրապետությունում: Տարեկան փաստացի շահագործման է հանձնվել 30-ից 40 հազար քառակուսի մետր բնակելի մակերես:

Հենց այդ տարիներին են կառուցվել Ղափան քաղաքի Դավիթ Բեկ թաղամասի՝ փոփոխական հարկերով տասնյակից ավելի շենքերը, Մելիք-Ստեփանյան փողոցի բոլոր շենքերը՝ երկարությամբ Վաչագան գետի աջ ափի, Երկաթուղայինների փողոցի, Ձորք, Հալիձոր թաղամասերի բնակելի, դպրոցի և մանկապարտեզի շենքերն ամբողջությամբ, Բաղաբերդ թաղամասի մեծ մասը:

Կարևոր էին պլանավորված օբյեկտների ժամանակին գործարկումը, շինարարության ձգձգումների բացառումը: Իսկ պլանավորված ծավալները գերակատարելու արդյունքում հաճախ հնարավորություն էր ստեղծվում տարեվերջին, անգամ կեսերին, հատկապես բնակելի շինարարության և սոցիալական օբյեկտների կառուցման ծավալների ավելացում, անգամ նոր օբյեկտների կառուցում: Այդ տեսակետից մեծ է եղել շրջանային և քաղաքային խորհրդի կապիտալ շինարարության աշխատանքները համակարգող Մարտուն Սարգսյանի, Յուրի Սարգսյանի, Սպարտակ Մովսիսյանի բարեխիղճ գործունեությունը:

Կարևոր են եղել շինարարական կազմակերպություններում մոբիլիզացիայի աստիճանը և առանձնապես «Քաջարանշին» տրեստում կապալային շինմոնտաժային աշխատանքների ծավալը 1980-ականներին գրեթե կրկնապատկելը (կառավարիչ Սարգիս Վարդանյանի ու Դավիթ Հարությունյանի, գլխավոր ինժեներ Սեդրակ Ղազարյանի, կուսակցական կոմիտեի քարտուղարներ Ռուբեն Ստեփանյանի, Արշակ Ուստաբաշյանի, շինվարչությունների պետեր Սպարտակ Սիմոնյանի, Գուրգեն Բարխուդարյանի, Գրիշա Դավթյանի, Էդիկ Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ):

Տրադիցիոն արդյունաբերական շրջան լինելով և արդյունավետ գյուղատնտեսություն վարելու համար նպաստավոր բնական պայմաններ չունենալով՝ շրջանի ղեկավարության, շրջանի գյուղվարչության պետեր Բյուրիկ Ստեփանյանի և Միքայել Ջհանգիրյանի կողմից խնդիր էր դրվել՝ հասնել հանրապետության գյուղատնտեսական առաջատար շրջանների արդյունքներին՝ հատկապես անասնապահության ոլորտում, ինչպես և ամրապնդել ու նորացնել լեռնային գյուղերը, բարելավել գյուղերի դեմոգրաֆիկ վիճակը:

Հանրապետության ղեկավարությանն ի ցույց դնելով Սյունիքի թռչնաֆաբրիկայի երկար տարիների դրական աշխատանքը, մասնավորապես՝ նախատեսված հզորություններից ավելի թռչնի մսի ու ձվի արտադրության ցուցանիշները (տնօրեններ՝ Աշոտ Հովհաննիսյան և Ռազմիկ Գաբրիելյան), հաջողությամբ լուծվեց նաև նոր թռչնանոցներ կառուցելու ու մոտ մեկուկես անգամ հզորացնելու Սյունիքի թռչնաֆաբրիկայի կարողությունները:

Լեռնային գյուղերի պահպանման հաջողված օրինակներ դարձան 80-ական թվականներին Շիկահողի ենթաշրջանի, Ներքին Հանդ գյուղի հարմարավետ բնակելի շենքերի ողջ համալիրի կառուցումը, դպրոցի ժամանակակից մասնաշենքը՝ Սոսիների պուրակի հարևանությամբ, Շիշկերտ գյուղի բնակելի շենքերի կառուցման ծավալուն ընթացքը:

Ի սկզբանե շենքերի կառուցումը նախատեսված է եղել Ծավ գյուղի տարածքում:

Մինչդեռ՝ Ծավ գյուղում շինարարա-

ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահ Բաբկեն Սարկիսովը՝ Ղափանում

կան աշխատանքները դեռ չսկսած, նախկինում Շիշկերտ գյուղից տեղահանված և Ծավ գյուղում՝ փայտյա տնակներում ապրող բնակիչների հետ հանդիպման ժամանակ՝ 1980-ականների սկզբներին շրջանի ղեկավարության առջև կտրուկ խնդիր դրվեց.

– Եթե այդ շենքերը մեզ համար եք կառուցում Ծավ գյուղում, մենք այդտեղ չենք ապրելու, կառուցո՞ղ եք, Շիշկերտ գյուղում կառուցեք:

Ընդառաջ գնալով նախկին շիշկերտցիների պահանջին՝ վերանայվեց համալիր նախագիծը և բնակարանները կառուցվեցին Շիշկերտ գյուղի տարածքում:

Հետագա տարիներին նույնանման բնակելի շենքեր կառուցվեցին Սյունիք գյուղում և շրջանի այլ գյուղերում:

Շրջանի ողջ տարածքում մեծածավալ ճանապարհաշինարարության իրականացումը հնարավորություն ընձեռեց ապահովել բոլոր գյուղերի հետ հաղորդակցությունը՝ շրջկենտրոնի հետ կապելով հարմարավետ ճանապարհներով:

Շրջանի գյուղատնտեսության զարգացմանը նշանակալի արդյունքներ տվեցին շրջանի արտադրական ձեռնարկությունների հնարավորությունները՝ գյուղին ծառայեցնելու՝ շրջկոմի նախաձեռնությունը: Դրա էությունն այն էր, որ շրջանի՝ առանց բացառության բոլոր արտադրական ձեռնարկությունները կցվեն շրջանի յուրաքանչյուր կոլտնտեսությանն ու պետական տնտեսությանը: Խոսքը ոչ միայն խոտհնձի ու բերքահավաքի ծանրաբեռնված ժամկետում մարդկային ուժի օգնության կազմակերպման մասին էր: Այն հետևողականությամբ իրականացվում էր ամբողջ հունիս-սեպտեմբեր ամիսներին: Խոսքը նաև տնտեսությունների անասնաֆերմաների տարածքներում սիլոսի ու սենաժի պահպանման տիպային պահեստարաններ կառուցելու, գյուղում առաջացած արտադրական և մյուս խնդիրների օպերատիվ լուծմանն օգնություն կազմակերպելու մասին էր:

Գյուղերի հրատապ խնդիրների լուծմանն արդյունաբերական ձեռնարկությունների ներուժն ընդգրկելու նմանատիպ հաջողված օրինակով շատ կարճ ժամկետում լուծում տրվեց նաև Ղափան քաղաքում ավտոբուսային կանգառների կառուցման խնդրին՝ յուրաքանչյուր ձեռնարկության ու կազմակերպության տրամադրելով մեկից երեք էսքիզ: Նրանք իրենց ուժերով և կոնստրուկցիաներով կառուցել ու մոնտաժել են՝ քաղաքի ճարտարապետ Ռուբեն Դանիելյանի նախագծերով, հարմարավետ կանգառներ:

Բավականին ներուժ ունեցող Ղափանի շինարարական կազմակերպությունները չեն պարփակվել միայն Ղափան և Քաջարան քաղաքների, շրջանի գյուղերի օբյեկտների շինարարությամբ: Բացի այն, որ Մեղրիում տեղակայված «Քաջարանշին» տրեստի շարժական մեքենայացված շարասյունն իրականացնում էր տեղի արտադրական ու սոցիալական կառույցների շինարարությունը, Մեղրու շրջանի համար կարևոր ու ծավալով խոշոր այնպիսի կառույցներ, ինչպիսիք են Մեղրի քաղաքի մշակույթի պալատը, պահածոների գործարանի ընդլայնումը, Մեղրիում տեղակայված սահմանապահ ջոկատի համալիրը, Մեղրի քաղաքի հյուրանոցի շենքը կառուցվել են կապանցի շինարարների աջակցությամբ:

Նույնանման և առավել մեծ ծավալի օգնություն էր կազմակերպվել ՀԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար Կարեն Դեմիրճյանի՝ ամենշաբաթյա հսկողության տակ գտնվող Մեղրի-Քաջարան ավտոճանապարհի կառուցմանը՝ շինարարության արագացման և նախատեսված ժամկետում գործարկումն ապահովելու համար:

Ըստ էության վտանգի տակ էին Մեղրիի լեռնանցքից դեպի Մեղրի՝ մոտ երեք կիլոմետր երկարությամբ հատվածի հողային վերին շերտի ու ասֆալտապատման աշխատանքները: Ստիպված ճանապարհի այդ հատվածի աշխատանքներին նույնպես ներգրավվեցին Մեղրիի լեռնանցքից Քաջարան կառուցող և իրեն ամրացված հատվածի աշխատանքներն ավարտին մոտեցրած Ղափանի տրանսշին վարչության թիվ 906 շինկազմակերպության շինարարները: Ամբողջությամբ մոբիլիզացված էին Ղափան քաղաքի ասֆալտբետոն արտադրող հանգույցների հզորությունները, բեռնատար ավտոպարկերի ինքնաթափերը: Ղափանի ավտոձեռնարկության տնօրեն Համլետ Մինասյանը աշխատանքները երկարացված հերթափոխով կազմակերպելու հետ մեկտեղ, հանրապետության մյուս քաղաքների ավտոձեռնարկությունների իր գործընկերների միջոցով ջանացել էր մի քանի տասնյակ հավելյալ ինքնաթափեր

Ղափան գործուղելու: Այդկերպ ապահովվեց ինչպես Մեղրի-Քաջարան ճանապարհի, այնպես էլ Ղափանի շրջանի շինհրապարակների տրանսպորտային սպասարկումը:

Համատեղ, փոխադարձ օգնությամբ աշխատանքների կազմակերպումն իրականացվում էր Մեղրիի և Ղափանի շրջկոմների ղեկավարության նվիրական վերաբերմունքով:

Նույն պատասխանատվությամբ և բարձր մակարդակով կազմակերպվեց նաև Մեղրի-Քաջարան ճանապարհի բացումը՝ ՀԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար Կարեն Դեմիրճյանի, Կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանի մասնակցությամբ:

Շրջանի և առանձնապես Ղափան քաղաքի ձեռնարկությունների կողմից առարկայական օգնություն կազմակերպվեց շրջանի պատմամշակութային խոշոր հուշարձան-համալիրներ՝ Հալիձորի բերդի և առանձնապես Վահանավանքի վերականգնման աշխատանքներին: Նախ՝ առաջնահերթության կարգով Ղափանի ճանշինվարչության պետ Լենդրոշ Գրիգորյանի ղեկավարությամբ կառուցվեց ասֆալտապատ ճանապարհ մինչև Վահանավանք: Վահանավանքի վերականգնողական աշխատանքները ղեկավարող պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանին շրջանի բոլոր ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարները պատրաստակամություն հայտնեցին՝ օրվա բոլոր ժամերին իրենց դիմելու առաջացած խնդիրների օպերատիվ լուծման համար:

Շրջանի ղեկավարության համար առաջնային խնդիր է եղել տեխնիկական ուղղվածության բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղի հիմնումը Ղափան քաղաքում: Այդ մտադրությունը ժամանակին բարձրացվել էր ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանի՝ Ղափան այցելած օրերին: Մտադրությանը հավանություն տալով՝ նա շրջանի ղեկավարությանը խորհուրդ էր տվել սկսել անհրաժեշտ հիմնավորումների վերաբերյալ փաստարկների նախապատրաստումը: Տեղում՝ նաև իրեն Ղափան ուղեկցող, նախկինում շրջանում բազում խնդիրների լուծմանն ակտիվ մասնակցություն ունեցած ակադեմիայի աշխատակից Ալիս Միսակի Մարջանյանին՝ խնդրելով խորհրդատվություն ու օգնություն ցույց տալ այդ կարևոր գործում:

Շրջկոմի բաժիններն ի մի բերեցին շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման համար տեխնիկական կադրերի առաջիկա տարիների պահանջները: Ճշտվեցին Ղափան քաղաքի կազմակերպություններում աշխատող գիտությունների թեկնածուական թեզեր պաշտպանած կադրերի, Երևանի տարբեր բուհերում աշխատող՝ ծնունդով Ղափանից դասախոսների, լաբորանտների ցուցակը: Քննարկվեց և պայմանավորվածություն ձեռք բերվեց Ղափանի թիվ 27 գիշերօթիկ դպրոցի համալիր մասնաշենքերից մեկի մի մասն առանձնացնելու և Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ղեկավարությանը տրամադրելու համար: Մեծ էր գիշերօթիկ դպրոցի տնօրեն, վաստակաշատ մանկավարժ Ավիս Էլչյանի դերը: Նա իր հեղինակությամբ կարողացավ կարճ ժամկետում ստանալ Լուսավորության նախարարության համաձայնությունը՝ նախարարության հաշվեկշռում գտնվող շենքի օգտագործման իրավունքը ձևավորվելիք մասնաճյուղին հատկացնելու համար:

Սկսվեց մայր բուհի ռեկտորի տեղակալների, ամբիոնների վարիչների և մյուս պատասխանատու աշխատողների այցերը Ղափան՝ տեղում մանրամասն ծանոթանալու առաջարկվող պայմաններին:

Գործընթացը պահանջում էր ստանալ նաև ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության կամ առնվազն կենտկոմի գիտության, կրթության բաժնի դրական կարծիքը: Այն նույնպես սիրով տրամադրվեց: Ներկայացված հիմնավոր փաստարկները և շրջանի ղեկավարության պաշտոնական խնդրանքը ստանալուց հետո՝ ԵրՊԻ-ի ռեկտոր, ակադեմիկոս Ռաֆայել Մովսիսյանը հավաստեց, որ պատրաստվում են իրենց ինստիտուտում քննարկում կազմակերպել, իսկ վերջնական որոշման կգան իր՝ Ղափան այցելելուց և անձամբ իրավիճակին ծանոթանալուց հետո: Ռեկտորը Ղափան ժամանեց ինստիտուտի կուսկոմիտեի քարտուղարի տեղակալ, մեր հայրենակից Սուրեն Գևորգյանի հետ և տեղում ծանոթացավ տրամադրվող շենքային պայմաններին, արդյունաբերական ձեռնարկությունների հզորություններին ու հեռանկարներին: Այնուհետև տեղական գիտական կադրերի հետ ծանոթանալուց հետո ընդունվեց որոշում՝ Ղափան քաղաքում Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղ բացելու մասին: Մասնաճյուղի առաջին տնօրեն նշանակվեց ծնունդով ղափանցի, այդ ժամանակ մայր բուհի դասախոս Ալվարդ Անտոնյանը, ով նվիրական գործունեություն ծավալեց մասնաճյուղը կայացնելու, անհրաժեշտ կրթական մակարդակն այնտեղ ապահովելու համար:

Շրջանի համար կարևոր այդ, այնպես էլ վերը նկարագրված բոլոր խնդիրների լուծման, շրջանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովման, շրջանի կրթության, մշակույթի, առողջապահության, սպասարկման ոլորտի կազմակերպությունների կողմից աշխատավորության ու մարդկանց կարիքների լուծման գործում մեծ պատասխանատվությամբ իրենց պարտականություններն են կատարել շրջկոմի ապարատի աշխատողները, շրջկոմի 2-րդ քարտուղար Արամայիս Բաբայանը, քարտուղար Բելլա Դանիելյանը, բաժնի վարիչներ Էդիկ Հարությունյանը, Գագիկ Դավթյանը, Ռազմիկ Ղազարյանը, Սերյոժա Կարապետյանը, Ռիտա Դավթյանը, Վաղարշակ Խուդագուլյանը, Արկադի Հարությունյանը, Վյաչեսլավ Մարգարյանը, ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմի աշխատողները՝ Հարություն Բաղալյանի ղեկավարությամբ:

Շրջանում կատարվող աշխատանքների լուսաբանման, կոլեկտիվների քաջալերման, առաջացած խոչընդոտների օպերատիվ հաղթահարման, թույլ տված թերացումների ու սխալների ժամանակին բացահայտման և վերացման գործում մեծ է եղել նաև «Ղափան» շրջանային թերթի խմբագրական կոլեկտիվի դերը՝ պարբերականի խմբագիրներ Գրիգոր Գրիգորյանի, Էդիկ Սարդարյանի, խմբագրի տեղակալ Սիլվա Սահակյանի ղեկավարությամբ:

Շրջանի առջև դրված արտադրական ու սոցիալական խնդիրների հաջողությամբ լուծման համար՝ 80-ական թվականների բոլոր տարիներին շրջանի կուսակցական-սովետական մարմինների, ողջ աշխատավորության ջանքերն արժանավույն են գնահատվել: Ղափանի շրջանը քանիցս արժանացել է ՀԿԿ կենտկոմի, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի, ՀԱՄԽՀ-ի, ՀԼԿՄ կենտկոմի փոխանցիկ դրոշների:

1981 թվականին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով շրջկոմի առաջին քարտուղար Ռոլանդ Ղոնյանը պարգևատրվել է «Պատվո նշան», 1986 թվականին՝ «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով:

1988-1991 թթ. Ռոլանդ Ղոնյանը եղել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղարությանը կից տեսուչ: Այդ պաշտոնում աշխատելիս նրան հանձնարարված էր նախապատրաստել Սպիտակի երկրաշարժի հետևանքները վերացնելու համար հանրապետությունում գործող՝ միութենական շտաբի նիստերում ՀԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար Սուրեն Հարությունյանին անհրաժեշտ նյութերը:

1992-1993 թթ. աշխատել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին կից Երկրաբանության գլխավոր վարչությունում՝ արտադրատեխնիկական վարչության պետ:

1993-2005 թթ. Երկրաբանական վարչության «Հայերկրաբանէքսպորտ» արշավախմբի (հետագայում՝ ՓԲԸ դուստր ձեռնարկություն) տնօրեն:

2006 թվականին՝ կենսաթոշակի անցնելուց հետո, մասնավոր ընկերություններում աշխատել է տնօրենի տեղակալ, երկրաբան, խորհրդատու:

Ռոլանդ Ղոնյանն Անուշ Գալստյանի հետ ստեղծել է գեղեցիկ ընտանիք, ունեն երկու դուստր՝ Գայանե և Մերի:

//

ԿԱՊԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

Մկրտչյան Կարեն Սամսոնի

Կարեն Մկրտչյանը կամ ինչպես մինչև օրս նրան ճանաչում են կապանցիներն ու քաջարանցիները՝ Կարեն Սամսոնիչը, թերևս, հեղափոխություն ու անցումային շրջաններ ապրած՝ մեր իրականության մեջ անհատներից ու խորհրդային կուսակցական «շկոլա» անցած կերպարներից է, ում հեղինակությունն ու իմացության գնահատանքը չի խամրել նաև անկախության օրերում, ում հետ հաշվի են նստել նաև նոր պետականություն կառուցելիս և ում ժողովուրդը հիշում ու հարգում է ոչ իբրև զուտ կուսակցական գործիչ:

Ծնվել է 1947 թ. մայիսի 20-ին Ղափանի շրջանի Կաթնառատ (նախկին Փիրմազրա) գյուղում: 1951 թ. ընտանիքով տեղափոխվել են Քաջարան քաղաք: 1964-ին ավարտել է տեղի Խ. Աբովյանի անվան միջնակարգը, նույն տարում ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետն ու այն ավարտել 1969-ին՝ ստանալով շինարար-ինժեների մասնագիտություն: Գործուղվել է Քաջարանի շինարարական տեխնիկում՝ մասնագիտական առարկաների դասախոս:

Դա 1968 թ. քաջարանյան երկրաշարժից հետո էր, տեխնիկումը կադրային սուր ճգնաժամի մեջ էր: **«Երբ ընդունվել եմ, տեխնիկումում եւ ցերեկային բաժին կար, եւ հեռակա, եւ երեկոյան. այսինքն՝ խիստ ծանրաբեռնված էր թե՛ ուսանողների թվաքանակով, թե՛ բաժիններով, իսկ մասնագիտական առարկաների գծով ստացիոնար միակ մանկավարժը ես էի, պարապում էի բոլոր բաժիններում: Օրվա մեծ մասն ընդգրկված էի ուսումնական գործընթացում»,**– պատմում է Կարեն Մկրտչյանը՝ հավելելով, որ հաճույքով էր մանկավարժական աշխատանք կատարում, այլապես դժվար թե դիմանար նման ծանրաբեռնվածությանը:

Աշխատանքի ընդունվելուց 4-5 ամիս անց 22-ամյա երիտասարդին նշանակեցին դիրեկտորի տեղակալ՝ ուսումնական գծով: Տեխնիկումում նաև կոմսոմոլի քարտուղարն էր, և այդ հասարակական աշխատանքը տեսնելով՝ տեխնիկումում աշխատելուց մեկ տարի հետո ընդունել են կոմունիստական կուսակցության շարքերը:

1971թ. ընտրվել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար՝ շրջկոմի իրավունքով: Ակտիվ աշխատանքային գործունեության համար, որի արդյունքով առաջինն էր տարածաշրջանում, 1973թ. արժանացել է կառավարական պարգևի՝ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալի:

Նույն տարում հանրապետությունից գործուղված երիտասարդների թվում նաև նա է մասնակցել Գերմանիայում կայացած երիտասարդության համաշխարհային միջազգային փառատոնին: Դա կոմսոմոլի կենտկոմի գնահատականն էր իր աշխատանքին: Ի դեպ, Քաջարանում կոմերիտականների այն ժամանակ հիմնած «Կոմսոմոլի այգին» մինչ օրս կա: Կոմերիտական ակտիվ աշխատանքի համար նրան նաև գրանցել են կոմբինատի «Պատվո գրքում»:

1974-ին Ղափանի կուսակցական շրջանային կոմիտեն, որի քարտուղարը Ռաֆայել Մինասյանն էր, 27-ամյա Կարեն Մկրտչյանին երաշխավորել է Ղափանի շինարարական տեխնիկումի դիրեկտորի պաշտոնում: Միութենական նշանակության տեխնիկումի տնօրեն նշանակվելու համար շրջկոմի բյուրոյի երաշխավորությամբ պետք էր Մոսկվայում հանդիպել ԽՍՀՄ արդյունաբերական շինարարության նախարարի հետ, և նրա համաձայնությունից հետո են հրամանագրել այդ պաշտոնին: **«Դա առաջին տարին էր, որ տեխնիկումը Քաջարանից տեղափոխվել էր Կապան. դեռևս չկային ուսումնական, ուսումնաարտադրական մասնաշենքերը, միայն հանրակացարանի երկու մասնաշենքն էր, ճաշարանն ու կաթսայատունը»,**– հիշում է մեր զրուցակիցը: Եվ մինչ դասապրոցեսը կազմակերպում էին ուսանողների ուժերով բարեկարգված հանրակացարանի մի քանի սենյակներում, կարողացել է Մոսկվայի հետ լուրջ աշխատանք տանել մյուս՝ ուսումնական, ուսումնաարտադրական և սպորտային մասնաշենքերի կառուցումը սկսելու համար: 1975 թ. սկսվել է դրանց շինարարությունը:

Այսօր դրանք ծառայում են ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղին, և հենց այդ բազան էր, որ հնարավորություն տվեց Կապանում հետագայում ինստիտուտ հիմնել: (Ի դեպ, հետագայում՝ իր քարտուղար աշխատելու ժամանակ են կարողացել Պոլիտեխնիկի խորհրդատվական կետը դարձնել այդ բուհի Կապանի մասնաճյուղի ցերեկային բաժին):

Տեխնիկումը ղեկավարել է մինչև 1977 թ.: Այդ ընթացքում նրա աշխատանքը նկատելով՝ կուսակցության շրջկոմի առաջարկով նրան ընտրել են Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կուսակցական կոմիտեի քարտուղար: **«Մեծ պատիվ էր. 29 տարեկան էի և Հայաստանում ամենաերիտասարդ քարտուղարը դարձա: Ընդ որում՝ հանրապետությունում կարևոր պաշտոն էր, դրա համար ոչ միայն շրջանային կոմիտեի և ՀԿԿ կենտրոնական կո-**

միտեի, այլև ԽՄԿԿ կենտկոմի երաշխավորությունն էր պետք»: Մի քանի ամիս աշխատելուց հետո միավորվել են Կապանի պղնձահանքային և Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատներն ու դրանց կուսկազմակերպությունները, և նա դարձել է միավորված «ՀՊՄԿ»-ի կուսակցական կոմիտեի քարտուղար: Աշխատանքային գործունեությունը գնահատվել և արժանացել է «Պատվո նշան» շքանշանի: Այստեղ աշխատել է վեցուկես տարի:

Ի դեպ, կոմսոմոլի քարտուղար աշխատելու տարիներին սովորել է նաև բարձրագույն կոմերիտական դպրոցում, կուսկոմիտեի քարտուղար աշխատելու ժամանակ՝ ավարտել կուսակցական բարձրագույն դպրոցը (1979-82 թթ.):

1983-ին ՀԿԿ կենտրոնական կոմիտեի առաջարկությամբ ընտրվել է Ղափանի շրջանային սովետի գործադիր կոմիտեի նախագահ՝ աշխատելով մինչև 1988 թ.:

Շարժում. այդ օրերին և հետո

1988 թ. նոյեմբերից մինչև 1991 թ. ՀԿԿ Կապանի շրջկոմի առաջին քարտուղարն էր: **«Շարժումն սկսված էր. քարտուղար ընտրվելուց հետո առաջին զանգը Գորիսից էր. հայ-ադրբեջանական բախում էր տեղի ունեցել, օգնություն էր պետք, ու իմ առաջին հանձնարարականը ոստիկանապետին էր՝ հավաքել եղած զենքն ու օգնության մեկնել»,**– պատմում է Կարեն Մկրտչյանը:

Ծանր ու աննախանձելի ժամանակներում էր ստանձնել պաշտոնը, որը նախկին խաղաղ ժամանակներում ցանկալի կլիներ, իսկ այդ խառն օրերին՝ դժվար ու պատասխանատու:

Հետո Սպիտակի երկրաշարժը եղավ. աղետի գոտուն ևս օգնել էր պետք:

1990-ին ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Շարժման այդ թեժ ժամանակներում կուսկազմակերպության քարտուղարի պատգամավոր ընտրվելը ևս երևույթ ու ժողովրդի գնահատանքի արդյունք էր, կատարած աշխատանքի արգասիք: **«Թվում է, թե Շարժման տղաների համար պետք է թիրախ լինեի, բայց հակառակն էր, որովհետև այդ երկու տարում կարողացել էինք բավականին աշխատանք տանել սահմանների պաշտպանության, բնակչության սննդապահովման և այլ կարևոր բնագավառներում»,**– պարզաբանում է նախկին պատգամավորը: Ընդ որում՝ ընտրություններում իր հետ այդ ժամանակվա Շարժման ակտիվիստներն էին պայքարում, և նման պայքարում 75 տոկոս ձայն ստացավ: **«Դա նշանակում էր, որ եթե նախկինում իմ աշխատանքը գնահատել էր կառավարությունը, այժմ՝ ժողովուրդը՝ իր վերաբերմունքով»:**

Երբ կրկին խոսում ենք 88-ի թեմայից, հարցնում ենք, թե ինչպե՞ս է կարողացել գլուխ հանել գրաված պաշտոնի գաղափարական-իշխանական պահանջների և նոր ստեղծված իրավիճակում հայրենիքին ծառայելու, ինքնապաշտպանություն կազմակերպելու հրամայականի բախումից:

Պատմում է, որ կուսակցության շրջկոմի, այսպես ասած, «հակառակ ճամբարում» հայտնված Շարժման տղաներին ինքն ի սկզբանե հորդորել է՝ Երևանի քայլերով չգնալ, սահմանամերձ շրջանում ենք ապրում, և պետք է միասնական լինել, միասնական պայքարել. **«Մեր ճանապարհները փակ էին, ու պետք է միասնական լինելով՝ կարողանայինք ժողովուրդ պահել: Եվ մեզ մոտ 1989-90թթ. լուրջ հակասություններ չեն եղել, քիչ զոհեր ենք տվել, որովհետև ստեղծեցի իրավիճակների վերահսկողության շրջանային շտաբ, որտեղ ընդգրկեցի նաև ՀՀՇ-ի կարկառուն ներկայացուցիչներին. այդ տարիներին շրջանի հետ կապված բոլոր խնդիրները քննարկում էինք միասին: Ահա թե ինչու, երբ հետագայում էլ նրանք ղեկավարներ դարձան, ինձ հարգում և ընդունում էին»:** Իր այդ օրերի ամենալուրջ գործերից և այդ համագործակցության արդյունքներից առանձնացնում է նաև Ղափանի շրջանում բնակվող ադրբեջանցիներին 20 օրում՝ առանց զոհերի և միջադեպերի տեղափոխելը... Հեռացող ադրբեջանցիներին հնարավորություն էր տրվել իրենց տները փոխանակել այնտեղից եկող փախստականների բնակարանների հետ: Իսկ ընդհանրապես նրանք, ցանկության դեպքում, իրենց հետ տանում էին սեփական գույքը...

Այդ ընթացքում կամ դրանից հետո փախստականներ եկան Ադրբեջանից, և նրանց պետք էր տեղավորել, նախկին քաղաքաբնակին պետք էր համոզել ու բնակեցնել գյուղերում... Լուրջ խնդիրներ կային՝ աշխատանքով ապահովում, դպրոցների, մանկապարտեզների բացում... Եթե հիշենք նաև երկրաշարժը, սահմանների պաշտպանությունը, հարևան ազերիների հետ հանդիպում-բա-

ՀԿԿ կենտկոմի 1-ին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հետ

նակցությունների գնալը, շրջափակումը, երկաթուղու գործունեության ընդհատումն ու շրջանի ժողովրդին միայն օրական 70 տ սնունդ հասցնելը, այն ժամանակվա ղեկավարին չես նախանձի… Դժվարին, հեղափոխական ժամանակներում, երբ հինը կործանվում էր, իսկ նորը դեռ կառուցվում էր, ճկունություն էր պետք այդ իրավիճակում ղեկավար լինելու համար, ինչը բոլորին չէ, որ հաջողվել է…

Ինչ վերաբերում է պատգամավորական աշխատանքին, Կարեն Մկրտչյանը նշում է, որ պատերազմական տարիներին շրջանի ղեկավարության հետ (այն ժամանակ՝ Ռադիկ Սարուխանյան, Սլավիկ Հայրապետան) պայմանավորվել էր՝ ներքին հարցերով զբաղվում են իրենք, հանրապետական գերատեսչությունների, կառավարության հետ կապված հարցերով ինքն է զբաղվում: Այդ տարիներին իր պատգամավորական գործունեության ամենախոշոր աշխատանքը համարում է այն, որ պատերազմական գործողությունների սկսվելուց հետո կառավարության արտահերթ նիստ է հրավիրել՝ քննարկելու միայն Կապանի հետ կապված խնդիրները, ինքն այդտեղ զեկուցող է եղել:

1991թ. անկախացումից հետո, երբ շրջսովետի ընտրություններ պետք է լինեին, առաջարկ է եղել՝ եթե թողնի կուսակցական տոմսը, շրջսովետի գործկոմի նախագահ կընտրեն… Չի համաձայնել՝ մտածելով, որ բնակչությունը չի ընդունի իր այդքան արագ անցումը…

Այդուամենայնիվ, նրա ուժերը գնահատել են նաև նորանկախ հանրապետության կառուցման ժամանակ: Չնայած նոր իրավիճակին, պահպանել է իր քաղաքական դերը շրջանում, նրա կարծիքը հաշվի են առել շրջանին վերաբերվող առանցքային հարցերը քննարկելիս:

1991-ի գարնանը նշանակվել է Կապանի պահածոների գործարանի տնօրեն, 1994-ին՝ Կապանի անտառտնտեսության տնօրեն, 1996-ին՝ «Խուստուփ» ՓԲԸ տնօրեն, որը զբաղվում էր քաղաքի ջրամատակարարման հարցերով: 1999թ. Հայպետստանդարտի «Կապան-Թեթ» ՓԲԸ տնօրենն էր, որտեղ կատարած աշխատանքի համար գրավոր շնորհակալություն է հայտնվել, ու վարչապետի կարգադրությամբ նշանակվել է Հայպետստանդարտի կոլեգիայի անդամ:

2005 թվականից մինչ 2016 թ. «ՀՊՄԿ» ՓԲԸ շինարարության գծով տնօրենի տեղակալն էր…

Անհատը

Տան կրտսեր զավակն է եղել: Տասներեք տարեկան էր, երբ զրկվեց ծնողներից: Հետո բնակվել է եղբոր հետ: **«Ու եթե այդքան երիտասարդ տարիքում դարձա կոմսոմոլի քարտուղար, դա մինչև այդ իմ երկու տարվա գործունեության արդյունքն էր, այլ ոչ թե ինչ-ինչ կապերի: Ինչպես ասում են՝ «առաջ եմ գնացել» իմ ուժերով: Երբ հետագայում մեկ-մեկ հարցնում էին, թե՝ ծնողներ չես ունեցել, ինչպե՞ս ես դաստիարակվել, պատասխանում էի՝ մեր հասարակության դաստիարակության արդյունքն եմ…»:**

ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստր Լոմակոն՝ Քաջարանում

Ծննդավայրից եկող ամենավառ հիշողությունները կապված են ընկերական շրջապատի հետ. **«Դա մաքուր ընկերություն էր, որը ձգվում է մինչ այսօր: Բայց քանի որ ծնողներ չունեի և ավելի շատ մեծերի հետ էի ընկերություն անում, ընկերներիցս ոմանք, ցավոք, այսօր չկան»**:

Ութերորդ դասարանից մինչև բուհի 4-րդ կուրս ազատ ոճի ըմբշամարտով է զբաղվել: Սպորտի վարպետի թեկնածու է:

Մանկությունից սիրել և հիմա էլ սիրում է ընթերցել: **«Գեղարվեստական գրքերից Ալեքսանդր Դյումայի ստեղծագործություններն եմ սիրել և Ա. Կզնունու «Օտարականը»: Հետո փիլիսոփայությունը սկսեց ձգել ու սեղանիս գրքերին փիլիսոփայական գրքերն ավելացան: Հիմա, օրինակ, սեղանիս է Դավիթ Անհաղթը. պահ կա՝ ցանկանում եմ գեղարվեստական գիրք ընթերցել, պահ կա՝ փիլիսոփայական: Դրա նպատակն այն է, որ ուղեղիս ճկունությունը պահպանվի: Երբեմն ընթերցածս եմ վերընթերցում: Եվ սիրում եմ նաև հեղինակավոր մարդկանց կյանքի մասին կարդալ»:**

Իր կյանքում ու ճակատագրում էական դեր ունեցած անձանցից Կարեն Մկրտչյանն առանձնացնում է ՀԿԿ Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆայել Մինասյանին: **«Նրա մեջ նախ գնահատեցի և նրանից ընդօրինակեցի իր խոսքի հեղինակությունը հարգելը, որը շատ կարևոր է ղեկավարի համար և նաև՝ իր ուժեղ լինելը՝ չսողալ, այլ մարդու երեսին ասել դուր չեկած բանը. ձգտել եմ պահել այդ սկզբունքները»:**

Իսկ ինքը՝ Կարեն Մկրտչյանը, իր սկզբունքներից առանձնացնում և ուրիշներին էլ խորհուրդ է տալիս այն, ինչով առաջնորդվել է ողջ կյանքում՝ թե՛ աշխատանքում, թե՛ մյուս բոլոր ոլորտներում՝ մինչև որոշում կայացնելը լսել դիմացինին: **«Երբ իբրև ղեկավար հարցադրում եմ արել կամ որևէ միջավայրում ուրիշներն են հարցադրում արել, առաջինը չեմ պատասխանել կամ առաջինը որոշում չեմ կայացրել: Ճիշտ է լսել մարդկանց և հետո նոր քո կարծիքը հայտնել: Հատկապես ղեկավարի համար դա որոշիչ նշանակություն ունի»:**

Ուշագրավ են Կապանի մասին նրա դատողությունները. **«Շատ եմ սիրում Կապանը, ու նաև բնակչության փոխադարձ հարգանքը… Իսկ այդ վերաբերմունքի արմատները տեսնում եմ հետևյալում. որտեղ էլ աշխատել եմ, հնարավորինս ձգտել եմ օգտակար լինել մարդկանց ինչքան ուժս պատել և իրավունքներս թույլ են տվել: Իհարկե, պատահել է նաև, որ մարդկանց եմ ազատել աշխատանքից, բայց չի եղել չփաստարկված ազատում: Չի եղել նեղ-անձնական մտածելակերպ: Աշխատանքում շատ խիստ եմ եղել»:**

Իր բնավորության մասին խոսելիս՝ որպես «թերություն» հենց աշխատանքում իր չափից դուրս պահանջկոտությունն է նշում՝ պատմելով դեպքեր, թե ինչպես է տուժել դրանից. իր նախկին ենթակաները չեն ներել դա… **«Սակայն ես**

Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի հետ

չեմ ասել՝ գնացեք ու կատարեք: Ես պայմաններ եմ ստեղծել իմ հանձնարարությունը կատարելու համար»:

Իսկ ինքն իր մեջ ամենից շատ գնահատում է աշխատասիրությունը և նվիրվածությունն աշխատանքին, մարդու հանդեպ հարգանքը:

Ինչ է թողել

Ղափանի շրջխորհրդի գործկոմի նախագահ և ՀԿԿ Կապանի շրջկոմի առաջին քարտուղար աշխատելիս՝ գործունեության մասին պատմելիս, մեր զրուցակիցը շրջանի կյանքում իր ներդրումներից մի քանի գործ է առանձնացնում, որոնց շնորհիվ պիտի ինքը մնա տարածաշրջանի պատմության մեջ: Առաջին հերթին՝ գործկոմի նախագահ եղած տարիներին իր կատարած աշխատանքն է գյուղապահպանության ոլորտում, գյուղատնտեսության զարգացման, գյուղի բնակչության սոցիալական հարցերի լուծման ուղղությամբ: Հանրապետությունում Ղափանի շրջանը միակն էր, որտեղ գյուղերում այգեգործական ընկերություններ ստեղծվեցին: **«Տեսա գյուղերի վիճակը, որտեղ գրեթե բնակչություն չկար, գյուղերը վերանում էին, իսկ այդ ժամանակ տվյալ գյուղացի քաղաքաբնակին չէին թույլատրում այնտեղ տուն կամ ամառանոց կառուցել: Կարողացա կենտկոմին համոզել, մշակել այգեգործական ընկերությունների մասին եզակի կանոնադրություն, որը կառավարությունը հաստատեց և որով թույլատրվեց քաղաքում հաշվառվածին գյուղում հատկացնել տնամերձ հողեր ու թույլատրել ամառանոց կառուցել: Այդտեղից սկսվեց նրանց կապը գյուղի հետ»:**

Հիշում է նաև, որ նոր ցեղատեսակի անասուններ են բերել շրջան, առաջին անգամ հանրապետությունում մեքենայացված կիթ են կազմակերպել, դա հասցրել նաև յայլաղներ, բարելավել այնտեղի կենսապայմանները:

Իսկ քարտուղար աշխատելու ժամանակ ամենամեծ հաջողությունը համարում է այն, որ կարողացել է ստեղծված դժվարին իրավիճակից անվտանգ դուրս բերել բնակչությանը. **«Երբ գնացքն արդեն այստեղ չէր հասնում, մարդիկ աշխատում էին, այդ բարդ տարիներին կարողացանք եւ տնտեսություն պահել, եւ ժողովուրդ, եւ լուրջ ինքնապաշտպանություն կազմակերպել: Մեծ պայքարով կարողացա Աղվանի-Տաթև ճանապարհի շինարարությունն սկսել, որը պատերազմի ժամանակ կյանքի ճանապարհ դարձավ...»:**

Կարեն Մկրտչյանի պաշտոնավարության օրոք կառուցվեցին Հայրենական մեծ պատերազմում զոհված կապանցիների հիշատակը հավերժացնող և Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողները: Դրանով ամբողջացավ Բաղաբուրջի հուշահամալիրը:

Եվս մի քանի «շտրիխ» նրա դիմագծին

Կարեն Մկրտչյանի կերպարն ուշագրավ է մի քանի առումով: Նախ՝ նա Կապանի իշխանության ղեկը ստանձնեց մեր պատմության հիրավի դժվարին ու հակասական, բայց և հերոսական օրերում՝ ազգային զարթոնք, Արցախյան գոյամարտ, իշխող գաղափարախոսության և պետական կարգի ճգնաժամ (հաճախ՝ երկիշխանության ակնհայտ դրսևորումներով), տնտեսական կապերի փլուզման սկիզբ, հաղորդակցության (հատկապես՝ տրանսպորտային) ուղիների մինչ այդ գործող համակարգի (շրջափակումների հետևանքով) կազմալուծում և նոր ուղիների ստեղծում, ժողովրդագրական դարակազմիկ տեղաշարժեր՝ ադրբեջանցիների արտագաղթ, հինգ հազար հայի ներգաղթ ու բնակեցում շրջանում: Այդ հիմնախնդիրների շուրջ ստեղծված իրավիճակից, տարիների հեռվից կարելի է ստույգ ասել, նա դուրս եկավ այրաբար:

Կարեն Մկրտչյանը մարդկային մի շարք առաքինությունների կրող է՝ բարեկրթություն, համեստություն, կամեցողություն, չափի զգացում, մարդամոտություն, վստահված գործի հանդեպ պատասխանատվություն... Այդ որակները նրա մեջ ձևավորվել, շաղախվել են յուրովի: Համո Սահյանն է ասում՝ անհայր տղան մանկություն չի ունենում, երիտասարդ չի լինում և շուտ է այրանում :

Մարդը փոխվում է անընդհատ: Դա, կարելի է ասել, տիեզերքի օրենքներից է, որից ոչ ոք չի կարող խույս տալ: Կարևորն այն է, թե այդ փոփոխությունը մարդուն որտեղ և որ հանգրվան է դուրս բերում: Կարեն Մկրտչյանի հետ շփումներից, նրա հետագա գործունեության առանձին դրվագներ քննելուց չի կարելի չտեսնել, որ մարդկային նրա որակների մեջ ողջամիտն ավելի իշխող է դարձել, անկեղծությունը՝ ավելի բյուրեղացել, ազատությունը՝ ավելի ակնհայտ դարձել: Կուսակցական պաշտոնյային հատուկ հոգեբանական բարդույթներից էլ ձերբազատվել է: Հանրապետության խոշոր շրջաններից մեկի ղեկավարի համար այնքան էլ դժվար չի եղել հետագայում նույն շրջանում երկրորդական բնույթի աշխատանքներ կատարելը: Ինքն էլ կարող էր հետխորհրդային շրջանում հեռու կանգնել և կողքից հայեցողի դեր ստանձնել: Ինքն էլ կարող էր չմոռանալ իր քաղաքական ծագման ակունքը: Բայց իրականությունից չօտարվելու հավատամք որդեգրեց և ակտիվորեն խառնվեց նոր կյանքին...

ՀԿԿ կենտկոմի անդամ էր (1989-91 թթ.), Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր (1990-95 թթ.):

Պարգևատրվել է, ինչպես նշեցինք, «Պատվո նշան» շքանշանով, «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով, մի շարք պատվոգրերով, հուշամեդալներով:

Կարեն Մկրտչյանը ստեղծել է գեղեցիկ ընտանիք: Կինը՝ Հասմիկ Դադայանը մասնագիտությամբ բժշկուհի է:

Ունեն երկու զավակ՝ Հայկն ու Իրինան:

//

ԿԱՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐ

Կարապետյան Արմեն Սերգեյի

ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ՝ Կապանում

Ծնվել է 1954 թվականի հուլիսի 31-ին Կապանում:

Ավարտել է թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1974-1975 թվականներին ծառայել է խորհրդային բանակում:

1980 թվականին ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկական ֆակուլտետը՝ ճարտարագետ–էներգետիկի մասնագիտությամբ:

2007 թ. ավարտել է Մոսկվայի ժամանակակից հումանիտար ակադեմիայի Կապանի մասնաճյուղի իրավաբանական ֆակուլտետը՝ իրավաբանի մասնագիտությամբ:

1980-1982 թթ. Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայի արտադրամասի պետն էր:

1982-1991 թթ.՝ Սյունիքի ստորգետնյա գազատարների շահագործման ծառայության պետը:

1991-1998 թթ. եղել է Կապանի գազալցման բազայի տնօրեն, 1998-2002 թթ.՝ «Հայռուսգազարդի» Սյունիքի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն:

1998 թվականից Արմեն Կարապետյանն անդամակցել է Հայաստանի Հանրապետական կուսակցությանը:

2002 թ. ընտրվել և 2005 թ. վերընտրվել է Կապանի քաղաքապետ:

2011-2013 թթ. եղել է Սյունիքի մարզպետի խորհրդական:

2013 թ. սեպտեմբերի 20-ին ԱԺ պատգամավոր է ընտրվել թիվ 38 ընտրատարածքից, եղել է Ազգային ժողովի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

Պարգևատրվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ոսկե մեդալով (2006 թ.), «Մայրական երախտագիտություն» մեդալով (2007 թ., ԼՂՀ):

Արմեն Կարապետյանն ունի երկու դուստր. Լիլիթ Կարապետյանը մասնագիտությամբ բժշկուհի է, զբաղվում է բժշկական գիտություններով, բժշկական թեմաներով 17 հոդված է հեղինակել: 2022 թվականին ԱՄՆ-ում արժանացել էր «Կրտսեր գիտաշխատող» մրցանակի:

Մյուս դուստրը՝ Սիրանույշը, բարձրագույն կրթություն է ստացել Մյունխենում, ավարտել ասպիրանտուրան, մասնագիտացել է վիճակագրության բնագավառում, դոկտորական թեզ է պաշտպանել:

Կինը՝ Անահիտ Այվազյանը, գիտությունների թեկնածու է, դոցենտ, դասավանդում է Հայաստանի ազգային պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղում, 23 հոդվածի և երեք գյուտի հեղինակ է:

Հայացք 2000-ականների սկզբի Կապանին՝ ըստ Արմեն Կարապետյանի

■ Աշխատանքներ ենք կատարել Կապան քաղաքի գլխավոր հատակագծի հաստատման ուղղությամբ:

Գլխավոր հատակագիծ մշակելու համար «Հայնախագիծ» ԲԲ ընկերության կողմից երեք անգամ աշխատանքներ են կատարվել: Նախավերջին անգամ՝ մոտ 40 տոկոսի չափով: Սակայն կառավարությունը միջոցներ հատկացրեց, որը հնարավորություն տվեց այդ աշխատանքներն ավարտին հասցնել:

Եվ 2006 թվականին ունեցանք Կապան քաղաքի գլխավոր հատակագիծը: Մինչ այդ Կապանն ամբողջական հատակագիծ չի ունեցել, առանձին թաղամասեր ունեցել են, բայց ամբողջական քաղաքը՝ ոչ:

■ Հաստատվել է նաեւ Կապանի մուտքը խորհրդանշող կոթողի նախագիծը:

Շինաշխատանքներն ընթացքի մեջ են: Քաղաքի մուտքը խորհրդանշող կոթողի հիմնակմախքը երկաթբետոնից է, երեսապատումը՝ սպիտակ մարմարից:

Հիմքը կլինի գրանիտից, որտեղից ձգված կլինեն երեք սյուն՝ փոքր, միջին, մեծ: Փոքր սյան հատվածը խորհրդանշում է առաջին հանրապետությունը, միջին երկարության սյունը՝ Խորհրդային Հայաստանն է: Կենտրոնից ավելի վեր ձգված է անկախ Հայաստանի նորաբողբոջ սյունը: Արեւելյան ճակատին կտեղադրվի ՀՀ զինանշանը, անգլերեն կգրվի «Կապան» անունը, իսկ արեւմտյան ճակատին կտեղադրվի Կապանի զինանշանը, հայերեն կգրվի «Կապան»: Գործարանային փողոցին նայող ճակատին ամրացվելու է ՀՀ եռագույն դրոշը:

Կոթողը կլինի Երեւան-Կապան միջպետական ճանապարհի հարեւանությամբ, քաղաքի արեւելյան մասում, Գործարանային փողոցի սկզբնամասում:

■ Քաղաքը լեռնահանքային արդյունաբերության կենտրոն է, այսօր էլ նոր հանքավայրեր են հետազոտվում եւ հայտնաբերվում:

Եթե մինչեւ այժմ մեր առջեւ նպատակ էինք դրել առօրեական խնդիրներ լուծել, այսօր արդեն լուրջ ուշադրություն պետք է դարձնենք բնապահպանությանը:

■ Եթե երկու-երեք տարի առաջ ներդրումներն ամբողջովին ուղղված էին բնակֆոնդի պահպանմանը, վերելակների, պատուհանների, ռմբակոծված շենքերի վերականգնմանը եւ նմանատիպ այլ խնդիրների լուծմանը, այսօր արդեն լուրջ ներդրումներ ենք կատարում սպորտի, մշակույթի ոլորտներում, հիմնանորոգում ենք մշակույթի կենտրոնը, ավարտին է հասցվել մարզադպրոցի հիմնանորոգումը:

■ Առաջիկայում՝ 2008 թ. սեպտեմբերի 14-ին, կնշենք Կապանին քաղաքի կարգավիճակ տալու 70-ամյակը:

■ Քաղաքի խնդիրներից մեկը բնակելի շենքերի տանիքների վերանորոգումն է, ինչով եւ զբաղվում ենք: Չկա տարի, որ 200 մլն դրամ չհատկացնենք տանիքների վերանորոգմանը:

■ Այսօր մեր քաղաքի ամենաառաջնահերթ խնդիրն այն է, որ ստեղծվի արտադրական այնպիսի մի ձեռնարկություն, որտեղ 200-300 կին աշխատելու հնարավորություն ունենա:

■ Մեր քաղաքը հարուստ էր գործարաններով, որոնցում խորհրդային տարիներին մոտ 19 հազար աշխատող կար: Հիմա չկան այդ ձեռնարկությունները, չկա նաեւ արդյունաբերական Կապանը: ...Դատարկ մնացած տարածքները, կլինեն հողատարածքներ կամ շինություններ, որտեղ հնարավոր է որեւէ արտադրություն կազմակերպել, ինչ-որ բան կառուցել, սպասարկման կետ բացել, հատկացրել եւ հատկացնում ենք ցանկացողներին՝ պահպանելով քաղաքաշինական նորմերը: Այդպիսով ճանապարհ բացեցինք փոքր ու միջին բիզնեսի համար:

2003-2008 թթ. 3400-ից ավելի մարդ է ընդգրկվել նման աշխատանքներում:

■ 2002 թվականից, երբ ընտրվեցի Կապանի քաղաքապետ, մինչեւ 2004-2005 թվականները քաղաքացիներն ամենաշատը դիմում էին գումար ստանալու խնդրանքով. հացի պարտք ունեին խանութներում, էլեկտրաէներգիայի վարձը չէին կարող վճարել, բնակարանը չէին կարողանում գազիֆիկացնել, երեխայի ուսման վարձը չէին կարողանում տալ...

Տարեցտարի պահանջները փոխվեցին: Հիմա քաղաքապետի մոտ ընդունելության եկողներից հարյուրից մեկը կարող է նման խնդրանքով դիմել:

Այսօր հիմնականում դիմում են տարածք ու հող վերցնելու համար:

■ 2005-2008 թթ. մոտ 3 հազար մարդ է վերադարձել Կապան, ովքեր նախկինում, ինչ-ինչ պատճառներով, հեռացել էին քաղաքից:

■ Վերջին տարիներին Կապանում բավականին թվով մետաղյա տաղավարներ ենք վերացրել...

ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ հարգանքի տուրք են մատուցում Գարեգին Նժդեհի հիշատակին

Ոչ մեկին չենք պարտադրել: Դրանց մեծ մասը վնասով էր աշխատում:

Արդեն 200-ից ավելի տաղավար է հանվել:

Փոխարենը տալիս ենք ժամանակակից խանութներ կառուցելու հնարավորություն:

■ Եթե կենտրոնական փողոցները քիչ թե շատ բարեկարգվել են, ապա դեպի ծայրամասային թաղամասեր տանող ճանապարհներն անմխիթար վիճակում են:

Դա քաղաքի լուրջ խնդիրներից մեկն է:

ՀՀ նախագահին եւ հանրապետության կառավարությանն ենք դիմել այդ հարցով, տարբեր ուղղություններով ծրագրեր ենք ներկայացրել, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունն է մեծ աշխատանք կատարում:

Մի խոսքով՝ փորձում ենք այդ խնդիրը լուծել, նաեւ բակերը բարեկարգել:

■ Կապան քաղաքում առաջին հերթին խոշոր ներդրում է կատարում կառավարությունը: Եթե նախկինում մարզերն այդքան էլ ուշադրության կենտրոնում չէին, ապա վերջին տարիներին ավելի մեծ ուշադրություն է դարձվում:

Ընթացիկ՝ 2008 թվականին այդ ներդրումները կհասնեն մոտ 1 մլրդ դրամի:

Տարեկան մոտ 600 մլն դրամ ներդրում է կատարում Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը:

Միջազգային կառույցներից հատկապես նկատելի է USAID-ի ներդրումը:

Մենք նման աջակցությունների կարիք ունենք, քանզի համայնքային բյուջեով քաղաքի առջեւ ծառացած այդ խնդիրները չենք կարող լուծել:

2008-ի համայնքային բյուջեն 650 մլն դրամ է, բայց, կարծում եմ, կհասնի 800 մլն-ի:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

1988թ. Կապան

ԿԱՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐ

Սարուխանյան Ռադիկ Ռուբենի



Ծնվել է 1952 թվականի մայիսի 12-ին, միջնակարգ կրթություն է ստացել Ղափանի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 դպրոցում, այնուհետև ավարտել Երևանի պետհամալսարանը՝ մեխանիկի որակավորմամբ:

Բուհն ավարտելուց հետո ուսուցչություն է արել Կապանի թիվ 6, 13, 27 գիշերօթիկ դպրոցներում, աշխատել է որպես Կապանի քաղժողկրթբաժնի մեթոդկաբինետի վարիչ:

1988-ին սկիզբ առած Արցախյան ազատագրական շարժման ակունքների մոտ կանգնած անձնավորություն է Ռադիկ Սարուխանյանը, Արցախի արդար պահանջատիրությանը միտված ցույցերի ու հանրահավաքների կազմակերպիչներից մեկը Կապանում:

1990 թվականին ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին գումարման պատգամավոր, եղել է Գերագույն խորհրդի գիտության, կրթության, մշակույթի հանձնաժողովի փոխնախագահ:

1991-ի հունվարի 9-ին Ռադիկ Սարուխանյանն ընտրվել է Կապանի քաղխորհրդի նախագահ և պաշտոնավարել մինչև 1996 թվականի փետրվար ամիսը:

Կապանը ղեկավարեց պատերազմական պայմաններում և իր գործունեության հիմնական ուղղությունը համարում էր քաղաքի պաշտպանության և բնակչության կենսապահովման կազմակերպումը:

Քաղաքի մշտական ռմբակոծում-հրետակոծումներին ավելացել էր տնտեսության մեջ ստեղծված արտակարգ իրավիճակը:

Ռադիկ Սարուխանյանն այն համոզմունքն ուներ և ունի, որ Կապանում պատերազմական ժամանակաշրջանում ապրած յուրաքանչյուր մարդ հերոս է:

1996-ի փետրվարից նրա աշխատանքային գործունեությունն անցել է էներգետիկական համակարգում, եղել է Հայաստանի էլեկտրական ցանցերի Սյունիքի մարզի էներգահսկողության պետ: Աշխատել է մինչև 1998 թվականը և տեղափոխվել Երևան՝ գործունեությունը շարունակելով էներգահամակարգում մինչև 2008 թվականը: Այդ թվականի մարտի 1-ի իրադարձությունների հետ կապված՝ աշխատանքից ազատեցին: Հետագայում վերականգնվեց աշխատանքում և գործունեությունը շարունակեց մինչև 2017 թվականն ու անցավ կենսաթոշակի:

Ռադիկ Սարուխանյանը երևանաբնակ կապանցիների «Կապան» հայրենակցական միության միջոցով փորձում է օգտակար լինել իր հայրենակիցներին:

Սարուխանյանը համերաշխ ընտանիք ունի. երեք զավակ՝ երկու որդի, մեկ դուստր: Որդիներից մեկը ճանաչված բժիշկ է, մյուսը՝ միջազգայնագետ: Դուստրը ֆինանսիստ է, բանկային համակարգում է աշխատում:

* * *

Ռադիկ Սարուխանյանն այն անձնավորություններից է, որի հուշերի օգնությամբ տեղեկանում ենք 1988-ին սկիզբ առած Արցախյան շարժմանը Կապանի ու կապանցիների մասնակցության մասին:

Կապանն անմիջապես արձագանքեց 1988-ին սկիզբ առած շարժմանը: Հայաստանում և Ղարաբաղում ձևավորվող շարժմանն աջակցող տեղական ուժերը կազմակերպչական տարբեր փուլեր անցան: Հետագայում արդեն Կապանը՝

Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Սյունիքի 1-ին մարզպետ Սուրեն Աբրահամյանի հետ

ուզած-չուզած, հայտնվեց իրադարձությունների կիզակետում, քանի որ սահման էր, և սեփական ուժերով քաղաքի ու մերձակա գյուղերի ինքնապաշտպանությունը պիտի կազմակերպվեր: Անցումային այդ օրերի պատկերը փորձում ենք վերականգնել անկախ Հայաստանում Կապան քաղաքի առաջին ղեկավար Ռադիկ Սարուխանյանի հուշերի օգնությամբ:

– Կապանում 1988 թ. առաջին միտինգը տեղի ունեցավ փետրվարի 24-ին: Կազմակերպիչներն էին Էդիկ Բաղդասարյանը (Սամուն Էդոն) և Համլետ Քոչարյանը: Շարժումը սկսեց ծավալվել, դրան միացան Սուրիկ Կարապետյանը, Նորիկ Հովհաննիսյանը, այլ անձինք…

Իսկ տեղական իշխանությունները, բնական է, շատ սառնությամբ և զգուշավորությամբ էին դիմավորում շարժումը, բայց ավելի շատ ոչ թե տեղական իշխանություններն էին թելադրողը, այլ ազգային անվտանգության աշխատակիցները:

Կապանում իրադարձությունները զարգացան մինչև հունիսի 5-6-ը, երբ միտինգը ցրեցին, կալանավորեցին Նորիկ Հովհաննիսյանին, Համլետ Քոչարյանը փախավ (Էդիկին առաջին միտինգներից հետո ԱԱԾ-ն էր մեկուսացրել): Ճիշտ է, մի քանի ժամ հետո Նորիկին բաց թողեցին, բայց շարժումը՝ որպես այդպիսին, Կապանում մարեց: Մոտ մեկ ամիս հետո տղաները (Սուրիկ Գրիգորյան, Սուրիկ Կարապետյան), հաշվի առնելով իմ ակտիվությունը, մոտեցան ինձ (այդ ժամանակ աշխատում էի ժողկրթբաժնում), առաջարկեցին շարժումը նորից սկսել ընդհատակյա: Ու սկսեցինք արդեն մարդիկ անդամագրել: Ընդ որում՝ եթե առաջին փուլում ինչ-որ տեղ անղեկավարելի էր շարժումը, երկրորդում աշխատեցինք հնարավորինս ինտելիգենտ զանգված հավաքել մեր շարքերում:

Սկզբում կորիզն այս երեք հոգին էին, հետո նրանց կրկին միացավ Նորիկ Հովհաննիսյանը, և մեկ հոգի էլ կար, ով շրջկոմի աշխատող էր ու այն ժամանակվա գաղտնի նիստերից առ այսօր չի ցանկանում, որ իր անունը նշվի… Հավաքվում էինք, ծրագրեր մշակում, մարդ էինք ուղարկում Երևան՝ տեղեկատվություն փոխանակելու, շարժման լիդերների հետ կապ պահպանելու համար: Կազմակերպական աշխատանքները մոտ երկու ամիս տևեցին: Առաջին միտինգը կազմակերպեցինք 1988 թ. հոկտեմբերի սկզբին. բավականին բազմամարդ, Կապանի համար անսովոր միտինգ էր: Ու այնտեղ հայտարարվեց, որ ստեղծվում է «Ղարաբաղ» կոմիտեին աջակցող Կապանի կոմիտեն: Այն 13 հոգուց կազմված խորհուրդ էր, ու այդ օրվանից սկսվեց բացահայտ և ամենօրյա աշխատանքը:

Այդ ժամանակ արդեն ճնշումներն էլ էին թուլացել. ճիշտ է, փորձում էին խանգարել միտինգները, միկրոֆոն կամ տարածք չէին տրամադրում և այլն…

Միտինգներն անցնում էին ներկայիս Նժդեհի հրապարակում: Իսկ կազմակերպիչները հավաքվում էին տարբեր ընկերների տներում: Մշակույթի պալատի տնօրենը՝ Սուսաննա Մարտիրոսյանը, բավականին ռիսկով գտնվեց և մեզ երկու սենյակ տրամադրեց՝ հեռախոսով, անհրաժեշտ պարագաներով: Շուրջօրյա հերթապահություն կար: Խմբեր ունեցանք նաև գյուղերում, հատկապես՝ սահմանամերձ, որովհետև վտանգն արդեն կար, ինքնապաշտպանություն էինք կազմակերպում՝ առայժմ առանց զենքի… Օրինակ, մեկ «տիրի» հրացանը կտրում էինք ու հինգ ատրճանակ սարքում, դրանցով մարդ ուղարկում դիրքեր:

Առաջին իսկ օրվանից համագործակցություն կար կապի աշխատողների հետ. հատկապես նշեմ գլխավոր ինժեների և տնօրենի անունները: Այն ժամանակ, բնական է, փող չունեինք, նրանք անվճար մշտական կապ էին տրամադրում մեզ (Ժորա Ավագյան, Սերգեյ Նահապետյան): Շուրջօրյա կապ կար Երևանի և Արարատի շրջանի հետ, որովհետև այն ժամանակ ամենալարված իրավիճակն Արարատում էր՝ Նախիջևանի հետ կապված:

1988 թ. աշնանը ստեղծվեց Սյունիքի ինքնապաշտպանության խորհուրդը, կենտրոնը Գորիսն էր, համակարգողը՝ Համլետ Մկրտչյանը: Խորհրդում Կապանից ընդգրկված էի ես և Համլետ Քոչարյանը: Խորհուրդը զբաղվում էր զենքի հայթայթմամբ, ջոկատների կազմակերպմամբ, ինքնապաշտպանության պլանների մշակմամբ:

Բացի վերոնշյալ անուններից հիշենք Սլավիկ Հայրապետյանին, Լեռնիկ Դավթյանին, Վրեժ Հարությունյանին, Աշոտ Ավագյանին, Գրիգոր Թադևոսյանին: Բոլորին այն ժամանակ կարելի էր շարժման մասնակից համարել, մեզ հետ էին բոլոր ձեռնարկությունների տնօրենները, մեզ հետ էր ողջ մտավորականությունը: Ընդ որում՝ շատ կարևոր էր, որ ինտելեկտուալ մարդիկ լինեին, որ կարողանային ժողովրդին բացատրել, թե ինչի համար է շարժումը:

Կապանյան միտինգներում ամենահայտնի հռետորը Նորիկ Հովհաննիսյանն էր, իհարկե, բոլորն էին ելույթ ունենում, բայց մասնագիտությամբ պատմաբան Հովհաննիսյանի ոճն առանձնանում էր:

Երևանում արդեն քաղաքական կառույցների ակտիվություն էր նկատվում. սփյուռքից եկած ռամկավարները, հնչակյանները, դաշնակցականները կուսակցական աշխատանքներ սկսեցին: Կապանում ոչ մի քաղաքական ուղղվածություն չկար, զուտ ազգային-ազատագրական, հայրենասիրական շարժում էր, հայոց համազգային շարժումն էլ այդ ժամանակ ընդամենը շարժում էր, 1991-ին դարձավ կուսակցություն: Հետագայում կոմիտեի տղաներից շատերը դարձան դաշնակցական, ՀՀՇ-ական: Մինչ այդ կոմիտեի որոշ անդամներ գաղտնի դաշնակցական դարձան, բայց շարունակում էին մեզ հետ աշխատել: Բոլորիս նպատակը մեկն էր՝ Ղարաբաղի միավորումը Հայաստանին, Հայաստանի բնակչության անվտանգության ապահովումը: Ուրիշ խնդիր չկար, նույնիսկ իշխանափոխության խնդիր դրված չէր: Հիմա է, որ քաղաքական տարբեր երանգներ են տալիս շարժմանը:

Իսկ լիդերներից յուրաքանչյուրն իր մասնագիտական անցյալն ուներ. և՛ քաղաքական նոր իրավիճակը, և՛ ազատական, ազգային նոր գաղափարախոսությունը, և՛ անկախությունը, և՛ սահմաններում ստեղծված իրավիճակը նոր էր խորհրդային դաստիարակություն ստացած շարժման ղեկավարների համար, նրանք ինչ-որ տեղ անպատրաստ էին քաղաքականություն մուտք գործում: Իհարկե, և՛ սովորում էինք, և՛ գործում: Կոնկրետ Սյունիքում մեծ ներշնչանք ու ոգևորություն առաջացրեց «Հայաստան» թերթում Կտրիճ Սարդարյանի հոդվածը Լեռնահայաստանի մասին: Նվիրված էր 1920-ականների Զանգեզուրին, Նժդեհի գործունեությանը: Եթե մինչ այդ խորհրդային քարոզչության պայմաններում քչերը գիտեին Նժդեհի իրական գործունեության մասին, այդ հոդվածից հետո նորովի գիտակցեցինք Զանգեզուրի դերը…

1990թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններ տեղի ունեցան: Այդ ժամանակ թեկնածուներ ունեին և՛ ՀԿԿ շրջկոմը, և՛ շարժման մասնակիցները: Կապանը Հայաստանում եզակի շրջաններից էր, որտեղ երկու պատգամավոր կոմունիստական կուսակցությունից ընտրվեց (Շչորս Դավթյան, Կարեն Մկրտչյան), երկուսը շարժման ներկայացուցիչ էին (Ռադիկ Սարուխանյան, Սլավիկ Հայրապետյան): Իսկ Զանգեզուրի մյուս շրջաններում հաղթել էր միայն կուսակցությունը:

ԳԽ-ում կարճ աշխատեցի, Գիտության, կրթության, մշակույթի հանձնաժողովի փոխնախագահն էի:

Նոյեմբերին Կապանում քաղաքային խորհրդի ընտրություններ էին, իսկ 1991 թ. հունվարի 9-ին ընտրվեցի Կապանի քաղխորհրդի նախագահ ու պաշտոնավարեցի մինչև 1996 թ.:

Ամենադժվար ու ծանր պահերը ճանապարհներին սկսված մարդորսն էր… Ուշ երեկոյան կամ գիշերները մարդ փախցնելն ադրբեջանցիների համար դարձել էր սովորական գործ. դրանով և՛ փող էին աշխատում, և՛ փորձում մեզ ահաբեկել: Խիզախ տղաներ ունեինք, որոնք կարողանում էին մտնել Ադրբեջանի տարածքներ և մարդ փախցնել-բերել, որպեսզի կարողանայինք փոխանակում կատարել: Սա այսօր ամենաանմարդկային բանը կարող է թվալ, բայց այն ժամանակ մարդկանց հետ բերելու այլ հնար չունեինք: Դրա համար օրերով, ամիսներով բանակցություններ էին ընթանում…

Քաղաքի մշտական ռմբակոծում-հրետակոծումներին ավելացել էր տնտեսության մեջ ստեղծված արտակարգ իրավիճակը: Այսօր շատ են խոսում, գնահատականներ տալիս և ՀՀՇ-ի ամենամեծ մեղքը համարում են սեփականաշնորհումը, թե թալանեցին ամեն ինչ: 1996-ին թողեցի քաղխորհրդի նախագահի պաշտոնը. Կապանի ոչ մի ձեռնարկություն թալանված չէր: Ուղղակի դրանցում արդեն «մեռած» սարքավորումներ էին, չէին կարող աշխատել:

Մինչև 1994 թ. հրադադարը քաղաքը ղեկավարեցի պատերազմական պայմաններում և գործունեությանս հիմնական ուղղվածությունը համարում էի քաղաքի պաշտպանության կազմակերպումը: Փառք Աստծո, քաղաքը պահեցինք, նույնիսկ ամենածանր պահերին բնակչության անվտանգությունն ապահովելու համար «չինական պարիսպ» էինք կառուցել. ավտովերանորոգման գործարանից մինչև օդանավակայանի վերջը 2 մ բարձրությամբ հողաշերտ էինք փռել, որ դրա հետևում մարդիկ կարողանան շարժվել: Կապանցիները շատ բանի դիմացան, համենայնդեպս, եթե տարածք գրավվեց, և մեր զորքերը հասան մինչև Հորադիզ՝ նաև կապանցիների շնորհիվ էր:

Պատերազմին անպատրաստ քաղաքում նաև բնակչության անվտանգությունն էր պետք հնարավորինս ապահովել: Բոլոր բնակելի շենքերի ներքնահարկերում ապաստարաններ կառուցվեցին: Կյանքը շարունակվում էր, և նույնիսկ պատերազմական պայմաններում հաջողություններ էինք գրանցում: Կապանի դպրոցների շրջանավարտներն այն երեխաներն էին, որ ապաստարաններում են երբեմն դաս սովորել: Եվ ոչ միայն վատ չսովորեցին, այլև կարողացանք համոզել հանրապետության իշխանությանը, որ հարկավոր է բուհ բացել Կապանում, և այդ ծանր պայմաններում ընդունելության քննություններ անցկացրեցինք: Հպարտանալու մի բան էլ ունեմ. Կապանի ֆուտբոլի թիմն անկախ Հայաստանի առաջին չեմպիոնը դարձավ 1991 թ.: 1992-ից արդեն մարզադաշտում միջոցառումներ անցկացնելը վտանգավոր էր:

Կապանում այդ ժամանակ ապրած յուրաքանչյուր մարդ հերոս էր…

Գնահատելի է այն ժամանակվա միասնությունը, որը դժվար է այսօր պատկերացնել: Բոլոր ձեռնարկությունները մասնակցել են ինքնապաշտպանությանը, դիրքեր էին գնում, սնունդ, զինամթերք, մարդկային ուժ մատակարարում դիրքերին: Քաղաքային խորհուրդը 120 դեպուտատ ուներ, որոնցից շատերի հետ գաղափարական հակասություններ կային, բայց բոլորը մի մարդու պես կցված էին դիրքերին: Այդ ընթացքում քաղաքի արտադրական ռիթմն էլ չտուժեց:

Երբ կոմբինատի աշխատանքը ծանր պահերին ուզում էին 1-2 օրով դադարեցնել, բանվորները բողոքում էին, թե կգնանք և կաշխատենք: Եվ աշխատում էին… Կոմբինատի վրա ինքնաթիռից ռումբ ընկավ, մարդիկ զոհվեցին, հաջորդ օրը բանվորները կամավոր գնում էին աշխատանքի, որովհետև հայրենիքին պետք էր…

Այն ժամանակվա ոգևորությունն այլ էր, որը, ցավոք, այլևս կարող է չլինել: Մենք ոչ զենքով էինք ադրբեջանցիներից ուժեղ, ոչ մարդաքանակով, բայց հաղթեցինք ու հաղթեց մեր ոգին. մեր տղաներից Միկրոբը կամ Սլավիկը 100 թուրք էին փախցնում… Այսօր չկա ոգին, այ դրա մասին պիտի մտածենք…

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԿԱՊԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Գևորգյան Սվետլանա Մամբրեի

Կապանում գրեթե բոլորը նրան ճանաչում են: Եթե փողոցում որևէ մեկին հարցնես՝ ո՞վ է Սվետլանա Մամբրեևնան, դժվար թե երկար բացատրությունների կարիք լինի: Նրա անունը վաղուց արդեն դուրս է եկել պաշտոնների, կոչումների ու կենսագրական տողերի սահմաններից: Այն մարդկանցից է, որոնց ճանաչում են ոչ միայն արած գործերով, այլև մարդկային տեսակով:

Սվետլանա Մամբրեի Գևորգյանը Կապանի կոլորիտային կանանցից է՝ բարեկիրթ, նրբազգաց և ինքնատիպ հմայքով: Հաճելի զրուցակից է. զրույցի ընթացքում ակամա զգում ես, թե որքան հեշտությամբ է կարողանում շահել մարդկանց համակրանքը: Սակայն նրա ամենամեծ հմայքը, թերևս, անկեղծությունն է:

Ծնվել է 1940 թվականի հունիսի 8-ին՝ ճանաչված լեռնագործ Մամբրե Գևորգյանի ընտանիքում: Հայրը կրթությամբ ինժեներ-մեխանիկ էր, երկար տարիներ աշխատել է հանքարդյունաբերության ոլորտում և մեծ հեղինակություն է վայելել ոչ միայն որպես մասնագետ, այլև որպես մարդ:

Սվետլանա Մամբրեևնան մինչ օրս հպարտությամբ է խոսում հոր մասին. «Պապաս շատ ճշտախոս մարդ էր, հետագայում հասկացա, որ ես էլ եմ այդպիսին»:

Սակայն ծնողներից ժառանգել է ոչ միայն ճշտախոսությունը: Նրանց տանը երբեք չեն չարախոսել, մարդկանց մասին վատ խոսք չի հնչել: Ընտանիքի գլխավոր օրենքը պարզ էր՝ եթե լավություն չես կարող անել, գոնե վատություն մի՛ արա: Հենց այդ արժեքներն էլ ուղեկցել են նրան ամբողջ կյանքում:

Նախնական կրթությունը ստացել է Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Չորրորդ դասարանից, հոր մասնագիտության հետ կապված, տեղափոխվել են Լենինաքերի թաղամաս, որի նորակառույց դպրոցում շարունակել է ուսումը:

Մանկության տարիներին երազում էր բժիշկ դառնալ: Հիանում էր քաղաքի բժիշկներով, նրանց գիտելիքներով ու մարդկանց օգնելու պատրաստակամությամբ: Ընդունելության քննությունների հետ կապված որոշ խնդիրներ են եղել, որից հետո տիկին Սվետլանան հասկացել է՝ ճակատագիրն այլ ճանապարհ է նախանշել: Տարիներ անց խոստովանում է՝ գուցե այդպես էլ պետք է լիներ. **«Ես շատ խղճով մարդ եմ: Հիվանդի ցավը տեսնելով՝ ինքս կհիվանդանայի»**: Կյանքը նրան տարավ հանրային աշխատանքի ճանապարհով:

Տիկին Սվետլանան միջին մասնագիտական կրթություն է ստացել Քաջարանի շինարարական տեխնիկումում:

Դպրոցն ավարտելուց հետո նշանակվել է Ողջիի միջնակարգ դպրոցի ավագ ջոկատավար: Եվ հյուսվեց մի իմաստալից աշխատանքային կենսագրություն՝ Քաջարանի կոմբինատում կոմերիտական կազմակերպության հաշվառման սեկտորի վարիչ, Ղափանի ԼԿԵՄ կոմիտեի երկրորդ քարտուղար, Ղափանի քաղխորհրդի գործկոմի քարտուղար, Ղափանի քաղաքային մշակույթի բաժնի վարիչ, Ղափանի կենցաղսպասարկման վարչության պետ, Ղափանի սոցիալական ծառայության պետի տեղակալ: Կենսաթոշակի անցնելուց հետո Կապանի գրադարանների միավորման տնօրենն էր…

1967 թվականին ավարտել է նաև ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մոսկվայի բարձրագույն կուսակցական դպրոցը:

Տարբեր պաշտոններ, բայց նույն վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ՝ պատասխանատվություն, բարեխղճություն և մարդկանց նկատմամբ ուշադրություն:

Ու իսկապես, նրա մասին պատմողներն առաջին հերթին հենց այդ հատկանիշն են առանձնացնում:

Այնուամենայնիվ, իր հոգուն շատ մոտ էր նաև մշակույթի ոլորտը: Այդ տարիներին Կապանի մշակութային կյանքը բացառիկ վերելք էր ապրում: Քաղաք էին այցելում գրողներ, դերասաններ, երաժիշտներ, երգիչներ:

Սվետլանա Մամբրեևնան անձամբ է շփվել Վիլյամ Սարոյանի, Անաստաս Միկոյանի, Հովհաննես Բաղրամյանի, Չարուհի Դոլուխանյանի, Սիլվա Կապուտիկյանի, Էդուարդ Միրզոյանի, Խորեն Աբրահամյանի և բազմաթիվ այլ անվանիների հետ:

Ամենից հաճախ, սակայն, հիշում է Վիլյամ Սարոյանին:

Մի օր գրողը կանգնել է Ողջի գետի մոտ և հարցրել.

— Աղջիկ ջան, այս ի՞նչ հոտ է:

Երբ իմացել է, որ գետն աղտոտվում է արտադրական թափոններից, ասել է.

— Եթե ուզում եք, որ ժողովրդի հոգին մաքուր լինի, նախ գետը պիտի մաքուր լինի:

Տասնամյակներ անց էլ Սվետլանա Մամբրեևնան հիշում է այդ խոսքերը:

Նրա կյանքի կարևորագույն էջերից մեկն էլ կանանց խորհուրդն էր: 1964 թվականին ստեղծված կառույցի նախագահ ընտրվեց և այդ պատասխանատու

առաքելությունը շարունակեց ավելի քան քառորդ դար:

Այդ տարիներին զբաղվել է մարդկանց ճակատագրերով: Փորձել է հաշտեցնել բաժանման եզրին կանգնած ընտանիքներին, աջակցել միայնակ կանանց, պաշտպանել երեխաների շահերը, օգնել սոցիալական դժվարությունների մեջ հայտնված մարդկանց: **«Ես միշտ ցանկացել եմ, որ ուրիշի համար լավ լինի»,–** ասում է նա:

Այս պարզ նախադասությունը, թերևս, լավագույնս բացատրում է նրա կենսագրությունը:

1990-ականների ծանր տարիներին ևս մնաց իր քաղաքի կողքին: Երբ Կապանը հրետակոծվում էր, երբ մարդիկ ապրում էին անորոշության մեջ, շատերը պարզապես զանգահարում էին՝ համոզվելու, որ Սվետլանա Մամբրեևնան քաղաքո՞ւմ է: Նրա ձայնը մարդկանց վստահություն էր ներշնչում:

Նա այսօր էլ է նույն ջերմությամբ խոսում մարդկանց մասին:

Կյանքը նրան տվել է և՛ ճանաչում, և՛ գնահատանք: Արժանացել է «Պատվո նշան» շքանշանի, բազմաթիվ պարգևների ու պատվոգրերի: Նրան շնորհվել է նաև «Կապան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչումը: Սակայն, թվում է, ամենաթանկ գնահատականը համարում է ոչ թե շքանշանները, այլ մարդկանց վերաբերմունքը:

Ընտանիքը Սվետլանա Մամբրեևնայի կյանքի կարևորագույն հենարաններից է եղել: Հպարտությամբ է խոսում իր որդու՝ Արթուր Աղայանի մասին, ով աշխատում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում՝ աշխատանքի անվտանգության բաժնի պետ: Մոր համար, սակայն, առավել կարևոր են ոչ թե զբաղեցրած պաշտոնները, այլև՝ մարդկային արժեքները, որոնք կարողացել է փոխանցել որդուն:

Երախտագիտությամբ է հիշում բոլոր նրանց, ովքեր դժվար պահերին իր կողքին են եղել: Հիշում է բարությունը, օգնությունը, ուշադրությունը:

Երբ հարցնում եմ՝ ի՞նչ խորհուրդ կտաք երիտասարդներին, երկար չի մտածում՝ լինել աշխատասեր ու համեստ, հարգել մարդկանց, սիրել միմյանց, չշտապել դատել:

Եվ վերջում հայտնում է հետևյալ ցանկությունը, որն այսօր, հավանաբար, կկիսի յուրաքանչյուր մարդ. **«Թող լինի խաղաղություն: Թող իրար սիրենք, իրար հարգենք, իրար մեծարենք»:**

Գուցե հենց այս խոսքերի մեջ է ամփոփված Սվետլանա Մամբրեևնայի ամբողջ կյանքը՝ մարդկանց հանդեպ սիրով, աշխատանքի հանդեպ նվիրումով և սեփական քաղաքի նկատմամբ անսահման նվիրվածությամբ ապրած կյանքը:

ԻՋԱ ԱՍՇԱՏՐՅԱՆ

Դրվագներ Սվետլանա Գևորգյանի կենսագրությունից

ԿԱՊԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Հակոբյան Լիաննա Գրիգորի

Լիաննա Հակոբյանի կյանքն ու գործունեությունը սերտորեն առնչվում են Կապանի երաժշտական արվեստի անցած ճանապարհի հետ:

Ծնվել է 1950 թվականի հուլիսի 29-ին: Սովորել և ավարտել է Ղափանի թիվ 3 միջնակարգ դպրոցը, զուգահեռ՝ Ղափանի մանկական երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը:

1965-ին ընդունվել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի Ղափանի նորաբաց մասնաճյուղի դաշնամուրային բաժինը: Ուսմանը զուգընթաց դաշնամուրի դասատու էր քաղաքի պիոներ տանը և երաժիշտ՝ թիվ 1 մանկապարտեզում: Ուսումնարանն ավարտելուց հետո նշանակվել է Սիսիանի երաժշտական դպրոցի դաշնամուրի դասատու:

1970 թվականին տեղափոխվել է Քաջարանի երաժշտական դպրոց՝ դաշնամուրի դասատու, համատեղությամբ աշխատել Ղափանի երաժշտական ուսումնարանում՝ նվագակցող:

1972-ին նշանակվել է Քաջարանի երաժշտական դպրոցի տնօրեն:

Կարճ ժամանակում կարողացավ դպրոցում հավաքագրել աշակերտներ դաշնամուրային, լարային, փողային, ժողովրդական գործիքների բաժիններում: Ստեղծվեց երգչախումբ, քանոնահարների անսամբլ, այլ խմբեր: Նրա նախաձեռնությամբ կուլտուրայի մինիստրությունը երաժշտական դպրոցում թույլատրեց բացել գեղանկարչության դասարան (դա-

Կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի հետ

սատու՝ Լեռնիկ Պետրոսյան), որը հետագայում հիմք հանդիսացավ Քաջարանում գեղարվեստի դպրոցի, այնուհետև՝ արվեստի դպրոցի ստեղծմանը:

Նրա ջանքերով 1975-ին Ղափանի Դավիթբեկ գյուղի դպրոցում երաժշտական դասարան բացվեց: Չնայած հեռավորությանը՝ կարողանում էր զբաղվել այդ կրթօջախի խնդիրներով:

1977-ին տեղափոխվեց Ղափանի թիվ 2 երաժշտական նորաստեղծ դպրոց՝ տնօրեն՝ պաշտոնավարելով մինչև 1989 թվականը: Քաջարանում ձեռք բերած փորձն ու կազմակերպչական ունակությունները նպաստեցին, որ իրականացնի լուրջ ուսումնամեթոդական աշխատանքներ: Դպրոցի բարեկամներ դարձան կոմպոզիտոր Արեգ Լուսինյանը, Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսորներ Արմեն Բուդաղյանը, Անժելա Աթաբեկյանը, ուրիշներ:

1989-99 թթ. Լիաննա Հակոբյանը Կապանի երաժշտական ուսումնարանի փոխտնօրենն էր, հետո ստանձնեց այդ կրթօջախի ղեկավարումը:

Նրա տնօրենության օրոք բացվեցին «Գեղանկարչություն», «Դիզայն», «Կիրառական զարդարվեստ և ժողովրդական արհեստներ», «Էստրադային երաժշտական արվեստ», «Քանդակագործություն» մասնագիտությունները և նախնական մասնագիտական կրթության վճարովի դասընթացները: Այդ ամենը հնարավորություն ընձեռեց, որ երաժշտական ուսումնարանը վերափոխվի արվեստի քոլեջի, ընդլայնի երիտասարդության գեղագիտական դաստիարակության և ուսումնառության շրջանակը: Նրան հաջողվեց դասախոսների վերապատրաստումն իրականացնել կոնսերվատորիայում: Սկիզբ դրվեց նոր ավանդույթների, որոնցից մեկը սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի օրը, առաջին կուրսեցիների կնքման արարողությունն էր Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

Վերստին իր գործունեությունը սկսեց ուսումնարանի փողային նվագախումբը, ուսանողների ուժերով բեմադրվեցին դրվագներ «Անուշ» օպերայից:

Երգեհոնահար, Հայաստանի ժողովրդական արտիստ Վահագն Ստամբոլցյանի հետ

Նրա տնօրենության օրոք՝ հիմնադրման 40-ամյակի կապակցությամբ (2005 թ.), ուսումնարանն արժանացավ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե մեդալի»: Ինքը՝ տնօրենը, կրթության և գիտության ոլորտում ծավալած գործունեության և նշանակալի ավանդի համար 2010 թ. պարգևատրվեց ՀՀ ԿԳ նախարարության «Ոսկե հուշամեդալով»: Իսկ Կապանի արվեստի պետական քոլեջի հիմնադրման 50-ամյակի առթիվ՝ ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե հուշամեդալ»: Դրանից զատ արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և շնորհակալագրերի:

Լիաննա Հակոբյանը 2015-2025 թթ. աշխատել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Մշակութային կրթության աջակցություն» հիմնադրամում՝ Սյունիքի մարզի երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների մեթոդիստ:

//

Կոնսերվատորիայի պրոֆեսորներ Անժելա Աթաբեկյանի, Սերգեյ Քեչեկի և Իվան Վարդանյանի հետ

ԿԱՊԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Համբարձումյան Հասմիկ Մուշեղի

Կապանի թիվ 6 միջնակարգ դպրոցում՝ կենսաբանության դասաժամին

Նստած է սենյակում՝ շրջապատված գրքերով, իսկ պատուհանից այն կողմ Կապանն է՝ իր մշտահոս անցուդարձով: Սեղանին՝ թղթապանակներ, հին լուսանկարներ, դիպլոմներ, պատվոգրեր, տարիների ընթացքում հավաքած թերթերի դեղնած էջեր: Մեկ առ մեկ բացում է դրանք, ժպտում, երբեմն լռում: Ճերմակած վարսերը շրջանակել են դեմքը, բայց աչքերում նույն երիտասարդական փայլն է, նույն հետաքրքրությունը կյանքի նկատմամբ, նույն անսպառ եռանդը:

Հասմիկ Համբարձումյանն է՝ ճանաչված մանկավարժ, կրթության հմուտ կազմակերպիչ, Կապան քաղաքի պատվավոր քաղաքացի, մի կին, ում կյանքի ճանապարհը լի է նվիրումի, ստեղծագործ աշխատանքի և մարդակերտման լուսավոր էջերով:

Հասմիկ Մուշեղի Համբարձումյանը ծնվել է 1948 թվականի մարտի 24-ին՝ Ղափանում: Բայց եթե նրան հարցնես, թե որտեղի՞ց է սկսվում իր աշխարհը, առանց վարանելու կասի՝ «Փուխրուտից»:

Նա այնտեղ չի ծնվել, սակայն իր արմատները հենց այնտեղ են: Հայրը՝ Մուշեղ Համբարձումյանը, մշտապես երեխաներին ներշնչել է, որ Փուխրուտը դրախտավայր է: Եվ այդ խոսքերը փոքրիկ Հասմիկի մեջ վերածվել են սիրո, որն ուղեկցել է նրան ամբողջ կյանքում:

Մանկության ամենավառ հիշողությունները կրկին կապված են գյուղի հետ՝ ամառային արձակուրդների, սարերի, ալպիական մարգագետինների, երկար քայլարշավների, բնության հրաշալիքների հետ:

Բնության հանդեպ այդ սերն էլ, թերևս, կանխորոշեց մասնագիտության ընտրությունը:

Մարդկային ջերմությամբ էր լցված նաև նրա ընտանիքը. մայրն ու հայրը մշակույթին մոտ մարդիկ էին՝ լայն աշխարհայացքով և մտավոր հետաքրքրությունների հարուստ աշխարհով: Նրանց տունը մշտապես բաց էր արվեստի ու մտքի մարդկանց առջև. այստեղ հաճախ էին հավաքվում արվեստագետներ, գրողներ, դերասաններ, հասարակական ու մշակութային հայտնի գործիչներ:

Այդ տան մթնոլորտում խոսքը միշտ արժեք ուներ, իսկ զրույցները՝ խորություն:

Հենց այդ միջավայրում էր մեծանում Հասմիկ Համբարձումյանը:

Դեռ մանկուց լսում էր բազմաբնույթ զրույցներ, մասնակցում մտավոր քննարկումների, արվեստի ու մշակույթի մասին պատմություններ, որոնք աստիճանաբար ձևավորում էին նրա ներաշխարհը: Այդ հանդիպումներն ու զրույցները նրա մեջ արթնացրել էին գիտելիքի հանդեպ սեր, մտահորիզոնի ընդլայնում և աշխարհը հասկանալու խոր հետաքրքրություն:

Բայց կյանքի ամենամեծ հարստությունը գրքերն էին...

Վաղ տարիքում տարվել է ընթերցանությամբ, ով կարող էր ամբողջովին կորչել գրքերի աշխարհում՝ մոռանալով ժամանակն ու իրականությունը: Նրա համար գիրքը պարզապես գիտելիքի աղբյուր չէր, այլ կենդանի աշխարհ, որտեղ կարելի էր ապրել, զգալ, երազել և բացահայտել:

Եվ մանկության օրերից պահպանված մի փոքրիկ դրվագ այսօր էլ հիշում է ժպիտով:

Մի անգամ, երբ մայրը շտապել էր ժողովի և ճաշը թողել նավթավառի վրա՝ նրան վստահելով ճաշին հետևելը, փոքրիկ Հասմիկն ամբողջովին ընկղմվել էր «Սուրի և Սամի արկածները» գրքի էջերի մեջ: Այնքան էր տարվել ընթերցանությամբ, որ կտրվել էր արտաքին աշխարհից՝ չնկատելով, թե ինչպես է տունը լցվում վառվող ճաշի հոտով:

Այդ դրվագը նա չի հիշում որպես մեղքի զգացումով լցված հիշողություն, այլ միայն ջերմ ու լուսավոր ժպիտով՝ որպես ընթերցանության հանդեպ իր անսահման սիրո առաջին ու ամենավառ վկայություններից մեկը. «Բայց կարդալու մոլուցքը մնաց իմ մեջ ամբողջ կյանքում...»:

1967 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետ՝ ընտրելով մի մասնագիտություն, որը հետագայում պիտի դառնար իր ողջ կյանքի գործն ու կոչումը:

Կապանի կրթական համակարգում նրա աշխատանքային ուղին ձևավորվել է որպես շարունակական նվիրումի և պատասխանատվության օրինակ:

1972 թվականին՝ համալսարանական կրթությունը ստանալուց հետո, աշխատանքի է անցել Ղափանի թիվ 6 միջնակարգ դպրոցում՝ կենսաբանության ուսուցչուհի: Այդտեղից սկսվել է նրա

մանկավարժական երկար ու հետևողական ճանապարհը, որտեղ դասը երբեք չի դիտվել որպես պարզապես ուսումնական ժամ, այլ՝ մտածողություն ձևավորելու, հետաքրքրություն արթնացնելու և աշխարհը ճանաչելու հնարավորություն:

1986 թվականին նշանակվել է նույն դպրոցի արտադպրոցական աշխատանքների գծով կազմակերպիչ, իսկ 1988-ին՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն՝ արդեն ստանձնելով ավելի լայն պատասխանատվություն և կրթական գործընթացի կազմակերպման կարևոր դեր:

1991 թվականին նշանակվել է Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցի տնօրեն՝ շարունակելով իր գործունեությունը որպես թե՛ ղեկավար, թե՛ ուսուցիչ:

1995–1997 թվականներին համատեղ դասավանդել է նաև Կապանի թիվ 3 դպրոցում՝ բնագիտական հոսքի դասարանում:

1997 թվականին ստանձնել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնը և մինչև 2013 թվականը միաժամանակ դասավանդել կենսաբանություն ու հոգեբանություն՝ համադրելով վարչական և մանկավարժական աշխատանքները:

2013–2014 ուսումնական տարում աշխատել է Կապանի թիվ 1 հիմնական դպրոցում՝ «Ներառական կրթության» խմբի համակարգող՝ կարևորելով կրթության հասանելիությունն ու հավասար հնարավորությունները բոլոր երեխաների համար:

– **Նրա առօրյան թեժ խառնարան էր հիշեցնում,**– ասում են նախկին գործընկերները,– **հոգու խորքում ունի բարության, հումանիզմի, քնքշանքի ու գթասրտության անսահման լիցքեր: Մենք փորձում էինք նմանվել նրան:**

2014–2017 թվականներին գործունեությունը շարունակել է Կապանի պետական բժշկական քոլեջում՝ անատոմիայի և հոգեբանության դասախոս՝ իր փորձը փոխանցելով արդեն մասնագիտական կրթության մակարդակում:

2017–2018 ուսումնական տարում կրկին վերադարձել է դպրոց՝ աշխատելով կենսաբանության ուսուցչուհի Գեղանուշի միջնակարգում:

Զուգահեռաբար Կապանի քաղաքային մանկակրթական ծառայության կենսաբանության արտահաստիքային տեսչի և ՈՒԿՀԻ-ի «Կենսաբանության առաջավոր ուսուցչի» ամբիոնի աշխատանքների արտահաստիքային աշխատակիցն էր:

Կապան քաղաքում ղեկավարել է «Առաջավոր փորձի դպրոց»-ի աշխատանքները՝ կենսաբանություն առարկայից:

Նրա մանկավարժական ուղին ժամանակի ընթացքում դարձել է մի ամբողջ

Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ, 1997 թ.

կրթական կենսագրություն: Տիկին Համբարձումյանի աշակերտները բազմիցս արժանացել են կենսաբանության հանրապետական օլիմպիադաների առաջին, երկրորդ, երրորդ կարգի դիպլոմների, որոնց թվում՝ 60-ից ավել բժիշկներ, տասնյակից ավել կենսաբանության ուսուցիչներ, գիտական աշխատողներ:

Տիկին Համիկն ակտիվորեն ներգրավված է եղել նաև հասարակական կյանքում՝ ստանձնելով պատասխանատու դերեր և ղեկավարել տարբեր կազմակերպական կառույցներ: Եղել է Կապանի «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» և «Կանանց համահայկական միության» մասնաճյուղերի նախագահ՝ իր գործունեությամբ նպաստելով քաղաքացիական նախաձեռնությունների զարգացմանն ու հասարակական մտածողության ձևավորմանը:

ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի կրթական և մշակութային հարցերով բյուրոյի, ինչպես նաև «Այրեքս» ամերիկյան կազմակերպության «Համայնքային կապեր» ծրագրի շրջանակում հաղթելով մրցույթում՝ գործուղվել է ԱՄՆ՝ ուսումնասիրելու այդ երկրի կրթական համակարգը և փորձը ներդնելու տեղական կրթական միջավայրում:

Իր երկարամյա ու հետևողական աշխատանքի, ստեղծագործական մոտեցման և մանկավարժական առաջավոր փորձի տարածման համար արժանացել է բազմաթիվ կոչումների ու պարգևների՝ «Գերազանցիկ ուսուցիչ», «Մեթոդիստ ուսուցիչ», «Հետազոտող ուսուցիչ», ՀՀ-ի «Լավագույն տնօրեն» մրցանակ, ՀՀ ԿԳ նախարարության «Ոսկե հուշամեդալ», «Ակսել Բակունցի անվան մեդալ», ՈՒԿՀԻ-ի կողմից «Մանկավարժական ստեղծագործական աշխատանքի համար կրծքանշան», Կենսաբանության հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի նախագահության «Հատուկ մրցանակ», ՀՀ ԿԳ-ի, ՀՀ ՊՆ-ի, Այունիքի մարզպետարանի, Կապանի քաղաքապետարանի, հասարակական տարբեր կազմակերպությունների պատվոգրեր, շնորհակալագրեր, դիպլոմներ, որոնք խնամքով պահվում են թղթապանակներում. «Մայրիկիս շնորհքն է»,- ժպտում է նա:

Եվ իսկապես, այդ թղթապանակները պարզապես փաստաթղթեր չեն: Դրանք մի ամբողջ կյանքի տարեգրություն են:

Ռոբերտ Էջանանցին տիկին Համիկին բնութագրում է հետևյալ տողերով.

«Վեհաշուք տիկին,

խանդավառ աշխատանքի ասպետուհի,

2002-2003 ուսումնական տարի, Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցի առաջին դասարանցիների հետ

քանքարավոր դպրուհի,
համբավանուն ռաբունապետ,
ազնվափայլ հոր դուստր,
լուսաճառագ Օրբելանց հարս,

Հայրենի եզերք Վերին Չորի ոսկեվորիկ աշունը հեղեղվել է հասմիկներով, ավելի զորացել քո դափնեպսակ հաջողությամբ:

Մղելա քարի շնկշնկան հովը, Ռեհանի աղբյուրի կարկաչը, Կապուտջուղի երկնագնա սլացքը տենչում, կանչում ու երգում են քեզ:

Քո հմայիչ պահվածքն ու անզուգական կերպարը վկայում ու հուսադրում են, որ հանրակրթությունը կայանում է, որ այս բարդահյուս դարավերջին կհաջորդի ուսյալ Հայաստանի Ոսկեդարը:

Եվ թող Գրիգոր Հաբանդեցու արևը մեր կլխան անպակաս լի»:

Առանձնահատուկ հուզմունքով տիկին Հասմիկը խոսում է հոր մասին, ում կերպարն այնքան օրինակելի է եղել, որ եղբայրների հետ գիրք են գրել՝ նվիրված Մուշեղ Համբարձումյանին, որտեղ հավաքել են հոդվածներ, ելույթներ, լուսանկարներ և ընտանեկան հուշեր:

Այդ հիշողությունների ու արժեքների շարունակությունն այսօր արդեն ապրում է նրա ընտանիքում ու ամենօրյա կյանքում:

Տիկին Հասմիկն ամուսնացած է, ունի երկու զավակ՝ մեկ որդի և մեկ դուստր, հինգ շնորհաշատ թոռ, որոնցով անչափ հպարտանում է և նշում, որ իր երեք եղբայրների, ամուսնու, աղջկա և տղայի կայացած ընտանիքների աջակցության շնորհիվ է հասել այդ ամենին:

Այդ երկար ու բովանդակալից կյանքի ճանապարհին ձևավորված նրա պարզ, բայց խորիմաստ բանաձևը հետևյալն է. **«Երեխային պետք է տալ երկու բան՝ արմատներ և թևեր: Արմատներ՝ հայրենիքը, ընտանիքը, լեզուն և արժեքները ճանաչելու համար, որպեսզի նա կանգնի ամուր ու վստահ իր ինքնության մեջ: Եվ թևեր՝ աշխարհը տեսնելու, երազելու, ստեղծելու և ինքն իրեն գտնելու համար կյանքում»:**

Հասմիկ Համբարձումյանն այսօր էլ շրջապատված է գրքերով, հուշերով, երեխաների ու թոռների լուսանկարներով, տարիների ընթացքում հավաքված կյանքի վկայություններով:

ԻՋԱ ԱՍԾԱՏՐՅԱՆ

ԿԱՊԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Քյարունց Սվետլանա Արշակի

Հանքարդյունաբերության փայլուն մասնագետ, լեգենդար ֆլոտատոր Սվետլանա Քյարունցը ծնվել է 1935 թվականին՝ գորիսեցի Արշակ Քյարունցի և Բեխ գյուղացի Անյայի ընտանիքում:

1953 թվականին Ղափանի թիվ 3 ռուսական դպրոցը մեդալով ավարտելուց հետո ընդունվել է Մոսկվայի գունավոր մետաղների և ոսկու ինստիտուտը:

Բուհն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի քաղաք և լեռնագործի իմաստավոր կենսագրություն հյուսել նախ Քաջարանի կոմբինատի հանքահարստացուցիչ ֆաբրիկայում, այնուհետև նրա աշխատանքային գրքույկում՝ մինչև կենսաթոշակի անցնելը, մի նշում կա. Ղափանի պղնձահանքային կոմբինատ:

1963-74 թթ.՝ էքսպրես լաբորատորիայի վարիչ, 1971-81 թթ.՝ կոմբինատի հանքահարստացուցիչ ֆաբրիկայի գլխավոր ինժեներ, 1981-1991 թթ.՝ ֆաբրիկայի տնօրեն: 1991-2003 թթ.՝ կոմբինատի տնօրենի տեղակալ՝ որակի գծով, 2003-2005 թթ. տնօրենի խորհրդականն էր, այնուհետև անցել է վաստակած հանգստի:

Սվետլանա Քյարունցի մասնագիտական բարձր ունակությունները, անբասիր աշխատանքը գնահատվել են ղեկավարության կողմից. պարգևատրվել է մեդալներով ու պատվոգրերով:

Արժանացել է «Պատվո նշան» շքանշանի:

Իսկ ամենածանրակշիռ գնահատանքը սերն ու հարգանքն է, որ վայելում է շրջապատի կողմից:

Սվետլանա Քյարունցն ունի հինգ զավակ. մեկ որդի և չորս դուստր, բոլորն էլ բարձրագույն կրթություն ստացած մասնագետներ՝ ինժեներ, իրավաբան, բժիշկ, տնտեսագետ:

//

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Աբրահամյան Հենրիկ Մուշեղի

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր Բաբկեն Հարությունյանի հետ

Որոշ մարդիկ պատմություն են ուսումնասիրում, մյուսներն իրենց կյանքով դառնում պատմության մի մասը: Հենրիկ Մուշեղի Աբրահամյանը հենց այդ մարդկանցից է:

Ծնվել է 1937 թ. հուլիսի 15-ին Ղափանում:

Նրա կենսագրությունը հարուստ է՝ գիտական աստիճաններ, պատասխանատու պաշտոններ, տասնյակ աշխատություններ, սերունդներ կրթած մանկավարժ: Սակայն այդ ամենի հիմքում կանգնած է մարդը՝ իր սկզբունքներով, ազնվությամբ, կարգապահությամբ և պատասխանատվության բացառիկ զգացումով: Այդ արժեքները նրա մեջ չեն ձևավորվել համալսարանում, դրանք ծնվել ու ամրապնդվել են մի ընտանիքում, որտեղ կրթությունը, մշակույթը և հայրենիքի նկատմամբ սերն առաջնային էին:

Յուրաքանչյուր մարդու կյանքում լինում է մի դպրոց, որն ավելի կարևոր է, քան ցանկացած համալսարան: Հենրիկ Աբրահամյանի համար այդ դպրոցը հայրական տունն էր: Մուշեղ Համբարձումյանի և Ղումաշ Համբարձումյանի ընտանիքում երեխաներին դաստիարակում էին ոչ թե խրատներով, այլ սեփական օրինակով: Այստեղ աշխատասիրությունը, ազնվությունն ու հայրենասիրությունը սովորական բառեր չէին, այլ ընտանիքի առօրյան:

Մանկության ամենաջերմ ու ամենապայծառ հիշողությունները Հենրիկ Աբրահամյանին միշտ վերադարձնում են Փուխրուտ: Այնտեղ էր անցկացնում ամառները, այնտեղ էր ամբողջապես ճանաչում աշխատանքի արժեքը, գյուղական կյանքի պարզությունն ու մարդու ազնիվ վաստակի խորհուրդը: Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին, երբ մայրը երեխաներին տանում էր գյուղ, նրանք դեռ փոքր հասակից օգնում էին կոլտնտեսությանը, աշխատում մեծերի կողքին և առանց գիտակցելու՝ կյանքի կարևորագույն դասերը սերտում:

Պատերազմից հետո, երբ հայրը վերադարձավ տուն, շաբաթ-կիրակի օրերին գալիս էր Փուխրուտ՝ ընտանիքին տեսնելու: Այդ օրերը փոքրիկ տոն էին երեխաների համար: Սակայն ամենասպասվածը ոչ այնքան նրա բերած քաղցրավենիքներն էին, որքան երեկոյան հավաքները: Մուշեղ Համբարձումյանը շուրջն էր համախմբում գյուղի տարեցներին, խնդրում պատմել հին պատմություններ, հիշել անցած օրերը, մարդկանց... Այդ զրույցներում կար հումոր, կենսափորձ, հիշողություն ու պատմություն:

Հենց այդ երեկոներին էր, որ փոքրիկ Հենրիկը սովորում էր լսել մարդկանց, զգալ ժամանակի շունչը, հասկանալ, որ յուրաքանչյուր մարդու կյանքն ինքնին պատմություն է: Գուցե հենց Փուխրուտի այդ խաղաղ երեկոների, գյուղի մեծերի պատմությունների մեջ էլ աննկատ ծնվեց ապագա պատմաբանը՝ մի մարդ, ում համար պատմագիտությունը հետագայում դարձավ ոչ միայն մասնագիտություն, այլև առաքելություն:

Ղափանում միջնակարգ կրթությունն ավարտելուց հետո ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Ավարտելուց հետո կարճ ժամանակ աշխատեց հայրենի Ղափանում՝ ԼԿԵՄ շրջկոմի առաջին քարտուղար, սակայն գիտության հանդեպ ձգտումն ավելի ուժեղ գտնվեց: 1968 թվականին ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտուրա, 1973 թվականին պաշտպանեց պատմական գիտությունների թեկնածուի ատենախոսությունը, իսկ 1995 թվականին՝ դոկտորական ատենախոսությունը՝ ստանալով գիտությունների դոկտորի գիտական աստիճան, հետագայում՝ դոցենտի, ապա պրոֆեսորի գիտական կոչումներ:

Տասնամյակներ շարունակ նրա կյանքը կապված մնաց Երևանի պետական համալսարանի հետ: Երկար տարիներ

Ընտանիքի հետ

եղել է պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ, այնուհետև դեկանի պաշտոնակատար, իսկ 2000-2007 թվականներին ղեկավարել է Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնը: Նրա լսարաններում կրթվել են պատմաբանների, միջազգային հարաբերությունների մասնագետների մի քանի սերունդ, որոնց համար նա եղել է ոչ միայն դասախոս, այլև սկզբունքային ուսուցիչ ու գիտական առաջնորդ:

Սակայն պաշտոններն ու գիտական կոչումները Հենրիկ Աբրահամյանի դիմանկարի միայն մի մասն են: Նրան լիովին ճանաչելու համար բավական է լսել հարազատներին, ովքեր նախ և առաջ խոսում են նրա մարդկային նկարագրի, սկզբունքայնության և անսասան ազնվության մասին:

«Անկաշառ, չափազանց ազնիվ, խիստ կարգապահ: Եթե մի բան ճիշտ չէր լինում, նա երբեք չէր շրջանցի սկզբունքը»,– այսպես է նրան բնութագրում քույրը՝ Հասմիկ Համբարձումյանը:

Այդ սկզբունքայնությունը, սակայն, առաջին հերթին ուղղված էր հենց իրեն: Երբեք չէր բավարարվում կիսատ գործով, չէր հանդուրժում անփութությունը և հավատում էր, որ յուրաքանչյուր հաջողության հիմքում հետևողական աշխատանքն ու սեփական գործի հանդեպ ազնիվ վերաբերմունքն է:

Կամքի ուժն ու կարգապահությունը ձևավորվել էին դեռ երիտասարդ տարիներին: Սիրել է սպորտը, զբաղվել բռնցքամարտով և դարձել Ղափանի բռնցքամարտի չեմպիոն: Մարզադահլիճում կոփված բնավորությունը հետագայում արտահայտվեց նաև գիտական գործունեության ոլորտում: Ամեն ուսումնասիրության, ամեն աշխատության հիմքում նույն հետևողականությունն էր, մանրակրկիտ աշխատանքն ու սկզբունքայնությունը, որոնք տարիների ընթացքում դարձան նրա գիտական ձեռագրի անբաժանելի մասը:

Տարիների ընթացքում նրա խստության կողքին ավելի տեսանելի դարձավ ներքին ջերմությունը: Թոռների համար արդեն այլ հենրիկ էր՝ մեղմ, ուշադիր, ժպտերես: Բայց նույնիսկ այդ ժամանակ նրա առօրյան մնաց անփոփոխ. գրքեր, արխիվներ, ձեռագրեր, նոր ուսումնասիրություններ: Նրա համար գրելը պարզապես աշխատանք չէր, այլ ապրելակերպ:

Հենրիկ Աբրահամյանի գիտական ժառանգությունը տպավորիչ է: Հինգ մենագրության, նույնքան բրոշյուրների, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների, տասը հատուկ դասընթացների և ավելի քան հարյուր գիտական ու հրապարակախոսական հոդվածների և գիտական թեզերի հեղինակ է: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են պատմական և քաղաքական գիտությունների թեկնածուական ատենախոսություններ:

Բազմիցս ներկայացրել է հայկական պատմագիտական միտքը միջազգային գիտաժողովներում, հանդես եկել զեկուցումներով տարբեր երկրներում՝ Գերմանիայում, Լեհաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում և այլուր: Միաժամանակ մշտապես ակտիվ մասնակցել է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին՝ մամուլի էջերում արտահայտելով իր սկզբունքային դիրքորոշումը երկրի համար կարևոր հարցերի շուրջ:

Երկարամյա մանկավարժական և գիտական գործունեությունը բարձր է գնահատվել բազմաթիվ պարգևներով: 2007 թվականին արժանացել է Երևանի պետական համալսարանի «Ոսկե մեդալի», 2009 թվականին՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրի, 2014 թվականին՝ ՀՀ նախագահի շնորհակալագրի, 2018 թվականին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն պարգևի՝ «Ոսկե մեդալի», ինչպես նաև Արդարադատության ու Բարձրագույն կրթության նախարարությունների պատվոգրերի:

Սակայն նրան ճանաչողները վստահ են՝ այդ բոլոր մրցանակներից ավելի արժեքավոր է այն վստահությունն ու հարգանքը, որ վայելում է ուսանողների, գործընկերների և հասարակության շրջանում:

Այսօր նրա ամենամեծ հարստություններից մեկն ընտանիքն է: Ունի երկու զավակ՝ որդի և դուստր, սիրող պապ է, ում համար ընտանեկան արժեքները նույնքան կարևոր են, որքան պատմությունը, գիտությունը և մանկավարժությունը:

Հիմա, երբ խոսում են նրա մասին, ամենից հաճախ կրկնվում է մի միտք՝ երբեք չի փոխել իր սկզբունքները: Եվ թերևս հենց դա է մարդու ամենամեծ արժանիքներից մեկը:

Հենրիկ Աբրահամյանի կյանքի ուղին փաստում է, որ իսկական գիտնականը միայն գրքեր չի գրում: Նա իր կյանքի օրինակով է ձևավորում արժեքներ, կրթում մարդկանց ու իր հետևից թողնում ոչ միայն աշխատություններ, այլև բարոյական չափանիշներ: Իսկ այդպիսի մարդիկ ժամանակի ընթացքում դառնում են ոչ միայն պատմության ուսումնասիրողներ, այլև նրա արժանապատիվ շարունակությունն ուղեկցող դեմքեր:

//

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Բալասանյան Սեյրան Շամիրի

Ծնվել է 1945 թ. հունիսի 19-ին ՀԽՍՀ Ղափանի շրջանի Կաղնուտ գյուղում: 1963 թ. ոսկե մեդալով ավարտել է Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցը և ընդունվել ԵրՊԻ-ի «Ավտոմատիկա և հաշվողական տեխնիկա» ֆակուլտետի ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի բաժինը: 1968 թ. գերազանցության դիպլոմով ավարտելով ինստիտուտը՝ անցել է գիտամանկավարժական աշխատանքի «Ավտոմատիկա եւ հեռուստամեխանիկա» ամբիոնում:

1968-1970 թթ. խորհրդային բանակում լեյտենանտի զինվորական կոչումով ծառայության ավարտից հետո Ս. Բալասանյանը վերադարձել է ԵրՊԻ, որտեղ եւ անցել է նրա ողջ աշխատանքային ուղին: Աշխատել է «Ա եւ Հ»., այնուհետեւ 1978 թ. կազմավորված «Ավտոմատացված կառավարման համակարգեր» («ԱԿՀ») ամբիոններում՝ ասիստենտի եւ ավագ դասախոսի պաշտոններում:

Ասպիրանտուրայի տարիներին ուսումնասիրել է բարդ տեխնիկական համակարգերի մոդելավորման հիմնահարցերը, որոնց նվիրված թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1983թ. եւ ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա դոցենտի գիտական կոչում:

1992-1997 թթ. ղեկավարել է ՀՊՃՀ «ԱԿՀ» ամբիոնը:

1997 թվականից ՀՊՃՀ-ի Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնում սկսվեց Ս. Բալասանյանի աշխատանքային գործունեության մի նոր փուլ: Բուհական ավանդույթներ չունեցող Կապանում ձեւավորվեց մասնաճյուղի վեց ամբիոն, որոնք համալրվեցին մետալուրգիայի, համակարգչային, սխեմատեխնիկայի լաբորատորիաներով, հեռավար ուսուցման եւ տեխնոլոգիական կարողությունների լսարաններով: Սերտ գործընկերային հարաբերություններ հաստատելով ՃՊՄԿ-ի ղեկավարության հետ՝ Ս. Բալասանյանին հաջողվեց կոմբինատի ֆինանսական աջակցությամբ կազմակերպել գլխավոր եւ ուսումնալաբորատոր մասնաշենքերի հիմնանորոգումը, վերականգնել ջեռուցման համակարգը, քայքայումից փրկել մյուս մասնաշենքերը:

ICo-op TEMPUS նախագծի մասնակիցները Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանում (Գերմանիա, 2012 թ.)

Մեծ է Ս. Բալասանյանի ավանդը Սյունիքի մարզում ինֆորմատիկայի, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ու տարածման ասպարեզում: Նրա ղեկավարությամբ՝ «Եվրասիա» հիմնադրամի միջոցներով, մասնաճյուղում կազմակերպված համակարգչային դասընթացներում 1998-2002 թթ. վերապատրաստվել եւ վերաորակավորվել է Սյունիքի մարզի շուրջ 250 ունկնդիր՝ նախկին ճարտարագետներ, տեխնիկներ, ուսուցիչներ եւ բանվորներ: Նրա նախաձեռնությամբ հիմնադրված SS ոլորտի «Սյունի-Քոմ» ՍՊ ընկերության եւ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի ջանքերով համացանցը (Ինտերնետը) 2000 թ. հունվարին մուտք գործեց Սյունիքի մարզ՝ մեծապես նպաստելով մարզի հետագա սոցիալ-տնտեսական զարգացմանը եւ SS ոլորտի ճարտարագետների պատրաստմանը:

Ս. Բալասանյանի անմիջական ղեկավարությամբ եւ գործուն մասնակցությամբ է 1998 թ. կազմավորվել մասնաճյուղի կառավարման ավտոմատացված համակարգերի եւ ինֆորմատիկայի (հետագայում՝ «SS եւ Հ» ամբիոնը, որը հասարակական հիմունքներով ղեկավարել է մինչեւ 2013 թ.: Ամբիոնի լաբորատորիաները հագեցվել են ինտերնետին լծորդված արդիական համակարգիչներով, տեղեկատվության արտապատկերման ու հեռատեսակապի ժամանակակից սարքավորումներով:

Ս. Բալասանյանը կարողացել է դասախոսական եւ գիտամեթոդական աշխատանքը հաջողությամբ զուգակցել տնօրենի, իսկ 2012-2019 թվականներին՝ տնօրենի գիտական գծով տեղակալի վարչական աշխատանքների հետ:

Ս. Բալասանյանը 2019 թ. հունվարից նշանակվել է մասնաճյուղի «SS եւ Հ» ամբիոնի վարիչի պաշտոնակատար:

Նա հրատարակել է շուրջ 30 ուսումնամեթոդական աշխատանք, այդ թվում՝ 7 ուսումնական ձեռնարկ եւ ՀՀ ԿԳՆ-ի կողմից հաստատված մեկ բուհական դասագիրք, որն արժանացել է ՀՊՃՀ-ի 2009 թ. հրատարակված «Լավագույն ուսումնական ձեռնարկ»-ի մրցանակաբաշխության 1-ին մրցանակին:

Արգասաբեր է Ս. Բալասանյանի գիտահետազոտական գործունեությունը: Նրա ղեկավարությամբ գործող գիտական խումբը 2001-2003թթ. Գյումրու մաս-

նաճյուղի եւ Երեւանի կրթահամալիրի գիտական խմբերի հետ համատեղ մասնակցել է մոլիբդենի հանքանյութի ֆլոտացման տեխնոլոգիական գործընթացի ԱԿՀ-ի մշակմանը նվիրված, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) կողմից ֆինանսավորվող նախագծին:

2012-2014 թթ. ՀՊՄԿ-ի ֆինանսավորմամբ՝ Ս. Բալասանյանի ղեկավարությամբ գործող խումբը հաջողությամբ կատարել է «Մոլիբդենի հանքանյութի ֆլոտացման տեխնոլոգիական գործընթացի հավանականային կառավարման մոդելի մշակումը» թեմայով գիտահետազոտական նախագիծը, որի արդյունքները ներկայումս գտնվում են ներդրման փուլում:

2015 թ. Ս. Բալասանյանը պաշտպանել է «Բարդ տեխնոլոգիական համակարգերի ստրատիֆիկացված մոդելավորման հիմունքների մշակում՝ հուսալիության հաշվառմամբ» թեմայով դոկտորական ատենախոսությունը՝ ստանալով տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 2016 թվականին՝ պրոֆեսորի գիտական կոչում:

Նա հեղինակ է 100 հրապարակված գիտամեթոդական աշխատանքի, այդ թվում՝ Գերմանիայի Դաշնությունում հրատարակված մեկ գիտական մենագրության:

Արժանացել է ՀԱՊՀ-ի 2011-2012 թթ. հրապարակված «Լավագույն գիտական հոդվածաշար» մրցանակաբաշխության 1-ին մրցանակին: Շնորհիվ արտերկրում հրապարակված գիտական հոդվածների, Ս. Բալասանյանը ձեռք է բերել միջազգային ճանաչում. այսպես, ըստ Research Gate գիտնականների միջազգային ցանցի՝ Ս. Բալասանյանի գիտական հոդվածներն արժանացել են արտերկրի շուրջ 300 հայտնի գիտնականների ուշադրությանը: 2024 թ. արտերկրում հրատարակված գիտական հոդվածի հեղինակ Ս.Բալասանյանն արժանացել է ՀԱՊՀ–ի ղեկավարության պարգեւավճարին:

Ս. Բալասանյանը հնարավորինս օժանդակել է դասախոսների գիտահետազոտական գործունեությանը: 2007-2017 թթ. ընթացքում մասնաճյուղի 6 դասախոս եւ 7 ուսանող պաշտպանել են թեկնածուական, իսկ մեկ դասախոս՝ դոկտորական ատենախոսություն: Նա ղեկավարել է շուրջ 20 մագիստրոսի եւ 4 ասպիրանտի ատենախոսություն, որոնցից 2-ը հաջողությամբ պաշտպանել է:

Ս. Բալասանյանը զգալի աշխատանք է կատարել մասնաճյուղի միջազգային համագործակցության ոլորտում: Նա 1999-2009 թթ. գործուն մասնակցություն է ունեցել ՀՊՃՀ-ի կողմից իրականացվող Tempus-Tacis միջազգային ծրագրերին, որոնք նվիրված են եղել համալսարան-արդյունաբերություն համագործակցության զարգացմանը, ՀՊՃՀ-ի ստրատեգիական պլանի մշակմանը եւ կրեդիտային համակարգի ներդրմանը:

Ս.Շ. Բալասանյանը, դոկտոր Հ.Կարստենը և դոկտոր Հ.Դ. Վուտկեն REV2014 միջազգային գիտաժողովում (Պորտո, Պորտուգալիա, 2024 թ.)

ICo-op TEMPUS նախագծի մեկնարկային խորհրդաժողովի մասնակիցներն Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանում (2012 թ.)

2012–2025 թթ. մասնաճյուղն առաջին անգամ, որպես ինքնուրույն կատարող, մասնակցել է «Արդյունաբերական համագործակցություն եւ ստեղծագործ ճարտարագիտական կրթություն՝ հիմնված հեռավար ու վիրտուալ գործիքակազմի վրա» (530278-TEMPUS-1-2012-1-DE-TEMPUS-JPHES) նախագծին: Ս. Բալասանյանը նախագծի տեղային համակարգողի կարգավիճակով՝ իր փոքրաթիվ թիմով, հաջողությամբ իրականացրել է այն: Այդ նախագծի շրջանակում ձեռքբերված 27000 եվրո արժողությամբ GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիան նրա ջանքերով 2018 թվականից հաջողությամբ ներդրվել է մասնաճյուղի «SS եւ Հ» ամբիոնի ուսումնական գործընթացում:

Ս. Բալասանյանը 2011-2014 թթ. եղել է ՀՊՃՀ կառավարման խորհրդի անդամ:

2016 թվականից ՀԱՊՀ-ում գործող դոկտորական եւ թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության «Կառավարում եւ ավտոմատացում» 032 մասնագիտական խորհրդի անդամ է:

Ս. Բալասանյանի բազմամյա, անբասիր աշխատանքն ըստ արժանվույն է գնահատվել: Պարգեւատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով (2008 թ.), ՀՊՃՀ Ոսկե հուշամեդալով (2007 թ.), ՀՀ ԿԳ նախարարության Ոսկե հուշամեդալով (2003 թ.), ԼՂՀ «Մայրություն» կոմիտեի «Մայրական երախտագիտություն» հուշամեդալով (2009 թ.), Կապան համայնքի «Կապան» մեդալով (2024 թ.):

Սեյրան Բալասանյանն ունի երկու զավակ. որդին՝ Վահեն, գերմանական բանկի հրավերով աշխատում է Ֆրանկֆուրտում, դուստրը՝ Լուսինեն, բնակվում է Ֆրանսիայում:

//

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Սմբատյան Գրիշա Սերյոժայի

ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանին նվիրում է իր հեղինակած «Երկաթե վարագույրից այս կողմ» գիրքը

Ծնվել է 1953 թ. հոկտեմբերի 18-ին Շիկահողում՝ գյուղացու ընտանիքում: Պապը, որպես ժողովրդի թշնամի, աքսորվել և նահատակվել է տաժանավայրում: Հայրն անտառապահ էր, մայրը գյուղի փոստատարը: Տարիներով օգնել է մորը, իրականում եղել է գյուղի փոստատարը: Սովորել է Շիկահողի միջնակարգ դպրոցում, ավարտել, ապա ընդունելության քննություններից դուրս մնալուց հետո աշխատանքի անցել Կապան-Ծավ ճանապարհաշինարարությունում՝ բանվոր:

1972 թ. ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Բուհն ավարտել է 1976 թվականին: Ուսանողական տարիներին (1974 թ.) եղել է Վահանավանքում հնագիտական պեղումներ իրականացնող ուսանողական շինջոկատի հրամանատար: Բուհն ավարտելուց հետո գործուղվել է Դավիթբեկ գյուղի միջնակարգ դպրոց՝ պատմության ուսուցիչ: Երեք տարի անց աշխատանքի է անցել Ծավ գյուղի միջնակարգ դպրոցում՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և պատմության ուսուցիչ:

Պատմական գիտությունների դոկտեր Կլիմենտ Հարությունյանը և գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Հայրապետյանը՝ Կապանի երկրագիտական թանգարանում

1981-1988 թթ. աշխատել է նույն դպրոցի տնօրեն: Այնուհետև շարունակել է աշխատել Ծավի, ապա՝ Կապանի թիվ 3 դպրոցի պատմության ուսուցիչ: 2000 թ. նշանակվել է Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն, ստացել ծանր ժառանգություն և աշխատել հնարավորինս փրկել այդ ժառանգությունը: Այս առումով նրան հաջողվել է Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի աջակցությամբ թանգարանը դուրս բերել շենքի առաջին հարկից, տեղափոխել ներկայիս անհամեմատ բարվոք և հարմար տարածք, ինչպես նաև ձեռք բերել եզակի հնագիտական արժեքներ (Եղվարդի գանձեր) ու վավերագրեր: Աշխատանքային տարիներին թանգարանի աշխատակիցների հետ միասին իրականացրել է մի շարք գործեր, անցկացրել միջոցառումներ, գիտաժողովներ, որոնցից երեքն ունեցել է հանրապետական և միջազգային նշանակություն:

Զբաղվել և զբաղվում է բանահավաքչությամբ, ուսումնասիրում է Սյունիքի նոր և նորագույն շրջանի պատմությունը:

Հրատարակել է ինը գիրք՝ «Հարյուրամյա պատերազմ. օրեր և մարդիկ», (2003 թ.), «Դարձ ի շրջանս յուր» (Հովհաննես Ղուկասյանի հուշագրություն, 2005 թ.), «Դարձ ի շրջանս յուր. Մինասյան-Ղուկասյան տոհմի հետքերով», (2007 թ.), «Երկաթե վարագույրից այս կողմ», (2009 թ.), «Սյունիքը փորձութ-

յան մեջ. հայ-թաթարական բախումները» (2016 թ.), «Սյունիք. պատմություն և հիշողություն», (2019 թ.), «Կապան. հետապնդող հիշողություն», (2021 թ.), «Բախում են դռներն ու դարպասները», (2023 թ.): 2025-ին «Անտարես» հրատարակչությունը լույս է ընծայել «Ստեմել (Ստեփան Մելիք-Փարսադանյան) կյանքը, գործը, ժամանակը» ուսումնասիրությունը:

2012 թվականի սեպտեմբերին հանրապետության նախագահի հրամանագրով արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման:

Կապանի համայնքապետի կողմից արժանացել է «Կապան» ոսկե մեդալի: Ուսումնասիրում է Սյունիքում հայ եկեղեցու հանդեպ քաղաքական բռնությունների պատմությունը, Կապանի տարբեր գյուղերի անցյալի պատմության դրվագները, աշխատում է Շիկահողի և շրջակա գյուղերի հանրագիտարանային գործի վրա: Մտադիր է հրատարակել պատկերագիրք՝ ռուսական և եվրոպական բուհերում սովորած Սյունիքի, Արցախի և Գողթնի ուսանող զավակների վերաբերյալ: Տպագրության է պատրաստ «Տարվա հինգ եղանակները» գիրքը:

Եթե Աստված կամենա, մտադիր է Կապանում հիմնադրել «Հիշողություն» անունով թանգարան և նվիրել Կապան համայնքին:

Մանկավարժական աշխատանքում կրել է Ռոբերտ Էջանանցու ազդեցությունը:

Գրիշա Սմբատյանը մեկ որդի ունի՝ Սերոբ Սմբատյան, ով Կապանում գործող «Հիգեա» բժշկական կենտրոնի գլխավոր բժիշկ-սրտաբանն է:

Գրիշա Սմբատյանը Սյունիքի մարզում թանգարանային գործի դրվածքի և իր գործունեության մասին

Իմ կարծիքով՝ որոշակի քայլեր արվել են Սյունիքում թանգարանների աշխատանքը բարելավելու, լավացնելու նպատակով, ինչ-որ բան կարգի բերելու առումով, բայց այն մակարդակից, որ ցանկալի է, դեռևս շատ ենք հեռու: Այդ բոլորը ոմանք մի կողմ են դնում, և շատերի բերանից հնչում է՝ տուրիստը, զբոսավարը, թող գան, շրջագայեն, տեսնեն: Ախր գլխավոր խնդիրը դա չէ, այլ մշակութային արժեքների պահպանությունը, ձեռքբերումը, գանձագողերի հափշտակությունից մշակութային արժեքների փրկելը, նոր նյութերի հայթայթումը, սպիտակ էջերը լրացնելը:

Կապանում թանգարան ստեղծելու փորձ երբևէ չի եղել: Հաշվի առնելով, որ Գորիսում ստեղծվել էր գավառագիտական թանգարան (1948 թ.), ինչ-որ գտնվել է, տեղափոխվել է Գորիս: Ժամանակին շատ թափթփված գործ է արվել: Ինչ վերաբերում է Կապանում թանգարան ստեղծելուն՝ այդ մասին հուշեր ունի Հրաչուհի Կարապետյանը: Թանգարան ստեղծելու համար դիմել են Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու Սուրեն Մովսիսյանին: Ինքն է միջամտել: Որպես նախագնաց, ուզում եմ նշել առաջին տնօրեն Մարատ Նուրիջանյանին, Ռուբիկ Մինասյանին, պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանին, Մուրադ Հարությունյանին: Ասեմ՝ նրանց հետ առաջին հավաքչական աշխատանքներին, որպես դպրոցական, ես էլ եմ մասնակցել:

Կապանի երկրագիտական թանգարանում ինձ չհաջողվեց շատ բան անել, դժգոհ եմ: Իմ գործունեության առաջին փուլում աշխատանքային պայմանները պարզապես ողբերգական էին: Նոր մասնաշենք տեղափոխվելը փրկեց: Փրկվեցին նաև թանգարանային արժեքները. ցեցի, նյութերի հիվանդությունների, փտախտի դեմն առանք: Մենք կորուստներ ենք ունեցել: Չէի ասի՝ մեղավոր են նախկին տնօրենները: Բոլորովին: Պատճառը շենքային պայմաններն էին: Մենք բազմաթիվ հնագիտական, ազգագրական արժեքներ ենք ձեռք բերել, ու նաև գնել ենք. այն ժամանակ մարզպետարանն օգնում էր, մենք լուրջ գնումներ էինք կատարում: Քիչ բան չի արվել. և՛ հետազոտական, և՛ հավաքչական աշխատանքներ, որի արդյունքն իմ հեղինակած գրքերն են: Բազմաթիվ միջոցառումները, լրագրային տարատեսակ հրապարակումները, պահպանությունը...

Եվ գլխավոր ձեռքբերումը՝ բազմաթիվ ազգագրական, հնագիտական արժեքներ, վավերագրեր, փաստաթղթեր, լուսանկարներ: Ամենակարևորը՝ հավաքչական աշխատանքը կայուն հիմքերի վրա դրեցինք:

Միջոցառումներ էինք անում, որին մասնակցում էին տարբեր տարիքի և զբաղմունքի անձինք՝ այդպիսով հաղորդակից դառնալով իրենց երկրամասի պատմությանը, նրա պատմամշակութային արժեքներին:

Ծագումով կապանցի, մեծահամբավ քանդակագործ Գառնիկ Խաչատրյանի հետ

Կապանի երկրագիտական թանգարանում, բանասիրական գիտությունների դոկտոր, սահյանագետ Շչորս Դավթյանի հետ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Մարգարյան Անդրանիկ Շմավոնի



Անդրանիկ Մարգարյանի նվիրվածությունը հայրենի եզերքին վկայություն է այն բանի, թե ինչպես մարդ պիտի սիրի իր փոքր հայրենիքը, առավել ևս ապրի նրա հոգսերով: Ծննդավայրից բացակայել է երկու անգամ՝ մեկը միանգամայն հարգելի պատճառով, սահմանադրական պարտքն է կատարել խորհրդային բանակում, մյուսը՝ երկու տարի աշխատել է Ղափանի ավտոդպրոցում: Կարելի է ասել, մի ամբողջ կյանք՝ յոթ տասնամյակից ավելի, սահմանամերձ Շիկահող գյուղում է...

Ծնվել է 1947 թվականի նոյեմբերի 20-ին Ղափանի շրջանի Շիկահող գյուղում: Ութամյա կրթություն է ստացել ծննդավայրում, ապա ավարտել է Երևանի գյուղմեխանիզացիայի և էլեկտրաֆիկացիայի տեխնիկումը:

1967-1969 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

Զորացրվելուց հետո Ղափանի շրջգործկոմի գյուղվարչությունը նրան գործուղել է Ծավ գյուղի Հունան Ավետիսյանի անվան անասնապահական խորհրդային տնտեսություն, որտեղ 12 տարի աշխատել է գլխավոր մեխանիկ:

1982-84 թթ. աշխատել է Ղափանի ավտոդպրոցում:

1984 թվականին Ղափանի կուսշրջկոմի հանձնարարությամբ ստանձնել է Շիկահողի անասնապահական տնտեսության ինժեներ-մեխանիկի պարտականությունները:

1980-ական թվականների վերջերին, երբ Արցախյան ազգային-ազատագրական շարժումը վերաճեց հայ-ադրբեջանական հակամարտության, Անդրանիկ Մարգարյանի գործուն մասնակցությամբ գյուղում ստեղծվեց ինքնապաշտպանական ջոկատ, որը շուրջօրյա հերթապահություն էր իրականացնում գյուղի տարածքում և Շիկահողի խորհրդային տնտեսության օբյեկտներում:

1991-ին նշանակվեց Շիկահողի խորհրդային տնտեսության տնօրենի պաշտոնակատար, երբ տեղի ունեցավ տնտեսության անասնագլխաքանակի, գյուղտեխնիկայի, հողատարածքների սեփականաշնորհումը:

Հաջորդ տարում ընտրվեց «Շիկահող» գյուղացիական կոլեկտիվ տնտեսության նախագահ:

1993-1996 թթ. եղել է Շիկահողի գյուղխորհրդի գործկոմի նախագահ:

1996-ին ընտրվել է Շիկահող համայնքի ղեկավար՝ պաշտոնավարել մինչև 2003 թվականը: Այնուհետև «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում ինժեներ-մեխանիկ էր մինչև 2021 թվականը, որից հետո անցել է վաստակած հանգստի:

Անդրանիկ Մարգարյանն ունի մեկ դուստր:

Անդրանիկ Մարգարյանն ակտիվ դիրքորոշում ունեցող անձնավորություն է, գյուղապահպանման տարբեր հարցերի, հատկապես համայնքների խոշորացման վերաբերյալ իր յուրօրինակ տեսակետն ունի: Ըստ նրա՝ համայնքների խոշորացումն ավելի շատ գյուղերը քայքայելու նպատակ ունի, քան պահպանելու: Նրա փոխանցմամբ՝ գյուղերի խոշորացում նախկինում էլ է եղել: Շիկահող, Սրաշեն գյուղերը ժամանակին միավորվեցին մի տնտեսության մեջ: 1965 թվականին էր:

Անդրկովկասյան զինվորական օկրուգի փոխանցիկ դրոշի հանձնումը Ղափանի ավտոդպրոցին



Գյուղ Շիկահող, համայնապատկեր

Կենտրոնը՝ Շիկահողը, բնականաբար, զարգացավ, իսկ Սրաշենը հայտնվեց աղքատ ազգականի կարգավիճակում: Գյուղական բնակավայրը, նրա համոզմամբ, պիտի առանձին միավոր լինի, համայնքի ղեկավարն էլ պիտի ղեկավարվի վերևից:

Նրա կարծիքով՝ գյուղը հանրապետական և մարզային իշխանությունների սևեռուն ուշադրության կենտրոնում պիտի լինի: Էպիզոդիկ այցերից հետո իշխանավորն ինչպե՞ս կարող է պատկերացնել գյուղացու հոգսը:

Նա նաև բնապահպանության ջատագով է. **«Եթե բնապահպաններն այդքան պայքարում են բնությունն ապականողների դեմ, ապա թող գան պակասեցնեն մոշի թփերի տարածվելը, որ տարածքը սիրուն անտառ դառնա, ոչ թե մնա որպես մոշուտ: Եթե բնությունն այդքան հաճելի է, այդ բնապահպաններից թող մեկը գա այստեղ, իմ տան կողքին մի ազատ տուն կա, անվճար տալիս ենք, թող գա ապրի՝ դեռ մի բանով էլ կօգնենք: Միայն տեսնեմ՝ ինքը ձմռանը ո՞նց է ապրելու, ես էլ իրեն նայեմ՝ ապրեմ»:**

Անդրանիկ Մարգարյանը ցավ է ապրում, որ Շիկահողի մեքենահարմար վարելահողերը չեն մշակվում. **«Մարդ պիտի հող մշակի, անասուն պահի, որ եկամուտ ստանա: Գյուղացին այլ եկամուտ չի կարող ունենալ: Սակայն ամեն ինչ տարերայնորեն է արվում: Գյուղացին իր արտադրանքն իրացնելու խնդիր ունի: Ամեն ինչ հանուն մարդու բարօրության պիտի արվի»:**

Շիկահողցի մի խումբ երիտասարդների այցը Տաթևի վանք

Անվերջ կարելի է լսել Անդրանիկ Մարգարյանի դատողությունները գյուղի, գյուղացու, գյուղապահպանության հիմնախնդիրների վերաբերյալ: Դրանք մեկը մյուսից կենսունակ են...

//

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Մարտիրոսյան Ռազմիկ Արշակի

Ծնվել է 1942 թվականի հուլիսի 21-ին Ագարակ գյուղում: Յոթնամյա կրթություն է ստացել ծննդավայրում, միջնակարգն ավարտել է Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

Կարճ ժամանակ աշխատել է «Քաջարանշին» տրեստում, Ղափանի կենցաղսպասարկման կոմբինատում, ավարտել է վարորդական դասընթացները:

Այնուհետև մի ամբողջ կյանք է անցկացրել հայրենի գյուղում որպես մեխանիզատոր՝ կոմբայնավար, տրակտորիստ, վարորդ, եղել է դաշտավարական բրիգադի բրիգադավար:

1986-1991 թթ.՝ մինչև Խորհրդային Միության փլուզումը, ղեկավարել է Ագարակ գյուղի կոլվարչությունը, աշխատանքին զուգընթաց հեռակա կարգով ավարտել Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը:

Հանրապետության վարչատարածքային բաժանումից հետո (1996 թվա-

Գյուղ Ագարակ, համայնապատկեր

կան), երբ ձևավորվեցին համայնքներ, եղել է Ագարակի գյուղապետը՝ մինչև 2008 թվականը, այնուհետև վարել է գյուղի ջայլամաբուծության տնտեսությունը: Թեհրանում ուսումնասիրել է այդ տարաշխարհիկ կենդանիների խնամքը: Երկու տարի նրա աշխատավայրը ջայլամանոցն էր, կենդանիների թիվը հասել էր 1200-ի:

Դրանից հետո, առողջական խնդիրներով պայմանավորված (զգալ էր տալիս պատերազմական տարիների խրամատային կյանքը), թողել է գործը: Բայց շարունակել է մնալ հարազատ գյուղի զավակը: Համագյուղացիներին օգնել է՝ ինչով կարողացել է:

Ակնառու է Ռազմիկ Մարտիրոսյանի ավանդն Արցախյան առաջին պատերազմի տարիներին հայրենի բնակավայրի պաշտպանության գործում: Ավելի ստույգ՝ սահմանամերձ Ագարակ գյուղի պաշտպանության ղեկավարն էր: Հիշարժան է 1992 թվականի դեկտեմբերի 24-ը, երբ ադրբեջանցիները՝ ավտոմեքենաներով և զգալի մարդուժով փորձեցին ներխուժել Ագարակ: Ռազմիկ Մարտիրոսյանը կարողացավ գյուղի տղաներով հետ շպրտել թշնամուն: Իհարկե, ագարակցիներին օգնության հասան կապանցի և քաջարանցի ազատամարտիկները: Գյուղի մատույցներում 20-ից ավելի զոհ տալով՝ հակառակորդը նահանջեց: Դրանից հետո ադրբեջանցիները չհամարձակվեցին նոր ոտնձգություն անել Ագարակ գյուղի ուղղությամբ:

Հայրենի եզերքին նվիրվածության համար Ռազմիկ Մարտիրոսյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» և «Մարշալ Բաղրամյան» մեդալներով:

Նրա ընտանիքում հասակ է առել հինգ արու զավակ:

Սուրբ Օհան եկեղեցի

Արծվանիկի դպրոցի մանկավարժների հետ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Անդրեասյան Կարո Սերյոժայի

Կարո Անդրեասյանի ամբողջ գիտակցական կյանքն անցել է մի ոլորտում՝ մանկավարժություն: Իր ողջ եռանդը նպատակաուղղել է մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործին: Նրա մանկավարժական գործունեությունը վկայություն է այն բանի, թե ինչպես կարելի է նվիրվել հայրենի եզերքին. **«Սիրել եմ և միշտ սիրում եմ իմ հայրենիքը, հայրենի գյուղս, ուզում եմ իմ պետությունը բոլոր առումներով հզոր լինի: Սիրել եմ իմ ուսուցիչներին, ձգտել եմ հավատարիմ ու արժանի լինել նրանց պատգամներին»:**

Ծնվել է 1952 թ. ապրիլի 23-ին Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղում՝ Հայրենական մեծ պատերազմի վետերան Սերյոժա Անդրեասյանի ընտանիքում, որը բազմանդամ էր՝ հինգ տղա, երկու աղջիկ:

1968-1969 ուստարում ավարտել է Արծվանիկի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի և ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետը:

1973 թվականին բուհն ավարտելուց հետո գործուղվել է Ղափանի շրջանի Շիկահողի միջնակարգ դպրոց՝ ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ: Այդ տարիներին մանկավարժական բուհերի շրջանավարտների մեծ մասին գործուղում էին գյուղական դպրոցներ, որտեղ մանկավարժական կադրերի պահանջ կար: 1975-ի օգոստոսին տեղափոխվել է Արծվանիկի միջնակարգ դպրոց՝ ֆիզիկա և մաթեմատիկա դասավանդել: Այդ տեղափոխումը եղել է գյուղի տարեցների պահանջով: Դա եղել է նաև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս, արծվանիկցի Յուրի Գասպարյանի հորդորով:

1977-ին նշանակվել է այդ դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, 1982-ին՝ դպրոցի ուսումնական գծով տնօրենի տեղակալ:

1988-ին ընտրվել է Արծվանիկի միջնակարգ դպրոցի տնօրեն՝ պաշտոնավարելով մինչև 2018 թ. սեպտեմբերի 18-ը՝ մինչև կենսաթոշակի անցնելը:

Արցախյան ազատամարտի տարիներին ակտիվ մասնակցություն է ունեցել ինքնապաշտպանական ջոկատների ստեղծմանը և սահմանների պաշտպանությանը: **«Պատերազմական բուն գործողություններին չեմ մասնակցել, բայց իմ ղեկավարած դպրոցը պատերազմի ընթացքում ոչ մի օր դասապրոցեսը չի դադարեցրել,**– ասում է Կարո Անդրեասյանը,– **ընդհակառակը, իմ բացակայության ժամանակ կոլեկտիվը կրկնակի եռանդով է աշխատել, իսկ ջոկատները սահմաններն են պաշտպանել»:**

Աշխատելու տարիներին Արծվանիկի միջնակարգ դպրոցում հիմնադրել է առաջավոր փորձի դպրոց և կազմակերպել նրա գործունեությունը: Արծվանիկի դպրոցը եղել է տարածաշրջանի գյուղական դպրոցներից առաջինը, որ մասնակցել է հինգ միջազգային կազմակերպությունների ծրագրերի իրականացմանը և որտեղ տեղադրվել է համակարգչային կենտրոն՝ միացված համացանցին:

Արժանացել է «Ստեղծագործ ուսուցիչ» կոչման և կրծքանշանի:

1990-1995 թթ. եղել է Կապանի քաղխորհրդի առաջին գումարման պատգա-

մավոր:

2011 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահի հրամանագրով՝ ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի առթիվ, կրթության բնագավառում ունեցած մեծ վաստակի, երիտասարդ սերնդի կրթման և դաստիարակման գործում ներդրած նշանակալի ավանդի համար արժանացել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչման և ոսկե մեդալի:

Պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» մեդալով:

Կարո Անդրեասյանն ունի երկու զավակ. որդին՝ Արմանը, զինվորական է, դուստրը՝ Արմինեն, 2007 թվականից բնակվում է ԱՄՆ-ում:

Ռոբերտ Էջանանցին Կարո Անդրեասյանի մասին գրել է. **«Անդրեասյանին ճանաչողը մատը կծում է: Կյանքում միշտ տեղ կա ճախրանքի համար: Եվ Կարոն դա ապացուցել է՝ արդիական չափանիշներին քննություն բռնող դպրոց, ավանդականի և նորարականի փոխկապակցության խոր ըմբռնում, պետական կրթության քաղաքականության համառ վարգում...»:**

Անդրեասյանը միշտ հետամուտ է եղել դեռահասների դաստիարակության գործին և կրթական մակարդակի բարելավմանը: Ամառային արձակուրդի օրերին նա ավագ ջոկատավար է եղել «Քաջարանշին» տրեստի «Բաղաբերդ» և Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի «Գանձասար» պիոներական ճամբարներում:

Ի՞նչն է ուշագրավ. այժմ էլ Կարո Անդրեասյանը ֆիզիկա է դասավանդում հայրենի Արծվանիկում: Ասել է թե՝ մանկավարժական կենսագրությունը շարունակվում է... //

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Մնացականյան Ժորա Արմենակի

Ծնվել է 1947 թվականի հոկտեմբերի 17-ին Դավիթբեկ գյուղում, ավարտել Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը, Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը, ծառայել խորհրդային բանակում:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Վերին Խոտանանի, Դավիթբեկի դպրոցներում:

Կարճ ժամանակ անց, մասնագիտական խոր գիտելիքները, բարոյական ազնիվ նկարագիրը նկատի ունենալով, առաջ են քաշում Ղափանի շրջժողկրթբաժնի դպրոցական տեսուչ, Ղափանի թիվ 6 դպրոցի տնօրեն, քաղժողկրթբաժվար, շրջժողկրթբաժվար: Նրա գործուն մասնակցությամբ և հետևողականությամբ կառուցվում են թիվ 1 դպրոցի համալիրը, թիվ 3 դպրոցի կցակառույց մասնաշենքը, երեք մանկապարտեզ, վերսկսվում է պիոներական պալատի շինարարությունը, սկիզբ է դրվում դպրոցական շենքերի հիմնանորոգման աշխատանքներին: Երկարօրյա խմբեր բացվեցին համարյա բոլոր դպրոցներում, ուսուցիչների վերապատրաստման դասընթացները կազմակերպվեցին տեղում՝ Կապանում:

Նրա պաշտոնավարման օրոք գյուղական դպրոցներին կից բացվեցին մանկապարտեզներ:

1996-2000 թթ.՝ որպես Սյունիքի մարզպետարանի կրթության վարչության պետի տեղակալ, Ժորա Մնացականյանն ամենաբարձր պատասխանատվությամբ ու նվիրումով կազմակերպել է կրթական համակարգի առավել արդյունավետ գործունեությունը:

2000-2009 թթ. Սյունիքի մարզպետի օգնականն էր:

Ժորա Մնացականյանն ունի երկու զավակ՝ որդի և դուստր: //

Արծվանիկի դպրոցի մանկավարժների հետ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Ավանեսյան Ռուզաննա Արմենակի

Գուսան Հայկազունու հետ

Երաժշտության հանդեպ հակումը Ռուզաննա Ավանեսյանի մեջ ձևավորվել է ընտանիքում. հայրը մի քանի ժողովրդական գործիք էր նվագում, երգը ևս հարգի էր ընտանիքում:

Ծնվել է 1950 թ. փետրվարի 15-ին Ղափան քաղաքում՝ ծառայողի ընտանիքում:

1967-ին ավարտել է Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, զուգահեռ՝ նաև երաժշտական դպրոցի ջութակի դասարանը, 1970-ին՝ գերազանցության դիպլոմով՝ երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժինը: 1976 թվականին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան:

1970-1986 թթ. Ղափանի առաջին երաժշտական դպրոցում և երաժշտական ուսումնարանում տեսական առարկաներ է դասավանդել և երգչախումբ ղեկավարել:

1986 թ. Հայկական ԽՍՀ մշակույթի նախարարի հրամանով նշանակվել է Ղափանի նորաբաց թիվ 3 երաժշտական դպրոցի տնօրեն: 1993-ին նշանակվել է Կապանի թիվ 1 երաժշտական դպրոցի տնօրեն: Հիմնական աշխատանքին զուգահեռ Կապանում տեղակայված զորամասում ղեկավարել է ժողգործիքների նվագախումբը, համերգներով հանդես եկել զորամասում:

2009-2012 թթ. աշխատել է Կապանի քաղաքապետի խորհրդական, համակարգել երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշխատանքները:

2010 թվականից ՀՀ «Ազատամարտի վետերանների միասնություն» հասարակական կազմակերպության Սյունիքի մարզային կառույցի անդամ է և բազմաթիվ միջոցառումների կազմակերպիչ:

2012-ին նշանակվել է Կապանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տնօրեն՝ աշխատել մինչև 2019 թ. հունվար:

Ռուզաննա Ավանեսյանը, բացի մանկավարժական գործունեությունից, զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ, կատարողական արվեստով, ղեկավարել մանկական, կանանց և երկսեռ երգչախմբեր:

Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի կապակցությամբ ղեկավարել է քաղաքապետարանի 100 հոգուց բաղկացած կանանց երգչախումբը, համերգային ծրագրով 2015 թ. ապրիլի 24-ին հանդես եկել Բաղաբուրջի հուշահամալիրում:

Ստեղծագործում է, հեղինակ է բազմաթիվ երգերի, որոնց մի մասը 2015 թ. կատարվել է իրեն նվիրված ստեղծագործական երեկոյի ընթացքում:

Պարգևատրվել է Հայկական ԽՍՀ մշակույթի նախարարի շնորհակալագրով (1978), մշակույթի նախարարի պատվոգրերով (2008, 2010 թթ.), ՀՀ պաշտպանության նախարարի պատվոգրով (2011 թ.), «ՀՀ զինված ուժեր – 20 տարի» հոբելյանական մեդալով (2011 թ.), Սյունիքի մարզպետի շնորհակալագրով (2015 թ.):

Ռուզաննա Ավանեսյանն ունի մեկ դուստր:

Կապանի կանանց երգչախումբը՝ Ռուզաննա Ավանեսյանի ղեկավարությամբ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Գաբրիելյան Գրիշա Հայկի

Եթե Դավիթբեկ գյուղի վերջին տասնամյակների պատմությունը հնարավոր լիներ ներկայացնել մի քանի մարդկանց միջոցով, ապա դրանցից մեկն անպատճառ կլիներ Գրիշա Հայկի Գաբրիելյանը: Նրա կենսագրությունը միայն մեկ մարդու անցած ճանապարհ չէ, այն մի ամբողջ ժամանակաշրջանի պատմություն է՝ գյուղի, դպրոցի, պատերազմի, սերունդների ու մնայուն արժեքների մասին:

Ծնվելով 1954 թվականի հունվարի 1-ին՝ Եղիազարյան գերդաստանում, ամբողջ կյանքում մնաց հավատարիմ մի պարզ, բայց խոր գաղափարի՝ ապրել այնտեղ, որտեղ առավել պահանջված ես:

Նա իր առաջին քայլերը կրթության ճանապարհին կատարել է ծննդավայրի դպրոցում, այնուհետև բարձրագույն կրթություն ստացել Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում՝ ընտրելով ֆիզիկոսի մասնագիտությունը: Այդ ընտրությունը ոչ միայն մասնագիտական ուղղություն էր, այլև մտածողության ձև. ճշգրտություն, տրամաբանություն, հետևողականություն, այն որակները, որոնք

Դրվագներ Գրիշա Գաբրիելյանի կենսագրությունից

հետագայում բնորոշ դարձան նաև նրա մանկավարժական ու ղեկավարման գործունեությանը:

1975 թվականից Գրիշա Գաբրիելյանը սկսում է աշխատել Դավիթբեկի միջնակարգ դպրոցում՝ ֆիզիկայի ուսուցիչ: Նրա դասերը վաղուց դուրս են գալիս դասագրքի սահմաններից, ֆիզիկան նրա ձեռքում դառնում էր մտածողության մշակույթ, աշխարհը հասկանալու միջոց, ոչ թե պարզապես բանաձևերի հավաքածու: Շատերը հիշում են՝ նա կարողանում էր ամենաբարդ երևույթը բացատրել այնպես, որ այն դառնում էր պարզ ու հասկանալի, իսկ ամենապարզ հարցի մեջ բացում էր խորքային իմաստը:

1986 թվականին նշանակվում է հայրենի գյուղի դպրոցի տնօրեն և այդ պաշտոնում մնում մինչև 2019 թվականը: Այդ տարիները Դավիթբեկի դպրոցի համար պարզապես վարչական փոփոխությունների ժամանակաշրջան չէին, դրանք համակարգային վերափոխման, կայունության, արարումի և կրթական ու դաստիարակչական աշխատանքների ոլորտում հաջողությունների ժամանակաշրջան էին:

Գրիշա Գաբրիելյանը դպրոցը համարում էր գյուղի ապագան կերտող օջախ: Նրա երազանքը մեկն էր՝ կրթել այնպիսի սերունդ, որը գիտելիք ձեռք բերելով՝ չի խզելու կապը հայրենի գյուղի հետ: Ուրախությամբ էր տեսնում, թե ինչպես են իր աշակերտներից շատերը տարիներ անց վերադառնում Դավիթբեկ՝ արդեն որպես գործընկեր, համայնքային կյանքի տարբեր ոլորտների նվիրյալ մասնագետ և իրենց գյուղի հարատևությունն ապահովող մարդիկ: Նրա համար դա մանկավարժական աշխատանքի ամենամեծ հաղթանակներից էր:

Տարիների ընթացքում նրա կատարած աշխատանքը ստացել է նաև պաշտոնական գնահատական: Գրիշա Գաբրիելյանը պարգևատրվել է մի շարք պատվոգրերով, արժանացել խրախուսանքների, այդ թվում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալ»-ի:

Պատերազմական օրերը դարձան նրա կենսագրության ամենադժվար, բայց նաև ամենախորհրդանշական էջերից մեկը: Երբ Դավիթբեկը ենթարկվում էր հրետակոծության, իսկ բնակչության մի մասը տարհանվել էր, նա կանգնած էր միաժամանակ երկու ծանր խնդրի առաջ՝ պահպանել կրթական գործընթացը և չկտրել կապը գյուղի հետ:

Դպրոցը ժամանակավորապես տեղափոխվում է Կապան, բայց նույնիսկ այդ պայմաններում ուսուցումը չէր դադարում: Միևնույն ժամանակ նա, ինչպես և ուսուցիչները, հաճախ էին ոտքով անցնում գյուղ տանող վտանգավոր ճանապարհը՝ հերթապահելու և համայնքի բնակիչների կողքին լինելու համար:

Այդ տարիներին դպրոցը նրա համար ոչ միայն կրթական օջախ էր, այլ նաև դիմադրության և գոյատևման խորհրդանիշ: Կարողանում էր աշխատանքները կազմակերպել այնպես, որ երեխաները շարունակեն սովորել նույնիսկ անորոշության ու վտանգի պայմաններում: Դա արդեն միայն տնօրենի աշխատանք չէր, այլ պատասխանատվություն՝ ամբողջ սերնդի նկատմամբ:

Դպրոցի կյանքի կարևոր բաղադրիչներից էին նաև օլիմպիադաները: Աշակերտները մասնակցում էին հանրապետական օլիմպիադաների, դիպլոմներ ստանում, որոնք փոքր գյուղի համար մեծ ձեռքբերում էին:

Միաժամանակ գործում էին սպորտային խմբակներ՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, թենիս, որոնց շնորհիվ դպրոցը դառնում էր լիարժեք զարգացման միջավայր:

Հատուկ տեղ ուներ նաև արվեստը. երաժշտության, նկարչության և գծագրության խմբակները, դաշնամուրի, քանոնի, շվիի ու դուդուկի դասերը ձևավորում էին երեխաների գեղագիտական աշխարհը: Դպրոցական միջավայրում անգամ ամենօրյա կյանքը հագեցած էր մշակութային շնչով, և աշակերտները կրթությունն ընկալում էին որպես բազմակողմանի զարգացման օջախ:

Հատկանշական է նաև, որ դպրոցում դասավանդվում էր «Ավտոգործ» առարկան: Աշակերտները ոչ միայն ավարտում էին դպրոցը, այլ նաև ստանում վարորդական իրավունք: Դա տվյալ ժամանակի համար բացառիկ մոտեցում էր, որը կրթությունը կապում էր մասնագիտական կողմնորոշման հետ:

Գրիշա Գաբրիելյանի գործունեության տարիներին դպրոցը նաև սերտ կապեր ուներ համայնքային և նույնիսկ միջազգային մի շարք կազմակերպությունների հետ: Կային բարեկամական փոխայցելություններ, համագործակցություն՝ տարբեր դպրոցների հետ, մշակութային փոխայցելություններ և համատեղ միջոցառումներ, որոնք գյուղը կապում էին ավելի լայն աշխարհին:

Նրա կյանքի առանձնահատուկ արժեքներից մեկը միշտ եղել է մանկավարժի մարդկային կերպարը: Նրա խոսքով՝ ուսուցիչը նախ պետք է սիրի երեխային, որովհետև առանց այդ սիրո կրթությունը դառնում է ձևական: Համոզված է, որ չկա «վատ երեխա», կա չբացահայտված երեխա, և ուսուցչի ամենամեծ խնդիրը հենց այդ ներքին լավը գտնելն ու զարգացնելն է:

2019 թվականին, երբ ավարտեց իր գործունեությունը՝ որպես տնօրեն, դպրոցն արդեն մի ամբողջ պատմություն ուներ իր հետևում՝ ձևավորված սերունդներով, հաղթահարած դժվարություններով և պահպանված ավանդույթներով: Բայց նրա կապը դպրոցի հետ չի ընդհատվում, շարունակում է մնալ ֆիզիկայի ուսուցիչ, հիշողություն կրող մարդ, ում համար մանկավարժությունն պարզապես առաքելություն է եղել:

Գրիշա Գաբրիելյանն ունի երեք զավակ՝ երկու որդի, մեկ դուստր: Նրա կինը՝ Լարիսա Ալեքսանյանը, նույնպես մանկավարժ է և մինչև օրս շարունակում է դասավանդել Դավիթբեկի դպրոցում՝ պահպանելով նույն կրթական միջավայրը, որի ձևավորման մեջ մեծ դեր է ունեցել նաև ամուսինը:

Նրա կենսագրության մեջ չկա ցուցադրականություն. կա երկարատև, հետևողական հսկա աշխատանք: Նրա կերպարը ձևավորվել է ոչ թե բարձրագոչ խոսքերով, այլ տարիների լուռ աշխատանքով, դպրոցում, գյուղում, գյուղի պաշտպանության խրամատում և խաղաղ կյանքում: Եվ հենց այդ պատճառով էլ Գրիշա Գաբրիելյանի անունը Դավիթբեկում դարձել է կրթության, նվիրվածության և կայունության խորհրդանիշ:

//

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Գրիգորյան Սեյրան Մխիթարի

Կապանա տան մատաղ սերնդի երաժշտական կրթության ու դաստիարակության գործում անուրանալի ավանդ ունի Սեյրան Գրիգորյանը: Շուրջ երեք տասնամյակ ղեկավարել է Կապանի արվեստի մանկական դպրոցը՝ մեծապես նպաստելով այդ կրթօջախի կայացմանը և գոյատևմանը:

Դրվագներ Կապանի արվեստի մանկական դպրոցի տարեգրությունից

Ծնվել է 1947 թ. մայիսի 28-ին Ղափանում՝ մտավորականի ընտանիքում:

1953-1954 ուստարում հաճախել է Ղափանի թիվ 3 միջնակարգ դպրոցը, 1955-ին՝ թիվ 1 երաժշտական դպրոցի ջութակի դասարանը: 1966 թվականին ընդունվել է Ղափանի երաժշտական ուսումնարանի լարային բաժնի Արմեն Մարջանյանի ջութակի դասարանը: Ուսումնարանն ավարտել է պրոֆեսոր Հենրիկ Սմբատյանի դասարանում, ով Երևանի կոնսերվատորիայի պրոռեկտորն էր:

Ուսումնարանում սովորելուն զուգընթաց ընդունվել է Հայաստանի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ, որն ավարտելուց հետո՝ համատեղությամբ, աշխատել է Ղափանի երաժշտական ուսումնարանի հանրակրթական բաժնում՝ մաթեմատիկայի ուսուցիչ, իսկ երաժշտական բաժնում՝ իլյուստրատոր:

1969 թ. աշխատանքային գործունեությունը շարունակել է Ղափանի երաժշտական ուսումնարանում՝ ջութակի դասատու, այնուհետև լարային բաժնի վարիչ:

1981 թ. Ղափանում հիմնվեց արվեստի մանկական դպրոցը, և 1983 թվականից Սեյրան Գրիգորյանը նշանակվեց տնօրեն՝ պաշտոնավարելով մինչև 2013 թվականը:

Հասարակական հիմունքներով ընտրվել է Կապանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ:

2013-2017 թթ. արվեստի մանկական դպրոցի փոխտնօրենն էր, որից հետո անցել է կենսաթոշակի:

Նրա լավագույն շրջանավարտներն աշխատում են հանրապետության տարբեր քաղաքներում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Յարոսլավլում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Սեյրան Գրիգորյանն ունի երկու զավակ՝ ուստր և դուստր:

//

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Դավթյան Ռիտա Արարատի

Ռուս դերասան Եվգենի Մորգունովի հետ

Կապանի վերջին երեք–չորս տասնամյակի պատմության մեջ ուրույն դեր է ունեցել Ռիտա Դավթյանը: Նրա կերպարի միջոցով է նաև արժևորվել–իմաստավորվել շրջանի երիտասարդության կյանքը: Միշտ ձգտել է ապրել ազնիվ ու արժանապատիվ կյանքով, օրինակ ծառայել շատ–շատերի համար: Ուստի՝ իրավամբ, վայելում է երիտասարդության և գործընկերների հարգանքը:

Ծնվել է 1950 թվականի հունվարի 1-ին Ղափան քաղաքում:

Միջնակարգ կրթություն ստանալով Ղափանի թիվ 3 միջնակարգ դպրոցում՝ 1967-ին ընդունվել և 1972-ին ավարտել է Մոսկվայի լեռնային ինստիտուտը՝ լեռնային ինժեների մասնագիտությամբ: Նույն թվականից անդամագրվել է Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումի կոլեկտիվին:

Աշխատելով հաջողությամբ՝ Երևանում կայացած հավաքներից մեկում նշանակվեց Ղազախստանում գործող շինարարական ջոկատի հրամանատար: Նա այդ պաշտոնում նշանակված առաջին կինն էր: Ջոկատը վերադարձավ Կարմիր դրոշով և շնորհակալագրով՝ Ղազախստանի Կոկչետավի մարզկոմի կողմից: Այդտեղ առավել հստակ դրսևորվեցին նրա առաջնորդական հատկանիշները, կարգապահությունն ու պատասխանատվությունը. ջոկատը կատարեց առաջադրանքը 105 տոկոսով: Նա համախմբեց ջոկատը, պահպանեց առողջ աշխատանքային մթնոլորտ և օպերատիվ լուծեց առաջացած խնդիրները: Նրա գործունեության մասին բազմաթիվ հոդվածներ տպագրվեցին «Степной маяк» թերթում:

1976-ին ընտրվեց կոմերիտմիության Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար՝ որպես երիտասարդության հմուտ ղեկավար: Աշխատանքի ընթացքում երկու անգամ պարգևատրվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

1983-ին տեղափոխվել է աշխատանքի կուսակցության Ղափանի շրջկոմ՝ ընդհանուր բաժնի վարիչ՝ պաշտոնավարելով մինչև 1989 թվականը: Այնուհետև Կապանի թիվ 21 պրոֆտեխնիկական ուսումնարանի տնօրենն էր, կրթօջախ, որտեղ ուսանում էր 1300 սովորող, նաև ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից:

1989-ից 2006-ը Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրի տնօրենն էր: Այստեղ էլ իրեն դրսևորեց որպես փորձառու մասնագետ՝ սոցիալապես անապահով և դժվարին պայմաններում գտնվող երեխաների դաստիարակության ու կրթության գործում: Ողջ եռանդն ուղղեց նրանց հիմնախնդիրների լուծմանը:

2016 թվականին անցել է կենսաթո-

Հանդիպում Ալեք Մանուկյանի հետ

շակի, ղեկավարում է «Յուլիա» հասարակական կազմակերպությունը:

* * *

Խոսք Ռիտա Դավթյանի մասին

Դեռեւս 1970-ականների վերջին եւ 80-ականների սկզբին Կապանի շրջանի երիտասարդության ընտրյալ առաջնորդն էր, արժանապատիվ առաջատարը:

Հանրապետության քաղաքական ղեկավարությունն այդ տարիներին եւ շատ դեպքերում հենց նրա կերպարի միջոցով էր տեսնում-արժեւորում-իմաստավորում շրջանի երիտասարդության գործունեությունը: Ընդ որում՝ արժեւորում-իմաստավորում էր դրականորեն:

Դա այն սերունդն էր, որ ոտքի ելավ կորսված հայոց պետականության վերականգնման, ինչպես եւ Արցախի ազատագրության համար:

Հետագայում Ռիտա Դավթյանը լծվել է մանկավարժությանը, ավելի ստույգ՝ մանկավարժության ամենադժվարին ու սրբասուրբ ոլորտին՝ ճակատագրի կամոք դժբախտացած երեխաների կրթության եւ դաստիարակության աստվածահաճո գործին:

Տարիներ շարունակ այդ երեխաներից յուրաքանչյուրի համար ծնող է եղել՝ իր գորովագութ պահվածքով, ստեղծագործ աշխատանքով նրանց հույս ու հավատ ներարկելով:

Հանուն այդ երեխաների էլ նա զոհաբերեց-ուշադրությունից դուրս թողեց իր անձնական-ընտանեկան կյանքի շատ-շատ հարցեր:

Հետադարձ հայացք ձգելով Ռիտա Դավթյանի անցած ճանապարհին, կարող ենք փաստել՝ նրա համար անսակարկելի արժեք է եղել ու կա Հայաստանի անկախ պետությունն ու պետականությունը, ինչպես եւ իր բնօրրան Կապանի արժանապատիվ ու բարգավաճ առօրյան:

Նրա վարքում անքննելի են եղել օրինապահությունը, օրենքի ու պետական կարգի հանդեպ հարգանքը, հավատամքն ազգային-յունիքյան արժեքներին:

Առանձնահատուկ ուշադրություն, հարգանք է ունեցել եւ ունի ընկերների, համաքաղաքացիների հանդեպ. ու մարդկային այդ որակները դիմացան փորձությունների քուրայով անցնող մեր օրերում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երբ գրքերի աշխարհն ուղեկից է ողջ կյանքի ընթացքում

Խորհրդային տարիներին գրքի հանդեպ սերը ևս մի դրսևորում ուներ: Մարդիկ տանն անձնական գրադարան ունեին. գրախանութներում հերթ էին կանգնում դասականների հատորները (և ոչ միայն) ձեռք բերելու համար: Իմ իմացած գրքասերներից մեկը, ով անձնական հարուստ գրադարան ունի, Ռիտա Դավթյանն է: Տարիներ ի վեր նրա ձեռք բերած գրքերն իր բնակարանի գրադարակներում են, մի մասն էլ արկղերի մեջ, դյուրի՞ն է 1000-1500 կտոր գրականության համար մի բնակարանում տեղ գտնել...

Ռուս դերասանուհի Լյուդմիլա Չուրսինայի հետ

Գրադարակներում շարվածները ռուս և արտասահմանցի հեղինակների գրչին են պատկանում՝ Մայակովսկի, Բուլգակով, Տոլստոյ, Բունին, Պաստեռնակ, Յուգո, Սկոտ, Ցվայգ, Բալզակ, բոլորին չես թվարկի: Մի այլ տեղում «Классики и современники» մատենաշարով լույս տեսած գրքերն են, «Большая советская энциклопедия»-ի և «Հայկական սովետական հանրագիտարան»-ի հատորները, տեղեկատվական բնույթի և արվեստի ոլորտին վերաբերող այլ գրքեր:

Հետաքրքրվում եմ, թե ո՞րն էր առաջին կարդացած գիրքը, չմտաբերեց, բայց հստակ հիշում է, որ միշտ կարդում էր «Хочу всё знать» հանդեսը՝ հետաքրքրասիրությունը բավարարելու համար:

Դավթյանների ընտանիքում գիրք կարդալը, ընթերցանությունը ծեսի նման մի բան էր: Կար ժամանակ, երբ ընտանիքը 17 անուն թերթ ու ամսագիր էր ստանում: Հին ու բարի ժամանակներում, երբ դեռևս տանը հեռուստացույց ունենալը շքեղություն էր, մարդկանց զբաղմունքն ընթերցանությունն էր, այդպիսով և՛ ազատ ժամանակն էին լցնում, և՛ գիտելիք էին ստանում: Մարդիկ երեկոները, երբեմն մինչև ուշ գիշեր պարզապես խորասուզվում էին ընթերցանության մեջ:

Դարձյալ հուշերի գիրկն է ընկնում. **«Բուհն ավարտելուց հետո եկա Ղափան, շարունակեցի գիրք գնել, գրախանութը Ղափանում հայտնի 48 բնակարանոց շենքի (48-ի) առաջին հարկում էր, մարդիկ առավոտվանից հերթ էին կանգնում: Հիշում եմ՝ մշտական գնորդները տասը-տասնհինգ հոգի էին: Լավ գրքերն էլ սահմանափակ քանակությամբ էին ստանում, նաև ասեմ, որ այն ժամանակ մոդայիկ էր տանը լավ գրականություն ունենալը, հիմա զարմանում եմ, որ մարդ չի ցանկանում տանը գիրք ունենալ: Եվ ամենակարևորը՝ չի ցանկանում ունեցած գիրքը տալ որևէ մեկին ընթերցելու»:**

Զրուցակիցս նաև հիշում է, որ ընթերցանության մշակույթ էր ձևավորվել, փողոցում քայլելիս էր երևում, որ այդ մարդը գիրք ընթերցող է, նրա հետ զրուցելիս էր նկատվում, գրքի փոխանակություն կար, մեկը երբ մի լավ գիրք էր կարդում, ասում էր՝ գիտե՞ս ինչ լավ բան եմ կարդացել, կողքինի մեջ ևս հետաքրքրություն էր առաջանում տվյալ գիրքն ընթերցելու...

Այսօր էլ Կապանում կազմակերպվող տարբեր միջոցառումների ժամանակ կարելի է հանդիպել Ռիտա Արարատովնային, մարդու իր տեսակն է այդպիսին՝ մարդամոտ ու անմիջական, սիրում է միշտ շրջապատված լինել մարդկանցով և լինել իրադարձությունների կենտրոնում: Կուսշրջկոմում աշխատելիս գործի բերումով հանդիպել է Սիլվա Կապուտիկյանին, Շիրազին, Սևակին, Վանո Սիրադեղյանին, Վազգեն Սարգսյանին, Սերո Խանզադյանին: Վերջինիս հետ կապված հուշեր է պատմում այն օրերից, երբ բացվեց Դավիթ Բեկի հուշարձանը: Այդ հիշարժան օրը Կապանը բազմաթիվ երևելի մարդկանց հյուրընկալեց: Իսկ Սերո Խանզադյանի նման կոլորիտային մարդու հետ շփվելն ինքնին անմոռանալի է:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Հարությունյան Լյուդվիգ Գուրգենի

«Ուսուցիչը նախ պետք է ազնիվ լինի». այս համոզմունքն է ամբողջ կյանքում առաջնորդել Լյուդվիգ Հարությունյանին՝ անկախ նրանից՝ դասարանում էր, դպրոցի տնօրենի աշխատասենյակում, թե մարզի կրթության ոլորտի ղեկավար պաշտոնում: Նրա համար կրթությունը երբեք չի սահմանափակվել գիտելիք փոխանցելով. այն պատասխանատվություն է եղել մարդու, հասարակության և ապագայի հանդեպ:

Լյուդվիգ Հարությունյանը ծնվել է 1950 թվականի ապրիլի 18-ին՝ Քաջարանում, որտեղ էլ սովորել է տեղի թիվ 1, ապա թիվ 2 դպրոցներում: Դեռ դպրոցական տարիներին առանձնանում էր իր հետաքրքրասիրությամբ: Սիրում էր պատմությունը, մաթեմատիկան և հայոց լեզուն, իսկ ուսուցիչներն այնքան էին վստահում նրա գիտելիքներին, որ դեռևս չորրորդ դասարանից նրան ուղարկում էին բարձր դասարաններում պատմության թեմաներ ներկայացնելու: Շատերը համոզված էին, որ ապագայում պատմաբան է դառնալու, սակայն նրա ճանապարհը տարավ դեպի մաթեմատիկայի աշխարհը:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժին: Այժմ նա նշում է, որ ուսանողական տարիներին բախտ է ունեցել սովորելու իր գործին նվիրված և բարձրակարգ դասախոսների մոտ, ովքեր էլ ձևավորել են իր մանկավարժական մտածողությունն ու աշխատանքային սկզբունքները:



1971 թվականին երիտասարդ մասնագետը գործուղվեց Քաջարանի թիվ 3 միջնակարգ դպրոց՝ որպես ուսումնական մասի վարիչ՝ միաժամանակ դասավանդելով մաթեմատիկա: Սակայն պաշտոնից ավելի շատ նրան գրավում էր հենց ուսուցչի աշխատանքը: Կամավոր հրաժարվելով վարչական պարտականություններից՝ ամբողջովին նվիրվեց դասավանդմանը:

Մեկ տարի անց զորակոչվեց խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո աշխատանքի անցավ Ղափանի շինարարական տեխնիկումում՝ դասավանդելով մաթեմատիկա և ֆիզիկա: Այդ տարիներն այսօր էլ հիշում է առանձնահատուկ ջերմությամբ, քանի որ հենց դասավանդումն էր իր կյանքի ամենասիրելի զբաղմունքը:

«Եթե դպրոցում մի քանի տարի աշխատես, այլևս չես կարող հեռանալ այդ մասնագիտությունից»,– հիշում է համալսարանի դասախոսներից մեկի խոսքերը՝ ընդունելով, որ դրանք լիովին ճշմարիտ էին: Իր համար ուսուցչությունը դարձավ կոչում, իսկ երեխաների հետ աշխատանքը՝ կյանքի անբաժան մասը:

Դեռ ուսանողական պրակտիկայի ընթացքում առաջին անգամ դասարան մտնելիս ոչ թե վախ էր զգում, այլ վստահություն: Պատրաստված էր, սիրում էր իր առարկան և արագ կարողանում էր մտերմանալ աշակերտների հետ: Ասում է՝ երիտասարդ տարիներին երբեմն չափազանց խիստ է եղել, սակայն միշտ առաջնորդվել է արդարության զգացումով և աշակերտին առաջ տանելու անկեղծ ցանկությամբ:

Իր բնավորության ձևավորման գործում ամենամեծ ազդեցությունն ունեցել են մայրը, մորաքույրը և սիրելի ուսուցիչները: Մայրը սովորեցրել է աշխատասիրություն, ազնվություն և պատասխանատվություն, իսկ ուսուցիչների վերաբերմունքը դարձել է հետագա մանկավարժական գործունեության կարևոր օրինակ:

1991-1995 թվականներին ընտրվեց Կապանի քաղաքային ժողկրթբաժնի վարիչ: 1996 թվականի փետրվարից՝ Հայաստանի վարչատարածքային բաժանման և Սյունիքի մարզային կառույցները ձևավորելուց հետո, Սյունիքի մարզպետարանի կրթության վարչության առաջատար մասնագետ էր: Նույն ժամանակահատվածում եղել է Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ապա ընտրվել Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրեն:

Նրա ղեկավարած դպրոցներում սկզբնական շրջանում ամեն ինչ հեշտ չէր: Շատերը դժվարությամբ էին ընդունում խստապահանջ ղեկավարին, որը չէր հանդուրժում ձևականությունը և հետևողականորեն պահանջում էր պատասխանատու աշխատանք: Սակայն ժամանակի ընթացքում նույն մարդիկ սկսեցին գնահատել նրա սկզբունքայնությունն ու ազնվությունը:

2006 թվականին նշանակվեց Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ: Վեց տարի ղեկավարելով ոլորտը՝ իրականացրեց բազմաթիվ նախաձեռնություններ, որոնցից ամենակարևորներից մեկը՝ իր

գնահատմամբ, կրթության որակի բարձրացումն էր: Նրա ղեկավարության տարիներին Սյունիքի մարզի բազմաթիվ մանկավարժներ ճանաչվեցին հանրապետության լավագույն ուսուցիչներ:

Հատուկ հպարտությամբ է հիշում նաև այն փաստը, որ իր նախաձեռնությամբ ու հետևողական աշխատանքի շնորհիվ 147 մանկավարժ, ովքեր չունեին բարձրագույն կրթություն, շարունակեցին ուսումը և ստացան համապատասխան դիպլոմներ: Նրա համոզմամբ՝ սա ամենամեծ ներդրումներից մեկն էր մարզի կրթական համակարգում, քանի որ այդ ուսուցիչները հետագայում շարունակեցին աշխատել դպրոցներում՝ արդեն մասնագիտական լիարժեք պատրաստվածությամբ:

Վարչական երկարամյա գործունեությունից հետո Լյուդվիգ Հարությունյանը նշանակվել է Կապանի թիվ 2 ավագ դպրոցի տնօրեն:

Նրա համար լավ ուսուցիչ լինելու գլխավոր նախապայմանն ազնվությունն է: Համոզված է, որ մանկավարժը չպետք է առաջնորդվի ծանոթություններով կամ կողմնակալությամբ, այլ պետք է հավասար վերաբերվի յուրաքանչյուր աշակերտի: Նրա խոսքով՝ ուսուցչի իրական գնահատականը ոչ թե սեփական խոսքն է, այլ՝ որքանով է կարողանում աշխատեցնել ու զարգացնել աշակերտին:

Մարզպետարանում աշխատելու տարիներին արժանացել է ՀՀ պաշտպանության նախարարության «Անդրանիկ Օզանյան» մեդալի ու ՀՀ կրթության և գիտության նախարարության Ոսկե մեդալի: Սակայն, ինչպես ինքն է ասում, իր համար ամենամեծ պարգևը նախկին աշակերտների հաջողություններն են: Ամեն անգամ, երբ հանդիպում է նրանց՝ բժիշկների, իրավաբանների, մանկավարժների կամ այլ մասնագետների, զգում է, որ տարիների աշխատանքը զուր չի անցել:

Կրթության ոլորտը թողնելուց հետո աշխատանքի անցավ «Էս ընդ Էլ Մայնինգ» ՍՊԸ-ում՝ որպես տնտեսվար: Ասում է՝ այդ աշխատանքն ավելի հանգիստ է, սակայն կրթությունից երբեք ամբողջությամբ չի հեռացել. շարունակում է հետաքրքրվել ոլորտի խնդիրներով և հետևել փոփոխություններին:

Ազատ ժամանակ զբաղվում է այգեգործությամբ, շախմատ է խաղում, լուծում է մաթեմատիկական խնդիրներ, հետևում է նորություններին ու սպորտին: Հաճախ օգնում է նաև թոռներին դասերի հարցում՝ համոզված լինելով, որ մարդը պետք է ամբողջ կյանքում սովորի:

Լյուդվիգ Հարությունյանն ունի երեք զավակ՝ մեկ որդի և երկու դուստր:

Նրա կենսագրությունը ևս մեկ անգամ հաստատում է, որ կրթության ոլորտում կարևորը ոչ թե զբաղեցրած պաշտոններն են, այլ այն մարդիկ, որոնց ձևավորման վրա կարողացել ես դրական ազդեցություն ունենալ:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Մկրտչյան Իրմա Սուրենի

Կապանի նախադպրոցական տարիքի մանուկների կրթության և դաստիարակության ռահվիրաներից է Իրմա Մկրտչյանը:

Մանկավարժական գործունեության 40 տարվա ընթացքում քայլել է ժամանակին համընթաց, վաստակել ծնողների, հասարակության, շրջապատի սերն ու հարգանքը:

Ծնվել է Կիրովաբադ քաղաքում 1942 թվականի ապրիլի 23-ին: Սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Երկու տարի աշխատել է տեղի մսուր-մանկապարտեզում՝ դաստիարակչուհի: 1959 թ. ընդունվել և 1964 թվականին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի նախադպրոցական բաժինը՝ մեթոդիստի և հոգեբանի մասնագիտությամբ: Հայաստանի լուսավորության նախարարության գործուղմամբ 1964 թվականին նշանակվել է Ղափանի ժողկրթբաժնի նախադպրոցական մասի տեսուչ: Ակտիվորեն մասնակցել է նորաստեղծ մանկապարտեզների հիմնադրմանը: Կազմակերպել է բաց պարապմունքներ, փոխայցելություններ, որոնց մասնակցել են ոչ միայն Ղափանի, այլև Սիսիանի, Գորիսի, Քաջարանի նախադպրոցական հիմնարկների մանկապարտեզների դաստիարակները:

1969 թվականին տեղափոխվել է «Քաջարանշին» տրեստի գերատեսչական մանկապարտեզ՝ որպես վարիչ, աշխատել շուրջ 30 տարի: Երկար տարիներ վարել է նախադպրոցական հիմնարկների վարիչների և տարբեր առարկաների մեթոդմիավորումների աշխատանքները:

Իրմա Մկրտչյանը, որպես մանկապարտեզի վարիչ, աչքի է ընկել կազմակերպչական ունակություններով՝ դրսևորելով պատասխանատվության բարձր զգացում, հիմնարկը ղեկավարելու մանկավարժական ձիրք, մշտապես ձգտել է բարձրացնել դաստիարակի դերը:

Նախադպրոցական կրթության առաջավոր փորձը լուսաբանվել է մամուլում, հեռարձակվել հեռուստատեսությամբ («Սովետական մանկավարժ» ամսագիր, «Սովետական դպրոց», «Ղափան» թերթեր):

Նրա ղեկավարած մսուր-մանկապարտեզի նախկին սաները այժմ գիտության, արվեստի, առողջապահության ոլորտի աշխատողներ են:

Չնայած առաջացած տարիքին՝ այժմ էլ հետաքրքրվում է իր նախկին կոլեկտիվի գործերով, հպարտանում հաջողություններով:

Իրմա Մկրտչյանի գործունեությունը գնահատվել է շնորհակալագրերով և պատվոգրերով: Մասնակցել է մանկավարժական ընթերցումների, նախադպրոցական երեխաների դաստիարակման հարուստ փորձը ներկայացրել իր կրտսեր գործընկերներին:

Նույնիսկ ջանացել է փոքրիկների հանդեպ իր սերն արտահայտել չափածո տողերով.

Բուռն սիրով սիրել եմ ձեզ,
Իմ կյանքի լույս բալիկներ,
Սրտիս հուրը ձեզ եմ տվել,
Գարնան նուրբ ծաղիկներ:

Իրմա Մկրտչյանն ունի երկու որդի:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Սարդարյան Մարատ Աբիստոլի

Մարատ Սարդարյանն աշխատանքային իմաստալից ճանապարհ է անցել, որ միտված էր երիտասարդության կրթության և դաստիարակության գործին: Նրա գործունեությունը նպատակաուղղված էր տարածաշրջանի երիտասարդության՝ միջին-մասնագիտական կրթություն ստանալուն, որ կապվեն հայրենի հող ու ջրին, այլ բախտ չորոնեն օտար ափերում:

Մեծ է եղել նրա դերն իր ղեկավարած քոլեջում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան արհեստագործական մասնագիտություններն արմատավորելու գործում:

Գործունեության ողջ ընթացքում Մ. Սարդարյանն իրեն դրսևորել է որպես արհեստավարժ մանկավարժ, կրթության գործի հմուտ կազմակերպիչ, ակտիվ կենսադիրքորոշում ունեցող քաղաքացի:

Ծնվել է 1948 թվականի նոյեմբերի 1-ին Ղափան քաղաքում, ավարտել Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ ոսկե մեդալով, Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը՝ «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» մասնագիտությամբ, ստացել ինժեներ-շինարարի որակավորում, ապա

ավարտել է Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի ասպիրանտուրան:

Աշխատանքային մկրտություն է ստացել Երևանի նախագծային ինստիտուտում՝ ինժեներ-կոնստրուկտոր, իսկ հետո պրակտիկ աշխատանքում թրծվել «Քաջարանշին» տրեստում՝ այն համատեղելով Ղափանի շինարարական տեխնիկումում դասավանդելով:

1974-ին նշանակվել է Ղափանի շինարարական տեխնիկումի հեռակա բաժնի վարիչ, ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ, ապա՝ ՀԿԿ շրջկոմի հրահանգիչ: Այնուհետև այդ նույն տեխնիկումի տնօրենն էր (1992 թվական), երբ 1995-ին Ղափանի շինարարական և լեռնամետալուրգիական տեխնիկումների վերամիավորումից ստեղծվեց Կապանի ճարտարագիտական տնտեսագիտական տեխնիկումը: Այն հետագայում Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի կրթահամալիրի քոլեջի կարգավիճակ ստացավ, հետո վերակազմավորվեց Կապանի պետական ճարտարագիտական քոլեջի:

1991-1995 թթ. եղել է Կապանի քաղաքային խորհրդի պատգամավոր:

2002 թ. հոկտեմբերին ընտրվել է Կապան համայնքի ավագանու անդամ:

2013 թ. դեկտեմբերին անցել է կենսաթոշակի:

Մի շարք գիտական հոդվածների հեղինակ է:

Քոլեջն այսօրվա կարգավիճակի համար պարտական է Մարատ Սարդարյան տնօրենին:

Ծննդյան 60-ամյակի կապակցությամբ Մարատ Սարդարյանը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարգևատրվել է կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար «Ոսկե հուշամեդալով»: Արցախի Հանրապետության «Մայրություն» հասարակական կազմակերպության նախագահի կողմից՝ Արցախի ազատագրական պայքարում կատարած հատուկ ծառայությունների համար, պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն» մեդալով:

Նրա կենսագրության մի էջը ևս հիշատակելի է. հայ-ադրբեջանական հակամարտության օրերին (1992-1994 թվականներ) հայրենի գյուղի՝ Ագարակի պաշտպանների հետ էր, օգնում էր պարենամթերքով, լինում դիրքերում՝ հերթապահող զինվորների մոտ:

Նրա անմիջական նախաձեռնությամբ քոլեջի բակում 2008 թվականի մայիսին բացվեց կրթօջախի զոհված սովորողների հիշատակը հավերժացնող հուշաքար:

Մարատ Սարդարյանը երկու զավակ ունի՝ ուստր և դուստր:

ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Ավետիսյան Սեդա Արտաշեսի

Կապանի տարածաշրջանի կրթական համակարգում կան անուններ, որոնք տարիների ընթացքում պարզապես դարձել են ուսուցչի օրինակ՝ վերածվելով իրական խորհրդանիշի: Այդ անուններից է Սեդա Ավետիսյանը՝ մարմնակրթության նվիրյալ մանկավարժ, ով կյանքի շուրջ վեց տասնամյակն ամբողջությամբ նվիրել է մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակությանը:

Ծնվել է 1947 թվականի հունիսի 12-ին Ղափան քաղաքում: Մանկուց աչքի է ընկել աշխույժ ու եռանդուն բնավորությամբ. բակի խաղերի անբաժան մասնակիցն էր:

Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցում սովորելու տարիներին էլ ձևավորվեց նրա սերն ու հետաքրքրությունը սպորտի նկատմամբ, որն էլ հետագայում դարձավ կյանքի գլխավոր ուղղությունը:

1968–1973 թվականներին հեռակա կարգով ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Թեթև աթլետիկա և մանկավարժություն» մասնագիտությամբ: Սակայն նրա մասնագիտական գործունեությունը սկսվել է դեռ ուսանելու տարիներին. 1968–1971 թթ. աշխատել է Ղափանի մանկապատանեկան մարզադպրոցում՝ թեթև աթլետիկայի մարզիչ:

Հետագայում նրա գործունեությունը շարունակվել է դպրոցական համակարգում. 1971–1997 թթ. ֆիզկուլտուրա է դասավանդել Ղափանի թիվ 10 միջնակարգ

դպրոցում, ապա աշխատել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցում (1997–2011 թթ.), այնուհետև՝ Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրում (2012–2019 թթ.), այսօր էլ շարունակում է իր գործունեությունը Եղեգի միջնակարգ դպրոցում:

Սեդա Ավետիսյանը հիշում է, որ սպորտի բնագավառն ընտրել է դեռ պատանեկության տարիներին՝ թեթև աթլետիկայի պարապմունքներից ու մրցումներից հետո: Մասնակցել է բազմաթիվ հանրապետական մրցումների՝ Երևան, Լենինական, Արտաշատ և այլ քաղաքներում՝ հանդես գալով հատկապես միջին տարածության վազքերում: Այդ տարիների փորձը դարձել է նրա հետագա մանկավարժական աշխատանքի հիմքը:

Նրա կերպարի մեջ միշտ ընդգծված են եղել պահանջկոտությունն ու կարգապահությունը: Մշտապես կարևորել է, որ աշակերտը լինի պատրաստված, կազմակերպված և մասնակցի դասին լիարժեք: Իր իսկ խոսքով՝ երբեք չի մտել դասարան առանց սպորտային հագուստի՝ նույնը պահանջելով նաև աշակերտներից:

Աշակերտների հետ աշխատանքի իր մոտեցումը եղել է պարզ, բայց հետևողական՝ ներգրավել բոլորին՝ անկախ նրանց կարողություններից: Նրա համար կարևոր է եղել ոչ միայն ուժեղների, այլև թույլ աշակերտների մասնակցությունը, որպեսզի յուրաքանչյուր երեխա զգա իր տեղը դասի ժամանակ:

Տասնամյակների ընթացքում ունեցել է բազմաթիվ հաջողությունների հասած աշակերտներ, ովքեր բարձր արդյունքների են հասել մարզային, նույնիսկ հանրապետական մրցումներում:

Սեդա Ավետիսյանը պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրով, ինչպես նաև Սյունիքի մարզպետարանի ու Կապանի համայնքապետարանի բազմաթիվ շնորհակալագրերով՝ կրթության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի համար:

Մասնագիտական հարուստ ճանապարհին զուգահեռ Սեդա Ավետիսյանը եղել է նաև նվիրված մայր՝ մեծացնելով երեք զավակ՝ մեկ դուստր և երկու որդի:

Այսօր էլ, ունենալով տասնամյակների մանկավարժական փորձ, շարունակում է ապրել ակտիվ հասարակական կյանքով, մասնակցում է դպրոցական միջոցառումներին և ջերմ կապ պահպանում նախկին աշակերտների հետ:

Նրա խորհուրդը երիտասարդ ուսուցիչներին հստակ է՝ լինել պահանջկոտ, հետևողական և պատասխանատու, որովհետև հենց այդ հատկանիշներն են ձևավորում առողջ սերունդ:

Տարիները փոխվել են, նաև դպրոցներն ու սերունդները են փոխվել, սակայն Սեդա Ավետիսյանի հավատարմությունն ընտրած մասնագիտությանը մնացել է անփոփոխ:

//

ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Դունաևսկայա Օլգա Գեորգիի

Կապանում գեղարվեստական մարմնամարզության մասին խոսելիս անհնար է շրջանցել Օլգա Դունաևսկայայի անունը: Ավելի քան չորս տասնամյակ առաջ հենց նա դրեց այս մարզաձևի հիմքերը քաղաքում և մինչ օրս շարունակում է ապացուցել, որ իսկական մարզիչը ոչ միայն չեմպիոններ է կերտում, այլև՝ մարդ: Նրա սաներից շատերն այսօր արդեն իր կողքին են աշխատում՝ որպես մարզիչներ՝ շարունակելով ուսուցչի սկսած գործը, իսկ մյուսները հաջողությամբ գործունեություն են ծավալում նաև Հայաստանից դուրս: Նրա կյանքի ամենամեծ նվաճումը, սակայն, ոչ թե մեդալներն են, այլ իր դաստիարակած սերունդները:

Օլգա Դունաևսկայան ծնվել է 1954 թվականի հոկտեմբերի 30-ին՝ Ռուսաստանի Ռոստովի մարզի Շախտի քաղաքում: 1972 թվականին ավարտել է Շախտի քաղաքի թիվ 15 միջնակարգ դպրոցը՝ ոսկե մեդալով: Դեռ մանկուց սիրել է սպորտը: Սկզբում զբաղվել է լողով, սակայն յոթ-ութ տարեկանում մարզական ճամբարում առաջին անգամ տեսել է գեղարվեստական մարմնամարզուհիներին և, ինչպես ինքն է ասում, «սիրահարվել այդ մարզաձևին»:

1962-1972 թվականներին Շախտի քաղաքի սպորտի պալատում զբաղվել է գեղարվեստական մարմնամարզությամբ, իսկ 1972-1973 թվականներին արդեն աշխատել է որպես փոքր տարիքի երեխաների մարզիչ:

1974 թվականին ընդունվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, որն ավարտել է 1978 թվականին՝ գերազանցությամբ: Այդ տարիներին Երևանի սպորտկոմիտեն մասնագետներ էր հրավիրում Հայաստան՝ աշխատելու: Այդպես էլ Օլգա Դունաևսկայան եկավ Հայաստան և գործուղվեց Ղափան, որտեղից այլևս չհեռացավ:

«1978 թվականին եկա Հայաստան: Սկզբում ուզում էի հեռանալ, բայց հետո սովորեցի այստեղի կյանքին: Երբ Երևանից եկա, հասկացա, որ սա, հավանաբար, իմ տեղն է, և մինչ օրս աշխատում եմ այստեղ»,– պատմում է նա:

Այդ տարիների ընթացքում ականատես է եղել երկրի ամենադժվար ժամանակաշրջաններին՝ Խորհրդային Միության փլուզմանը, պատերազմներին, համավարակին: Նրա խոսքով՝ այդ իրադարձությունների հետևանքով կորցրեցին երեխաների մի քանի սերունդ, սակայն այսօր արդեն գեղարվեստական մարմնամարզությունը կրկին վերելք է ապրում:

Մոտ 47 տարվա մարզչական գործունեության ընթացքում Օլգա Դունաևսկայան պատրաստել է ավելի քան 10 սպորտի վարպետ և 20-ից ավելի սպորտի վարպետի թեկնածու: Նրա սաները բազմիցս դարձել են Հայաստանի առաջնությունների հաղթողներ ու մրցանակակիրներ, մասնակցել Եվրոպայի և աշխարհի առաջնությունների, միջազգային մրցաշարերից վերադարձել մեդալներով: Հպարտությամբ նշում է, որ վերջերս Երևանում անցկացված միջազգային մրցումներում, որտեղ մասնակցում էին հինգ երկրների ներկայացուցիչներ, Կապանի մարզուհիները նվաճեցին հինգ ոսկե և չորս բրոնզե մեդալ:

Օլգա Դունաևսկայան վստահ է, որ հաջողության հիմքում առաջին հերթին կարգապահությունն է:

«Ես խիստ մարդ եմ և չեմ սիրում ուշանալ»,– ասում է մարզիչը:

Նրա խոսքով՝ յուրաքանչյուր երեխայի հետ աշխատում է անհատապես, իսկ ամենամեծ երջանկությունն այն է, երբ սկզբում առանձնապես տվյալներ չունեցող երեխան տարիներ անց դառնում է չեմպիոն կամ սպորտի վարպետ:

Մարզչի համար աշխատանքային օրը երբեք չի ավարտվում ժամացույցով: Ասում է. **«Ես երբեք չեմ հեռանում մարզադահլիճից՝ մինչև վերջին երեխան դուրս չգա: Ինձ համար ամենակարևորը չեմպիոններ պատրաստելը չէ, այլ առողջ աղջիկներ դաստիարակելը, որոնք հետագայում կդառնան առողջ մայրեր: Իսկ մեդալներն արդեն դրանից հետո կգան»:**

Օլգա Դունաևսկայայի մասին ամենաջերմ խոսքերն ասում են նրա սաները, որոնցից շատերն այսօր արդեն նրա գործընկերներն են: Նրանք միաձայն նշում են՝ Դունաևսկայան եղել է խիստ, պահանջկոտ, բայց միևնույն ժամանակ՝ հոգատար, արդար և անսահման նվիրված իր աշխատանքին: Նրանց խոսքով՝ հենց այդ խստությունն է ձևավորել իրենց կարգապահությունն ու պատասխանատվության զգացումը:

Ավելի քան 15 տարի նրա կողքին աշխատող մարզիչ Նարե Արզումանյանը հիշում է մի դրվագ, երբ մրցումների ժամանակ գտել էր Օլգա Դունաևսկայայի կորցրած խաչը: Մարզիչն ասել էր. **«Այսօր հաստատ մրցանակ կունենաս»,** և այդ օրը Նարեն իսկապես առաջին անգամ դարձել էր մրցանակակիր: Այդ պատմությունը մինչ օրս հիշում են որպես իրենց փոքրիկ «թալիսմանի» պատմություն:

Տիկին Օլգայի մեկ այլ սան՝ այսօր արդեն մարզիչ Լիանա Աղաջանյանը, Օլգա Դունաևսկայային բնութագրում է որպես երկրորդ մայր: Նրա խոսքով՝ մրցումների ժամանակ, երբ ծնողները նրանց կողքին չէին, մարզիչը հոգ էր տանում իրենց մասին այնպես, ինչպես հարազատը. հիվանդանալու դեպքում անձամբ էր խնամում սաներին, միշտ կանգնած էր նրանց կողքին և երբեք թույլ չէր տալիս, որ իրենց միայնակ զգան: Սաների համար նա եղել է ոչ միայն մարզիչ, այլև ընկեր, դաստիարակ ու մայրական հոգատարություն պարգևող մարդ:

Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Թևան Գևորգյանը համոզված է, որ քաղաքի գեղարվեստական մարմնամարզության պատմությունը հնարավոր չէ պատկերացնել առանց Օլգա Դունաևսկայայի. **«Նա Կապանի գեղարվեստական մարմնամարզության հիմնադիրն է: Նրա շնորհիվ այս մարզաձևը Կապանում գոյություն ունի 1978 թվականից մինչև այսօր և շարունակում է զարգանալ: Նա իմ աջ ձեռքն է, շատ խստապահանջ, էներգիայով լի և բացառիկ մասնագետ»:**

Տարիները փոխվում են, սերունդները՝ նույնպես, սակայն Օլգա Դունաևսկայայի անունը շարունակում է մնալ Կապանի գեղարվեստական մարմնամարզության պատմության անբաժանելի մասը:

ԻՋԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶԱՇԽԱՐՀԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Ղազարյան Արկադի Սուրենի

Կապանում աթլետիկա մարզաձևի զարգացումը մեծապես կապվում է մարզիչ, մանկավարժ, Հայաստանի վաստակավոր մարզիչ (արժանացել է 1990 թվականին) Արկադի Ղազարյանի անվան հետ:

Ծնվել է 1935 թվականի մայիսի 24-ին Ղափան քաղաքում, ավարտել Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 15 տարեկանից հայրենի քաղաքում զբաղվել է աթլետիկայով և այլ մարզաձևերով:

1955-59 թթ. սովորել և ավարտել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը: Բուհն ավարտելուց հետո մարզչամանկավարժական գործունեություն է ծավալել հայրենի քաղաքում՝ մինչև 2006 թվականը: Մարզչական գործունեությանը զուգընթաց ֆիզկուլտուրա է դասավանդել Կապանի հանրակրթական դպրոցներում:

Արկադի Ղազարյանը եղել է Հայաստանի աթլետիկայի հավաքական թիմերի մարզիչ (1963-2004 թվականներ): Աչքի է ընկել նաև կազմակերպչական գործունեությամբ, նախաձեռնել է բազմաթիվ մրցումների անցկացումը և ուսումնամարզական հավաքներ Հայաստանում ու ԽՍՀՄ այլ հանրապետություններում (1963-1989 թթ.): Նախագծել և ստեղծել է բազմաթիվ վարժասարքեր:

Ղազարյանի սաները մասնակցել են աթլետիկայի աշխարհի պատանեկան և երիտասարդական առաջնություններին, Համաշխարհային պատանեկան խաղերին, Միջազգային պատանեկան խաղերին, Աթլետիկայի Եվրոպական գավաթի, Եվրոպայի երիտասարդական առաջնություններին և բազմաթիվ այլ միջազգային մրցումների: Մրցումներում սաները սահմանել են Հայաստանի աթլետիկայի ազգային (մեծահասակների, երիտասարդների և պատանիների) տասը ռեկորդ, ընդ որում՝ Ռուդիկ Մաթևոսյանի (400 մ արգելավազք) և Էդուարդ Մեսրոպյանի (բարձրացատկ՝ 2 մ 16 սմ) սահմանած ռեկորդները մինչև հիմա չեն գերազանցվել:

Սաներից շատերը, ստանալով բարձրագույն կրթություն, մանկավարժական գործունեություն են ծավալել հայրենի քաղաքում՝ դասավանդելով «ֆիզիկական կուլտուրա» առարկա Կապանի և շրջանի հանրակրթական դպրոցներում, իսկ ոմանք արտերկրում զբաղվում են մարզությամբ՝ արժանապատվորեն ներկայացնելով Հայաստանը՝ դրանով ավելի ճանաչելի դարձնելով մեր հայրենիքը և Կապան քաղաքը:

Աթլետիկա մարզաձևի նվիրյալի նախաձեռնությամբ Հայաստանում առաջինը Կապանի մարզադաշտի աթլետիկայի վազքուղիները և ցատկահատվածները ռետինապատվեցին, արդիականացվեցին աթլետիկական հատվածները, ինչը հնարավորություն ընձեռեց անցկացնել հանրապետական մասշտաբի մրցումներ, մարզական խաղեր, ուսումնամարզական խաղեր:

Արկադի Ղազարյանի ընտանիքը մարզական է. ավագ որդին՝ Սուրենը, աթլետիկայի ճանաչված մասնագետ է, Կապանի աթլետիկայի մարզադպրոցի առաջին տնօրենը: Ֆինլանդիայի, Հարավային Կորեայի, Բահրեյնի և Իրանի աթլետիկայի ազգային հավաքականների մարզիչն է եղել:

Կրտսեր որդին՝ Արմեն Ղազարյանը, աթլետիկայի Հայաստանի պատանիների չեմպիոն է եղել (նիզակի նետում):

Որդիները և թոռները՝ Դավիթ և Վան Ղազարյաններն ու Աշոտ Առաքելյանը՝ նույնպես Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի շրջանավարտներ են:

Ղազարյաններն այժմ բնակվում են Ֆինլանդիայում, որտեղ նույնպես մարզչական և մարզավերականգնողական արդյունավետ գործունեություն են ծավալում:

Սպորտի նվիրյալն արժանացել է ԽՍՀՄ սպորտի և Հայաստանի կրթության նախարարությունների պատվոգրերի, շնորհակալագրերի, հավաստագրերի և պարգևների:

//

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Առաքելյան Լեռնիկ Մեխակի

Հայաստանի արվեստի գործիչների հետ, Տալլին, 1973 թ.

Արվեստանոցում լռություն է: Պատերին կախված կտավները կարծես հերթով պատմում են գյուղական կյանքի, աշխատանքի, հայրենի բնության ու մարդկանց մասին: Այդ պատմությունների հեղինակը՝ Լեռնիկ Առաքելյանը, խոսում է նույն հանգստությամբ, որով նկարում է. առանց ավելորդ բառերի, բայց մեծ ասելիքով:

Նրա կյանքն անցել է երկու ճանապարհով՝ արվեստի և մանկավարժության, որոնք տարիների ընթացքում դարձել են մեկ ամբողջություն:

1946 թվականի հունիսի 21-ին Ղափանում ծնված Լեռնիկ Առաքելյանի մանկությունն անցել է Տանձավեր գյուղում, որտեղ էլ ավարտել է տեղի 7-ամյա դպրոցը, իսկ 8-րդ դասարանը սովորել է Քաջարանի թիվ 2 դպրոցում:

Գյուղական կյանքը նրա համար պարզապես հիշողություն չէ. այն դարձել է ստեղծագործական մտածողության հիմքը: Արտերում աշխատող մարդիկ, հաց թխող կանայք, հունձ անող գյուղացիները տարիներ անց հայտնվել են նրա կտավներում՝ որպես գյուղական կյանքի անկեղծ ու ջերմ պատկերներ:

Ժպիտով է հիշում մանկությունը.



«Գյուղի բոլոր երեխաների կյանքն էլ նույնն էր. աշխատում էինք, խաղում, սովորում»:

Ղափանի N 27 գիշերօթիկ դպրոցի կոլեկտիվը, 1978 թ.

Իր բնավորության ձևավորման գործում ամենամեծ ազդեցությունն ունեցել են ծնողները: Իսկ նկարչության հանդեպ առաջին սերը ծնվել է դպրոցում, երբ պատի թերթ ձևավորելու ժամանակ պարզվել է, որ հենց ինքն է ամենալավը գրում գլխատառերն ու ձևավորում էջերը: Այդ փոքրիկ հաջողությունն էլ դարձել է մեծ ճանապարհի սկիզբ...

Թեև 1961-1964 թթ. սովորել և ավարտել է Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումի լեռնային բաժինը, աշխատել հանքում, սակայն ժամանակի ընթացքում հասկացել է՝ իր իրական աշխարհը ոչ թե հանքն է, այլ՝ արվեստը:

1966-1969 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որտեղ ևս նկարիչ էր, հենց այդ տարիներին վերջնականապես համոզվեց, որ պետք է ընտրի ստեղծագործական ուղին:

Մարատ Նուրիջանյանի մոտ վերապատրաստվելուց հետո՝ առաջին իսկ փորձով, գերազանց գնահատականներով 1970 թ. ընդունվեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գեղագիտական ֆակուլտետի նկարչագծագրական բաժին՝ ստանալով նկարչի և մանկավարժի մասնագիտություն (ինստիտուտն ավարտեց 1974 թվականին):

Դեռևս ուսանողական տարիներին նրա աշխատանքներն ուշադրություն գրավեցին դասախոսների շրջանում: Երրորդ կուրսում կազմակերպվեց առաջին անհատական ցուցահանդեսը, որի մասին հոդվածներ տպագրվեցին մամուլում: Այդ ցուցահանդեսը երիտասարդ նկարչի առաջին մեծ ճանաչումն էր:

Լեռնիկ Առաքելյանի ստեղծագործական աշխարհը ձևավորվել է մեծ վարպետների ազդեցությամբ: Նա առանձ-

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գեղագիտական ֆակուլտետի նկարչագծագրական բաժնի 1974 թ. շրջանավարտները 50 տարի անց

նացնում է Մարտիրոս Սարյանին, Մինաս Ավետիսյանին, Հովհաննես Չարդարյանին, Ղուկաս Չուբարյանին, Հակոբ Կոջոյանին: Սակայն երբ խոսքը հասնում է սեփական արվեստին, ժպտալով ասում է. **«Ասում են՝ գույները Սարյանի գույներին են նման: Ես ասում եմ՝ ոչ, սա Լեռնիկի գույներն են»:**

Նա երբեք չի ձգտել կրկնօրինակել մեծերին, այլ ցանկացել է ստեղծել սեփական ձեռագիրը: Նրա կտավներում ապրում է ժողովուրդը: Ազգային կյանքը, գյուղական կենցաղը, աշխատանքը, սովորական մարդկանց առօրյան նրա նկարների գլխավոր թեմաներն են: Սիրում է նկարել այն, ինչ ինքն է ապրել, ինչ տեսել է մանկության տարիներին. **«Ես սիրում եմ ժողովրդի կյանքը ներկայացնել: Իմ բոլոր նկարներում գյուղն է, աշխատանքը, մեր ազգային կենցաղը»:**

Նրա համար, սակայն, նկարները պարզապես աշխատանքներ չեն: Դրանք իր ընտանիքի անդամների նման են. **«Նույնիսկ մի քանի գծով սկսված նկարն ինձ հարազատ է: Բոլորն իմ երեխաներն են»:**

Այսօր նրա արվեստանոցում պահպանվում են հազարից ավելի աշխատանք՝ ստեղծված ուսանողական տարիներից մինչև մեր օրեր:

Լեռնիկ Առաքելյանի ստեղծագործությունները ցուցադրվել են ոչ միայն Հայաստանում, այլև Ավստրիայում, Գերմանիայում, Մոսկվայում, Գլենդելում: Սակայն միջազգային ցուցահանդեսներից ավելի մեծ արժեք ունի այն փաստը, որ ավելի քան կես դար շարունակ մասնակցել է Կապանում կազմակերպված գրեթե բոլոր ցուցահանդեսներին՝ դառնալով քաղաքի մշակութային կյանքի անբաժան մասը:

Նա Հայաստանի նկարիչների և կոմպոզիտորների հետ մեկամսյա էքսկուրսիայի է մեկնել Մերձբալթյան երկրներ: Այցելել է Ռիգա, Վիլնյուս, Տալլին քաղաքների նկարիչների արվեստանոցներ և թանգարաններ:

Բայց եթե նկարիչ լինելը նրա հոգու պահանջն էր, մանկավարժությունը՝ կյանքի առաքելությունը:

Դեռ ուսանողական պրակտիկայի ընթացքում հասկացել էր, որ երեխաների հետ աշխատելը սովորական աշխատանք չէ, այլ պատասխանատվություն. **«Ես ուզում էի և՛ նկարել, և՛ երեխաներին գիտելիք տալ: Երկուսն էլ ինձ համար հավասար կարևոր էին»:**

1974 թ. աշխատանքի է անցել Ղափանի N 27 գիշերօթիկ դպրոցում՝ նկարչության և գծագրության դասատու, ինչպես նաև նկարչական խմբակի ղեկավար, այնուհետև՝ տնօրենի տեղակալ՝ դաստիարակչական աշխատանքների գծով:

1974-1980 թթ. և 1980-1987 թթ. համատեղությամբ աշխատել է Ղափանի լուսատեխնիկական և «Ռելե» գործարաններում՝ նկարիչ-ձևավորող:

1993 թ. նշանակվել է Կապանի Լենհանքերի N 5 և Ներքին Հանդի գիշերօթիկ դպրոցների տնօրեն: 2002 թ. դպրոցը վերանվանվել է Կապանի թիվ 2 հատուկ դպրոց, իսկ 2009 թ. վերափոխվել Սյունիքի մարզի տարածաշրջանի դպրոցների հոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի:

Նա վստահ է, որ արվեստը միայն նկարել սովորեցնելը չէ: Արվեստը սովորեցնում է մտածել, տեսնել գեղեցիկը, զգալ աշխարհը, դառնալ ավելի նրբանկատ մարդ:

Լեռնիկ Առաքելյանի համոզմամբ՝ յուրաքանչյուր երեխա կարող է ինչ-որ բան սովորել, եթե գտնվի ճիշտ մոտեցման ճանապարհը: Այդ պատճառով էլ դպրոցում կիրառել է չգնահատելու մեթոդը՝ վստահ լինելով, որ թվանշանը երբեմն կարող է ավելի շատ վնասել, քան օգնել. **«Եթե տասը երեխայից թեկուզ մեկը կարողանում էր առաջ գնալ, դա հաղթանակ էի համարում»:**

Այսօր էլ մեծ հպարտությամբ է խոսում իր նախկին աշակերտների մասին, որոնցից շատերն արդեն ճանաչված նկարիչներ ու քանդակագործներ են դարձել: Նրանց հաջողություններն իր համար ամենամեծ գնահատականն են, որովհետև համոզված է՝ ուսուցչի իրական ձեռքբերումը ոչ թե իր ստացած պարգևներն են, այլ այն մարդիկ, որոնց կյանքում կարողացել է հետք թողնել:

Նրա երկարամյա ու նվիրված աշխատանքը գնահատվել է ՀՀ լուսավորության նախարարության «Գերազանցիկ ուսուցիչ» կոչմամբ, «Ակսել Բակունց» մեդալով և բազմաթիվ պատվոգրերով:

Նա չի բաժանում արվեստը, մանկավարժությունն ու մարդկային արժեքները: Դրանք նրա համար մեկ ամբողջություն են:

Լեռնիկ Առաքելյանն ունի երեք զավակ՝ երկու որդի և մեկ դուստր: Ընտանիքն ու մասնագիտական ուղին նրա կյանքում ներդաշնակորեն լրացնում են միմյանց՝ ձևավորելով այն արժեքային աշխարհը, որն արտացոլվում է թե՛ ստեղծագործություններում, թե՛ մանկավարժական գործունեության մեջ:

Նրա կտավներում ապրում է սերը հայրենի հողի նկատմամբ, դպրոցում՝ երեխաների հանդեպ սերը, իսկ խոսքում՝ բարությունն ու ազնվությունը: Թերևս հենց այդ արժեքներն են նրան դարձրել ոչ միայն լավ նկարիչ ու մանկավարժ, այլև՝ լավ մարդ:

ԻՋԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Դավթյան Գագիկ Տիգրանի

Սերո Խանզադյանի, Մերուժան Տեր-Գուլանյանի և Հակոբ Մովսեսի հետ

Ծնվել է 1947 թ. ապրիլի 4-ին Սյունիքի մարզի Դավիթբեկ գյուղում:

1965-ին ավարտել է Քաջարանի Ստ. Շահումյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1970 թ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտելուց հետո վերադարձել է ծննդավայր՝ տարիքն առած ծնողների կողքին լինելու:

1970-72 թթ. ուսուցիչ է աշխատել Դավիթբեկի միջնակարգ դպրոցում:

1971-ին ընդունվել է ԽՄԿԿ շարքերը, անդամությունը դադարեցրել է 1988 -ին՝ Արցախյան շարժման սկզբում և այլևս ոչ մի կուսակցության չի անդամագրվել:

1972 թ. ընտրվել է ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմի երկրորդ քարտուղար:

1974-76 թթ. ծառայել է խորհրդային բանակում՝ որպես սպա:

1976-88 թթ. աշխատել է ՀԿԿ Ղափանի շրջկոմում՝ հրահանգիչ, ապա՝ բաժնի վարիչ:

1988-ից եղել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի, 1989-ից՝ նորաստեղծ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի Զանգեզուրի գոտու սեփական թղթակիցը:

1996 թ. հիմնադրված Սյունիքի մարզպետարանի «Սյունիք» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրն էր՝ մինչև լուծարումը (2000 թ.):

Այս վերջին գրառումով փակվում է աշխատանքային գրքույկը: Բայց, ինչպես նկատում է «Սյունյաց Երկիրը»՝ նրա 65-ամյակին նվիրված հատուկ համարի խմբագրականում, **«Դժվար է Գ. Դավթյանի ճանապարհն ամփոփել կենսագրական սովորական կաղապարների մեջ՝ ծնվել է..., սովորել է..., ավարտել է..., ծառայել է..., աշխատել է... և այլն: Այլապես չպիտի կարողանայինք գոնե արձանագրել, որ նա, ՀԿԿ շրջկոմում աշխատելու տարիներին, իր բնօրանի պատմական, հայեցի տեղանունները, այդ թվում՝ օտարահունչ Ղափանի Կապան անունը վերականգնելու ըմբոստ պահանջատերն ու առաջին զանգահարը եղավ: Հեշտ է այսօր տեղի-անտեղի հոլովել մեր ազգանվեր մեծերի անունները, բայց նա էր, ով «Խորհրդային Հայաստան» թերթում հանդես եկավ իր համագյուղացու՝ Արամ Մանուկյանի կյանքն ու գործը ոգեկոչող լայնածավալ հրապարակումներով այն հեռավոր օրերին... Ամեն ինչ չես թվարկի: ...Գագիկ Դավթյանի ճանապարհի յուրաքանչյուր հանգրվանը մի նոր սկիզբ է նշանավորել»:**

Շարունակելով թերթի խմբագրականը, չոր տարեթվերի մեջ «ծվարած» կենսագրությունը չափազանց թերի կլիներ առանց նրա գրական–մշակութային, քաղաքացիական և ազգային նկարագրի մասին վկայող գործունեության գոնե թռուցիկ ներկայացման, և մասնավորապես, որ Կապանում Եղեռնի զոհերի հուշարձան ունենալու նախաձեռնողներից մեկը և նախագծերի մրցութային հանձնաժողովի նախագահն է եղել, որ Արամ Մանուկյանի հիշատակը հավերժացնելու առաջին քայլը Կապանում ինքն է արել՝ հասնելով նրան, որ Դավիթբեկի դպրոցը կոչվի նրա անունով, որ առաջիններից մեկն էր, որ բազմաթիվ կապանցիների հետ մեկտեղ բարձրաձայնեց Կապանում եկեղեցի ունենալու հարցը, որ Սուրբ Մեսրոպ Մաշտոց փառահեղ եկեղեցու հիմքում՝ Գարեգին Ա երջանկահիշատակ կաթողիկոսի ձեռամբ օծված 12 քարերից մեկը դնելու պատիվն իրեն վերապահվեց...

* * *

Նրա թարգմանությամբ 1971-ին հրատարակվեց հույն բանաստեղծ Տասոս Լիվադիտիսի «Կանտատ երեք միլիարդ ձայնի համար» ժողովածուն՝ դառնալով իր երախայրիքը, իսկ ահա առաջին գիրքը՝ «Մենախոսությունը», լույս տեսավ «Կանտատ»-ից շուրջ տասը տարի անց: Այդ երկու գրքով 1982 թվականին նրան ընդունեցին ԽՍՀՄ գրողների միության շարքերը և «կանաչ լույս» վառվեց նրա ճանապարհին:

Հասավ մինչև Վլադիվոստոկ՝ Հայաստանը ներկայացնելու Պոեզիայի համամիութենական փառատոնում: Եղավ Օրենբուրգում՝ Վահան Տերյանի 100-ամյակի տոնակատարությանը:

1985-ին Քութաիսիում արժանացավ Վրաստանի կառավարության Վլադիմիր Մայակովսկու անվան միջազգային մրցանակի:

Որպես պատգամավոր՝ 1986-ին մասնակցեց ԽՍՀՄ գրողների միության պատմական 8-րդ համագումարին, որ վերջինը եղավ ԽՍՀՄ փլուզումից առաջ:

Նրա թարգմանությամբ հրատարակվեցին Թագորի և Էլմեր Դիկտոնիուսի ժողովածուները, վրացական պոեզիայի

«Սիրո ժառանգորդներ» անթոլոգիան, «Երազների երկինք» և «Վերադարձ» գրքերը, ավելի ուշ՝ «Արևն ու մենք» և «Ժամանակների ժամադրություն» ժողովածուները՝ վրացերեն ու ռուսերեն...

* * *

2000 թվականին ընտանյոք հանդերձ տեղափոխվեց Երևան:

Սկսվեց կյանքի որակապես նոր փուլը:

18 տարվա ընդմիջումից հետո՝ 2007-ին, հրատարակեց «Անվերջ սկիզբ» նոր գիրքը:

Գրողների միությունում մտմտում էին անկախության սկզբից ի վեր խզված հայ-վրացական գրական կապերը վերականգնելու հարցերի շուրջ: Անհրաժեշտ համարվեց սկսել վրացական և հայ պոեզիայի նոր անթոլոգիաների ստեղծումից: Գործը հանձնարարվեց նրան և մի ամբողջ ամիս աշխատեց Վրաստանում: Գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլու հետ միասին կազմեցին «ՎՐԱՍՏԱՆ. XXI դար» անթոլոգիան, որը շուտով հրատարակվեց պետպատվերով՝ հիմք դառնալով մեզանում վրացական պոեզիայի փառատոնի անցկացման համար: Փառատոնը մեկնարկեց Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, ապա որոշվեց շարունակել Սյունիքում:

Փառատոնը կայացավ Կապանի մշակույթի պալատի դահլիճում՝ ներկայությամբ երկու երկրների ԳՄ նախագահների, վրաց մեծանուն գրողների, մարզի և քաղաքի ղեկավարների, մտավորականության սերուցքի:

* * *

Առայսօր հեղինակել է սեփական և թարգմանական ավելի քան 50 գիրք: Թարգմանվել և տպագրվել է 20 լեզվով: Առանձին գրքերով հրատարակվել է Թբիլիսիում (1988, 2013), Մոսկվայում (1989), Վարշավայում (2015), Փարիզում (2015), Պլեվենում (2017), Բելգրադում (2020), Բուդապեշտում (2023, 2024), Պրիշտինայում (2023):

Մեր երկիրն ու գրականությունը ներկայացրել է պոեզիայի միջազգային փառատոներում և սիմպոզիումներում՝ Քութայիսի, Բաթումի, Թբիլիսի, Վլադիվոստոկ, Բելգրադ, Ալեքսանդրովաց, Բիդգոշչ, Պոզնան, Հանչժոու, Սիչան, Չենդու, Սինին, Աստանա, Խալկիդա, Պոդգորիցա, Նիկշիչ քաղաքներում:

Արժանացել է հայրենական և միջազգային հեղինակավոր մրցանակների ու պարգևների:

Վրաստանի գրողների միության և Բուլղարիայի անկախ գրողների միության պատվավոր անդամ է:

Գագիկ Դավթյանն ունի երեք զավակ՝ մեկ որդի, երկու դուստր:

Համո Սահյանի և Վահագն Դավթյանի հետ (1984 թ., Լոր)

Գևորգ Էմինի հետ՝ Վահանավանքում (1982 թ.)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Դավթյան Ստեփան Անդրանիկի

Կապանի երևելի արվեստագետներից է, ճանաչված քանդակագործ՝ ոչ միայն հայրենի քաղաքում:

Նրա ապրած կյանքը հայրենի եզերքին, Կապան քաղաքին, դիցական Խուստուփ լեռանը նվիրվածության օրինակ է:

Մնայուն գործեր (քանդակներ) է թողել ծննդավայրում:

Գիտակցական կյանքն անցել է քանդակագործության և մանկավարժության ոլորտներում:

Ծնվել է 1951 թվականի հունվարի 2-ին Ղափան քաղաքում:

Ավարտել է Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1978-ին՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակի բաժինը:

Հարգանքի զգացումով է հիշում դասախոսներին՝ Վռամշապուհ Շաքարյան, Գրիգոր Ահարոնյան, Երեմ Վարդանյան, Թերեզա Միրզոյան...

Ծառայել է խորհրդային բանակում՝ Անդրկովկասի Կարմրադրոշ սահմանապահ օկրուգում:

Զինծառայության շրջանում բազում քանդակներ է ստեղծել, որոնցում արտացոլված են սահմանապահների՝ անակնկալներով լեցուն ծառայությունը:



Նրա զինվորական տարիների ստեղծագործությունների մասին անդրադարձ կա Անդրկովկասի Կարմրադրոշ սահմանապահ օկրուգի «На рубеже родины» (15 հունիսի 1979 թ.) թերթի «Ամբողջի մասերը» հրապարակման մեջ, որում կարդում ենք՝ **«Ահա տեսնում ենք Ստեփան Դավթյանի աշխատանքը՝ Մոգիլևսկու քանդակը: Արխիվում Անդրկովկասի արտակարգ հանձնաժողովի պետ Սոլոմոն Մոգիլևսկու՝ բացի մի եզակի լուսանկարից այլ բան չէր պահպանվել: Բայց, այնուամենայնիվ, Դավթյանն իր աշխատանքում արտացոլել է այդ աննկուն մարդու՝ Ֆելիքս Էդմոնդովիչ Ձերժինսկու զինակցի ներքնաշխարհը: Ես տեսել եմ այդ կիսանդրին և հիացած եմ: Ինչպիսի ձիրք պիտի ունենա քանդակագործը, ինչպես կարող է իմանա մարդու հոգու գեղեցկությունն ու լայնությունը, որ մարդկանց փոխանցի այն, ինչ տեսել ու զգացել է»:**

Ստեփան Դավթյանին լրագրողը հարցրել է, թե արդյո՞ք Մոգիլևսկու քանդակը նրա լավագույն գործն է. **«Ինձ հաճախ են նման հարց տալիս: Քանդակագործի համար յուրաքանչյուր աշխատանք սիրելի է, որովհետև այն երեխայի ծննդյան պես է: Չեն լինում սիրելի ու ոչ սիրելի երեխաներ: Այդպես և քանդակներն են: Քանդակները լինում են կամ ավարտված կամ մտահղացված: Անցնում է ժամանակը, և քանդակագործի առջև նոր խնդիրներ է դնում: Այն, ինչը գոհացնում էր, դա արդեն անցյալում է: Նշանակում է՝ նոր ուղիներ պիտի փնտրել»:**

Ավելի վաղ՝ 30-ը մարտին 1979 թ., նույն թերթը տպագրել էր նրա լուսանկա-

ը՝ համառոտ ներկայացնելով զինվոր-քանդակագործին:

Ստեփան Դավթյանը ստեղծագործել է 1972 թվականից, իսկ 1973 թվականից մասնակցել է հանրապետական, միջազգային և այլ ցուցահանդեսների:

1992-ից Հայաստանի Հանրապետության նկարիչների միության անդամ է:

Ստեղծագործությունները գտնվում են Ռուսաստանի, Վրաստանի, Լիտվայի, Լատվիայի, Իրանի, Լիբանանի, ԱՄՆ-ի և այլ երկրների արվեստասերների մասնավոր հավաքածուներում:

1979 թվականից Ղափանի գեղարվեստի մանկական դպրոցում քանդակագործություն է դասավանդել: 1993 թվականից մինչև 2024 թվականը Կապանի գեղարվեստի մանկական դպրոցի տնօրենն էր՝ զուգահեռ դասավանդելով քանդակագործություն:

Այժմ նույն դպրոցում քանդակագործություն են դասավանդում իր սաները:

2024 թ. ապրիլի 21-ին Կապանի գեղարվեստի մանկական դպրոցի դասարաններից մեկը կոչվեց Ստեփան Դավթյանի անվամբ: Անվանակոչության արարողությանը մասնակցում էին արվեստագետի գործընկերները, ովքեր քանդակագործի մասին հուշեր պատմեցին՝ համատեղ աշխատանքի, հին ու բարի ժամանակների հետ կապված:

Ստեփան Դավթյանը մնայուն գործեր է թողել. Կապանի «Լեռնագործ» հյուրանոցի առջև տեղադրված է «Մտորում» քանդակը: Կապանի Հալիձոր թաղամասի № 8 մանկապարտեզի շենքի ճակատային մասում տեղադրված է «Ուժ և հավատարմություն» խճանկարը:

Ստեփան Դավթյանը բազում սաներ է դաստիարակել:

Հարցազրույցներից մեկում լրագրողի հարցին, թե չի՞ ցանկացել հայրենիքից դուրս ապրել ու ստեղծագործել, պատասխանել է. **«Հազար հնարավորություն եմ ունեցել, բայց առանց հայրենի քաղաքի ես ինձ երբեք չեմ պատկերացրել: Եթե իսկապես ծառայում ենք ազգին, արի ծառայենք, միասին քայլենք, թե՞ դու ուրիշ նպատակ ունես, թե՞ կարծում ես ուրիշ նպատակներ էլ են լինում: Պարտվենք՝ տուժողը ես եմ, հաղթենք՝ շահողը ես եմ»:**

Այդ գաղափարով էլ ապրում և ստեղծագործում է:

Ստեփան Դավթյանն ունի երկու դուստր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ստեփան Դավթյանի ստեղծագործություններից մեկը՝ «Մտորում» (գտնվում է Կապանի «Լեռնագործ» հյուրանոցի առջև)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Բալայան Վալտեր Իվանի

Ծնվել է 1944 թ. հոկտեմբերի 2-ին Ղափանում՝ արվեստագետի ընտանիքում:

Միջնակարգն ավարտելուց հետո՝ 1964 թվականին, զորակոչվել է խորհրդային բանակ: Զինծառայությանը զուգընթաց ավարտել է Մոսկվայի խորհրդային բանակի կենտրոնական տան մշակույթի ժողովրդական համալսարանը:

Զորացրվելուց հետո՝ 1967-ին, ընդունվել է Ղափանի երաժշտական ուսումնարան, որն ավարտելուց հետո՝ 1971 թվականին, նշանակվել է Ղափանի թիվ 2 մշակույթի տան տնօրեն:

Նրա նախաձեռնությամբ ստեղծվեց Հայրենական մեծ պատերազմի վետերանների երգչախումբ, որն առաջինն էր Հայաստանում:

Նրա ղեկավարությամբ «Կապան» վոկալ-գործիքային անսամբլը Լատվիայի Լիեպա, Մոլդովայի Բելցի, Լիտվայի Կաունաս, Բելառուսիայի Վիտեբսկ քաղաքներում մասնակցել է համամիութենական փառատոների:

1973-1978 թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի բարձրագույն կուսակցական դպրոցը: 1980 թ. մարտի 6-ին նշանակվել է Ղափանի քաղխորհրդի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ:

1987 թ. պարգևատրվել է «ԽՍՀՄ մշակույթի լավագույն աշխատող» կրծքանշանով:

1996 թ. մարտի 24-ին նշանակվել է Սյունիքի մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժնի վարիչ:

Եղել է նաև Սյունիքի մարզպետի խորհրդական:

Վերջին տարիներին բնակվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Վալտեր Բալայանն ունի մեկ որդի և մեկ դուստր: //

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Էլչյան Հրանտ Լորիսի

Հրանտ Էլչյանը ժամանակակից գեղանկարիչ և երկարամյա մանկավարժ է, ով իր ստեղծագործական ու կրթական գործունեությամբ կարևոր ներդրում ունի հայկական արվեստի զարգացման գործում: Նրա արվեստն առանձնանում է ազգային մտածողության, խոր հուզականության և արտահայտիչ գունային լուծումների համադրությամբ:

Հրանտ Էլչյանը ծնվել է 1950 թվականի հունվարի 1-ին Ղափանի շրջանի Գեղանուշ գյուղում: Վաղ տարիքից դրսևորել է նկարչական տաղանդ և հետաքրքրություն կերպարվեստի հանդեպ: 1967 թվականին ավարտել է Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1967- 1970 թվականներին սովորել և ավարտել է Երևանի գեղարվեստի ուսումնարանը: 1970 թվականին ընդունվել և 1975 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի կերպարվեստի բաժինը: 1967-1975 թվականներին համատեղել է ուսումը Երևանի Գեղարվեստի ստուդիայում: 1975-1996 թվականներին եղել է ուսուցիչ Կապանի թիվ 6 դպրոցում: 1986 թվականին ստացել է ավագ ուսուցչի որակավորում: 1991 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ է: 1991-1993 թվականներին կամավոր է եղել Գեղանուշ գյուղի պաշտպանության ջոկատում:

2002 թվականից Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոս է:



Ստանալով մասնագիտական գեղարվեստական կրթություն՝ ձևավորել է սեփական ստեղծագործական ոճ՝ հիմնվելով հայկական գեղանկարչության ավանդույթների և ժամանակակից արվեստի միտումների վրա:

Հրանտ Էլչյանը մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների Հայաստանում և արտերկրում: 1973 թվականին Կուրսկ քաղաքի՝ Մեծ հայրենականում տարած հաղթանակի 30-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում ցուցադրումներ է ունեցել Կուրսկ, Լիպեցկ, Օրյոլ, Բելգորոդ քաղաքներում, Մոսկվայի ժողովուրդների բարեկամության համալսարանում: Մասնակցել է Հայաստանի նկարիչների միության հոբելյանական և թեմատիկ ցուցահանդեսների, Ստեփանակերտում ցուցադրումներ է ունեցել ԼՂՀ անկախության 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Ցուցահանդեսներ է ունեցել նաև Կապան քաղաքում: Նրա գործերը գտնվում են մասնավոր հավաքածուներում և արժանացել են արվեստասերների բարձր գնահատականին:

Փոքր պատմվածքներ է տպագրել մամուլում՝ «Դառը ճշմարտություն» խորագրով:

Բացի ստեղծագործական աշխատանքից, Հրանտ Էլչյանը երկար տարիներ զբաղվել է մանկավարժական գործունեությամբ՝ կրթելով և դաստիարակելով բազմաթիվ արվեստագետների: Նրա աշակերտներից շատերը շարունակել են ուղին արվեստի ոլորտում՝ պահպանելով ուսուցչի փոխանցած արժեքներն ու մասնագիտական սկզբունքները:

Երկարամյա և բարեխիղճ մանկավարժական գործունեության, ինչպես նաև կրթության ու մշակույթի զարգացման գործում ունեցած ներդրման համար արժանացել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Ոսկե մեդալ»-ի:

Հրանտ Էլչյանն ունի երկու զավակ՝ որդի և դուստր:

Խոհեր Ռոբերտ Կամոյանի մասին

Հրանտ Էլչյանը պատմեց, որ Ռոբերտ Կամոյանին առաջին անգամ հանդիպել է

1967 թվականին՝ քանդակագործ Մարատ Նուրիջանյանի արվեստանոցում: «**Դուռը բացեցի, և ներս մտավ գանգրահեր մի երիտասարդ՝ համարյա Մարատին հասակակից: Փոքրիկ ստվարաթղթին առաջին անգամ էտյուդ էի պատկերել, շրջեցի այն և ասացի՝ ես այս տարօրինակ մարդու ճեպանկարը պետք է անեմ: Մինչև հիմա պահել եմ այդ նկարը...»:**

«Երկար տարիներ մանկավարժ եմ աշխատել և հասկացել, որ մանկավարժներս երեխային «ծռում» ենք՝ հեռացնելով իր բնական վիճակից: Այն, որ բնությամբ նրան տրված է, որ պետք է զարգանա ու դառնա արվեստ, մենք անզգուշությամբ հեռացնում ենք, իսկ Կամոյանին հաջողվեց բնությունից տրվածը ցուցադրել, «չծռել»», – նշում է Հրանտ Էլչյանը:

Էլչյանի կարծիքով՝ Կամոյանը հոյակապ գրաֆիկա ունի, լավ գիծ, որի մեջ երևում են նկարչի տարածական մտածողությունը, ընկալումները, զգացողությունը... Նրա արվեստում զգացողության բոլոր ձևերը գծի մեջ ավելի արտակարգ են դրսևորվում, քան գեղանկարչության մեջ: **«Մի անգամ կանչեց, թե գիտեմ, որ լավ օֆորտ ես անում, կարո՞ղ ես ինձ հուշել՝ ինչպե՞ս են մետաղը դարձնում գիծ: Բացատրեցի և ասացի, որ նրա բոլոր գծանկարներն արժանի են կրկնօրինակման: Մի քանի օր հետո գնացի արվեստանոց և տեսա, որ ավելի լավ գործիք է ստեղծել...»,** - հիշում է Էլչյանը:

Թավրիզ-2025, հանդիպում Ատրպատականի թեմի առաջնորդ Տ. Գրիգոր արքեպիսկոպոս Չիֆտճեանի հետ

«Կամոյանը ստեղծեց իր ինքնատիպ արվեստը... Նա ամբողջ կյանքում «ապրեց» իր ներսում եղածը, իր աշխարհայացքը՝ այդ ամենը վերածելով կտավի, գծանկարի, ճեպանկարի, այսինքն՝ նրա գեղագիտական գործունեությունը վերածվեց գեղագիտական առանձնահատկության, նա իսկական նկարիչ-անհատ է, անհատականություն, որ միշտ մնաց Ռոբերտ Կամոյան՝ իր եսի մեջ», – նշեց նկարիչը:

«Կամոյանի մեծության գաղտնիքներից մեկն էլ անսահման սերն ու նվիրումն է հայրենի երկրի հանդեպ, նա Կապանի մեծություններից է», – նշում է Հրանտ Էլչյանը:

Ինչ վերաբերում է ըստ արժանվույն գնահատվելուն՝ **«Նա ինքն իր արվեստով պրոֆեսիոնալ նկարիչների համար կայացել է, թե արվեստաբաններն ինչպես են գնահատում, դա բնավ էական չէ: Կամոյանը կայացել է նրանց շրջանում, ովքեր իսկապես սիրեցին նրա արվեստը: Նա իր տարեգրությունը հաստատեց Կապանի գեղանկարչական մտածողության մեջ»:**

«Կամոյանի արվեստում բացառիկ դրական տարրեր կան, այնտեղ որևէ ազդեցություն չես գտնի, և ես խոնարհվում եմ Կամոյան մեծության առջև»,– նշեց Էլչյանը:

Ի դեպ, ինչպես տեղեկացրեց Հրանտ Էլչյանը, Էդ. Իսաբեկյանի «Սասունցի Դավիթ» կտավի բնորդը Ռոբերտ Կամոյանն է (Իսաբեկյանի դիպլոմային աշխատանքն էր):

Մասնագիտական հայացքով նայելիս նկարիչ Էլչյանը, որպես Կամոյանի լավագույն կտավներ, առանձնացրեց հատկապես ջրաներկով արված աշխատանքները, որտեղ զգացվում է հայրենի երկրի հանդեպ ունեցած մեծ սերը: Լավագույն աշխատանքներից են նաև ինքնանկարները:

Ինչ-որ առումով լավ է, որ Կամոյանի արվեստն ամբողջովին չի ուսումնասիրվել, քանի որ ամեն անգամ յուրովի է նա ընկալվում և դեռ կընկալվի: **«Այն, ինչ չես կարողանում ընկալել, պետք է մի պահ կանգ առնես և ինքդ քեզ հարցնես՝ ինչո՞ւ չեմ կարողանում հասկանալ. ինչպես ասում են, գիտության մեջ ճշմարտությունը ծնվում է հակասությունից»,**– ամփոփեց զրույցը Հրանտ Էլչյանը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Խաչատրյան Վահրամ Վարշամի

Կապանի նկարիչների ցուցահանդեսում (Արզումանյան Կամո, Էլչյան Հրանտ, Խաչատրյան Աշոտ, Խաչատրյան Վահրամ)

ՀՀ նկարիչների միության անդամ Վահրամ Խաչատրյանը ծնվել է 1947 թ. նոյեմբերի 10-ին Ղափան քաղաքում:

Ավարտել է Ղափանի N 3 միջնակարգ դպրոցը, հետո ծառայության անցել խորհրդային բանակում: 1970-ին ավարտել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գեղագիտության ֆակուլտետը:

1973-ից արվեստագետի ստեղծագործությունները ցուցադրվել են հանրապետական եւ այլ ցուցահանդեսներում:

Կապանի գեղարվեստի դպրոցի հիմնադրման գործում մեծ է նրա ավանդը, կարելի է ասել՝ հիմնադիր տնօրենն է, կրթօջախի ցուցանակն ինքն է արել, մանուկների գեղագիտական դաստիարակության համար անհրաժեշտ պիտույքներն ու նյութերը հայթայթել:

Հետո նկարչական ձեւավորումներ էր անում «Էլեկտրոն» գործարանում, մինչեւ որ մարդիկ գտան, որ նա շատ ավելի լուրջ եւ օգտակար գործով պիտի զբաղվի: Եվ հրավիրեցին (դա 1976-ին էր) Ղափանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն՝ որպես բեմադրող նկարիչ: 60-ից ավելի ներկայացումների ձեւավորման հեղինակ է:

Դրանցից ո՞րն է համարում լավագույնը: Նախ նշեց, որ թատրոնում իր առաջին ձեւավորումը եղել է Նոդիա Բաղդասարյանի բեմադրությամբ Մուրացանի



«Ռուզան» դրաման: Հիշում է՝ անդրանիկ բեմադրությունն էր, շատ չարչարվեց: Հետո եղան նոր բեմադրություններ՝ Սոֆոկլեսի «Էդիպ արքան», Նար-Դոսի «Սպանված աղավնին» եւ վերջապես Չարենցի «Կապկազ թամաշան», որը թատրոնին ճանաչում բերեց, նաեւ Լենինյան կոմերիտմիության մրցանակի արժանացավ:

Քանդակագործ Մարատ Նուրիջանյանի հետ

1977-ին գեղանկարիչ Վահրամ Խաչատրյանի անհատական ցուցահանդեսը բացվեց հայրենի քաղաքում, եւ հետո տարբեր հանրապետական փառատոների ու ցուցահանդեսների մասնակցեց («Հայկական ներկապնակ», «Գարնանային Սյունիքի գույները» եւ այլն):

Նրա բազմաթիվ ստեղծագործություններ գտնվում են տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում:

Եվ առաջին հարցը, որն ուղղեցինք արվեստագետին, այն էր, թե երբվանի՞ց է սկսել նկարել: **«Շատ փոքրուց,** – պատասխանում է՝ առանց հայացքը կտրելով կտավից,– **հայրս գեղանկարիչ էր, Թերլեմեզյանի անվան ուսումարանից տարան պատերազմ, վերադառնալուց հետո ուսումը չշարունակեց, բայց նկարչության մեջ գտավ իր զբաղմունքը: Ի՞նչն էր տարածված հետպատերազմյան տարիներին՝ պլակատն ու լոզունգը: Այնուամենայնիվ, տեսել եմ նրա նկարելը, ներշնչվել, այդ ժամանակաշրջանից սիրահարվել եմ նկարչությանը: Երբ խելքս մի քիչ կտրել է, գիտակցել եմ ինչն ինչոց է, սիրահարվել եմ գույներին, գծին, տոներին, երանգներին, զգում էի, որ դա մի ուրիշ աշխարհ է: Շատ դժվար է ասել, թե քանի նկար եմ արել, խորհրդային տարիներին գեղանկար շատ քիչ էին գնում, այն ժամանակ նվիրում էի, ով ուզում էր՝ բարեկամներին, հարազատներին, մտերիմներին, ընկերներին: Հետո սկսեցին գնել՝ հիմնականում նվիրելու համար, բայց դա էլ կամաց-կամաց մարեց: Համարյա 55 տարի զբաղվել եմ այս արվեստով: Պատկերացրեք՝ այդքան տարվա ընթաց-**

քում ինչքան նկար եմ արել»:

Իսկ կա՞ մի գեղանկար, որից դժվարությամբ է բաժանվել կամ չի բաժանվել: **«Գեղանկարներ կան, որոնք չեմ վաճառել, թեպետ բարձր գին են առաջարկել: Նկարներիցս մեկը, որ «Սկիզբ» եմ անվանել, պահում եմ տանս, դա ինձ համար շատ նվիրական ստեղծագործություն է, կամ այն «Խրտվիլակ» կոչվող նկարը, ցույց է տալիս արվեստանոցի պատին կախված նկարը, խրտվիլակ է, բայց մեջը մարդկային հոգի եմ դրել»:**

Հաջորդ հարցը՝ ուղղված գեղանկարչին, այն էր, թե ի՞նչ է զգում նկարակալի առջեւ: **«Ոչ մի բան,** – անվրդով պատասխանում է, – **կտրվում եմ աշխարհից: Ես եմ, իմ կտավը, ներկերը, վրձինը: Այլեւս ոչ մի բան: «Ընկնում եմ» կտավի մեջ: Անջատվում եմ հոգսերից, ինձ հուզող մտքերից, չեմ զգում տարիքս, կենցաղային անհարմարությունները եթե խանգարեն, ոչինչ չի ստացվի: Կտավը մի աշխարհ է դառնում ինձ համար, մտնում եմ այդ մթնոլորտի մեջ»:**

Լավագույն ստեղծագործությո՞ւնը. **«Յուրաքանչյուրը՝ պոետ, քանդակագործ, գեղանկարիչ չի կարող ասել, թե որն է իր լավագույն ստեղծագործությունը, ինքը կարծում է, թե դեռ տասնամյակներ պիտի ապրի, դեռ ամեն ինչ առջևում է, այդ թվում՝ իր լավագույն ստեղծագործությունը, դեռ հասցնելու է այն ստեղծել»:**

Հիմա ամեն ինչ թանկացել է, արվեստագետի համար էլ է դժվար: **«Ահավոր դժվար է,** - ընկնում է մտածումների գիրկը, - **խորհրդային տարիներին այդ ամենը կոպեկներ արժեր: Գեղանկարչի աշխատավարձը հերիքում էր այդ ամենը ձեռք բերելու: Հիմա, երբ մի նկար նորմալ գնով վաճառվում է, գումարի մի մասը հատկացվում է ընտանիքի հոգսերը հոգալուն, մյուս մասը՝ ներկեր, կտավ եւ այլն ձեռք բերելուն: Այժմ, փառք Աստծո, որդիս Ռուսաստանից օգնում է, ներկեր է ուղարկում, կտավ: Հիմա շատ խեղճացած չեմ, չնայած չափազանց դժվար է, չեմ ուզում իրեն նեղություն տալ»:**

Գեղանկարչի սիրած գույներն են կարմիրը եւ կապույտը: Ասում է, որ ոչ մի տեղ մեր երկնքի կապույտի պես գույն չի տեսել: Իսկ մեր լեռնաժայռերը բոլոր երանգներն ունեն, ինչպես ներկապակը, մնում է վրձինը վերցնես եւ նկարես: Այնուամենայնիվ, շեշտը դնում է կարմիրի վրա, մյուսներն օժանդակող գույներ են: Գեղանկարչության ժանրերից նախընտրում է կոմպոզիցիան, այսինքն՝ զուտ ստեղծագործությունը, այնուհետեւ՝ բնանկարը: Վերջինիս դեպքում, ասում է, պիտի դուրս գաս, բնության մեջ ստեղծագործես, հենց այնպես հնարել չի լինում: Նատյուրմորտ նկարել այնքան էլ չի սիրում, այդ ժանրին հազվադեպ է դիմում: Հավելում է, որ թատրոնում աշխատած տարիներն ազդեցություն են թողել իր ստեղծագործությունների թեմատիկայի վրա. բեմ է սիրում նկարել, դերասան-դերասանուհիներ: Պատմական թեմատիկայով էլ է նկարներ արել, բայց երիտասարդ տարիքում. չեն պահպանվել: «Երևի նվիրել եմ», - լրացնում է միտքը:

Ռեժիսոր Վարդան Հովհաննիսյանի հետ

«Ցանկացե՞լ է նմանվել որեւէ մեկին», - սա եւս ստեղծագործողներին տրվող հաճախադեպ հարցերից մեկն է: **«Նմանվել՝ ոչ, երիտասարդ տարիքում փորձում էի որոշակի չափով ընդօրինակել Մարտիրոս Սարյանին ու Մինասին, որովհետեւ նրանք էին ազգային գեղանկարչության կրողները: Իսկ ահա տարիների հետ ինքդ ես գտնում քո ճանապարհը, սեփական ձեռագիրդ ես ձեռք բերում, մտածելակերպ, քեզ համար ոճ ես ստեղծում: Ստացվո՞ւմ է այդ ամենը, գնում ես քո ճանապարհով: Այն ամենը, ինչ ձեռքբերովի էր, մի կողմ ես դնում ու գնում քո բացած արահետով դեպի առաջ»:**

Ինչպես նշեցինք, նկարչության առաջին դասերը ստացել է հորից: Արշամ հոր երեք արու զավակներից՝ Վահրամ, Միշա, Աշոտ, միայն ինքն է ընտրել հոր մասնագիտությունը: Սիրով է տալիս բուհում իրեն դասավանդած դասախոսների անունները, բայց, այնուամենայնիվ, առանձնացնում է երկուսին՝ ՀՀ ժողովրդական նկարիչներ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից-անդամներ Հովհաննես Զարդարյանին եւ Ղուկաս Չուբարյանին (քանդակագործ): Այս երկուսից շատ բան է սովորել, գեղանկարչության վերաբերյալ խորը փիլիսոփայական զրույցներ են ունեցել. «Ինձ հոգեպես շատ է պատրաստել Չուբարյանը»:

Ի՞նչն է հուզում գեղանկարչին. **«Կապանում բացակայում է բոհեմական միջավայրը,** - մտահոգություն եմ նշմարում զրուցակցիս դեմքին, **- նախկինում անկեղծ ընկերություն կար, «ազարտ» կար, հոգի կար: Տեսել եմ, թե հայտնի նկարիչները Երեւանում ինչպես էին ընկերություն անում: Խոսքը քեֆ-ուրախությունների, խնջույքների մասին չէ, այլ մտերմության, իրարով հետաքրքրվելու, միմյանց արվեստանոցներ հաճախելու, տեսնելու, թե իր գեղանկարիչ ընկերն ինչ նոր գործ է ստեղծել: Տասը գեղանկարիչ կա Կապանում, կարող է՝ տարիներով իրար չտեսնեն: Իմ սերնդից Մարատ Նուրիջանյանն ու Ռոբերտ Կամոյանը գնացին, իսկ մնացածը՝ իրենց մեջ պարփակված, մեկուսացած: Հայտնի խոսք կա, չէ՞, կարծիքների բախումից է ծնվում ճշմարտությունը: Դրան նպաստում էր իրար հետ նստելը, բանավիճելը, մի բաժակ գինի խմելը, մի խոսքով՝ բոհեմական միջավայրը, որ չկա, ինչի համար շատ եմ ափսոսում»:**

Նրա գեղանկարներում գերակշռում է Խուստուփը, ոմանք բարեկամաբար նրան «խուստուփիստ» են անվանում: Ի՞նչ է Խուստուփն իր համար, պարզապես լե՞ռ, թե՞ ներշնչանքի աղբյուր...

– Ես վաչագանցի եմ, մանկուց հիացել եմ նրանով: Խուստուփը ոնց որ սիմվոլ է կապանցիներիս համար: Նախկին արվեստանոցս Դավիթ Բեկ թաղամասում էր՝ Խուստուփի դեմ դիմաց, այնտեղից բացվում է Կապանի համայնապատկերը՝ վեհափառ Խուստուփով, միշտ աչքիս առաջ էր, ինչքան նկարում, այնքան ոգեւորություն էր գալիս վրաս, այդպիսի սար ո՞ւմ կտան:

Համեստ, մեղմաբարո արվեստագետը հնարավորինս ուզում է օգտակար լինել շրջապատին: Սյունիքի մարզային գրադարանի արվեստի բաժնին է նվիրել գեղանկարչության վերաբերյալ արժեքավոր գրականություն, կերպարվեստին եւ այլ բնագավառներին առնչվող իր կազմած ալբոմները, մի գեղանկար՝ իր տատի պատկերով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Պարի անսամբլ (ղեկավար՝ Բորիկ Հարությունյան, Ղափանի մշակույթի կենտրոնի տնօրեն Սուսաննա Մարտիրոսյան, 1985 թ.)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Մարտիրոսյան Սուսաննա Ասատուրի

Սուսաննա Մարտիրոսյանի կյանքն ու գործունեությունը բազմապլանային են: Պրպտող, որոնող արվեստագետ է, նոր գաղափարների կրող, որն ինքնըստինքյան ծնում է նոր մտածելակերպ, արարման նոր ոճ ու ժանր:

Ծնվել է 1954 թվականի սեպտեմբերի 6-ին Քաջարան քաղաքում:

1960-1964 ուստարում հաճախել է Քաջարանի Ստեփան Շահումյանի անվան միջնակարգ դպրոց:

1964-1965 ուստարում ընտանիքը տեղափոխվել է Ղափան քաղաք, և շարունակել է ուսումը թիվ 27 գիշերօթիկ դպրոցում:

1971 թվականին ավարտեց դպրոցը և նույն թվականին ընդունվեց աշխատանքի Քաջարանի մշակույթի պալատում՝ մանկական բաժնի վարիչ: 1972 թվականին ընդունվեց Լենինգրադի Կրուպսկայայի անվան կուլտուրայի ինստիտուտի ռեժիսուրայի բաժինը և 1976 թվականին ավարտելով՝ ստացավ մասսայական տոնակատարությունների ռեժիսորի, կուլտլուսաշխատանքի մասնագետի որակավորում: Նույն ինստիտուտում զուգահեռ սովորեց և ստացավ երկրորդ մասնագիտությունը՝ «Բեմական խոսք և բեմական շարժում» դասախոս-մանկավարժի որակավորում:

1976 թվականին վերադարձավ Ղափան՝ նշանակվեց շրջանային կուլտուրայի բաժնում՝ կուլտուրայի տան մեթոդիստ և այդ պաշտոնում մնաց մինչև 1977 թվականը:

1978 թվականին ընտրվեց Ղափանի նորաստեղծ «Ռելե» գործարանի կոմերիտական կազմակերպության (շրջկոմի իրավունքով) քարտուղար՝ մինչև 1982 թվականը:

1978-2000 թվականներին զուգահեռ դասավանդել է Ղափանի երաժշտական ուսումնարանում՝ «Բեմական խոսք և բեմական շարժում» առարկա, այնուհետև՝ «Արվեստի պատմության» դասախոս:

1980 թվականին ընտրվել է Ղափանի ժողովրդական դեպուտատների քաղաքային սովետի դեպուտատ:

1982 թվականի փետրվարի 12-ին նշանակվել է Ղափանի լեռնագործների մշակույթի և տեխնիկայի պալատի տնօրեն:

1990 թվականին ընտրվել է Հայաստանի Հանրապետության արհեստակցական միությունների խորհրդի անդամ:

2000-2005 թվականներին զբաղեցրել է Սյունիքի մարզպետի օգնականի պաշտոնը: 2005 թվականի հունվարից-մարտ ամիսը զբաղեցրել է Սյունիքի մարզի կրթության, մշակույթի, սպորտի վարչության՝ մշակույթի բաժնի պետի պաշտոնը:

2005-2007 թվականներին եղել է Կապանի քաղաքապետարանի մշակույթի և սպորտի հիմնարկների բաժնի պետ:

2007 թվականին պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

2007-2009 թվականներին Կապանի քաղաքապետարանում զբաղեցրել է մշակույթի և սպորտի հիմնարկների գործունեության համակարգման բաժնի պետի պաշտոնը:

2008 թվականին ստացել է համայնքային ծառայության առաջին դասի ծառայողի դասային աստիճան:

2009 թվականին նշանակվել է Կապանի քաղաքապետարանի արտաքին մշակութային կապերի պատասխանա-

տու:

2000 թվականին հիմնեց «Երիտասարդ լիդերների» դպրոցը և ընտրվեց տնօրեն:

2024 թվականից Կապանի Ալեքսանդր Շիրվանզադեի անվան թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ է:

Ամուսինը զոհվել է Արցախյան ազատամարտում:

Սուսաննա Մարտիրոսյանն ունի երկու որդի:

Եվս մի քանի «շտրիխ» Սուսաննա Մարտիրոսյանի դիմագծին

Սուսաննա Մարտիրոսյանին, կարծում ենք, մարզկենտրոնում (եւ ոչ միայն) շատերն են ճանաչում: Եվ, այդուհանդերձ, մի քանի շտրիխ փորձենք ավելացնել նրա դիմանկարին…

Ռեժիսոր, մշակույթի եւ հասարակական գործիչ, Հայաստանի թատերական գործիչների միության անդամ, մանկավարժ…

Տարիներ առաջ էր «Այունյաց երկրին» տված հարցազրույցում (10 նոյեմբերի 2011 թ.) արտահայտել քաղաքացու, հայրենիքի մասին իր պատկերացումը. **«Միշտ համարել եմ, որ ամեն մարդ իբրեւ պարգեւ է ստանում երկրային կյանքը: Կարողացար ժամանակի մեջ տեղավորվել, կայանալ որպես քաղաքացի, մասնագետ, կին, մայր, ուրեմն ժամանակդ ճիշտ ես ապրել, քո գոյությամբ սատարել ես երկրիդ …**

Ես իմ երկրի տերն ու ծառան եմ, վտանգի պահին՝ նրա նվիրյալ պաշտպանը, խաղաղ տարիներին՝ նրա հպարտ քաղաքացին»:

Տարիների հեռվից կարող ենք փաստել՝ այդ պատկերացումներով էլ առաջնորդվել է կյանքում:

Լենինգրադի (Սանկտ-Պետերբուրգի) Կրուպսկայայի անվան կուլտուրայի ինստիտուտը 1976 թ. ավարտելուց հետո վերադարձել է ծննդավայր Կապան եւ տարբեր պաշտոններ զբաղեցնելով աշխատել մասնագիտությամբ: Տասնութ տարի ղեկավարել է Կապանի մշակույթի կենտրոնը, չորս տարի՝ Կապանի քաղաքապետարանի մշակույթի բաժինը, հինգ տարի՝ Այունիքի մարզպետարանի մշակույթի ոլորտը:

Տիգրան Մանսուրյանի հետ (2015 թ.)

ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Ղազանչյանի հետ (2015 թ.)

Այնպես որ՝ երկար տարիներ Կապանի մշակութային կյանքը բաբախել-չափվել-նժարվել է Սուսաննա Մարտիրոսյանի գործունեությամբ:

Նրա համար Այունիքը եւ Կապանը հոգեւոր-մշակութային բնօրրան են եղել (ու շարունակում են այդպիսին լինել) հայ ժողովրդի համար, ինչը հավաստել է նաեւ իր գործունեությամբ:

Նրա անմիջական ջանքերով Կապանում զարգացել է ժողովրդական, երգչախմբային, էստրադային, թատերական, պարային արվեստը. ինչի շնորհիվ բազմաթիվ խմբեր արժանացել են «Ժողովրդական կոլեկտիվ» կոչման:

Այդ խմբերից շատերը մասնակցել են համամիութենական եւ հանրապետական փառատոների՝ զբաղեցնելով մրցանակային տեղեր:

Բազմաթիվ են նրա նախաձեռնությունները մշակույթի բնագավառում. թատերական եւ ուսանողական փառատոներ, Կապանի տոն ու համաժողովրդական այլ տոնախմբություններ, երիտասարդության համար ժամանցային հնարավորությունների ստեղծում:

Սակայն մշակույթի ոլորտով չի սահմանափակվել նրա գործունեությունը:

Եղել եւ այսօր էլ մնում է մեր տարածաշրջանի մերկ նյարդերից մեկը ու բացառիկ նրբանկատությամբ եւ զգայունությամբ է հակադրվում մեզանում երեւան եկող ամեն մի մերժելի երեւույթի:

Այն քչերից է, ով իր փոքր հայրենիքի անտրտունջ մշակը լինելով՝ նաեւ յուրօրինակ շառավիղ եղավ անցած-գնացած

Ռոբերտ Կամոյանի հոբելյանը Կապանում (3.05.1988 թ.)

մեր ազնվականության:

Դա արտահայտվեց նաեւ մտավորական ասվածի իր պատկերացումի մեջ. «...արարող միտք, պատասխանատվության բարձր զգացում, ինտելեկտ, ազգային արժեհամակարգին արյունակցություն... Մարդ, ով չի ստում, չի բամբասում, չի շողոքորթում, ով երեսպաշտ չէ, հազար դիմակ չունի բոլոր դեպքերի ու դեմքերի համար...»:

Ու ոչ միայն հավատարիմ մնաց այդ բանաձեւին, այլեւ փորձեց նման ներկայությամբ ուժեղացնել մեր երթը:

Երեւանից չերեւացող Սյունիքում քանի-քանի անգամ, երկրի իրական հոգսերից ու ժողովրդից օտարված պետական այրերի կուրության եւ լռության համապատկերի վրա, ձայն բարձրացրեց մեր երկրամասի արժանապատվության համար:

Արեց եւ անում է հնարավորը, որ իր սիրելի բնօրրանը, բոլորիս Կապանն արեւոտ հովիտ լինի մարդկանց համար, որ մարդկային վատ հարաբերություններն ու բարքերը չկարողանան խուժել մեր լեռնաշխարհ:

Այսօր էլ, երբ Հայաստան երկիրը փորձում են մտցնել կեցության նոր ոլորտ, երբ դարերի խորքից սկիզբ առնող արժեքները վերանայելու, վերաիմաստավորելու փորձեր են արվում, ջանում է (իր կարելիությունների չափով եւ հասարակական ակտիվ գործունեությամբ), որ ազգային ակունքից բխող սյունիքյան վճիտ ջուրը չաղարտվի:

Նրա համար, որքանով տեսել եւ տեսնում ենք, ցավալի են մեր լեռնաշխարհի հոգեվարք ապրող գյուղերը, բնակավայրերում փակված-փակվող դռները, մարդու ոտքի եւ պատարագի կարոտ մեր սրբավայրերը, օտար ափերում երջանկություն որոնող մեր հայրենակիցների շարքերի ստվարացումը:

Երբ հայրենի երկրամասը վտանգի մեջ է եղել, նա կողք չի կանգնել ու չի մտածել, թե դա միայն մեր քաջազուն տղերքի գործն է: Ու հիշել է, որ հատկապես Սյունիքում հոգեւորն ու մշակույթն Աստծուց հետո հաջորդ արարիչն են եղել: Հիշել է, որ Սյունիքը դարերի փորձությունների դիմացել է ոչ միայն զորական ուժով ու անգերազանցելի այրուձիով, այլեւ խոսքի ու արվեստի ուժով, Աստվածաշունչ թարգմանելով, Ավետարաններ երկնելով...

Ու ձգտել է այդ հավատամքով ապրել: Եվ ստացվել է...

Այդ առումով ուշագրավ է նրա ամփոփումը. **«Անկախությանը մենք տվեցինք ամեն ինչ, կյանք՝ ամուսինս՝ Գագիկ Հակոբյանը, զոհվեց 1993 թ. հոկտեմբերի 30-ին, կորսված երջանկություն, երկու զավակիս անհայր մանկություն...»:**

Այդ տարիների նրա գործունեության մասին ոչ պակաս խոսուն է մեկ այլ դրվագ: Երբ 1992-ի սեպտեմբերի 17-ին հրետակոծվեց Կապանի մշակույթի կենտրոնը, ամեն ինչ արեց (Կապանի լեռնահարստացման կոմբինատի լուսահոգի տնօրեն Գառնիկ Առաքելյանի եւ ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսի աջակցությամբ), որ պատերազմական գործողությունների թատերաբեմ դարձած Կապանում հնարավորինս արագ վերականգնվի մշակույթի կենտրոնը՝ նպատակ ունենալով այդկերպ բարձրացնել կապանցու ոգին:

Այնուհետեւ՝ հաճելիորեն նկատել ենք բանի աշխարհի հետ նրա արյունակցությունը, այդ ոլորտի մարդկանց հանդեպ նրա հարգանքն ու պատկառանքը:

Այդ ամենի համար է, որ արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալի, հանրապետական ու նախկին միութենական մարմինների պատվոգրերի ու գերատեսչական մեդալների:

Այդուհանդերձ...

Տարիներ առաջ ՀՀ վաստակավոր արտիստ Վազգեն Սարգսյանը՝ Սուսաննա Մարտիրոսյանին նվիրված ակնարկում, նրա կարգախոս-սկզբունքն էր հիշել-հիշեցրել՝ «Այս աշխարհում ես դեռ գործեր ունեմ...»:

Այդ կարգախոսը ղողանջում է նաեւ այսօր:

Նրա մերօրյա չափազանց ակտիվ գործունեությունը, նրա գլխավորած ««Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն» ՀԿ-ի՝ ժամանակ առ ժամանակ լույս աշխարհ բերող եւ կյանքի կոչվող նախաձեռնությունները դա են վկայում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019 Թ.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Մինասյան Բորիկ Անուշավանի

ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Ղազանչյանի հետ

Երանի ինձ, որ գալիս եմ ոչ միայն իմ, այլ իմ ընկեր արվեստագետների մանկությունից: Դա հեքիաթ էր, և մենք էլ այդ հեքիաթի հերոսները...

Եվ այսպես մի ճարպիկ, անհանգիստ տղա, ով աներևակայելի թռիչքներ էր գործում բեմում՝ իր կրակոտ պարով, անընդհատ հանդիսատեսից ծափողջույններ կորզում (Գառնիկ Խաչատրյանի պարի համույթի լավագույն պարողներից էր N 27 գիշերօթիկ դպրոցում), հետո պիտի նույն հաջողությամբ երևակայական թռիչքներ գործեր կտավի վրա, խաղար ներկապնակի գույների հետ, ու ներքին կրակը, հոգու թռիչքը վրձնահարեր կտավին: Դպրոցի պատերին նրա գծանկարներն էին՝ ջրաներկով և յուղաներկով արված առաջին գործերը: Դրանք արդեն ազդարարում էին, որ գործ ունենք շնորհալի պատանու հետ, ով իր հաստատուն քայլերով պիտի մտներ արվեստի աշխարհ:

Հայաստանի նկարիչների միության անդամ Բորիկ Մինասյանը ծնվել է 1956 թ. մարտի 5-ին Ղափան քաղաքում:

Սովորել և ավարտել է Ղափանի թիվ 27 գիշերօթիկ դպրոցը, ծառայել ԽՍՀՄ զինված ուժերում:

Այնուհետև ճանապարհը տարավ Երևան, որտեղ մշակութային խառնարանում պիտի փնտրեր սեփական ձեռագիրն ու տեսակը: 1976-ին ընդունվեց Երևանի մանկավարժական ինստիտուտի կերպարվեստի բաժինը և 1982-ին՝ ավարտելուց հետո, աշխատանքի անցավ Երևանի պետական համալսարանում՝ գլխավոր նկարիչ–ձևավորող:



Ճանապարհը նորից բերեց հայրենի քաղաք, 1987-ին նշանակվեց մշակույթի պալատի նկարիչ-ձևավորող՝ զուգահեռ կատարելով ՀՊՄԿ-ի նկարիչ-ձևավորողի պարտականությունները:

1987 թ. սկսվում է նրա մանկավարժական գործունեությունը, և շուրջ 32 տարի՝ մինչև 2019 թ., դասավանդում է Կապանի արվեստի մանկական դպրոցում՝ կերպարվեստի դասատու:

Հարյուրավոր աշակերտների վարպետ ուսուցիչը ոչ միայն նկարչության տեխնիկայի գաղտնիքներն է ուսուցանել, այլև ուղեկցել նրանց՝ արվեստի կախարդական աշխարհ, տարել համաշխարհային մշակույթի ճանապարհներով, սեր և ճաշակ դաստիարակել:

Լինելով ազգային մտածողություն կրող արվեստագետ՝ իր սաներին կրթել է ազգային մշակույթը ճանաչելու, յուրացնելու ոգով՝ հայ մշակույթի անհատնում գանձերը դարձնելով սեփական ձեռագիր:

Նրա աշակերտներից շատերը գնացին հենց իր ճանապարհով:

1987 թ. Կապանի պատմության մեջ կարևոր էջ գրվեց. բացվեց Գեղագիտական դաստիարակության կենտրոն:

1990 թվականին հանրահայտ արվեստաբան Հենրիկ Իգիթյանի ձեռամբ և տեղական իշխանությունների աջակցությամբ հիմնադրվեց Կապանի ժամանակակից արվեստի թանգարանը, որի պատասխանատու նշանակվեց Բորիկ Մինասյանը:

Սկսվեց նրա գործունեության մի նոր և բուռն ժամանակաշրջան: Թանգարանն ի սկզբանե դարձավ Կապան քաղաքի մշակութային այցեքարտերից մեկը: Կապան էր հասել ժամանակակից հայ նկարիչների (1970-80 թթ.) 493 աշխատանք, որոնց թվում՝ Ռուդոլֆ Խաչատրյանի, Վրույր Գալստյանի, Արմինե և Սարո Կալենցների, Անատոլի Գրիգորյանի, Վարուժան Վարդանյանի, Բայանդուր Աշոտի և այլոց գործեր, ովքեր նոր ասելիք էին ներմուծել հայ նկարչության մեջ:

Թանգարանը՝ իր նշանակությամբ Սյունիքում լինելով եզակի, գեղագիտական դաստիարակության այն կարևոր

Օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն Ալբերտ Ազարյանի հետ

օղակն է, որտեղ մարդը ոչ միայն տեսնում է, այլև մաքրվում հոգեպես:

Տարիների ընթացքում թանգարանում բազմաթիվ ցուցահանդեսներ, դասախոսություններ, հանդիպումներ են կազմակերպվել: Հազարավոր այցելուներ հիացել են թանգարանի ցուցադրություններով:

Մոտ չորս տասնամյակ Բորիկ Մինասյանը մեծ սեր ու նվիրում է ներդրել թանգարանում: Թվում է, թե ինչ մի դժվար բան է՝ բացել և փակել թանգարանի դուռը: Նա արվեստագետ նկարիչ է, հավաքածուի յուրաքանչյուր նկար ոչ միայն պահպանելու, այլ նաև ներկայացնելու մեծ պատասխանատվություն ունի: Հաղթահարելով բազում դժվարություններ, բյուրոկրատական խոչընդոտներ՝ պաշտպանեց թանգարանի նկատմամբ յուրաքանչյուր ոտնձգություն: Քանի անգամ փորձ արվեց նկարների հավաքածուն Երևան տեղափոխել, տարածքը բռնազավթել, բայց նա անդրդվելի էր, կռիվ տվեց և կարողացավ պահել...

Եկան ավելի բարենպաստ ժամանակներ: 2019 թ. թանգարանը վերանվանվեց «Կապանի արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի, և Բորիկ Մինասյանը շարունակեց ղեկավարել՝ որպես տնօրենի պաշտոնակատար:

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի ամենայն ուշադրության և հոգատարության շնորհիվ համայնքի ներդրման և սուբվենցիոն ծրագրերի աջակցությամբ փոխվեց թանգարանի արտաքին տեսքը՝ այն դարձավ ժամանակի ընկալումներին համահունչ:

Փոխվեցին նաև թանգարանի գործունեության շրջանակները: Հաճախակի կազմակերպվող ցուցահանդեսներին, հանդիպումներին կարելի է նկատել կապանյան արվեստասեր հասարակության ներկայությունը, որը վկայում է՝ այն սիրելի վայր է, այստեղ արվեստ է արարվում: Թանգարանում կարելի է ավելի հաճախ հանդիպել օտարերկրացի հյուրերի, զբոսաշրջիկների, Սյունիքի մարզի դպրոցականների: Եվ բոլորին դիմավորողն ու ճանապարհողը նորից ինքն է՝ Բորիկ Մինասյանը, միշտ ժպտադեմ, բարի, կամեցող, հայրենապաշտ ու հայրենատեր:

Եթե ավելացնենք, որ այս դժվարին ճանապարհին հասցրել է նաև քանդակել՝ մասնակցելով Ջերմուկ քաղաքում քանդակի հանրապետական սիմպոզիումին, որի արդյունքում իր գործերից մեկը՝ «Արցախուհին», տեղադրված է հենց մեր քաղաքի Սիրահարների այգում, «Ժառանգություն» քանդակը՝ Ջերմուկ քաղաքում, Քաջարան քաղաքում՝ զոհված ազատամարտիկների պանթեոնում տեղադրված խաչքարը, քաղաքային մանկական պատկերասրահում՝ «Մուսա» հարթաքանդակը:

Այս ամենի հետ փորձեր է արել պոեզիայում ու հրատարակել է «Ի սեր Աստծո» գիրքը, որը լույս է տեսել 1998 թ.:

Գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանի հետ

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հենրիկ Իգիթյանի հետ

ՀՀ նկարիչների միության անդամ է 1992 թվականից, ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Բորիկ Մինասյանն ունի երեք զավակ՝ որդի և երկու դուստր:

* * *

Բորիկ Մինասյանի նախաձեռնությամբ թանգարանում կազմակերպված նշանավոր ցուցահանդեսները

Տարիների ընթացքում թանգարանում կազմակերպվել են մշտական ցուցադրություններ, ինչպես և անհատական ու խմբակային ցուցահանդեսներ:

Ցուցահանդեսներից մի քանիսը...

2012-ին կազմակերպվեց կապանցի նկարիչների ցուցահանդեսը, որի արդյունքները հրատարակվեց առանձին գրքով: «Վորլդ Վիժն Հայաստան»-ի աջակցությամբ կազմակերպվեցին մանկական ցուցահանդեսներ, ինչպես և Ռոբերտ Կամոյանի անհատական ցուցահանդեսը:

2013-ին նորից կազմակերպվեց կապանցի նկարիչների ցուցահանդես՝ «Աշուն-2013» խորագրով:

Նույնը՝ 2014-ին:

2015 թ. ապրիլի 9-ին բացվեց ցուցահանդես «Հիշում եմ և պահանջում» խորագրով՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին:

Այդ տարում կազմակերպվեց նաև գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես:

2016 թ. սեպտեմբերի 21-ին բացվեց Նարեկ Մինասյանի անհատական ցուցահանդեսը:

2017-ին տեղի ունեցավ «Անհնարին ընտրության հնարավորությունը» խորագրով ցուցահանդեսը:

2018-ին նորից կազմակերպվեց գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես:

Այդ տարում բացվեցին նաև Սարգիս Մանգասարյանի գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը, ռուսաստանաբնակ գեղանկարիչ (կապանցի) Արմեն Գասպարյանի «Դանթեի աստվածային կատակերգությունը» խորագրով գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը: Նաև՝ ջերմուկցի Վարդան Ավետիսյանի գեղանկարների ցուցահանդեսը:

2019-ին կազմակերպվեց ֆոտոլրագրող Ռուբեն Մանգասարյանի լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսը:

Նույն տարում՝ կապանցի գեղանկարիչ Բաբկեն Գևորգյանի անհատական ցուցահանդեսը:

Եվ այսպես շարունակ...

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Մինասյան Սուսաննա Շմավոնի

Կապանի գրադարանային գործի երախտավորներից է:

Ծնվել է 1950 թ. սեպտեմբերի 2-ին մարզկենտրոնի Կավարտ գյուղում: Ավարտելով Կավարտի ութամյա դպրոցը՝ ուսումը շարունակել և կրթություն է ստացել Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1969-ին ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և հոգեբանություն» ֆակուլտետը՝ ավարտելով 1972 թվականին: 1972-1973 թթ. աշխատել է Ղափան քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզում՝ վարիչ:

1973-ին սովորել և գերազանցությամբ ավարտել է Անդրկովկասյան կոմերիտական դպրոցը:

1973-1981 թթ. աշխատել է ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմի քարտուղար:

1982-1997 թթ. Կապանի շրջանի գրադարանների կենտրոնացված համակարգի, իսկ 1997-2015 թվականներին՝ Սյունիքի մարզային գրադարանի տնօրենն էր:

2005 թ. Սյունիքի մարզային գրադարանը համագործակցել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան հետ և ստեղծել «Ամերիկյան անկյուն» տեղեկատվական կենտրոնը, որ գործում է մինչև այժմ:

Հայ մշակույթին և գրադարանային գործին մատուցած ծառայությունների, գրքի և ընթերցանության դերը կարևորելու գործում ունեցած ավանդի համար պարգևատրվել է հուշամեդալներով, պատվոգրերով, շնորհակալագրերով:

2006 թ. արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալի, 2010 թ.՝ «Ակսել Բակունց» հուշամեդալի, 2011 թ.՝ «Մովսես Խորենացի» մեդալի, 2015 թ.՝ ՀՀ Ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» մեդալի:

Սուսաննա Մինասյանն ունի չորս զավակ:

Գործընկերները՝ Սուսաննա Մինասյանի մասին

Սուսաննա Մինասյանին ճանաչում եմ մեր վաղ երիտասարդության տարիներից, երբ ընտրվեց կոմերիտմիության շրջկոմի դպրոցական երիտասարդության գծով քարտուղար, և շուրջ երկու տարի մենք կիսում էինք նույն աշխատասենյակը, համարյա նույն գրասեղանը և, որքան հիշում եմ, նույն ծառայողական հեռախոսահամարը: Այն տարիներն էին, երբ առանձնապես մեծ ոգևորությամբ չէին ընդունում երիտասարդ կադրերին, մանավանդ՝ իգական սեռի ներկայացուցիչներին, սակայն Սուսաննան իր աշխատասիրությամբ, գործին նվիրվածությամբ, քաղաքացիական պարտքի գիտակցությամբ վայելեց ժամանակի մտավորականների սերն ու հարգանքը, ինչը չէին կարող չնկատել շրջանի ղեկավար այրերը, և նա շուտով ընդունվեց կոմունիստական կուսակցության շարքերը:

Մեծ էր Սուսաննայի դերը Կապանի շրջանի պիոներական ճամբարների կազմակերպման գործում, որն իր աշխատանքի առանցքային ոլորտներից մեկն էր:

Իր շիտակությամբ, ընկերասիրությամբ ու ազնվությամբ, նպատակին հասնելու կամային որակներով, առանց չափազանցության, ուղեցույց էր շատ երիտասարդների համար, որոնցից ոմանց հետագա հաջողությունների մեջ, նրանց մարդ տեսակի ձևավորման գործում, իմ համոզմամբ, կա Սուսաննա Մինասյանի անուրանալի ներդրումը:

ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆ
Բանաստեղծ, թարգմանիչ

Գրադարանային համակարգում, նրա ղեկավարման ընթացքում, նկատելի աշխատանքներ կատարվեցին գրադարանային գործի բարելավման, նոր գրադարանների բացման, գրքային ֆոնդի համալրման, աշխատակիցների մասնագիտական որակների բարձրացման, ընթերցողների հետ կապի ամրապնդման ուղղությամբ:

Պատասխանատու անձնավորություն էր, հետաքրքրասեր: Անթերի էր կատարում իր պարտականությունները, գնահատում լավ աշխատանքը, շիտակ էր, ճշմարտախոս, ի սրտե ուրախանալ և տխրել գիտեր, ուներ նաև լսելու կարողություն: Այդ բոլոր հատկանիշներն օգնում էին աշխատանքները լավ կազմակերպելուն: 54 աշխատակցից բաղկացած, համախմբված, համերաշխ կոլեկտիվ էինք, որտեղ միմյանց հենարան լինելով՝ առաջ էինք մղում աշխատանքը: Հաճախ գրադարանները համալրվում էին նոր գրականությամբ, այդ թվում նաև՝ օտարալեզու: Կազմակերպվում էին գրքերի շնորհանդեսներ, քննարկումներ, այդ տարիներին չկային ինֆորմացիոն այսօրվա տարաբնույթ հարթակները, և գրադարանները հասարակության համար ոչ միայն տեղեկատվություն ստանալու միջոց էին, այլև՝ շփման, նոր ծանոթությունների, հաճելի ու գրագետ ժամանցի, ինքնակրթության վայրեր:

ՍԻԼՎԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Գրադարանների կենտրոնացված համակարգի
գրադարանային ֆոնդի համալրման և մշակման բաժնի վարիչ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Թադևոսյան Ռիտա Ռուբենի

Բժշկի մասին լավագույնը հաճախ ոչ թե «պաշտոնական» կենսագրությունն է պատմում, այլ՝ մարդկանց հիշողությունը:

Ռիտա Թադևոսյանի մասին խոսելիս առաջինը հիշում են նրա հոգատար վերաբերմունքը, պատասխանատվությունն ու անսահման նվիրումը մասնագիտությանը: Ավելի քան չորս տասնամյակ եղել է այն բժիշկը, ում վստահել են ամենաթանկը՝ երեխաների առողջությունը:

Այն բժիշկներից էր, ով չէր սահմանափակվում աշխատանքային ժամերով: Ցանկացած պահին շտապում էր հիվանդ երեխայի մոտ, անցնում քաղաքի թաղամասերով, այցելում հեռավոր գյուղեր՝ համոզված լինելով, որ բժշկի պարտականությունը չի սահմանափակվում հերթապահությամբ: Նրա համար բժշկությունը պարզապես մասնագիտություն չէր, այլ ապրելակերպ, պատասխանատվություն և մարդասիրության ամենօրյա դրսևորում:

Ռիտա Թադևոսյանը ծնվել է 1952 թվականի օգոստոսի 17-ին Քաջարանում՝ մանկավարժների ընտանիքում: Ծնողներն ամբողջ կյանքում եղել են նրա ամենամեծ հեղինակությունները: Ինչպես ինքն է ասում՝ մանկավարժների ընտանիքում մեծանալը սովորեցրել է պատասխանատվություն, աշխատասիրություն և ազնվություն:

Մանկությունից ամենավառ հիշողությունները կապված են հայրական տան, բակի, տատիկ-պապիկի և առաջին դպրոցական օրվա հետ: Այդ պարզ ու ջերմ հիշողություններն այսօր էլ նրա դեմքին ժպիտ են բերում:

1959 թվականին ընդունվել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1960 թվականին՝ ոսկե մեդալով: Դեռ դպրոցական տարիներից որոշել էր՝ պետք է բժիշկ դառնա: Այդ ընտրությունը պատահական չէր. մանկաբուժությունը նրան գրավել էր վաղուց, թեև ինքն էլ դժվարանում է բացատրել՝ ինչու: Պարզապես վստահ էր, որ իր ճանապարհը բժշկությունն է:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի մանկաբուժական ֆակուլտետը: Ուսանողական տարիները հիշում է որպես կյանքի ամենագեղեցիկ շրջաններից մեկը: Խմբի ավագն էր, ակտիվ մասնակցում էր ուսումնական և հասարակական կյանքին, իսկ համակուրսեցիների հետ ընկերական կապերը տարիներ շարունակ պահպանվել են:

Բուհն ավարտելուց հետո՝ 1975 թվականին, գործուղվել է Ղափանի շրջանային կենտրոնական հիվանդանոց, որտեղ աշխատանքի է անցել որպես տեղամասային մանկաբույժ: Իր առաջին աշխատանքային օրը՝ սեպտեմբերի 5-ը, մինչ օրս մանրամասն հիշում է. հիվանդանոցի շեմը նոր էր անցել, երբ արդեն բուժքրոջ հետ ուղարկում են կանչերի: Այդ օրն էլ դարձավ նրա երկար ու պատասխանատու մասնագիտական ուղու սկիզբը:

Տասնութ տարի աշխատեց տեղամա-

Մանկական կոնսուլտացիայի կազմը (1983 թ.)

սային մանկաբույժ՝ այցելելով հարյուրավոր ընտանիքներ, ճանաչելով քաղաքի յուրաքանչյուր թաղամաս ու գյուղական բնակավայրերը: Այդ տարիներն այսօր էլ հիշում է առանձնահատուկ սիրով:

1976 թվականին նշանակվեց շրջանային մանկաբույժ: Նոր պարտականությունները նրան տարան նաև Սյունիքի գյուղեր, որտեղ վերահսկում էր մանկական առողջապահական ծառայությունը: Երբեմն ճանապարհ էր ընկնում հասարակական տրանսպորտով, քանի որ ծառայողական մեքենա միշտ չէր տրամադրվում, սակայն դա երբեք չի խանգարել կատարել իր աշխատանքը:

1993 թվականին նշանակվեց մանկական կոնսուլտացիայի վարիչ:

Առողջապահական համակարգի բարեփոխումների արդյունքում 1997 թվականին ստեղծվեց «Կապանի մանկական պոլիկլինիկա» պետական ձեռնարկությունը, որի տնօրեն նշանակվեց Ռիտա Թադևոսյանը:

2002 թվականի ապրիլի 8-ին, մանկական և մեծահասակների պոլիկլինիկաների միավորումից հետո, նշանակվեց մանկական ծառայության ղեկավար և իմունիզացիայի պատասխանատու՝ շարունակելով համակարգել մարզի մանկական առողջապահական ծառայությունը:

2015 թ. սեպտեմբերի 29-ին աշխատանքի ընդունվեց ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Սյունիքի մասնաճյուղ, որտեղ շուրջ երեք տարի ղեկավարեց մարզի պատվաստումների կազմակերպման գործընթացը:

Առողջապահության համակարգում երկարամյա և բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրվել է ՀՀ առողջապահության նախարարության պատվոգրով:

Իր կարծիքով լավ մանկաբույժի ամենակարևոր հատկանիշը ոչ միայն գիտելիքն է, այլ աշխատանքի հանդեպ սերը: **«Եթե բժիշկը չի սիրում իր գործը, երբեք լավ մասնագետ չի դառնա»**, - ասում է նա: Այդ համոզմունքն է ուղեկցել իրեն ամբողջ մասնագիտական կյանքի ընթացքում:

Այսօր Ռիտա Թադևոսյանը վաստակած հանգստի է անցել: Ազատ ժամանակը նվիրում է դասական երաժշտությանը, ընթերցանությանը և պոեզիային՝ այն արժեքներին, որոնք, ինչպես իր մասնագիտությունը, միշտ ուղեկցել են նրան:

Իր երկու զավակին փոխանցել է այն սկզբունքները, որոնցով ինքն է մեծացել՝ ազնվություն, պատասխանատվություն, պարտաճանաչություն և աշխատասիրություն՝ համոզված լինելով, որ դրանք մարդու ամենամեծ հարստությունն են:

Երբ խնդրում են մի քանի բառով բնութագրել իրեն, երկար չի մտածում. «Ճշտապահ, պատասխանատու, բարի և հնարավորինս աջակցող»: Այդ համեստ ինքնաբնութագրի մեջ, թերևս, ամփոփված է նրա ամբողջ կյանքը:

//

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Հարությունյան Ռաֆիկ Արտեմի

«Մեդալների մասին երբեք չեմ մտածել: Ինձ համար ամենակարևորն այն էր, որ հնարավորություններիս սահմաններում կարողանայի մարդ փրկել». այս խոսքերն ամբողջական բնութագրում են Ռաֆիկ Հարությունյանի կյանքն ու գործունեությունը, ով ավելի քան չորս տասնամյակ իր մասնագիտական գիտելիքներն ու մարդկային նվիրումը ծառայեցրել է հայրենակիցների առողջության պահպանմանը:

Ծնվել է 1949 թ. հոկտեմբերի 1-ին Ղափանի շրջանի Եղվարդ գյուղում՝ բազմանդամ ընտանիքում: Մանկությունն անցել է գյուղում. ընտանիքի յուրաքանչյուր անդամ, անկախ տարիքից, իր բաժին աշխատանքն ուներ: Դաշտային աշխատանքները, անասնապահությունը, մեծերի կողքին աշխատելու սովորությունը վաղ տարիքից ձևավորել են պատասխանատվության զգացում, աշխատասիրություն ու մարդկանց նկատմամբ հարգանք:

Մանկության տարիները հիշելիս առաջին հերթին խոսում է մարդկանց համախմբվածության մասին: Նրա խոսքով՝ այն ժամանակ գյուղում բոլորը միմյանց կողքի էին՝ թե ուրախության, թե դժբախտության պահերին: Տոները նշվում էին ամբողջ գյուղով, մարդիկ կիսում էին իրենց ունեցածը, իսկ փոխադարձ օգնությունն այդ ամենի մի մասն էր: Հենց այդ միջավայրում էլ ձևավորվել են նրա մարդկային արժեքները:



Թեև երիտասարդ տարիներին երազել էր այլ մասնագիտության մասին, կյանքի հանգամանքները նրան տարան բժշկության ճանապարհով: Ավարտելով Ղափանի բժշկական ուսումնարանի ֆելդշերական բաժինը՝ դեռ ավարտական քննություններից առաջ գործուղվեց Մեղրու կենտրոնական հիվանդանոց: Այնտեղ ուներ հատուկ օրագիր, որտեղ գրանցում էր յուրաքանչյուր սրսկում, վիրահատության մասնակցություն և հիվանդների խնամքի հետ կապված այլ մանրամասներ: Այդ սովորությունը խոսում է ոչ միայն կարգապահության, այլև մասնագիտության հանդեպ պատասխանատու վերաբերմունքի մասին:

1972 թվականին գերազանց գնահատականներով ավարտելով ուսումնարանը՝ աշխատանքի անցավ Քաջարանի հիվանդանոցում, ապա դարձավ Քաջարանի պրոֆտեխնիկական ուսումնարանի բուժկետի վարիչ: Չհրաժարվելով բարձրագույն կրթություն ստանալու մտքից՝ աշխատեց նաև հակաժանտախտային ծառայությունում՝ հույս ունենալով հնարավորինս շուտ անհրաժեշտ մասնագիտական ստաժ ձեռք բերել: Սակայն կյանքի ճանապարհը նրան տարավ մեկ այլ ուղղությամբ:

1976 թվականին գործուղվեց Երևանի Ֆանարջյանի անվան ռենտգեն ինստիտուտ՝ վերապատրաստման, որտեղ կարճ ժամանակում յուրացրեց ռենտգեն-տեխնիկի մասնագիտությունը: Նրան նույնիսկ առաջարկեցին մնալ Երևանում, սակայն հրաժարվեց: Նախընտրեց վե-

ռադառնալ հայրենի Ղափան, որտեղ իր կարիքն ավելի շատ էր զգացվում: Հետագա տարիներին աշխատեց Ղափանի պոլիկլինիկայի, ապա Կապանի շրջանային կենտրոնական հիվանդանոցի ռենտգեն կաբինետներում՝ մինչև 2017 թվականին վաստակած հանգստի անցնելը:

Նրա մասնագիտական կյանքի ամենածանր շրջանը հայ-ադրբեջանական հակամարտության տարիներն էին: Սահմանամերձ Կապանում հիվանդանոցը հաճախ աշխատում էր արտակարգ ռեժիմով: Գրեթե ամեն օր բերում էին վիրավորներ, երբեմն՝ նաև զոհվածներ: Գիշերները մնում էր հիվանդանոցում, քանի որ ցանկացած պահի կարող էին նոր վիրավորներ տեղափոխվել:

Պատմում է, որ այդ օրերին երբեմն նույնիսկ հաց ուտելու ժամանակ չէր լինում: Ռենտգենի մեկ նկարից կախված էր վիրահատության ընթացքը, բժշկի որոշումը, երբեմն էլ՝ մարդու կյանքը: Առաջին օգնությունից մինչև վիրավորների հետագա հետազոտությունները կատարվում էին հաջորդաբար, առանց հանգստի:

Այդ ծանր օրերին երբեք մտքով չի անցել թողնել աշխատանքը կամ հեռանալ հայրենիքից, թեև այդ հնարավորությունն ուներ: Նրա եղբայրները Ռուսաստանում էին, ապահով աշխատանք ու տուն ունեին, և կարող էին նրան էլ ընդունել իրենց մոտ: Սակայն համոզված էր, որ չի կարող լքել իր ժողովրդին այն պահին, երբ իր մասնագիտական գիտելիքներն ամենից շատ էին անհրաժեշտ: **«Եթե իմ կարիքն այստեղ էր, ինչպե՞ս կարող էի թողնել մարդկանց ու գնալ ավելի հանգիստ կյանք փնտրելու»,** – ասում է նա:

Իր գործունեության համար արժանացել է բազմաթիվ շնորհակալագրերի, պատվոգրերի և «Հովհաննես Բաղրամյան» մեդալի: Սակայն, խոստովանում է, երբեք չի աշխատել պարգևների համար: Իր ամենամեծ ձեռքբերումը համարում է մարդկանց վստահությունն ու այն հարգանքը, որ տարիների ընթացքում վաստակել է հիվանդների և գործընկերների շրջանում:

Այսօր, լինելով թոշակառու, շարունակում է ակտիվ կյանք վարել: Նրա տան գրադարանը հարուստ է հայ և համաշխարհային գրականությամբ: Ազատ ժամանակը նվիրում է ընթերցանությանը, ձկնորսությանը, իսկ երիտասարդ բուժաշխատողներին խորհուրդ է տալիս ամենից առաջ ազնվորեն կատարել իրենց պարտականությունը, չմտածել անձնական շահի, այլ՝ դիմացինին օգնելու մասին:

Տասնամյակներ շարունակ սպիտակ խալաթով անցած նրա ճանապարհը փաստում է, որ բժշկությունը միայն մասնագիտություն չէ: Դա ծառայություն է մարդուն, հայրենիքին և կյանքին: Իսկ անցած ճանապարհի գլխավոր արժեքը ոչ թե ստացած մեդալներն են, այլ այն բազմաթիվ մարդիկ, որոնց կյանքում դժվարին պահին եղել է հույսի և փրկության խորհրդանիշ:

ԻՋԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Ղահրամանյան Սոս Ժորայի

Վնասվածքաբան Սոս Ղահրամանյանի հետ զրուցելիս, երբ իր անցած ուղու մասին է պատմում, հաճախ մտաբերում է հայ-ադրբեջանական հակամարտության տարիները (1992-1994 թթ.):

Հիայտարարված պատերազմն ուղղումներ մտցրեց նաև բժիշկների աշխատանքում: Կապանի մոտակա բարձունքներից հրետակոծվում էին մեր քաղաքը և շրջակա գյուղերը: 1993-ի ամռանը թշնամու ռազմական կործանիչները ռումբեր նետեցին Կապանի վրա: Վիրավորների պակաս չկար, վիրաբույժներն էլ քիթ սրբելու ժամանակ չունեին:

«Երբ օդային տագնապ էր հայտարարվում, մարդիկ ապաստարան էին շտապում, իսկ բժիշկները՝ վիրահատարան,– պատերազմական ժամանակներն է վերհիշում և հետո հավելում,– **կարևորն այն էր, որ կյանքեր ենք փրկել, բայց ի՞նչ գնով, երբեմն վիրավորին վիրահատելիս հրետակոծություն էր սկսվում, և օդային ալիքից վիրահատարանի պատուհանի շրջանակը հայտնվում էր կողքիդ»:**

Ծնվել է 1952 թվականի նոյեմբերի 13-ին Ղափանում:

Բժշկի մասնագիտությունն ընտրել էր՝ քիմիա և կենսաբանություն առարկաների հանդեպ մեծ հետաքրքրություն ու սեր ունենալով:

Միջնակարգ կրթություն ստանալուց հետո (Ղափանի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի շրջանավարտ է) ընդունվեց Երևանի պետական բժշկական ինստիտուտ: Հմտացավ մանկաբուժության մեջ:

Բուհն ավարտելուց հետո՝ 1977-ից, սկսեց աշխատել Ղափանի շրջանային կենտրոնական հիվանդանոցում՝ մանկաբույժ:

1982-ին շարունակել է գործունեությունը որպես վնասվածքաբան՝ համապատասխան դասընթացներ անցնելուց հետո:

Այս համատեքստում հիշում է Նիկոլայ Աղախանյանին (Կապանի հիվանդանոցի գլխավոր բժիշկ), ով, ի դեպ, Կապանում երկու անգամ է աշխատել՝ 1979-81 և 90-ական թվականներին:

Նիկոլայ Վարոսիչին հիշում և գնահատում է որպես ուսուցիչ, ումից շատ բան է սովորել:

Ընդգծված հարգանքով է հիշում ուրոլոգ Ռոբերտ Քարամյանին: Հենց նրա հանդեպ հարգանքով պայմանավորված՝ ցանկանում էր ընտրել ուրոլոգի մասնագիտությունը, բայց վնասվածքաբանությունն ավելի հոգեհարազատ դուրս եկավ:

1988-90 թթ. աշխատեց որպես դատաբժշկական փորձագետ, իսկ 1991-ին՝ գլխավոր բժիշկ Նիկոլայ Աղախանյանի հրամանով, նշանակվեց գլխավոր բժշկի տեղակալ՝ ռազմադաշտային բժշկության գծով: Վնասվածքաբանության բաժինը

հիվանդանոցի առաջին հարկում էր, հրետակոծությունից հետո այդտեղ էին բերում վիրավորներին, որոնց անհապաղ օգնություն պիտի ցույց տրվեր:

Մանրամասներ է ներկայացնում ռազմադաշտային վիրաբուժության մասին. **«Նախ պիտի օգնես թեթև վիրավորված հիվանդին, հետո՝ ծանրին: Եթե ծանրով ես զբաղվում, թեթև վիրավորի վիճակը կարող է ծանրանալ: Երկուսին էլ կկորցնես: Բայց եթե սկզբում թեթևին ես օգնում, նրան փրկում ես: Ծանրին կարող է փրկես կամ չփրկես, բայց ահա թեթևին փրկում ես»:**

Խոսում է նաև իր մասնագիտության նրբությունների մասին. **«Յուրաքանչյուր ոսկոր մի ձևով է կոտրվում, պիտի իմանաս, թե ինչ ձևով ես ուղղում: Մանավանդ մեր օրերում վնասվածքաբանությունն անչափ արագ է զարգանում: Երեք տարի առաջ կիրառվող մեթոդն այժմ արդեն հնացել է, նոր մեթոդով պիտի աշխատես»:**

Զրուցակիցս չի զլանում թվարկել իր գործընկերների անունները՝ Էմիլ Մարտիրոսյան, Էլման Ամիրյան, Աշոտ Պետրոսյան, Ռոբերտ Քարամյան, Արկադիա Վարդանյան և ուրիշներ:

Նրա ռազմաբժշկական գործունեությունը գնահատվել է «Դրաստամատ Կանայան» մեդալով: Ընդհանրապես շատ անգամ է խրախուսվել:

1996 թվականից մինչև 1999 թվականը Սոս Ղահրամանյանը Սիսիանի շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկն էր: Եվ իր ողջ եռանդն ուղղեց այդ բուժհաստատությունը ոտքի կանգնեցնելուն: Վերաբացված հիվանդանոցին նվիրված հանդիսավոր արարողության ժամանակ Սյունիքի այն ժամանակվա մարզպետ Սուրեն Աբրահամյանը կես-լուրջ, կես-կատակ ասաց. **«Չորս աստղանի հիվանդանոց ես սարքել»**:

1999 թ. սկզբից նորաբաց առողջապահական գործակալության տնօրենն էր, և Կապանում ընտանեկան բժշկի գրասենյակների բացումը մեծապես կապված է նրա անվան հետ:

Այնուհետև Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետն էր, հետո՝ Կապանի պոլիկլինիկայի տնօրեն (2002-2007 թթ.):

2007-ից Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի խորհրդականն էր:

Վաստակած հանգստի է անցել 2016 թվականին:

Սոս Ղահրամանյանն ամուսնացել է 1989 թվականին՝ ունի երկու զավակ:

Հպարտություն է ապրում (թեպետ այդ մասին չի ակնարկում), որ որդիները գնացել են իր հետքերով: Ավագը՝ Գևորգը, Երևանում ճանաչված ակնաբույժ է, մասնագիտական վերապատրաստումներ է անցել արտերկրում: Կրտսերը՝ Արմենը, Քաջարանի բժշկական կենտրոնի տնօրենն է: Գոհ է այնքանով, որ որդիներն իրեն նայելով՝ ինչ-որ բան են սովորել՝ իրենց նախընտրած մասնագիտության մեջ առաջադիմում են և ճանաչված մասնագետներ են:

Մարդկային արժանիքներից առավել գնահատում է համեստությունը, այնուհետև ճշմարտությունը: Իր կյանքի ճանապարհին հետևել է այդ արժեքներին, դարձրել իր գործունեության նշանաբան:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Ջհանգիրյան Լարիսա Սերբյայի

Մանկաբույժ Լարիսա Ջհանգիրյանը, ում համար բժշկությունը երբեք պարզապես մասնագիտություն չի եղել, այլ՝ կյանքի ուղի, որը սկսվել է վաղ մանկությունից ու շարունակվել է գրեթե հիսուն տարի:

Ծնվել է 1952 թվականի հունվարի 5-ին Ղափանում:

1957-1968 թվականներին սովորել է Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Դեռ դպրոցական տարիներից արդեն հստակ ուրվագծում էր իր ապագան: Երբ շրջապատում հարցնում էին, թե ի՞նչ մասնագիտություն է ընտրելու, առանց վարանելու պատասխանում էր՝ մանկաբույժ:

Այդ որոշումը երբեք չի փոխվել: 1970 թվականին ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի մանկաբուժական ֆակուլտետը: Նրա խոսքով՝ երեք տարի շարունակ դիմել է միայն այդ ֆակուլտետ (կոնկուրսի պատճառով)՝ չմտածելով որևէ այլ մասնագիտության մասին: 1976 թվականին ավարտել է ինստիտուտը՝ ստանալով մանկաբույժի որակավորում, վերադարձել հայրենի քաղաք:

Հենց աշխատանքի առաջին օրը բժշկական առօրյան նրան կանգնեցրեց լուրջ փորձության առաջ: 1976 թ. օգոստոսի 4-ին՝ աշխատանքի ընդունվելու նույն գիշերը, հերթապահության ընթացքում մանկական բաժանմունք ընդունվեցին բարձր ջերմությամբ՝ ցնցումներով չորս երեխա: Երիտասարդ բժշկուհու համար դա առաջին մեծ «քննությունն» էր: Գիշերը հաջողությամբ ավարտվեց, բոլոր երեխաները փրկվեցին, իսկ առավոտյան փորձառու բուժքույրի խոսքերը՝ «Դու իսկական մանկաբույժ ես», դարձան վստահության առաջին արտահայտությունը-մասնագիտական ճանապարհին:

1976-1992 թվականներին Լարիսա Ջհանգիրյանն աշխատել է Ղափանի բուժմիավորումում՝ տեղամասային մանկաբույժ: Այնուհետև՝ 1992-2018 թվականներին, Կապանի շրջանային հիվանդանոցի մանկական բաժանմունքի վարիչն էր, ով միավորել է բժիշկներին ու բուժքույրերին մեկ կարևոր գաղափարի շուրջ՝ յուրաքանչյուր բուժառուի վերաբերվել ինչպես սեփական երեխայի, հետո միայն՝ որպես հիվանդի:

Նրա համոզմամբ՝ լավ մանկաբույժ դառնալու առաջին նախապայմանը ոչ թե գիտելիքն է, այլ սերը. **«Եթե մանկաբույժը չի սիրում երեխային և չի սիրում իր մասնագիտությունը, չի կարող լավ մանկաբույժ լինել»:**

Իհարկե, այդ սիրուն պետք է գումարվեն պատասխանատվությունը, մասնագիտական պատրաստվածությունը և ծնողների հետ ճիշտ հաղորդակցվելու կարողությունը: Մանկաբույժը, նրա խոս-

քով, բուժում է ոչ միայն երեխային, այլև հանգստացնում է ամբողջ ընտանիքին:

Բաժանմունքի վարիչ լինելու տարիներին Լարիսա Ջհանգիրյանը կարևորել է թիմային աշխատանքը: Երբեք տարբերություն չի դրել բժիշկների, բուժքույրերի կամ սանիտարների միջև՝ համոզված լինելով, որ երեխաների առողջացման գործում յուրաքանչյուրն ունի իր անփոխարինելի դերը: Բուժքույրերին սովորեցրել է ոչ միայն ճիշտ կատարել բժշկական միջամտությունները, այլև երեխայի հետ խոսել, խաղալ, ժպտալ, որպեսզի բուժումն ավելի քիչ վախեցնի փոքրիկներին:

Երկարամյա աշխատանքային փորձից չի առանձնացնում մեկ կոնկրետ դեպք: Փոխարենը հիշում է այն զգացողությունը, որը կրկնվել է հարյուրավոր անգամ՝ **«Երբ ծանր վիճակում ընդունված երեխան մեկ-երկու օր հետո ժպտում է քեզ, դա բժշկի ամենամեծ երջանկությունն է»:**

Նրա աշխատանքի գնահատականը տրվել է նաև պետական մակարդակով: 2011 թվականին Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից պարգևատրվել է «Մխիթար Հերացի» մեդալով: Նույն թվականին, Կապանի օրվա առթիվ, արժանացել է նաև ոսկե հուշամեդալի: Սակայն, ինչպես ինքն է նշում, այդ պարգևներն առաջին հերթին մեծացրել են պատասխանատվության զգացումը:

Դրանից հետո առավել պարտաճանաչ է մասնակցել վերապատրաստումների, մշտապես կատարելագործել մասնագիտական գիտելիքները և փորձել արդարացնել իր նկատմամբ ցուցաբերված վստահությունը:

2018-2025 թվականներին Լարիսա Ջհանգիրյանը շարունակել է աշխատել Կապանի հիվանդանոցում՝ որպես մանկաբույժ՝ մնալով նույնքան նվիրված իր մասնագիտությանը, որքան առաջին աշխատանքային օրը:

Բժշկի մասնագիտությունը հաճախ պահանջում է զոհաբերել անձնական կյանքը, սակայն այդ ճանապարհին միշտ ունեցել է ընտանիքի աջակցությունը: Ամուսինը, երեխաները, ընտանիքի անդամները հասկացել են, որ հիվանդանոցում իրեն սպասող յուրաքանչյուր երեխա ևս իր պատասխանատվության ներքո է: Այդ փոխըմբռնման շնորհիվ հաջողվել է համատեղել մասնագիտական գործունեությունն ու ընտանեկան կյանքը:

Լարիսա Ջհանգիրյանն ունի երեք զավակ՝ երկու որդի և մեկ դուստր: Դուստրը նույնպես ընտրել է բժշկի մասնագիտությունը, ավարտել է բժշկական համալսարանը, աշխատել Կապանում՝ էնդոկրինոլոգ, ապա շարունակել մասնագիտական ճանապարհը Միացյալ Նահանգներում: Իր երեխաներին փորձել է դաստիարակել արդարության, մարդասիրության, պատասխանատվության և աշխատանքի հանդեպ նվիրվածության ոգով:

Իր մասին խոսելիս Լարիսա Ջհանգիրյանը բարձրագոչ բառեր չի օգտագործում: Իրեն բնութագրում է որպես պատասխանատու մարդ՝ ընտանիքի, աշխատանքի և մարդկանց նկատմամբ: Հավանաբար հենց այդ զգացողությունն է եղել նրա երկարամյա գործունեության ամենաուժեղ հենարանը:

ԻՋԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Ջհանգիրյան Ֆլորիդա Միքայելի

Կան մարդիկ, որոնց կյանքն ու գործունեությունը դուրս են գալիս անձնական սահմաններից և դառնում մի ամբողջ քաղաքի ու ժամանակի կենսագրության մաս: Իրենց նվիրումով և գործունեությամբ նրանք թողնում են այնպիսի հետք, որը տարիների ընթացքում վերածվում է մնայուն արժեքի: Այդ մարդկանցից է բժշկուհի Ֆլորիդա Միքայելի Ջհանգիրյանը՝ Կապանի առողջապահության համակարգի նվիրյալ ներկայացուցիչներից մեկը, ում անունը կապանցիների հիշողության մեջ ապրում է երախտագիտության և խորին հարգանքի ուղեկցությամբ:

Ֆլորիդա Ջհանգիրյանը ծնվել է 1939 թվականի մարտի 13-ին Լենինաքեր բանավանում՝ լեռնային ինժեների ընտանիքում: Նրա մանկությունն անցել է համերաշխ, կիրթ և ինտելիգենտ միջավայրում, որտեղ առաջնային արժեքներ էին աշխատասիրությունը, կրթությունն ու մարդասիրությունը: Նա խոստովանում է, որ հենց ընտանիքն է ձևավորել իր բնավորության ամենակարևոր գծերը՝ պատասխանատվությունը, մարդկանց նկատմամբ հարգանքը և նվիրվածությունը:

Սկզբնական կրթությունը ստացել է Լենինաքերի միջնակարգ դպրոցում, ապա ուսումը շարունակել Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ:

Դեռ պատանեկության տարիներին նրա առջև հստակ էր կյանքի ճանապարհը. պետք է բժիշկ դառնար:

1958 թվականին ընդունվել է Երևանի պետական բժշկական ինստիտուտ, 1964 թվականին ավարտելով այն՝ վերադարձել է հայրենի Ղափան:

Նրա համար բժշկությունը երբեք պարզապես մասնագիտություն չի եղել: Դա կոչում է, մարդու հանդեպ պատասխանատվություն, ամենօրյա ծառայություն:

Աշխատանքային ուղին սկսել է որպես տեղամասային թերապևտ՝ անմիջապես արժանանալով հիվանդների վստահությանը: Սիրում էր իր մասնագիտությունը, մշտապես զբաղվում ինքնակրթությամբ, ձգտում կատարելագործվել: Բազմիցս վերապատրաստվել է Երևանի, Մոսկվայի և Լենինգրադի առաջատար բժշկական կենտրոններում՝ յուրացնելով ժամանակի նորագույն գիտելիքներն ու փորձը:

Մասնագիտական բարձր պատրաստվածությունը, կազմակերպչական կարողություններն ու մարդկային վերաբերմունքը նրան բերեցին նոր պատասխանատու պաշտոնների: 1970 թվականին նշանակվեց Ղափանի պոլիկլինիկայի թերապևտիկ բաժանմունքի վարիչ, 1976 թվականին՝ Ղափանի հիվանդանոցի ստացիոնար թերապևտիկ բաժանմունքի վարիչ: 1978 թվականից ղեկավարել է բժշկասոցիալական փորձագիտական հանձնաժողովը՝ իր պատասխանատվության ներքո ունենալով Այունիքի բոլոր շրջանները՝ Ղափան, Մեղրի, Սիսիան և Գորիս: Իսկ 1985 թվականին նշանակվել է Ղափանի շրջանի բուժմիավորման գլխավոր բժիշկ:

Նրա ղեկավարման տարիները համընկան Ղափանի առողջապահության զարգացման կարևոր շրջանի հետ: Ավարտվեց թերապևտիկ կորպուսի շինարարությունը, այն ամբողջությամբ կա-

Ղափանի հիվանդանոցի կոլեկտիվի հետ

հավորվեց նոր սարքավորումներով, սակայն ամենից առավել նա կարևորում էր մարդկանց՝ իր գործընկերներին:

Հիշելով այդ տարիները՝ ասում է, որ բժշկությունը թիմային աշխատանք էր: Եթե որևէ ծանր հիվանդ էր լինում, բոլորը միասին էին պայքարում նրա կյանքի համար: Այդ համախմբվածությունը, մասնագիտական ազնվությունն ու փոխադարձ հարգանքը նրա համար բժշկի կոչման անբաժանելի մասն էին:

Ֆլորիդա Ջհանգիրյանը խորին երախտագիտությամբ է հիշում այն բժիշկներին, որոնց ճանաչել է՝ Իլյա Ապետովիչ Հովսեփյանին, Իգոր Տատկալոյին, Ավդալբեկյանին: Նրանց մեջ տեսել է ոչ միայն իրենց գործին փայլուն տիրապետող մասնագետներ, այլև բարձր մարդկային արժանիքներ կրող անհատներ, որոնց հոգատարությունը, նվիրվածությունն ու կենսակերպը դարձել են իր և իր սերնդակիցների համար իսկական դպրոց: Պատահական չէ, որ իրենց բնակելի շենքի մի քանի երիտասարդներ ընտրել են բժշկի մասնագիտությունը՝ ոգեշնչվելով այդ մարդկանց աշխատանքով ու օրինակով:

Տիկին Ֆլորիդան իր մասին խոսելիս առանձնապես չի սիրում գնահատականներ տալ: «Ես իմ մասին ոչինչ չեմ կարող ասել, ուրիշները պետք է ասեն», - համեստորեն նշում է նա: Սակայն կյանքի ճանապարհին հետադարձ հայացք նետելով՝ խոստովանում է, որ գոհ է իր ապրած կյանքից և կատարած գործից: Իր համար ամենամեծ գնահատականը մարդկանց կողքին լինելու գիտակցությունն է:

Տարիների ընթացքում, անկախ զբաղեցրած պաշտոններից և ընտանեկան պարտականություններից, մշտապես պատրաստ է եղել օգնելու յուրաքանչյուրին՝ հարևան, անծանոթ, հիվանդ, ով իր կարիքն է ունեցել՝ անկախ ժամից ու իրավիճակից: «Միշտ եղել եմ իմ ժողովրդի կողքին», - ասում է նա, և այս պարզ նախադասության մեջ ամփոփված է նրա մարդկային ու մասնագիտական ողջ էությունը:

Սակայն նրա դիմանկարն ամբողջական չէր լինի, եթե խոսեինք միայն կարիերայից: Ֆլորիդա Ջհանգիրյանը նախևառաջ բացառիկ մարդ է՝ ջերմ, զգայուն, մեծ սրտով: Իր մանկության հիշողությունները պատմելիս նրա աչքերը լցվում են: Հիշում է, թե ինչպես մի անգամ իրենց տուն էին բերել փոքրիկ եղևնի: Մայրը զարդարել էր այն, երեխաներով ուրախացել էին: Բայց հայրը, գալով տուն, տեսնելով եղևնին, այն տարել էր բակ և ասել. «Մեր հարևանի երեխաներն ինչո՞վ են մեղավոր, որ իրենց հայրը չկա»: Այդ փոքրիկ դրվագը դարձավ կյանքի դաս՝ ուրիշի ցավը հասկանալու, կարեկցանքի և մարդկային արժանապատվության մասին: Թերևս հենց այդպիսի ընտանիքում

էլ պետք է ծնվեր ապագա բժիշկը:

Նրա անձնական կյանքը ևս գեղեցիկ ու ներդաշնակ պատմություն է: 1969 թվականին ամուսնացել է Ռոման Ստեփանյանի հետ՝ ֆիզիկայի հրաշալի մասնագետ, լայն մտահորիզոնով, մեծ հումորով և ինտելեկտուալ մարդ: Ամուսնու մասին խոսելիս նրա ձայնը մեղմանում է, դեմքը լուսավորվում: Տարիները չեն նվազեցրել այդ սերն ու հարգանքը: Ընդհակառակը՝ հիշողություններն ավելի են թանկացել:

Վերջերս նշելով ամուսնու ինսուլնամյակը՝ տիկին Ֆլորիդան առավոտից սեղան էր պատրաստել ամուսնու աշակերտների համար: Նրանք արդեն կայացած մարդիկ են, բայց գնացել էին շնորհակալություն հայտնելու իրենց ուսուցչին. «Այդ օրը հնչած ջերմ խոսքերը դարձան ապրած կյանքի լավագույն գնահատականներից մեկը», - հիշում է տիկին Ֆլորիդան:

Նրանք ստեղծել են գեղեցիկ ընտանիք, մեծացրել երկու զավակ՝ դուստր և որդի, որոնցով հպարտանում է: Ֆլորիդա Ջհանգիրյանն ասում է, որ երեխաները ժառանգել են ծնողների աշխատասիրությունն ու մարդկային լավագույն հատկանիշները՝ բարություն, պատասխանատվություն ու մարդկանց նկատմամբ հարգանք: Հատկանշական է, որ դուստրը շարունակել է մոր ճանապարհը՝ ընտրելով բժշկի մասնագիտությունը:

Նրա մասնագիտական նվիրվածությունը լավագույնս բնորոշում է մի դիպված, որը տարիներ անց էլ հիշում է ժպիտով: Դեկտեմբերի 31-ի երեկոն էր: Ընտանիքը պատրաստվում էր դիմավորել Նոր տարին, երբ ուշ ժամի ինչ-որ մեկը թակեց դուռը: Հիվանդներից մեկի վիճակը վատացել էր և եկել էին օգնություն խնդրելու: Ամուսինը՝ Ռ. Ստեփանյանը, բացեց դուռը, նայեց կնոջը և կարծես վաղուց ճանաչելով նրա էությունը՝ ասաց. «Ի՞նչ ես նայում, գնա, քեզ են կանչում»: Տիկին Ֆլորիդան անմիջապես գնաց հիվանդի մոտ, օգնեց և միայն հետո վերադարձավ տուն՝ շարունակելու ընտանեկան տոնը: Այս դրվագը խոսում է ոչ միայն բժշկի անսահման պատասխանատվության, այլև այն ըմբռնման ու աջակցության մասին, որ ունեցել է ընտանիքում:

Թոշակի անցնելուց հետո էլ չի հեռացել մարդկանցից: Շարունակել է աշխատել որպես բուժող բժիշկ և թերապևտ՝ մինչև 2004 թվականը: 40 տարի աշխատել է միայն Կապանում: Իր խոսքերով՝ ո՛չ պատերազմը, ո՛չ որևէ այլ հանգամանք իրեն չեն հեռացրել հայրենի քաղաքից: Մնացել է այստեղ՝ սիրելով իր ժողովրդին, հարգելով մարդկանց և ծառայելով նրանց:

Հետագա տարիներին ընտանիքի հետ որոշ ժամանակ ապրել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ աջակցելով բժշկի մասնագիտությունն ընտրած դստերը՝ օգնելով մեծացնել թոռներին: Սակայն որտեղ էլ գտնվել է, նրա սիրտը մշտապես կապված է եղել Կապանի հետ՝ այն քաղաքի, որի հետ անքակտելիորեն միահյուսվել են իր կյանքի ամենակարևոր տարիները:

Պատերազմի և հետպատերազմյան դժվար տարիների մանկությունն էլ իր հետքն է թողել նրա բնավորության վրա: Այդ տարիներին նույնիսկ ամենափոքր ուրախությունները մեծ նշանակություն ունեին: Սակայն, հիշելով այդ շրջանը, նա առաջին հերթին երախտագիտությամբ է խոսում ծնողների մասին, որոնք ամեն ինչ արել են, որպեսզի երեխաներն ապրեն արժանապատիվ և բարեկեցիկ կյանքով: Նույնպիսի երախտագիտությամբ է հիշում նաև իր ուսուցիչներին՝ թե Լենհանքերի, թե Ղափանի թիվ 2 դպրոցի մանկավարժներին, որոնց տված կրթությունն ու մարդկային դասերը կարևոր դեր են ունեցել իր կայացման ճանապարհին:

Հետհայացք գցելով ապրած ճանապարհին՝ տիկին Ֆլորիդան ասում է, որ իրեն երջանիկ մարդ է համարում: Նրա կյանքն ու գործունեությունը բժշկին բնորոշ նվիրումի, ազնվության, բարձր մարդկայնության և հայրենի քաղաքին անձնուրաց ծառայության վառ օրինակ են:

Այդպիսի մարդիկ չեն հեռանում: Նրանք շարունակում են ապրել մարդկանց հիշողություններում, որը տարիները չեն կարող մարել:

ԻԶԱ ԱՍԾԱՏՐՅԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Դանիելյան Սամվել Դանիելի

Սամվել Դանիելյանի դերը նշանակալի է մարզկենտրոն Կապանում բանկային համակարգի մասնաճյուղերի կայացման և զարգացման գործում:

Մինչ այդ ղեկավար պաշտոններ է զբաղեցրել թեթև արդյունաբերության ոլորտի ձեռնարկություններում (Ղափանի տրիկոտաժի արտադրական միավորում, Սիսիանի կարի և Կապանի կոշիկի ֆաբրիկաներ):

Ծնվել է 1949 թ. մարտի 26-ին:

Միջնակարգ կրթություն է ստացել Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1967-68 թվականներին աշխատել է Ղափանի լուսատեխնիկական գործարանում, այնուհետև բարձրագույն կրթություն ստացել Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում (էկոնոմիկայի ֆակուլտետ):

Բուհն ավարտելուց հետո տնտեսագետի մասնագիտությամբ սկսել է աշխատել Քաջարանի թիվ 91 շինվարչությունում՝ մինչև 1981 թվականը, այնուհետև տեղափոխվել Ղափանի տրիկոտաժի ֆաբրիկա՝ որպես արտադրամասի պետ, այնուհետև՝ տնօրենի տեղակալ:

1982-1986 թթ. հեռակա ուսուցմամբ սովորել և ավարտել է Մոսկվայի թեթև արդյունաբերության միջազգային ինստիտուտը:

1987-ին նշանակվել է Սիսիանի նորաստեղծ կարի ֆաբրիկայի գլխավոր տնօրեն՝ պաշտոնավարելով չորս տարի:

1991-1999 թթ. եղել է Կապանի կոշիկի ֆաբրիկայի տնօրեն:

Հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին՝ 1992-94 թթ., արդյունավետ մասնակցություն է ունեցել ինքնապաշտպանական ջոկատների նյութական ապահովման գործում, շտաբի անդամ էր և էական դերակատարություն ուներ որոշումների կայացման հարցում:

1999 թվականին նշանակվել է Արդշինբանկի Կապանի մասնաճյուղի կառավարիչ, 2003-ից՝ Արդշինբանկի Սյունիքի մասնաճյուղերի կառավարիչն էր, հետո ստանձնել է Երևանի «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի Կապանի մասնաճյուղի կառավարչի պաշտոնը՝ աշխատելով մինչև 2024 թվականը՝ վաստակած հանգստի անցնելը:

Սամվել Դանիելյանն ունի մեկ որդի և մեկ դուստր: //

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Նազարեթյան Նելսոն Արշավիրի

Կյանքի երկար ճանապարհ անցած մարդու մասին սովորաբար խոսում են նրա զբաղեցրած պաշտոններով, մասնագիտական ձեռքբերումներով ու հաջողություններով: Սակայն Նելսոն Նազարեթյանի համար կյանքի ամենամեծ գնահատականը բոլորովին այլ է՝ ապրել այնպես, որ երեխաներն ու թոռները երբեք չամաչեն իր արած-դրածից:

Տասնամյակներ շարունակ աշխատել է տարբեր ոլորտներում, հաղթահարել ժամանակի բազմաթիվ մարտահրավերներ, սակայն երբեք չի շեղվել իր սկզբունքներից. ազնվություն, պատասխանատվություն, մարդկանց նկատմամբ հարգանք և մշտապես սովորելու ձգտում. այդ չափանիշներն էլ դարձել են նրա կյանքի ու գործունեության անփոփոխ ուղենիշները:

Ծնվել է 1952 թվականի հունիսի 6-ին Ղափանում: Սովորել և ավարտել է Ղափանի թիվ 3 ռուսական դպրոցը, ռուսերենին տիրապետում էր այնքան ազատ, որ ընդունելության ժամանակ հանձնաժողովի անդամներին զարմացրել էր ոչ միայն լեզվի իմացությամբ, այլև մտածողությամբ:

Դպրոցական տարիներին գերազանցիկ չէր, բայց միշտ այն աշակերտների թվում էր, ովքեր պատվով ներկայացնում էին դպրոցը ֆիզիկայի և քիմիայի օլիմպիադաներում: Այդ ճանապարհի ամենամեծ դերակատարներից մեկը ֆիզիկայի ուսուցիչ Ռոման Ստեփանյանն էր, ում շնորհիվ Նելսոնը սիրեց ճշգրիտ գիտությունները և հասկացավ, որ իր ապագան ինժեներական ոլորտում է:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց և ավարտեց Մոսկվայի Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանը: Եթե մինչ այդ Ղափանում իրեն ուժեղ աշակերտ էր համարում, ապա Մոսկվայում առաջին անգամ հասկացավ, թե ինչ մեծ է աշխարհը և որքան շատ բան դեռ պետք է սովորել:

Բայց համալսարանում ուսանելը նրա համար միայն մասնագիտական կրթություն ստանալը չէր: Դա մշակութային նոր աշխարհ էր՝ թատրոններ, թանգարաններ, պատկերասրահներ, համաշխարհային արվեստի լավագույն նմուշներ: Այստեղ նա իր համար բացահայտեց նաև երաժշտությունը: Այդ տարիներին աշխարհը լսում էր Led Zeppelin, The Beatles, The Rolling Stones և մյուս լեգենդար խմբերին: Նելսոն Նազարեթյանի համար հատկապես Led Zeppelin-ը դարձավ կյանքի մշտական ուղեկիցը: Տասնամյակներ անց էլ այդ խմբի ձայնագրությունները շարունակում են մնալ նրա աշխատասեղանին ու անձնական հավաքածուում:

1975 թվականին, ուսումն ավարտելուց հետո, աշխատանքի ընդունվեց Երևանի «Էլեկտրոն» գործարանում՝ ինժեներ: Միաժամանակ, համատեղությամբ, դասախոսում էր Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի Ղափանի մասնաճյուղում:

Սակայն, ընտանեկան հանգամանքներից ելնելով, 1979 թվականին վերադարձավ հայրենի Ղափան և աշխատանքի անցավ Երևանի «Էլեկտրոն» գործարանի Ղափանի մասնաճյուղում՝ ինժեներ-կոնստրուկտոր, ապա՝ գլխավոր

տեխնոլոգ:

Հենց այդտեղ էլ բացահայտվեց նրա ինժեներական մտածողությունը:

Աշխատանքային գործունեության ընթացքում գործարանի մասնագետների հետ ներդրեց առաջադիմական տեխնոլոգիաներ, որոնք վերաբերում էին բազմաշերտ տպագիր պլատաների արտադրությանը: Այդ ժամանակաշրջանում նման տեխնոլոգիան տարածաշրջանի համար բացառիկ էր և գործարանի կարևորագույն ձեռքբերումներից:

Նրա աշխատանքը մշտապես կապված էր Մոսկվայի գիտահետազոտական ինստիտուտների հետ: Գործուղումներ, նոր տեխնոլոգիաների ուսումնասիրություն, դրանց ներդրում արտադրությունում: Նելսոն Նազարեթյանի համոզմամբ՝ ինժեների ամենակարևոր գործը ոչ միայն ստեղծելն է, այլև անընդհատ սովորելը:

Խորհրդային Միության փլուզումից հետո փոխվեց նաև արդյունաբերական իրականությունը: Երբ գործարանները սկսեցին դադարեցնել գործունեությունը, նա ևս կանգնեց նոր ընտրության առջև:

1994-1996 թվականներին ղեկավարեց հայ-իրանական համատեղ ձեռնարկությունը:

Այնուհետև՝ 1997-1999 թվականներին, աշխատեց Մոսկվայում՝ ռուս-չեխական «Դավարս» համատեղ ձեռնարկության տնօրեն:

Սակայն կյանքի ամենաանսպասելի շրջադարձը դեռ առջևում էր...

Բանկային համակարգ մտավ ոչ թե պատահաբար, այլ հետաքրքրությունից: Ասում է՝ սկզբում բանկ էր հաճախում որպես հաճախորդ, բազմաթիվ հարցեր

տալիս, փորձում հասկանալ, թե ինչպես է աշխատում ֆինանսական համակարգը: Հետաքրքրությունն աստիճանաբար վերածվեց նոր մասնագիտության:

1999 թվականից սկսեց աշխատել Հայաստանի բանկային համակարգում՝ նախ «Ագրոբանկ» ԲԲԸ-ում, ապա՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ում, իսկ 2005 թվականից մինչ օրս ղեկավարում է «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Կապանի մասնաճյուղը:

Նրա ղեկավարման սկզբունքը տարիների ընթացքում փոխվել է: Եթե երիտասարդ տարիքում ավելի խիստ էր, ապա այսօր համոզված է, որ մարդկանց պետք է ոչ միայն վերահսկել, այլև հասկանալ: Ղեկավարը պետք է ճանաչի յուրաքանչյուր աշխատակցի հնարավորությունները, ճիշտ տեղում օգտագործի նրա կարողությունները և օգնի, որ նա բացահայտի իր ներուժը:

Նրա կյանքում առանձնահատուկ տեղ ունի ընտանիքը:

1981 թվականին ամուսնացավ Բելլա Կոստանյանի հետ, ով երկար տարիներ ղեկավարել է Կապանի թիվ 6 մանկապարտեզը: Ունի երկու զավակ՝ որդի և դուստր, որոնք ստացել են բարձրագույն կրթություն:

Ազատ ժամանակ նախընտրում է շախմատն ու սեղանի թենիսը: Երկուսն էլ պահանջում են ճշգրիտ հաշվարկ, համբերություն և ճիշտ պահին ճիշտ որոշում կայացնելու կարողություն՝ հատկություններ, որոնք ուղեկցել են նրան նաև աշխատանքային գործունեության ընթացքում:

Եթե իրեն խնդրեն մի քանի բառով բնութագրել սեփական բնավորությունը, երկար չի մտածի. «Ընկերասեր մարդ եմ: Շատ ընկերներ չունեմ, բայց եղածի հետ էլ ամբողջ կյանքս կապված եմ»:

Գուցե հենց այս պարզ խոսքերն են լավագույնս բնութագրում Նելսոն Նազարեթյանին: Ինժեներ, դասախոս, արտադրության ղեկավար, ձեռնարկության տնօրեն, բանկային համակարգի ղեկավար...

Կյանքի բոլոր փուլերում ունեցել է պատասխանատվության զգացում, սակայն ամենից առաջ մնացել է մարդ, որի համար հեղինակությունը չափվում է ոչ թե զբաղեցրած պաշտոններով, այլ թողած հետքով...

ԻՋԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

Բալասանյան Յուրի Վարշամի

Մեծ հայրենականում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 40-ամյակի առիթով՝ Հաղթանակի դրոշը՝ Ղափանում (1985 թ.)

Հարյուրավոր դատական գործեր, բազում պաշտպանված իրավունքներ, ավելի քան կեսդարյա աշխատանքային ճանապարհ... Բայց Յուրի Բալասանյանի մասին պատմելիս ամենամեծ գնահատականը ո՛չ թվերն են, ո՛չ էլ զբաղեցրած պաշտոնները: Դա այն մարդկանց շնորհակալությունն է, որոնք այսօր էլ հանդիպելիս ասում են. «Ժամանակին դուք մեզ օգնել եք»: Հենց այդ վստահությունն է նրա անցած ճանապարհի ամենաարժեքավոր ձեռքբերումը...

Ծնվել է 1955 թվականի օգոստոսի 20-ին Ղափանում: Սակայն մանկության մասին խոսելիս առաջին հերթին քաղաքը չէ, որ հիշում է, այլ գյուղը՝ ճակատենը, որտեղ անցել են իր ամառները: Նրա հիշողություններում գյուղը մարդկանցով ու բնությամբ լի աշխարհ է. օրերն անցնում էին բնության գրկում:

«Մեր բնությունը հրաշք է: Այդ բնությունից կարողանում էինք ամեն ինչ վերցնել»,- ասում է նա:

Տարիներ անց, երբ արդեն ավարտել է աշխատանքային գործունեությունը, նորից վերադարձել է հայրենի գյուղ: Այսօր էլ ամառներն անցկացնում է ճակատենում՝ երեխաների ու թոռների հետ: Ասում է՝ հիմա վայելում եմ այն, ինչ գուցե մանկության տարիներին ամբողջությամբ չեմ հասցրել վայելել:

Սովորել է Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցում և ավարտել այն 1971-72 ուսումնական տարում: Թեև մանկուց երազել էր պատմաբան դառնալ, բայց կյանքը բոլորովին այլ ճանապարհ է նախապատրաստել նրա համար:

Դպրոցական տարիներից մի դրվագ հատկապես հիշում է ժպիտով: Երբ իրեն հարցնում էին՝ ի՞նչ է ուզում դառնալ, պատասխանում էր՝ քարտուղար: Այդ պատճառով պատմությունը, հայոց լեզուն ու օտար լեզուն նրա ամենասիրելի առարկաներն էին: Տարիներ անց իսկապես հայտնվեց ղեկավար աշխատանքում, բայց ոչ այնտեղ, ինչպես պատկերացնում էր մանկության տարիներին:

Դպրոցից հետո՝ 1973-1975 թվականներին, ծառայել է խորհրդային բանակում: Նրա համոզմամբ՝ բանակը տղամարդու բնավորությունը կերտող ամենակարևոր դպրոցներից մեկն է եղել: Հեռու ընտանիքից, շուրջ 3000 կիլոմետր հեռավորության վրա, առանց հեռախոսների ու արագ կապի, միայն նամակների միջոցով էր շփվում հարազատների հետ: Այդ տարիներին, ինչպես ինքն է ասում, սովորեց պատասխանատվություն, ինքնուրույնություն և կարգապահություն:

Մինչև բանակ գնալը երկու անգամ փորձել էր ընդունվել պատմության ֆակուլտետ, սակայն կես միավորի պատճառով չէր հաջողվել: Բանակից վերադառնալուց հետո ևս մեկ անգամ փորձեց, բայց կրկին չստացվեց: Այդ անհաջողությունից հետո ընկերներից մեկի առաջարկով թղթերը հանձնեց Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ:

Կոմերիտմիության Ղափանի շրջանային կազմակերպության կոնֆերանսը (1984 թ.)

«Իրավաբան դառնալու մասին երբեք չէի մտածել»,- խոստովանում է նա: Սակայն ճակատագիրն այլ որոշում ուներ:

1976-1982 թվականներին հեռակա ուսուցմամբ ավարտեց Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ ստանալով իրավաբանի որակավորում:

Աշխատանքային գործունեությունը սկսել էր շատ ավելի վաղ: Դեռ 16-17 տարեկանում աշխատում էր: 1976-1979 թվականներին աշխատեց Ղափանի ավտոնորոգման գործարանում՝ բանվոր:

Հետագայում՝ 1979-1986 թվականներին, աշխատեց ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմում՝ հրահանգիչ, ապա՝ կազմակերպական բաժնի վարիչ, այնուհետև՝ 2-րդ քարտուղար:

1986-1987 թվականներին եղել է ՀԿԿ Ղափանի շրջկոմի հրահանգիչ, իսկ 1986-1988 թվականներին՝ Ղափանի քաղաքային խորհրդի պատգամավոր:

Դատավոր դառնալու մասին երբեք չէր երազել: Սակայն, ինչպես ինքն է պատմում, այդ որոշումը կայացվել է կուսակցության շրջկոմում: 1987 թվականի հունիսի 22-ին ընտրվեց Ղափանի շրջանային ժողովրդական դատարանի դատավոր, հետագայում՝ դատարանի նախագահ: Դատական համակարգում աշխատեց մինչև 1996 թվականը:

Դատարանում աշխատած տարիները հիշելիս ամենից հաճախ խոսում է պատասխանատվության մասին:

«Ես դատավճիռներ եմ կարդացել արցունքն աչքերիս: Որպեսզի դահլիճը չտեսնի, գլուխս կախ կարդացել եմ: Դատում ես ոչ միայն մարդուն, այլև նրա ընտանիքին, երեխաներին, ամբողջ կյանքը»:

1996 թվականին կարճ ժամանակ աշխատեց Կապանի «ՍՊԻՆ» գործարանում՝ իրավախորհրդատու, ապա սկսեց փաստաբանական գործունեությունը, որին նվիրեց գրեթե երեք տասնամյակ՝ 1996-2024 թվականները:

Այդ ընթացքում՝ 2000-2008 թվականներին, եղել է նաև Կապանի քաղաքապետի իրավական հարցերով խորհրդական, 2006-2010 թվականներին՝ ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպան, իսկ 2012-2015 թվականներին՝ «Վայբլ» ՍՊԸ իրավախորհրդատու:

Փաստաբանի աշխատանքում ամենամեծ սկզբունքը, ըստ նրա, եղել է հետևյալ կարգախոսը՝ երբեք չխաբել վստահորդին. «Եթե փաստաբանը սկզբից խոստանում է, որ անպայման հաղթելու է, արդեն ազնիվ չէ: Մարդուն պետք է ասել ճշմարտությունը՝ ինչ արդյունք է հնարավոր օրենքի սահմաններում»:

Յուրի Բալասանյանի կյանքում առանձնահատուկ տեղ ունի ընտանիքը: Ունի երեք զավակ՝ մեկ որդի և երկու դուստր: Հետաքրքիր է, որ երեքն էլ ստացել են բարձրագույն իրավաբանական կրթություն, սակայն հոր խորհրդով չեն շարունակել աշխատել իրավական համակարգում:

Յուրի Բալասանյանի համար կյանքի արժեքը երբեք չի չափվել զբաղեցրած պաշտոններով կամ կոչումներով: Նրա համոզմամբ՝ մարդու իրական ժառանգությունը թողած անունն է, այն հեղինակությունը, որով ապրելու են իր երեխաներն ու թոռները:

Տասնամյակների աշխատանքից հետո նա հետադարձ հայացք է ձգում իր անցած ճանապարհին առանց ափսոսանքի՝ համոզված, որ ապրել է ազնիվ, հավատարիմ իր սկզբունքներին և հնարավորինս օգտակար եղել մարդկանց: Իսկ այդ սկզբունքներից ամենակարևորը, որն ուղեկցել է նրան ամբողջ կյանքում, պարզ է ու անփոփոխ. «Եթե մարդուն չես կարող օգնել, գոնե մի՛ վնասիր»

ԻՋԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ

Մեծ հայրենականի Ղափանի վետերանների հետ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

Հարությունյան Սիլվա Միխայելի

Կան մարդիկ, որոնց կյանքը հնարավոր չէ ներկայացնել միայն պաշտոնների և տարեթվերի հերթականությամբ: Նրանց մասին առավել խոսուն են աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը, մարդկանց հետ շփման մշակույթը, պատասխանատվության զգացումն ու այն արժեքները, որոնց հավատարիմ են մնում ամբողջ կյանքում:

Սիլվա Հարությունյանը հենց այդ մարդկանցից է՝ ուժեղ կամքով, հետևողականությամբ և մշտապես առաջ շարժվելու ձգտումով:

Ծնվել է 1951 թվականի հուլիսի 26-ին Քաջարանում: Սովորել է Ողջիի թիվ 2 միջնակարգ դպրոցում, որտեղ աչքի է ընկել ակտիվությամբ:

Աշխատանքային ուղին սկսել է ընդամենը տասնյոթ տարեկանում՝ 1968-ին ընդունվելով աշխատանքի Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի ԼԿԵՄ կոմիտեում՝ որպես հաշվառման սեկտորի վարիչ՝ աշխատելով մինչև 1975 թ.: Միաժամանակ (1970-1973 թթ.) շարունակել է կրթությունը՝ ավարտելով Քաջարանի շինարարական տեխնիկումը և ստանալով տեխնիկ-շինարարի որակավորում: Հետագայում՝ 1975-1979 թվականներին, ձգտելով խորացնել մասնագիտական գիտելիքները, ստացիոնար ուսուցմամբ ավարտել է Բաքվի բարձրագույն կուսակցական դպրոցը:

Սիլվա Հարությունյանի աշխատանքային կենսագրությունն առանձնանում է իր բազմազանությամբ: 1979-1980 թվականներին ղեկավարել է Ղափանի երկրագիտական թանգարանը, որտեղ նույնիսկ կարճ ժամանակահատվածում կարողացել է իր նկատելի ներդրումն ունենալ՝ հարստացնելով թանգարանի հավաքածուն շուրջ երկու հազար նոր ցուցանմուշով: Այնուհետև՝ 1980-1988 թվականներին, աշխատել է Ղափանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի քարտուղար՝ միաժամանակ կատարելով գործկոմի կուսակցական կազմակերպության քարտուղարի պարտականությունները:

1988-1991 թվականներին աշխատել է Ղափանի խնայբանկի կառավարիչ, իսկ 1991 թվականին իր մասնագիտական գործունեությունը շարունակել Հայաստանի Հանրապետության Երևանի խնայբանկում՝ որպես տնտեսագետ:

Սիլվա Հարությունյանի համար աշխատանքը երբեք չի սահմանափակվել պարտականությունների կատարմամբ: Եղել է պահանջկոտ նախ և առաջ իր նկատմամբ: Նրա ղեկավարած կոլեկտիվներում գնահատվել է բարեխիղճ աշխատանքը, իսկ անփութությունը երբեք անարձագանք չի մնացել: Սակայն այդ խստության հիմքում եղել է ոչ թե պատժելու ցանկությունը, այլ պատասխանատվության մշակույթ ձևավորելու ձգտումը:

1990-ականների ծանր տարիներին, երբ շատերը լքում էին ռմբակոծվող Կապանը, վերադարձավ Երևանից և շարունակեց աշխատել հայրենի քաղաքում: Պատերազմի ամենաբարդ շրջանում՝ 1992-1994 թվականներին, «Սպին» գործարանում զբաղեցրել է քաղաքացիական պաշտպանության բաժնի պետի պաշտոնը՝ համոզված լինելով, որ ամենադժվար պահին մարդ պետք է իր տեղում լինի: Այդ ընտրությունը լավագույնս բնութագրում է նրա քաղաքացիական կեցվածքն ու պարտքի զգացումը:

Հետագա տարիներին Սիլվա Հարությունյանի աշխատանքային ուղին շարունակվեց տարբեր ոլորտներում: 1994-1996 թվականներին ղեկավարեց Կապանի բնակարանային տնտեսության արտադրական վարչության վարչատնտեսական բաժինը, ապա՝ 1996-2000 թվականներին, աշխատեց Կապանի տարածաշրջանային էլցանցում՝ վարչատնտեսական բաժնի պետ:

2000 թվականին նրան վստահվեց ևս մեկ կարևոր պաշտոն՝ Կապանի քաղաքապետարանի նախադպրոցական հիմնարկների միավորման տնօրենն էր, որտեղ իր կազմակերպչական փորձը ծառայեցրեց կրթական ոլորտի արդյունավետ աշխատանքին:

2004-2007 թվականներին ղեկավարեց «Արմեն-Կարպետ» ԲԲԸ-ի Կապանի գորգագործական մասնաճյուղը՝ աշխատանքային կենսագրությունը հարստացնելով նաև արտադրության կառավարման փորձով:

Աշխատանքային հարուստ ճանապարհի վերջին նշանակալի փուլը կապված էր մշակույթի ոլորտի հետ. 2008-2016 թվականներին Կապանի քաղաքապետարանի մշակույթի կենտրոնում ղեկավարում էր կադրերի բաժինը՝ շարունակելով նույն նվիրումով ու պատասխանատվությամբ ծառայել համայնքին:

Աշխատասիրությունը Սիլվա Հարությունյանի բնավորության անբաժանելի մասն է: Սիրում է սովորել, հետաքրքրվել, բացահայտել նորը: Նույնիսկ այսօր, լինելով կենսաթոշակառու, շարունակում է հետևել քաղաքական, մշակութային, մարզական և հասարակական կյանքին: Առանձնահատուկ հետաքրքրությամբ դիտում է ֆուտբոլ՝ դեռևս 1969 թվականից հետևելով աշխարհի ու Եվրոպայի առաջնություններին, սիրում է ընթերցել հայերեն և ռուսերեն գրականություն,

լսել դասական և ժամանակակից երաժշտություն: Նրա համոզմամբ՝ մարդը պետք է ամբողջ կյանքում սովորի և պահպանի մտավոր ակտիվությունը:

Կյանքում ամենաբարձր արժեքը համարում է ընտանիքը: Համոզված է՝ ամուր ընտանիքն առողջ հասարակության հիմքն է:

Տիկին Սիլվան ունի մեկ որդի:

Նրա համար նույնքան կարևոր են ազնվությունը, բարությունը, փոխօգնությունն ու անկեղծությունը: Սուտն ու ձևականությունը երբեք չի ընդունել՝ վստահ լինելով, որ մարդու ամենամեծ արժանիքը մաքուր խիղճն ու ազնիվ վերաբերմունքն է շրջապատի հանդեպ:

Սիլվա Հարությունյանի անցած ճանապարհը վկայում է, որ պաշտոններն արժեք են ձեռք բերում միայն այն դեպքում, երբ դրանց հետևում կանգնած է նվիրված մարդը:

Նրա կենսագրությունը պատմություն է աշխատասիրության, ինքնակրթության, սկզբունքայնության և հասարակության հանդեպ պատասխանատվության մասին: Իսկ ամենակարևոր ժառանգությունը, որ թողել է աշխատավայրերում, ոչ միայն կատարված աշխատանքն է, այլև այն վստահությունը, որ ձևավորվել է երկար տարիների ազնիվ ու հետևողական ծառայությամբ:

//

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ

Ղազարյան Ռազմիկ Պատվականի

Ծնվել է 1951 թ. մարտի 15-ին Քաջարան քաղաքում:

1974 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը՝ «Առևտրի էկոնոմիկա» մասնագիտությամբ:

Աշխատել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում նորմավորող, ավագ ինժեներ-նորմավորող:

1978-1981 թթ. կոմերիտական աշխատանքի էր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում (ԼԿԵՄ կոմիտեի առաջին քարտուղար):

1980-1991 թթ. կուսակցական աշխատանք է տարել ՀԿԿ Ղափանի շրջկոմում (հրահանգիչ, արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ, կազմակերպական բաժնի վարիչ):

Հայաստանի անկախացումից հետո աշխատել է «Սասուն» արտադրական ձեռնարկությունում՝ փոխտնօրեն:

1992-1995 թթ. աշխատել է Քաջարանի բանվորական մատակարարման բաժնում՝ պետ:

1995-2000 թվականներին Հայխնայբանկի Կապանի մասնաճյուղի կառավարիչն էր:

2000 թվականից Ռազմիկ Ղազարյանը Սյունիքի մարզպետարանում էր՝ նախ՝ քարտուղար, ապա մարզպետարանի աշխատակազմի ղեկավար:

Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

Ռազմիկ Ղազարյանն ունի երեք զավակ՝ երկու որդի և դուստր:

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

Գևորգյան Մագդա Նիկոլայի

«Բարեփոխումներ՝ հանուն որակյալ կրթության». այս խոսքերը նրա համար պարզապես կարգախոս չեն եղել: Դրանք դարձել են կյանքի սկզբունք, որով առաջնորդվել է թե որպես ուսուցիչ, թե որպես ղեկավար, թե որպես կրթական բարեփոխումների նախաձեռնող: Կրթությունը նրա համար երբեք չի սահմանափակվել դասապրոցեսով կամ պաշտոնով. այն եղել է մարդ կերտելու առաքելություն և ապագայի հանդեպ պատասխանատվություն:

Հենց այս համոզմունքներով էլ առաջնորդվել է մանկավարժ, մեթոդիստ Մագդա Գևորգյանը, ով ավելի քան հիսուն տարի նվիրված ծառայել է կրթությանը՝ թողնելով իր հետքը ոչ միայն Կապանի, այլև ամբողջ Սյունիքի կրթական կյանքում: Նրա անունը կապվում է կրթական բազմաթիվ նախաձեռնությունների, նորարարությունների, սերունդներ կրթելու և արժեքներ փոխանցելու անխոնջ աշխատանքի հետ, իսկ նրա գործունեության արդյունքները վաղուց արդեն դուրս

են եկել մեկ դպրոցի կամ մեկ քաղաքի սահմաններից:

Մագդա Գևորգյանը ծնվել է 1952 թվականի մայիսի 26-ին՝ Ղափան քաղաքում: 1959-1969 թվականներին սովորել և ավարտել է Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Դեռ մանկուց նրա խաղերն անգամ կապված էին ուսուցչի մասնագիտության հետ: Հավաքում էր բակի երեխաներին, սովորեցնում ոտանավորներ, հեքիաթներ, նույնիսկ «դասեր» էր անցկացնում: Այդ տարիներին դպրոցական տետրերն ու գրիչները քիչ էին, և փոքրիկ Մագդան երեխաների հետ հարթեցնում էր հողը, նկարում, գրում, գնահատում՝ կարծես վաղուց արդեն ընտրել էր իր ապագա մասնագիտությունը:

1969-1972 թվականներին սովորել է Գորիսի մանկավարժական ուսումնարանի «Հանրակրթական դպրոցի տարրական դասարանների դասավանդում» բաժնում: Մանկավարժական գիտելիքներն առավել խորացնելու նպատակով հետագայում ընդունվել է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ և 1984-1989 թվականներին ավարտել «Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա» բաժինը:

Աշխատանքային ուղին սկսվել է 1972 թվականին, երբ աշխատանքի է անցել Ղափանի թիվ 11 միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: Երիտասարդ ուսուցչուհին շատ արագ արժանացել է թե գործընկերների, թե ծնողների վստահությանը: Նրա դասերը սովորական դասաժամեր չէին. յուրաքանչյուր թեմա նորովի էր ներկայացվում, որպեսզի երեխան ոչ միայն սովորի, այլև մտածի, ստեղծագործի և ինքնուրույն բացահայտի աշխարհը:

1981-1990 թվականներին աշխատել է Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Այդ տարիներին համատեղությամբ դասավանդել է Գերասիմաշենի՝ փախստականներով վերաբնակեցված գյուղի

դպրոցում:

1990-2003 թվականներին աշխատել է Կապանի թիվ 7 դպրոցում՝ որպես դասվար, ապա՝ փոխտնօրեն: Այդ շրջանը նրա մանկավարժական գործունեության ամենաարդյունավետ փուլերից էր: Կազմակերպում էր այնպիսի միջոցառումներ, որոնք երկար ժամանակ մնում էին աշակերտների ու ծնողների հիշողության մեջ: Պատմական կերպարները կենդանանում էին բեմում, դասարանները վերածվում էին ստեղծագործական արվեստանոցների, իսկ յուրաքանչյուր միջոցառում դառնում էր կրթական տոն: Նրա խոսքով՝ երեխան պետք է սովորի ոչ միայն դասագրքից, այլև ապրի, զգա ու ստեղծագործի:

Սակայն Մագդա Գևորգյանի գործունեությունը երբեք չի սահմանափակվել միայն դպրոցով:

1993-2000 թվականներին հիմնադրել և ղեկավարել է «Ազատամարտ» կոմիտեն՝ մշտապես աջակցելով զոհված ազատամարտիկների ընտանիքներին և հաշմանդամություն ունեցող ազատամարտիկներին: Նրա նախաձեռնությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ: Նրա համար հայրենասիրությունը կրթության կարևոր բաղադրիչ էր:

2003 թվականի հունիսից աշխատել է Կրթության բարեփոխումների կենտրոնի Սյունիքի մասնաճյուղում՝ որպես մեթոդիստ, իսկ 2004-2024 թվականներին ղեկավարել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղը:

Հենց այդ տարիներին առավելապես դրսևորվեց Մագդա Գևորգյանի կազմակերպչական կարողությունը: Նրա ղեկավարությամբ Սյունիքում կազմակերպվել են բազմաթիվ վերապատրաստման դասընթացներ, բաց դասեր, մասնագիտական քննարկումներ և առաջավոր փորձի փոխանակման ծրագրեր, որոնց մասնակցում էին մարզի տարբեր համայնքների ուսուցիչներն ու հանրապետության առաջատար մասնագետները: Այդ աշխատանքը նպաստեց ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ու կրթության որակի բարձրացմանը:

Մագդա Գևորգյանի անվան հետ է կապված նաև Սյունիքում ներառական կրթության ներդրման առաջին փուլը: Նրա նախաձեռնությամբ և միջազգային գործընկերների համագործակցությամբ ծրագիրը մեկնարկեց Կապանում, Քաջարանում, Մեղրիում և Ագարակում:

Միշտ առանձնացել է որպես նորարար մանկավարժ: Իր դասավանդման ընթացքում կիրառել է ստեղծագործական մեթոդներ, աշակերտների հետ պատրաստել թեմատիկ գրքույկներ, կազմակերպել յուրօրինակ միջոցառումներ ու բաց դասեր: Այդ մոտեցումները մեծ արձագանք են գտել մասնագիտական շրջանակներում և նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների տարածմանը:

Մագդա Գևորգյանի գործունեության ամենամեծ գնահատականն իր սաներն են: Տարիներ անց նրանք շարունակում են հիշել իրենց ուսուցչուհուն՝ որպես խիստ, բայց արդար, պահանջկոտ, անսահման հոգատար մարդու, որի տված գիտելիքներն ու արժեքներն ուղեկցում են իրենց ամբողջ կյանքում:

Իր երկարամյա գործունեության համար Մագդա Գևորգյանն արժանացել է բազմաթիվ պարգևների՝ ՀԽՍՀ «Ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանի, ՀԽՍՀ «Ստեղծագործական աշխատանքի համար» կրծքանշանի, նրան շնորհվել են «Մեթոդիստ ուսուցիչ», «Ավագ ուսուցիչ» կոչումները, արժանացել է «Ակսել Բակունց» հուշամեդալի, բազմաթիվ պատվոգրերի, շնորհակալագրերի:

Այսօր էլ շարունակում է ապրել կրթական աշխարհով: Սիրում է ընթերցել, հաճախել թատրոն և կինո, ժամանակ անցկացնել ընտանիքի հետ:

Մագդա Գևորգյանի կյանքի ու գործունեության ճանապարհը լավագույն օրինակ է այն բանի, թե ինչպես կարող է մեկ նվիրյալ մարդ իր համայնքում ինչ-որ չափով փոխել կրթական միջավայրը, ոգեշնչել գործընկերներին, դաստիարակել հարյուրավոր աշակերտներ և իր գաղափարներով շարունակել մնալ ընդօրինակման արժանի:

//

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

Միքայելյան Գարեգին Մովսեսի

Գարեգին Միքայելյանը Կապանի եզակի մանկավարժներից է, ով ուսուցչական գործին զուգընթաց զբաղվել է գիտական-ստեղծագործական գործունեությամբ: Մաթեմատիկայի ութ գրքի հեղինակ է: Հինգ գիրք դեռևս պիտի լույս ընծայվի, այժմ ձեռագիր վիճակում է:

Շրվենանց գյուղի հիմնադիրներից՝ Շահբազաց օջախի շառավիղներից են Միքայելյանները:

Ծնվել է 1952 թ. սեպտեմբերի 18-ին Քաջարանում: Մինչև յոթերորդ դասարանը սովորել է Քաջարանի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 3 դպրոցում: Մաթեմատիկայից արտակարգ ընդունակություններ ունենալու շնորհիվ փոխադրել են մայրաքաղաք՝ Երևանի Մանուկ Աբեղյանի անվան ֆիզիկամաթեմատիկական դպրոց (ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ, ՀՀ վաստակավոր ուսուցիչ Սամսոն Դաղբաշյանի դասարան): Ուսումնառության տարիներին մաթեմատիկա և ֆիզիկա առարկաներից աչքի է ընկել հանրապետական օլիմպիադաներում՝ արժանանալով առաջին և երկրորդ կարգի մրցանակների:



1969 թվականին ընդունվել է Երևանի պետհամալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետ: Բուհը գերազանցությամբ ավարտելուց հետո վերադարձել է Ղափան, աշխատել թիվ 7 միջնակարգ դպրոցում՝ ֆիզմաթ խորացված հոսքով դասարանների մաթեմատիկայի ուսուցիչ:

1979-1983թթ. աշխատել է Ղափանի ավտոնորոգման գործարանում՝ չափիչ սարքերի վերահսկման լաբորատորիայի վարիչ:

Թիվ 7 դպրոցի այն ժամանակվա տնօրեն Տիգրան Թևանյանի հորդորով կրկին անցել է մանկավարժության:

1994-96 թթ. Գարեգին Միքայելյանը ծառայել է ՀՀ ազգային բանակում՝ Հորադիզում տեղակայված զորամասում, ապա ամբողջովին նվիրվելով մանկավարժությանը՝ դասավանդել մինչև 2005 թվականը:

Ինչպես հղացավ մաթեմատիկական գրքեր գրելու գաղափարը. **«Դեռևս 1975-ից, երբ սկսեցի դասավանդել, ուշադրությունս գրավում էին այն խնդիրները, որոնք սրամիտ, ոչ ստանդարտ, անսպասելի լուծումներ էին պահանջում: Այդ խնդիրները խնամքով գրում էի, դնում գրքերի արանքում: Ժամանակի ընթացքում դրանք կուտակվեցին: Նաև աշա-**

կերտներիս էի սրամիտ լուծումներ առաջարկում: Անկեղծ ասած՝ երբևէ մտքովս չէր անցել, որ գիրք կգրեմ: Իմ նախկին սաները, ովքեր հիմա արտերկրում են ապրում, երբ գալիս են Կապան, այցելում են ինձ: 2005-ի սեպտեմբերի 16-ին կրթական համակարգի ճգնաժամային իրավիճակով պայմանավորված՝ մտքերս հայտնեցի սիրելի աշակերտիս՝ Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի, ինչպես նաև Մոսկվայի կառավարման ինստիտուտի շրջանավարտ Տիգրան Բունիաթյանին: Նա էլ թե՝ ընկեր Միքայելյան, ինչը և ինչպես մեզ սովորեցնում էիր, հանձնիր թղթին, տպագրելու մասին մի մտածիր»:

Դրանից հետո լիովին նվիրվել է գիտական-ստեղծագործական գործունեությանը, նրա հրատարակած գրքերից են «Տարրական մաթեմատիկայի մեթոդները հանրահաշվում» (հատոր1,2,3,4), «Տարրական մաթեմատիկայի մեթոդները երկրաչափությունում» (հատոր 5, 6, 7): «Մաթեմատիկա: Օլիմպիադական սեմինարներ, պարապմունքներ» (հատոր 8), համահեղինակներ՝ Ռուզաննա Գառնիկի Բաղալյան և Արթուր Մելիքսեթի Սարգսյան:

Գրքերի առաջին հրատարակության տպաքանակը հեղինակն ամբողջությամբ նվիրել է Սյունիքի և Արցախի կրթօջախներին:

Սյունիքի մարզի 20 դպրոցում՝ Վահե և Արման Հակոբյանների աջակցությամբ, ստեղծել է Լաուրա Հարությունյանի անվան օլիմպիադական գրադարան (մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, քիմիա առարկաներից):

Մանկավարժական գործունեությունը Գարեգին Միքայելյանն այսպես է ներկայացրել. **«Ես ոչ մեկին չեմ խանգարել, կավիճը ձեռքիս՝ երեխային մտածել եմ սովորեցրել»:**

Հետաքրքիր է, ինչպե՞ս եղավ, որ թողեց սիրած գործը. **«2005-ի սեպտեմբերի 1-ին պարզվեց, որ երեք գործընկերս, ովքեր եկել էին դպրոց, օպտիմալացման պատճառով պիտի կրճատվեին: Այդ պահին հասկացա, որ որպես գործող մանկավարժ իմ ժամկետը սպառվել է՝ պիտի հեռանամ: Մանավանդ որ իմ գործընկերները, ովքեր պիտի կրճատվեին, ուսանող երեխաներ ունեին, ընտանիքի հոգսն իրենց ուսերին էր»:**

Կարծիք կա, որ մեր օրերում բնական գիտությունները, մանավանդ մաթեմատիկան, հետընթաց են ապրում:

«Մինչև Խորհրդային Միության փլուզվելը՝ Հայաստանը մաթեմատիկական հզոր դպրոց ուներ, փայլուն մաթեմատիկոսներ՝ Սերգեյ Մերգելյան, Մխիթար Ջրբաշյան, աշխարհահռչակ ֆիզիկոսներ: Պատահական չէ, որ Մերգելյանի ինստիտուտը, Բյուրականի աստղադիտարանը հիմնադրվեցին: Դրանք ականառու նվաճումներ էին: 1990-ականների սոցիալական դժվարություններն իրենց կնիքը դրեցին գիտության զարգացման վրա: Մարդիկ իրենց ընտանիքների հանապազօրյա հոգսերը հոգալու համար լքեցին հանրապետությունը: Ոչ մեկը չի կարող մեղադրել նրանց: Նաև ուղեղների արտահոսք տեղի ունեցավ: Հետո անկառավարելի բիզնեսը սկսեց ավերածություններ գործել, որի շորշոփները հասան նաև գիտությանը: Նաև ծնողների խորհրդով շատ շրջանավարտներ ընտրեցին ոչ թե մաթեմատիկոսի, այլ տնտեսագետի մասնագիտությունը՝ կարծելով, որ բուհն ավարտելուց հետո իրենց զավակները հաջողություններ կունենան բիզնեսի մեջ»:

Նրա համոզմամբ՝ խորհրդային կրթական համակարգը երկու թերություն ուներ՝ կոմունիստական գաղափարախոսությունը, որ փաթաթում էին դպրոցի վզին, և համահարթեցումը, այսինքն՝ այն, որ նույն դասագրքով էին կրթվում և՛ Հայաստանում, և՛ Սիբիրում: Ասում է, որ մեծ հարգանքով է վերաբերվում խորհրդային կրթական համակարգին. **«Եթե կոմունիստական գաղափարախոսությունը միջից հանենք, ամեն ինչ տեղը կընկնի: Մինչև 1975 թվականն ականառու զարգացում է ապրել: Մնում էր այդ կրթական համակարգին ազգային բովանդակություն հաղորդել, և ստեղծված վակուումը կլցվեր»:**

Գարեգին Միքայելյանը պարգևատրվել է հանրապետության կրթության և գիտության նախարարության Ոսկե մեդալով, արժանացել ՀՀ ստեղծագործող ուսուցչի կոչման: Հրավիրվել է մասնակցելու ՀՀ-ում կազմակերպված միջազգային երեք գիտական սեմինարի, որոնց նյութերն ամփոփող ժողովածուներում տպագրվել է նրա չորս հոդվածը:

Գարեգին Միքայելյանն ունի երեք որդի, ավագ որդին՝ Մովսեսը, գյուտերի հեղինակ է, հաջողություններ ունի շինարարական բիզնեսում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Աթայան Օնիկ Տիգրանի

Յուրաքանչյուր քաղաքում կան մարդիկ, որոնց կենսագրությունը ժամանակի հետ դառնում է քաղաքի պատմության անբաժանելի մասը: Նրանք չեն ձգտում անընդհատ ներկայանալ, բայց իրենց գործով ձևավորում են միջավայր, համակարգ ու վստահություն: Այդպիսի մարդկանցից է Օնիկ Տիգրանի Աթայանը՝ երկար տարիների աշխատանքային փորձով ու Կապանի տնտեսության մեջ իր թողած նկատելի հետքով:

Ութ տասնամյակից ավելի կյանք՝ լցված աշխատանքով, պատասխանատվությամբ, մարդկանց հանդեպ հոգատարությամբ և հայրենի քաղաքի հետ անխզելի կապով:

1945 թվականի հոկտեմբերի 6-ին Ղափանի շրջանի Կաղնուտ գյուղում ծնված Օնիկ Աթայանը մանկուց գիտակցել է աշխատանքի արժեքը: Գյուղական միջավայրում մեծացած տղայի համար հողը, ծառը և մարդու ձեռքով ստեղծված ամեն ինչն առանձնահատուկ նշանակություն ունեին:

Հետագայում՝ աշխատանքային գործունեության ընթացքում, դարձավ այն մարդկանցից, ովքեր ղեկավարի պաշտոնը երբեք չեն ընկալել որպես արտոնություն, այլ՝ պարտավորություն մարդկանց և գործի նկատմամբ:

Տարիների ընթացքում աշխատել է տարբեր պաշտոններում, ղեկավարել հիմնարկներ և իր գործունեությունը երկար ժամանակ կապել Կապանի ու նրա տնտեսության զարգացման հետ՝ վստակելով աշխատասեր ու սկզբունքային մարդու համբավ:

1954 թվականին ընդունվել է Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Դպրոցական տարիներին աչքի է ընկել աշխատասիրությամբ և պարտաճանաչությամբ: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկամեքենաշինական ֆակուլտետ և 1970 թվականին ստացել ինժեների մասնագիտություն՝ ընտրելով ստեղծագործ աշխատանքի և կազմակերպչական գործունեության ուղի:

Նույն թվականին էլ սկսվել է նրա աշխատանքային կենսագրությունը: Աշխատել է Ղափանի ավտոձեռնարկությունում՝ անվտանգության ինժեներ, ապա՝ նույն ձեռնարկության Քաջարանի ավտոշարասյան պետ:

1972-1974 թվականներին աշխատել է Լեռնատեխնիկական հսկողության համակարգում՝ որպես շրջանային ինժեներ-մեխանիկ, իսկ 1974 թվականին նշանակվել է Ղափանի ջերմամատակարարման գրասենյակի գլխավոր ինժեներ: Հաջորդ տասնամյակում արդեն աշխատում էր հանրապետության կոմունալ տնտեսության մինիստրության նորաստեղծ հատուկ մասնագիտացված վերանորոգման, կարգաբերման և մոնտաժման տեղամասի

աշխղեկ:

1987-1991 թվականներին ղեկավարել է Կապանի կոմունալ տնտեսությունը: Այդ տարիները բարդ էին, սակայն նա պատկանում էր այն ղեկավարների շարքին, ովքեր աշխատասենյակից չէին ղեկավարում: Խնդիր առաջանալու դեպքում առաջիններից էր հասնում պատահարի վայր, լուծումներ գտնում, մարդկանց հետ կանգնում նույն դժվարության առաջ:

Հետագայում աշխատել է Կապանի մսի կոմբինատում՝ որպես փոխտնօրեն, իսկ 1997 թվականին նշանակվեց «Հայջրմուղկոյուղու» Սյունիքի մարզային մասնաճյուղի տնօրեն:

2004-2017 թվականներին ղեկավարել է Կապանի ջրօգտագործողների ընկերությունը՝ ՋՕԸ:

Օնիկ Աթայանի կինը՝ տիկին Գրետան, նրա կյանքի հավատարիմ ուղեկիցը, ասում է. **«Ամբողջ կյանքում ինքը միայն աշխատել է: Տարիներով արձակուրդ չի գնացել: Ես երեխաների հետ գնացել եմ հանգստանալու, ինքը մնացել ու աշխատել է: Իր համար աշխատանքը պարզապես զբաղմունք չէ, դա իր համար կենսակերպ է»:**

Նույն նվիրվածությամբ է վերաբերվել նաև ընտանիքին: Ավելի քան 53 տարվա համատեղ կյանքից հետո տիկին Գրետան ժպիտով խոստովանում է. **«Եթե մի նախադասությամբ ասեմ, ապա գոհ եմ մեր համատեղ կյանքից: Երբեմն զարմանում եմ՝ ինչ եմ հարմարվել իր անհանգստությանը, ամեն ինչ շտապ անելու սովորությանը, բայց մի բան հաստատ գիտեմ՝ ամբողջ կյանքում եղել է ազնիվ, աշխատասեր և իր գործին անսահման նվիրված մարդ»:**

Նա հաճախ ընդգծում է, թե պաշտոնը իրեն երբեք չի առանձնացրել իրեն մարդկանցից և չի ծառայեցրել անձնական նպատակների համար: Ընդհակառակը, աշխատել է այնպես, որ իր ընտանիքն էլ ապրի նույն պարզ ու համեստ կանոններով, ինչ շրջապատը: Այդ վերաբերմունքը տարիների ընթացքում դարձել է նրա կերպարի բնորոշ գծերից մեկը՝ հավասարակշռված, զուսպ և հավատարիմ սկզբունքներին:

Այդ նույն ներքին համոզմունքներն են նրան ուղեկցել նաև կյանքի ավելի բարդ փուլերում:

Օնիկ Աթայանն այն մարդկանցից է, ովքեր հայրենասիրությունը չափում են ոչ թե խոսքերով, այլ արարքներով: Պատերազմի տարիներին չի լքել քաղաքը, ամենադժվար ժամանակներում մնացել է իր տեղում և աջակցել:

Այսօր էլ, կենսաթոշակային տարիքում, շարունակում է ապրել նույն անհանգիստ ու ստեղծագործ կյանքով: Զբաղվում է այգեգործությամբ, ստեղծել է հիասքանչ այգի, տնկել հարյուրավոր ծառեր:

«Ինքը Միչուրինն է»,– կատակով ասում է տիկին Գրետան: **– «Ամեն ինչ մտածված է՝ յուրաքանչյուր ծառ, յուրաքանչյուր շարք, յուրաքանչյուր մանրուք: Այգին էլ իր բնավորության նման է՝ կոկիկ, աշխատասիրությամբ ստեղծված ու հոգատարությամբ պահված»:**

Օնիկ Աթայանն ունի մեկ որդի, մեկ դուստր, չորս թոռ, որոնց հաջողություններով ապրում ու հպարտանում է: Սակայն նրա ամենամեծ ձեռքբերումը, թերևս, այն հարգանքն է, որ վայելում է շրջապատում:

Իսկ երբ հարցնում ես, թե ինչպիսի՞ն է եղել իր կյանքը, նա, իրեն բնորոշ համեստությամբ, ասում է. **«Սովորական կյանք ենք ապրել: Փորձել ենք այնպես ապրել, որ ոչ մեկից վատ խոսք չլսենք և ոչ մեկին վատություն չանենք»:**

Հավանաբար հենց այս պարզ նախադասության մեջ է ամփոփված նրա կյանքի ամբողջ իմաստը: Եվ հենց այդ պարզության մեջ էլ ձևավորվել է Օնիկ Աթայանի կենսագրությունը:

ԻՋԱ ԱՍՏԱՏՐՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՁՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Բենիամինյան Յուրիկ Արտաշեսի

«Կապանի նկատմամբ առանձնահատուկ սեր ունեմ: Իմ փոքր հայրենիքն է»: Այս մի քանի պարզ բառերի մեջ կարծես ամփոփված է Յուրիկ Բենիամինյանի ամբողջ կյանքը: Նրա անցած ճանապարհը գրեթե ամբողջությամբ միահյուսվել է Կապանի արդյունաբերության պատմությանը:

Ծնվել է 1939 թվականի փետրվարի 24-ին՝ Ղափանի շրջանի Առաջաձոր գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Լենինաքերի դպրոցում, որն ավարտելուց հետո մեկ տարի աշխատել է Ղափանի պղնձահանքային կոմբինատի կոմպրեսորային կայանում: Թվում էր՝ երիտասարդի առջև սովորական աշխատանքային ճանապարհ է բացվում, սակայն հենց այդ տարիներին արդեն ձևավորվում էին այն հատկանիշները, որոնք հետագայում պիտի բնորոշեին նրան՝ աշխատասիրություն, պատասխանատվության զգացում և ցանկացած գործ մինչև վերջ հասցնելու ձգտում:

1957 թվականին ընդունվել է Երևանի հաստոցագործիքաշինական տեխնիկում և այն ավարտել 1960 թվականին: Որպես տեխնիկ-մեխանիկ՝ վերադարձել է հայրենի Ղափան և գործուղվել Ղափանի պղնձահանքային կոմբինատ:

Նրա համար աշխատանքը երբեք միայն պաշտոնական պարտականությունների շրջանակ չի ունեցել: Ինքն է ասում՝ սիրում էր հասկանալ յուրաքանչյուր գործընթաց, ճանաչել յուրաքանչյուր տեղամասի աշխատանքը, լինել այնտեղ, որտեղ խնդիր կա և լուծում է պետք: Այդ վերաբերմունքը հետագայում դարձավ նրա մասնագիտական հաջողությունների հիմքը:

1965 թվականին Ղափանում հիմնադրվեց Երևանի լամպերի գործարանի մասնաճյուղը, և Յուրիկ Բենիամինյանը նշանակվեց տեխնիկական ղեկավար: Նոր գործարան էր, նոր խնդիրներ, նոր պատասխանատվություն: Սակայն հենց

Փորձի փոխանակման նպատակով՝ Բեռլինի «Նարվա» գործարանում (1982 թ.)

նման իրավիճակներում էր իրեն առավել վստահ զգում:

Աշխատանքին զուգահեռ շարունակել է կրթությունը՝ 1968 թվականին հեռակա կարգով ավարտելով Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը: Այդ տարիներին արդեն աշխատում էր գործարանի գլխավոր մեխանիկ:

Բայց նրա կյանքում կար ևս մեկ կարևոր սեր՝ մանկավարժությունը:

1962-1968 թվականներին, հիմնական աշխատանքին զուգահեռ, դասավանդել է Լենինանքերի միջնակարգ դպրոցում՝ մասնագիտական կողմնորոշում առարկան, իսկ 1969-1974 թվականներին տեխնիկական առարկաներ է դասավանդել Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումում:

Այդ մասին խոսելիս նրա ձայնի մեջ առանձնահատուկ ջերմություն է հայտնվում: Ասում է՝ միշտ սիրել է սովորեցնել, երիտասարդների հետ աշխատել, փոխանցել այն, ինչ ինքն էր սովորել տարիների ընթացքում: Հավանաբար հենց այդ պատճառով նրա բազմաթիվ նախկին ուսանողներ մինչև այսօր հիշում են նրան՝ ոչ միայն որպես ղեկավարի, այլև որպես ուսուցչի:

1974 թվականին նշանակվել է Ղափանում և Քաջարանում հիմնադրվող Երևանի «Ռելե» գործարանի մասնաճյուղերի գլխավոր ինժեներ: Այդ շրջանն անվանում է իր կյանքի ամենադժվար և ամենահետաքրքիր տարիները: Միաժամանակ պետք էր կազմակերպել երկու նոր արտադրության աշխատանք, լուծել բարդ տեխնիկական և կազմակերպչական խնդիրներ, պատրաստել մասնագետներ և ստեղծել մի բան, որը մինչ այդ գոյություն չուներ:

1979 թվականին Յուրիկ Բենիամինյանը նշանակվեց Երևանի լամպերի գործարանի Ղափանի մասնաճյուղի գլխավոր ինժեներ, իսկ մեկ տարի անց՝ տնօրեն: Այդ պաշտոնում աշխատեց մինչև 2001 թվականը:

Այդ տարիները գործարանի վերելքի տարիներն էին:

Նրա ղեկավարությամբ ձեռնարկությունում իրականացվեց տեխնիկական վերազինում, տարեցտարի ավելացան արտադրության ծավալները, ընդլայնվեցին հնարավորությունները: Եթե սկզբում գործարանում աշխատում էր շուրջ հինգ հարյուր մարդ, ապա հետագայում աշխատակիցների թիվն անցավ հազարը, և այն դարձավ քաղաքի խոշորագույն ձեռնարկություններից մեկը:

Խորհրդային տարիներին Ղափանի արդյունաբերական կյանքում առանձնահատուկ տեղ ուներ Երևանի լամպերի գործարանի մասնաճյուղը, որի արտադրանքն առաքվում էր Խորհրդային Միության տարբեր քաղաքներ: Այդ ձեռնարկության զարգացման ու կայացման պատմության հետ անքակտելիորեն կապված է Յուրիկ Բենիամինյանի անունը, ով այն ղեկավարել է ավելի քան երկու տասնամյակ:

Յուրիկ Բենիամինյանի ղեկավարած կոլեկտիվին է հանձնվում փոխանցիկ դրոշ՝ հանրապետական մրցույթում հաղթելու համար (1987 թ.)

Նրա աշխատանքը գնահատվել է նաև պետական մակարդակով՝ արժանանալով ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի (ԺՏՆՑ) արծաթե մեդալի: Սակայն տարիների հեռվից առավել արժեքավոր են թվում ոչ թե պարգևներն ու պաշտոնները, այլ այն մարդկային հարաբերությունները, որոնք կարողացել է ստեղծել ու պահպանել. այսօր էլ առանձնակի ջերմությամբ է հիշում գործընկերներին, ընկերներին ու այն մարդկանց, որոնց հետ կիսել է իր աշխատանքային կյանքի ամենահիշարժան տարիները:

Իսկ երբ խոսում է ընտանիքի մասին, դեմքի արտահայտությունն ամբողջությամբ փոխվում է:

Դեռ ուսանող էր, երբ արձակուրդներին եկել էր Ղափան: Բարեկամներ էին եկել, միասին պետք է գյուղ գնային: Այդ օրն էլ առաջին անգամ տեսավ այն աղջկան, ով հետագայում դարձավ իր կյանքի ուղեկիցը: Այդ դրվագը պատմելիս նրա դեմքին անմիջապես ժպիտ է հայտնվում, իսկ աչքերում՝ նույն երիտասարդական փայլը: Սովորական մի օր էր, սովորական մի ծանոթություն, որը ժամանակի ընթացքում դարձավ մեծ և ամուր ընտանիքի սկիզբ:

Երկար տարիներ ընտրվել է Ղափանի քաղխորհրդի պատգամավոր, ղեկավարել արդյունաբերության, տրանսպորտի և կապի հանձնաժողովը:

1999 թվականին հիմնադրել է «Օլբեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և մինչ օրս աշխատում է որպես հիմնադիր տնօրեն:

Յուրիկ Բենիամինյանի կյանքի ճանապարհը տարիներ շարունակ ընթացել է Կապանի զարկերակի հետ նույն ռիթմով:

ԻՋԱ ԱՍՇԱՏՐՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՁՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Գյունաշյան Յուրի Աշոտի

Յուրի Գյունաշյանը ծնվել է 1936 թվականի հունվարի 1-ին Ղափանում: Գյունաշյանները սերում են Կարսից, 1887 թվականին տեղափոխվել են Գյումրիի Ազատան գյուղ: Յուրիի հայրը՝ Աշոտ Գյունաշյանը, պարտադիր զինծառայությունն անցկացրել է Զանգեզուրում: Նախ՝ Մեղրիի շրջանի Կալեր գյուղում, հետո՝ Ղափանում, որտեղ հիմնավորվեց և ընտանիք կազմեց: Աշոտ Գյունաշյանն ակտիվորեն մասնակցել է Հայրենական մեծ պատերազմի ամենախոշոր՝ Ստալինգրադի ճակատամարտին: Նա առաջիններից մեկն էր, ով իր մեքենայով անցել է Դոն գետը: Փառքով տուն վերադարձավ և մեծ եռանդով լծվեց քայքայված տնտեսության վերականգնմանը: Ղափանում վարորդական գործի սկզբնավորողներից էր և մեծ դեր խաղաց վարորդական կադրերի պատրաստման գործում:

Յուրի Գյունաշյանն իր ապրած կյանքով ձգտել է նմանվել պատերազմի քառուղիներով անցած հորը, և դա նրան մեծապես հաջողվել է:

Նախ սովորել է Ղափանի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում, ապա միջնակարգ կրթություն ստացել Շրվենանցի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1955 թվականին:

Երեք տարի (1955-1958 թթ.) ծառայել է խորհրդային բանակում:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Ղափանի պղնձահանքային կոմբինատի մեխանիկական արտադրամասում՝ ավտոփականագործ:

Արտադրական ուսուցման վարպետ է եղել Քաջարանի պրոֆտեխուսումնարանում, աշխղեկ է աշխատել Ղափանի թիվ 4 շինվարչությունում, Ղափանի թիվ 8 մանկապարտեզն իր ղեկավարած աշխղեկությունն է կառուցել: Ապա Ղափանի կուսշրջկոմը նրան գործուղել է Մեղրիի շրջանի Ագարակ քաղաք՝ պրոֆտեխուսումնարանի տնօրենի ուսումնական գծով տեղակալ:

Աշխատանքին զուգընթաց՝ հեռակա կարգով, ավարտել է Մոսկվայի լեռնային ինստիտուտը:

Բուհն ավարտելուց հետո 1968 թվականին աշխատել է Ղափանի քաղխորհրդի գործկոմի կապիտալ շինարարության բաժնում՝ գլխավոր ճարտարագետ:

1970 թվականին նշանակվել է Ղափանում նոր հիմնադրված ջրմուղ-կոյուղու վարչության պետ և ջրային տնտեսության համակարգում աշխատել մինչև 2006 թվականը:

Որոշ ժամանակ՝ 2003-2006 թթ., ղեկավարել է շրջանի ոռոգման համակարգը՝ տեղամասի պետի կարգավիճակով:

2007-2009 թվականներին աշխղեկ է աշխատել «Նորոգշին» ընկերությունում, որտեղից՝ որպես ջրմուղ-կոյուղու ոլորտի մասնագետ, գործուղվել է աշխատելու Ստեփանակերտ քաղաքում: Այդտեղ էլ իրեն դրսևորել է լավագույն կողմերով՝ աշխատելով երեք տարի: Կենսաթոշակի անցնելուց հետո էլ աշխատում է հարուստ փորձով օգտակար լինել իր կրտսեր գործընկերներին: Անգամ հիշում է, թե Կապանում որ ջրագիծը, որ թվականին է անցկացվել, որտեղով է անցնում:

Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Յուրի Գյունաշյանն ունի մեկ որդի և մեկ դուստր:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՁՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Կարապետյան Արարատ Սերգեյի

Ծնվել է 1952 թ. դեկտեմբերի 13-ին Ղափան քաղաքում:

1959 թ. ընդունվել է Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցը եւ սովորել մինչեւ 1967 թվականը:

Նույն թվականին ընդունվել է Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, ավարտել 1971-ին՝ ստանալով տեխնիկ-երկրաբանի որակավորում:

1972-74 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1974 թ. ընդունվել է Ղափանի շինարարական տեխնիկումը եւ ավարտել 1977 թ.՝ ստանալով տեխնիկ-շինարարի որակավորում:

Նույն թվականին ընդունվել է աշխատանքի Ղափանի շինարարության վարչությունում՝ բանվոր, բրիգադավար, այնուհետեւ՝ աշխղեկ:

1985 թ. մինչեւ 1988 թ. աշխատել է Ղափանի բանմատբաժնում: 1988 թ. աշխատել է Ղափան քաղաքում՝ արտադրության բաժնի վարիչ:

1988-92 թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել Կապանի սահմանների պաշտպանության գործին՝ լինելով Նժդեհի անվան ջոկատի շտաբի պետ:

1990-ականների վերջերից մինչեւ 2026 թ. ղեկավարել է «Կապանի ճշշ» ՓԲ ընկերությունը:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

ԴՐՎԱԳՆԵՐ՝ ԱՐԱՐԱՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

■ 2021 թ. նոյեմբերի 15-ին Ադրբեջանը մաքսակետ տեղադրեց Կապան-Ճակատեն ճանապարհին...

Այդ ժամանակ էլ սկսվեց այլընտրանքային ճանապարհի նորոգում-կառուցումը, որն անցնում է Գեղանուշ գյուղով...

... Նոյեմբերի վերջին պետական մակարդակով որոշում կայացվեց՝ կառուցելու հիմնական՝ 8 կմ երկարությամբ ճանապարհ՝ մինչև այժմ գործող միջպետական ճանապարհին զուգահեռ...

Մ-17 ճանապարհի նոր՝ Ադրբեջանի անցակետը շրջանցող հատվածի կառուցումը վստահվեց «Կապանի ճշշ» ՍՊ ընկերությանը:

Կառուցվող ճանապարհը, ամենայն հավանականությամբ, ավելի հարմարավետ կլինի, քան Մ-17-ի մինչ այդ գործած հատվածը: Եվ, այդուհանդերձ, խոստովանենք, նոր ճանապարհը կառուցվում է լեռնային դժվար ռելիեֆ ունեցող տարածքում, որը, առաջին հայացքից, անհաղթահարելի է թվում:

Ի դեպ, նոր ճանապարհի կառուցման գրոհը սկսվել է երկու ճակատով. առաջին՝ գործող մայրուղուց դեպի հարավ, երկրորդ՝ Մ-17-ի՝ Ճակատեն չհասած հատվածից...

Եվ չնայած առկա դժվարություններին, արդեն իսկ ճանապարհաշինարարները հողային զգալի աշխատանք են կատարել (նաեւ պայթեցումների միջոցով)՝ Կապանի կողմից՝ 1,2 կմ, Ճակատենի կողմից՝ մոտ 4 կմ երկարությամբ:

Աշխատանքների բարեհաջող իրականացումը հնարավոր է դարձել ճանապարհաշինական արդիական տեխնիկայի գործածմամբ:

Այցելելով աշխատանքային տեղամա-

սեր՝ կառուցվող ճանապարհի աջ՝ ճակատենից ձգվող հատվածում հանդիպեցինք ընկերության տնօրեն Արարատ Կարապետյանին, ով համակարգում էր աշխատանքները: Մեր այցի պահին նա ուղղորդում էր մեքենավարին, ով փորձում էր հստակեցնել ճանապարհի ենթադրյալ ուղին:

– Ես խոսել չեմ սիրում, ահա մեր արած գործը, ինքներդ տեսեք ու գնահատեք, – այդպես արձագանքեց ճանշինի ղեկավարը՝ զրուցելու մեր առաջարկին:

Եվ, այնուամենայնիվ, նա անդրադարձավ շինարարության ընթացքին.

«Ճանապարհը Մ-17 մայրուղու մաս է լինելու, համապատասխանելու է բոլոր պահանջներին, ունենալու է 8-9 մետր լայնություն, որից 6,6 մետրը՝ երթեւեկելի: Իսկ դժվարությունները հաղթահարելի են, եթե ցանկանում ես գործ անել: Դժվարությունները հաղթահարելու միայն մի եղանակ կա՝ անընդհատ աշխատանք. այստեղ ում տեսնում եք՝ բոլորը լուսաբացից մինչեւ արեւամուտ աշխատում են»:

Այնուհետեւ միանում ենք Արարատ Կարապետյանին՝ քայլելով դեպի լեռնալանջի թեքության վրա հազիվ նշմարվող դրոշակը. պարզվում է՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տրամադրած հզոր տեխնիկայի օգնությամբ փորձ է արվում հարթել լեռան մի մեծ ու ցցուն զանգված, ապա քարի ու հողի դուրս բերված կույտը լցնել ձորակն ու մի քանի մետր եւս առաջ տանել՝ անգամ կածանատեղ չունեցող ու մարդկային երեւակայության մեջ առայժմ չտեղավորվող ճանապարհը:

Մոտ մեկ ժամ զարմանքով ու հիացմունքով հետեւում էինք մեքենավարների աշխատանքին...

Բաժանվում ենք՝ հաջողություն մաղթելով ճանապարհաշինարարներին՝ հույսով, որ հայ շինարարի ձեռքն ու կամքն ի զորու են առ ոչինչ դարձնելու թշնամու պարտադրած դժվարությունները:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» 16 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

■ 2023 թ.նոյեմբերի 26-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում կայացավ «Վարկանիշ» ընկերության կազմակերպած «THE LEADER 2023» մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը: Մեծարման երեկո, որը տնտեսության ու գիտության առաջատար ընկերությունների և ականավոր անհատների գնահատանքն է: Մրցանակաբաշխության համար հիմք են հանդիսացել «Էմպիրիկա» հետազոտական ընկերության կատարած սոցիոլոգիական հարցումները և փորձագիտական եզրակացությունները:

Հանրապետության հարավային՝ Կապանի տարածաշրջանի ռազմավարական նշանակության ճանապարհների կառուցման և սպասարկման համար «THE LEADER 2023»-ը շնորհվեց «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերությանը (տնօրեն՝ Արարատ Կարապետյան):

ՀԻՇՈՒՄ Է ԱՐԱՐԱՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

■ «Կապանի ՃՇՇ» ընկերությունը շատ վաղուց է սկսել իր գործունեությունը և երկար ճանապարհ ունի անցած: Այն գործում է դեռ Խորհրդային Միության ժամանակաշրջանից և այդ տարիների ճանապարհաշինարարական ընկերության իրավահաջորդն է: Ինքս այստեղ աշխատանքի եմ անցել 1999 թ.-ից և անմիջապես զբաղվել ընկերության սեփականաշնորհման աշխատանքներով: Այդ տարիներին ընկերության աշխատանքները բավականին դժվարություններով էին կազմակերպվում, բայց քիչ-քիչ վերազինելով ողջ հիմնարկությունը, նոր սարքավորումներ ձեռք բերելով՝ կարողացանք զարգացնել և ունենալ այնպիսի արդյունք, որից կարող ենք անգամ ինքներս գոհ մնալ:

Մենք փորձում ենք այնպես աշխատել, որ մեզանից հետո որևէ մեկը չդժգոհի կամ չվատաբանի մեր արած աշխատանքը: Մեր ընկերությունը ոչ միայն շինարարական, այլ նաև Կապանի տարածաշրջանի միջպետական, հանրապետական և մարզային նշանակություն ունեցող ճանապարհների պահպանման և սպասարկման աշխատանքներով է զբաղվում: Ընդհանուր առմամբ սպասարկում ենք 229 կմ երկարությամբ ճանապարհահատված:

Արդեն մեկ քառորդ դար այս համակարգում եմ, մեր թիմով իրականացրել ենք բազմաթիվ խոշոր ծրագրեր, որոնք կարևոր նշանակություն են ունեցել մեր երկրի համար: Դրանցից են 2000-2001 թթ. կառուցած Մեղրի-Կապան այլընտրանքային ճանապարհը, որի կառուցմանն ընդգրկված էր չորս կազմակերպություն:

Կառուցել ենք դեպի Ճակատեն տանող այլընտրանքային ճանապարհը, որն ավելի ապահով է քաղաքացիների համար:

Ճանշինում իմ գործունեության երկրորդ-երրորդ տարին էր դեռ, երբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից պարգևատրվեցի «Անանիա Շիրակացի» հուշամեդալով: Որպես գործունեության վաստակ, այն մյուս մեդալների բացումն է արել՝ առաջինը լինելով, ինչն այդ պահին ինձ մեծ հպարտություն և ինքնագոհություն էր պարգևել:

Ինձ համար կարևոր է 2009 թ. ժնևում ստացած INTERNATIONAL QUALITY AWARD մրցանակը, քանի որ այդ տարիներին մրցանակներ էին ստանում նրանք, ովքեր մեջքի հետևում աջակցող ուժ ունեին, իսկ իմ հետևում ոչ մեկը չկար, ինձ համար անակնկալ էր նման գնահատանքը: Հանրապետությունում մի քանի ընկերություն արժանացան նրանց մրցանակին, որոնց շարքում՝ «Կապանի ՃՇՇ»-ն էր:

Մյուս հիշվող մրցանակներից են 2019 թ. «Մերկուրի»-ն՝ տրված ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից, 2022 թ. Դուբայում «Որակի նշան» մրցանակաբաշխությանը ստացած «International Quality Mark» մրցանակը, և միջազգային ու տեղական մի շարք այլ մրցանակներ:

Իհարկե, ամեն մրցանակ, պատվոգիր ոգեշնչում է ավելի զարգանալ և առաջ գնալ: Հետագայում նմանատիպ մեդալներ և շնորհակալագրեր շատ եմ ստացել, բայց այսքան մրցանակներից զատ՝ ինձ համար կարևոր է իմ ժողովրդի գոհունակությունը:

//

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՁՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Համբարձումյան Ռաֆիկ Արտաշեսի



«Առաջինը՝ որակ, երկրորդը՝ որակ, երրորդը՝ դարձյալ որակ». Ռաֆիկ Համբարձումյանի համար այս խոսքերը պարզապես մասնագիտական սկզբունք չեն, այլ՝ ապրելու և արարելու կարգախոս:

Ավելի քան կես դար շինարարության ոլորտում է, սակայն այսօր էլ, երբ խոսում է իր անցած ճանապարհի մասին, ավելի շատ հիշում է ոչ թե զբաղեցրած պաշտոնները, այլ՝ կառուցված ճանապարհները, թունելներն ու մարդկանց, որոնց հետ աշխատել է:

Ռաֆիկ Համբարձումյանը ծնվել է 1949 թ. նոյեմբերի 2-ին Ղափանում: Մանկությունն անցել է հանքագործների ու շինարարների քաղաքում, որտեղ աշխատասիրությունն ու պատասխանատվությունն ապրելու կերպ էին:

1956 թվականին ընդունվել է Ղափանի թիվ 3 ռուսական դպրոցը, որն ավարտել է 1966 թվականին: Նույն թվականին ընդունվել է Մոսկվայի լեռնային ինստիտուտի «Բաց հանքային մշակումներ» ֆակուլտետը: Հենց այդ ընտրությամբ էլ սկսվել է նրա երկար ու պատասխանատու մասնագիտական ճանապարհը:

Ուսանողական տարիները հիշում է առանձնակի ջերմությամբ: Դեռ առաջին

կուրսում նրան ընտրել էին խմբի ավագ: Այդ վստահությունը պատահական չէր: Պատասխանատվության զգացումն ու մարդկանց նկատմամբ հոգատար վերաբերմունքը նրա բնավորության անբաժանելի մասն էին: Միշտ փորձում էր պաշտպանել կուրսընկերների շահերը, օգնել նրանց և անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի ոչ ոք անարդարության կամ դժվարությունների պատճառով չտուժեր: Այդ տարիներն էին, որ նրա մեջ ավելի ամրապնդեցին համոզմունքը, որ իսկական ղեկավարն առաջին հերթին պետք է լինի պատասխանատու և մարդկային:

1971 թվականին ավարտելով ինստիտուտը՝ Ռաֆիկ Համբարձումյանը վերադարձել է հայրենի Ղափան՝ իր գիտելիքներն ու փորձը ծառայեցնելու ծննդավայրի զարգացմանը:

1972-1978 թվականներին աշխատել է Քաջարանի հանքաշինական մասնագիտացված վարչությունում՝ մասնակցելով թունելների շինարարությանը: Այդ տարիները նրա մասնագիտական կայացման ամենադժվար, բայց նաև ամենակարևոր փուլերից էին:

Թունելի շինարարությունը մեծ համբերություն, ճշգրտություն և պատասխանատվություն պահանջող աշխատանք է: Երբեմն աշխատանքային օրը ձգվում էր մինչև ուշ գիշեր, իսկ յուրաքանչյուր նոր մետր հաղթահարվում էր մեծ ջանքերով: Հիշում է, թե ինչպես էին երկար ու ծանր հերթափոխից հետո դուրս գալիս թունելից՝ հոգնած, փոշոտ, բայց ներքուստ բավարարված, որովհետև գիտեին՝ իրենց կատարած աշխատանքը վաղը ծառայելու է մարդկանց: **«Այն ժամանակ բոլորս աշխատանքին նվիրված էինք,–** ասում է նա, **– մեզ համար ամենակարևորն աշխատանքը լավ անելն էր»:**

1978 թվականին Ռաֆիկ Համբարձումյանն աշխատանքի է անցել

«Трансвзрывпром» կազմակերպությունում:

Նրա մասնագիտական գործունեության ամենապատասխանատու էջերից մեկը Քաջարան-Մեղրի ճանապարհի շինարարությունն էր: Սա պարզապես ճանապարհաշինական ծրագիր չէր. այն ռազմավարական նշանակություն ունեցող կառույց էր, որի ընթացքին հետևում էին թե Հայաստանի ղեկավարությունը, թե ԽՍՀՄ համապատասխան նախարարությունները:

Ամեն շաբաթ Մոսկվա և Երևան էին ուղարկվում մանրամասն հաշվետվություններ. քանի մետր ճանապարհ է կառուցվել, որքան ժայռ է պայթեցվել, ինչ ծավալի հողային աշխատանք է կատարվել: Ժամկետները սեղմ էին, իսկ սխալվելու իրավունք գրեթե չունեին: Այդ պատասխանատվությունը, սակայն, Ռաֆիկ Համբարձումյանի համար երբեք բեռ չէր. այն լրացուցիչ պարտականություն էր՝ աշխատանքն առավել բարեխիղճ կատարելու:

Մինչև այսօր առանձնակի ջերմությամբ է հիշում այդ տարիները: Ասում է՝ ամենադժվար պայմաններում անգամ աշխատակիցների համար ամենամեծ գնահատականը լավ կատարված գործն էր: **«Այն ժամանակ մարդկանց գնահատում էին կատարված աշխատանքի որակով»,** – հիշում է նա: Հենց այդ տարիներին էլ ավելի ամրապնդվեց նրա համոզմունքը, որ շինարարի ամենամեծ պատասխանատվությունը ոչ թե շենք կամ ճանապարհ կառուցելն է, այլ այնպիսի գործ թողնելը, որը տարիներ անց էլ կծառայի մարդկանց:

1982-1984 թվականներին Ռաֆիկ Համբարձումյանը գործուղվել է Լաոս, որտեղ մասնակցել է Լաոս-Վիետնամ ճանապարհի կառուցմանը: Հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռու նույն նվիրումով ու պատասխանատվությամբ էր աշխատում՝ համոզված լինելով, որ յուրաքանչյուր հայ մասնագետ իր աշխատանքով է ներկայացնում իր երկիրը: Այդ տարիները նրա համար դարձան ոչ միայն մասնագիտական փորձի, այլև կյանքի կարևոր դպրոց:

1989 թվականին աշխատակիցների վստահությամբ ընտրվել է Ղափանի շինանյութերի կոմբինատի տնօրեն: Նրա ղեկավարության տարիներին մեկնարկել է քարի մշակման գործարանի հիմնադրման աշխատանքը, որը կարևոր ներդրում էր քաղաքի արդյունաբերության զարգացման մեջ:

1997 թվականին՝ շուրջ յոթ-ութ ամիս, աշխատել է Սյունիքի մարզպետարանում՝ զբաղեցնելով բնապահպանության բաժնի վարիչի պաշտոնը: Սակայն, ինչպես ինքն է խոստովանում, իր իրական տարերքը միշտ եղել է շինհրապարակը, որտեղ աշխատանքի արդյունքը կարելի է ոչ միայն տեսնել, այլև զգալ:

1999-2006 թվականներին ղեկավարել է Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական ձեռնարկությունը՝ շարունակելով մասնակցել ճանապարհաշինական կարևոր ծրագրերի իրականացմանը:

Իսկ 2006 թվականին հիմնադրել է «Դեդալ» ՍՊԸ-ն, որը մինչ օրս իրականացնում է շինարարական աշխատանքներ:

Տարիներն անցել են, փոխվել են ժամանակներն ու տեխնոլոգիաները, սակայն նրա աշխատանքի գլխավոր չափանիշը մնացել է անփոփոխ՝ որակը:

Չնայած զբաղեցրած պաշտոններին՝ իրեն երբեք ղեկավար չի համարել և չի առանձնացրել աշխատակիցներից: Ասում է, որ ամեն առավոտ իր վարպետներին և տեխնիկական անձնակազմին միայն մեկ բան էր հիշեցնում. **«Եթե շինանյութից մի քիչ ավել ծախսվի, կարելի է ներել, բայց եթե որակը վատ լինի՝ երբեք»:** Նրա համոզմամբ՝ շինարարի անունը մնում է իր կառուցած շենքերի ու ճանապարհների տարեգրության մեջ:

Այսօր էլ ուշադիր հետևում է Կապանում իրականացվող շինարարական աշխատանքներին: Գոհունակությամբ նշում է, որ քաղաքում իրականացվում են մեծածավալ և որակյալ ծրագրեր, ու վստահ է՝ լավ շինարարությունը դիմանում է ժամանակների քննությանը:

Սակայն իր կյանքի ամենամեծ ձեռքբերումը Ռաֆիկ Համբարձումյանը ոչ թե կառուցած ճանապարհներն ու զբաղեցրած պաշտոններն է համարում, այլ՝ ընտանիքը: Երկու զավակի և չորս թոռան երջանիկ հայր ու պապիկ է: Թոռների մասին խոսելիս նրա դեմքին անմիջապես ջերմ ժպիտ է հայտնվում. **«Ես նրանց հետ պապիկություն չեմ անում, ես նրանց հետ ընկերություն եմ անում»:** Այդ մի քանի բառը բավական է հասկանալու, թե որքան մտերիմ ու հոգատար մարդ է նա ընտանիքում:

Նրան ճանաչողները գրեթե միաձայն ասում են՝ համեստ մարդ է: Ինքն էլ այդ համեստությունը բացատրում է շատ պարզ. **«Կարևորը խղճիդ առաջ հանգիստ լինելն է»:** Հավանաբար հենց այդ պատճառով, երբ պատմում է իր երկար ու հարուստ աշխատանքային ճանապարհի մասին, ավելի հաճախ հիշում է գործընկերներին, հաղթահարված դժվարությունները, կառուցած ճանապարհներն ու թունելները, քան անձնական հաջողությունները:

Իսկ երիտասարդներին ուղղված նրա խորհուրդը նույնքան պարզ է, որքան իր ապրած կյանքը. **«Սովորեք աշխատել բարեխղճորեն: Ամենակարևորը որակն է: Մարդուն վերջում գնահատում են ոչ թե նրա խոսքերով, այլ իր գործով»:** Թվում է՝ հենց այս մի քանի նախադասության մեջ են ամփոփված Ռաֆիկ Համբարձումյանի կյանքի սկզբունքները՝ ազնիվ աշխատանք, պատասխանատվություն և այնպիսի գործ, որը ժամանակի ընթացքում ոչ թե կորցնում, այլ միայն հաստատում է իր արժեքը:

//

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Հովհաննիսյան Էդիկ Լևոնի

Էդիկ Հովհաննիսյանի շինարարական գործունեությունը չափվում է մոտ կես դարով: Իր ձեռագիրն է թողել շենք-շինությունների վրա: Ընդ որում՝ նրա շինարարական գործունեությունը չի սահմանափակվել միայն Կապան քաղաքով, այլ Քաջարան, Մեղրի և Ագարակ քաղաքներում է մասնակցել տարբեր օբյեկտների շինարարությանը:

Նրա կյանքի մի հատվածն առնչվում է ջրային տնտեսությանը: Կապանի շրջանի ցանքատարածությունների ոռոգումը նրա ղեկավարած հիմնարկի միջոցով է իրականացվել:

Ծնվել է 1944 թ. սեպտեմբերի 26-ին Ղափանում: Միջնակարգ կրթություն է ստացել Ղափանի թիվ 3 ռուսական դպրոցում:

Պատանեկան տարիներից նրան ձգել է շինարարի մասնագիտությունը:

1965-1970 թթ. սովորել և ավարտել է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» ֆակուլտետը:

Բուհն ավարտելուց հետո աշխատանքային գործունեությունը սկսել է «Քաջարանշին» տրեստում՝ աշխղեկ:

Կապանի շրջանի կառուցապատման գործում անգնահատելի է շինարարական այդ կազմակերպության դերը, ասել է թե՝ կառուցվող շենք-շինությունների մեծ մասի վրա կան նաև Էդիկ Հովհաննիսյանի մատնահետքերը:

Այնուհետև ղեկավարել է Քաջարանի քաղխորհրդի գործկոմի շինորոգման տեղամասը, որից հետո եղել է «Քաջարանշին» տրեստի թիվ 66 շինվարչության պետ:

Նրա գործունեության հաջորդ ոլորտը Քաջարանի հանքաշինական մասնագիտացված վարչությունն էր՝ մատակարարման գծով պետի տեղակալ:

1990-ական թվականների սկզբից Էդիկ Հովհաննիսյանը ջրային տնտեսության ոլորտում էր՝ ջրային տնտեսության արտադրական ձեռնարկության տնօրեն:

Այնուհետև հիմնադրել է «Էվիամ» կոոպերատիվը՝ իրականացնելով շինարարական և բարեկարգման աշխատանքներ: Մասնավորապես, նրա կոոպերատիվի ուժերով երկու փոքր հիդրոէլեկտրակայան են գործարկվել Լեհվազ և Լիճք գյուղերում:

Վաստակաշատ մարդը բարձր է պահել շինարարի կոչումը, խղճի մտոք իրականացրել տարբեր օբյեկտների շինարարությունը: Էդիկ Հովհաննիսյանի հետ զրուցելիս պարզվում է, որ նրա շինարարական գործունեությունը մեծապես արդյունաբերական ուղղվածություն է ունեցել: Քաջարանի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների շատ կառույցներ գործարկվել են նրա ղեկավարած շինարարական կազմակերպության ուժերով: Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայում տեխնիկական վերազինման համար պայմաններ է ստեղծել, ավելի վաղ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքաբարի տեղափոխման ճոպանուղու 4-րդ և 5-րդ հոսքագծերի գործարկումը նրա շինկազմակերպության միջոցով է իրականություն դարձել:

Էդիկ Հովհաննիսյանին խորթ չէր նաև հասարակական աշխատանքը: Հիմնական աշխատանքին զուգահեռ 1999-2007 թվականներին «Այունիք» համատիրության նախագահն էր:

Էդիկ Հովհաննիսյանն օրինակելի ընտանիք ունի, նրա ընտանիքում հասակ են առել երկու որդի:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՁՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Մարտիրոսյան Վլադիկ Շմավոնի

Վլադիկ Մարտիրոսյանը հանրապետությունում հայտնի բնապահպան է, անտառագետ, անտառային գործի լավագույն մասնագետ: Ծանրակշիռ ավանդ ունի Ղափանի շրջանի ֆլորայի ու ֆաունայի պահպանման գործում: Նաև տնկարան է հիմնել, փորձել աջակցել անտառվերականգնման գործին: Հաջողություններին նպաստել է այն, որ մասնագիտական բարձրագույն կրթություն է ստացել՝ անտառային տնտեսության ինժեների որակավորմամբ:

Ծնվել է 1945 թվականի փետրվարի 10-ին Ղափանի շրջանի Նորաշենիկ գյուղում:

1952-1959 թթ. սովորել է Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, ստացել ութամյա կրթություն:



«Կանաչազարդ երկիր» ՀԿ–ի նախագահ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի հետ

1959-1963 թթ. ուսանել է Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումում:

1963-1965 թթ. ուսանել է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, ապա ուսումը շարունակել և 1968 թվականին ավարտել է Ռուսաստանի Դաշնության Սվերդլովսկ քաղաքի Ուրալի անտառատեխնիկական ինստիտուտը:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հետ՝ Ծավ–Մեղրի կառուցվող ճանապարհը Մթնաձորը շրջանցելու խնդրի քննարկման ժամանակ

1969 թվականին վերադարձել և աշխատանքի է անցել Ղափանի անտառտնտեսությունում, և որպես ինժեներ աշխատել մինչև 1976 թվականը:

1976-1980 թվականներին Ղափանի անտառտնտեսության գլխավոր ինժեներն էր, իսկ 1980-1990 թվականներին՝ տնօրենը:

1990-1991 թթ. եղել է ժողովրդական վերահսկողության Ղափանի շրջանային կոմիտեի նախագահը:

1991-1992 թթ. Ղափանի կաթի գործարանի, իսկ 1992-1998 թթ. կրկին Ղափանի անտառտնտեսության տնօրենն էր:

1998-2000 թվականներին Շիկահողի պետական արգելոցի տնօրենն էր:

2000-2002 թթ. աշխատել է «Թունել» ՓԲԸ-ում՝ տնօրենի տեղակալ:

2003 թ. ՀՀ Սյունիքի մարզպետ Էդիկ Բարսեղյանի խորհրդականն էր:

2003-2010 թթ. աշխատել է «ՁՊՄԿ» ՓԲԸ բնապահպանության բաժնում՝ առաջատար մասնագետ:

2004 թվականին հիմնադրել է մինչև օրս գործող «Խուստուփ» բնապահպանական հասարակական կազմակերպությունը:

2010-2012 թթ. «ՎԱՄԱՔՍ» ՍՊԸ տնօրենն էր:

2012-2016 թթ. աշխատել է «ՁՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի բնապահպանական հարցերով խորհրդական:

Խորհրդատվություն. հերթական ծառատունկի ժամանակ

2016 թվականին կենսաթոշակի անցնելուց հետո չի թողել սիրած զբաղմունքը...

Վլադիկ Մարտիրոսյանն ունի երկու դուստր, մեկ որդի:

Վլադիկ Մարտիրոսյանի հիմնած տնկարանը

Նորաշենիկ գյուղի Հասար տեղամասում՝ 2008 թվականին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի այն ժամանակվա տնօրեն Մաքսիմ Հակոբյանի աջակցությամբ, Վլադիկ Մարտիրոսյանը տնկարան հիմնեց: Մեկ հեկտար տարածություն է զբաղեցնում: Նորաշենիկ գետի ափին է, բայց քանի որ գետի հունն ավելի ցածր է, քան իր տնտեսությունը, 1,5 կմ հեռավորությունից ոռոգման ջուր է անցկացրել: Մտնելով տնկարան՝ մի ուրիշ աշխարհում ես հայտնվում, մի որոշ ժամանակ կտրված լարված առօրյայից: Տարբեր ծառատեսակներ են այդտեղ աճում՝ վայրի սովորական տանձենի և խնձորենի, փռշնի, սոսի, թխկի, հուդայածառ, փռվող գիհի, հիմալայան մայրի, մշտադալար թույա, պիխտա, սև հաղարջենի՝ բերված Ռուսաստանից, կատալպա, կարմիր բռինչ (калина красная) և այլն:

Գործը հմտորեն է կազմակերպում Վլադիկ Մարտիրոսյանը, ով մասնագիտական բարձրագույն կրթություն է ստացել՝ անտառային տնտեսության ինժեների որակավորմամբ: Հանրապետությունում հայտնի բնապահպան է, անտառային գործի լավագույն կազմակերպիչ: Երկու անգամ ղեկավարել է Կապանի անտառտնտեսությունը՝ 1980-1990 և 1992-1998 թվականներին, 2004 թվականին հիմնադրել է մինչև օրս գործող «Խուստուփ» բնապահպանական ուղղվածությամբ հասարակական կազմակերպությունը:

Հետաքրքիր է լսել նրա բացատրությունները բազմապիսի ծառատեսակների, նրանց աճեցման, խնամքի, բազմացման և այլնի մասին: «Ծառը երեխայի նման մի բան է, պիտի փայփայես, աճեցնես», - ասում է փորձառու անտառագետը: Նա լավ գիտի յուրաքանչյուր ծառի լեզուն: Օրինակ, ասում է, որ ուռատերև տանձենին անջրդի պայմաններում էլ է աճում, նույնիսկ քերծերի վրա: Եվս մի հանգամանք, նա ծառերն աճեցնում է սերմերով, այն կարծիքն ունի, որ սերմերով աճեցրածի կյանքն ավելի երկար է, քան կտրոններով աճեցրածինը: Տնկարանում օգտագործում է միայն օրգանական պարարտանյութեր, տանը գոյացած բանջարաբոստանային մշակաբույսերի, մրգերի մնացորդները լցնում է փոսորակ մի տեղ, փտելուց հետո օգտագործում որպես պարարտանյութ:

Օրինակ պատմում է, որ 1990-ական թվականների սկզբի մութ ու ցուրտ տարիներին անտառներին մեծ վնաս հասցվեց, մանավանդ կացնի զոհ դարձան վայրի կեռասենին, ծտընտանձին (рябина глоговина), որոնց պտուղները կեր էին թռչունների և կենդանիների համար: Ինքն առաջարկել է, և տնկարանից 18-20 հազար վայրի պտղատուների տնկիներ են տարել, ընդ որում՝ հանրապետության տարբեր վայրերից:

Հյուսիս-հարավ ճանապարհը որքան էլ ռազմավարական նշանակություն ունի մեր տարածաշրջանի համար, դրա կառուցումն անդառնալի վնաս հասցրեց բնությանը: Վնասը որոշակիորեն փոխհատուցելու համար խնդիր է դրված ծառ տնկել: «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը նախաձեռնել է երեք փուլով իրականացվող մեծածավալ ծառատունկ, որի առաջին փուլին մասնակցել է Վլադիկ Մարտիրոսյանը: Իր տնկարանից էլ որոշակի քանակությամբ ծառեր տարան...

Տասը տարի առաջ կենսաթոշակի անցնելուց հետո շարունակում է զբաղվել սիրած գործով, նաև օգտակար լինում մարդկանց՝ մասնագիտական խորհուրդներով: Այժմ նրա տնկարանում աճում են թխկիներ, փռշնիներ, հիմալայան մայրիներ, ուռատերև տանձենիներ, որոնք անհրաժեշտ են անտառավերականգնմանը...

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՁՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Ուստաբաշյան Արշակ Թորգոմի



Կապանի մասին խոսելիս Արշակ Ուստաբաշյանի ձայնի մեջ առանձնահատուկ ջերմություն է զգացվում: Տասնամյակների աշխատանքային ուղուց, ղեկավարած կառույցներից ու իրականացրած ծրագրերից առաջ, նախ հիշում է իր մանկության բակը: Հիշում է այն Ղափանը, որտեղ անցել են կյանքի առաջին տարիները, և այն դժվարությունները, որոնք դեռ վաղ տարիքից սովորեցրել են արժևորել աշխատանքն ու պատասխանատվությունը…

Արշակ Ուստաբաշյանը ծնվել է 1953 թվականի մարտի 12-ին Ղափանում՝ ծառայողի ընտանիքում: 1960 թվականին ընդունվել է Ղափանի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը, որն ավարտել է 1970 թվականին: Նրա վրա դպրոցական տարիների ամենամեծ ազդեցությունը, ինչպես ինքն է խոստովանում, ունեցել են մայրը, ավագ քույրը և այն միջավայրը, որտեղ մեծացել է: Հենց նրանք են սովորեցրել՝ երբեք չվախենալ դժվարություններից:

Դպրոցն ավարտելուց հետո մեկ տարի աշխատել է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ փականագործ:

1971 թվականին ընդունվել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը, որն ավարտելուց հետո ստացել է ինժեներ-շինարարի մասնագիտություն:

Ուսանողական տարիները նրա հիշողության մեջ մնացել են որպես կյանքի ամենաջերմ ու ամենաանհոգ շրջանը: Հինգ տարի ապրել է Երևանի Չեյթուն

թաղամասի ուսանողական հանրակացարանում, որտեղ, ինչպես ինքն է ասում, կապանցիները գրեթե մեկ ընտանիք էին դարձել: Կենցաղային դժվարություններն անխուսափելի էին, երբեմն էլ ուսանողական առօրյան սուղ պայմանների մեջ էր անցնում, բայց երիտասարդության ոգևորությունն ու մասնագիտության հանդեպ հետաքրքրությունը բոլոր դժվարություններից ուժեղ էին:

Բուհն ավարտելուց հետո նրա առջև տարբեր ճանապարհներ էին բացվում: Թեև աշխատանքի առաջարկներ կային նաև Երևանում, իսկ տարիներ անց՝ հատկապես 1990-ականներին, նաև Մոսկվայում՝ բարձր վարձատրվող և պատասխանատու պաշտոններում, նախընտրեց վերադառնալ հայրենի քաղաք. **«Ես եկել եմ Կապան՝ իմ ծննդավայրը, իմ օջախը, իմ ամենասիրած վայրն այս երկրագնդի վրա: Տարբեր առաջարկներ եղել են, բայց չեմ գնացել և երբեք չեմ փոշմանել»:**

1976 թվականին աշխատանքի անցավ Ղափանի ջրմուղ-կոյուղու վարչությունում, սակայն շուտով սկսվեց նրա կյանքի մի նոր փուլ: 1977 թվականի մարտից դասավանդեց Ղափանի շինարարական տեխնիկումում: Տարիներ շարունակ կրթեց հարյուրավոր ուսանողների:

1980-1984 թվականներին արդեն տեխնիկումի ցերեկային բաժնի վարիչն էր:

Դասավանդելը նրա համար պարզապես աշխատանք չէր: Այն պատասխանատվություն էր ապագա մասնագետների հանդեպ, և այդ զգացումը հետագայում ուղեկցեց նրան բոլոր պաշտոններում:

1984 թվականին աշխատանքի անցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության Ղափանի շրջանային կոմիտեում, իսկ 1985 թվականին ընտրվեց «Քաջարանշին» տրեստի կուսակցական կոմիտեի ազատված քարտուղար ու աշխատեց մինչև 1991 թ.:

1991-1995 թվականներին ղեկավարեց Մեղրիում գործող թիվ 82 շարժական մեքենայացված շարասյունը, իսկ 1996 թվականին դարձավ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ: Այդ պաշտոնում աշխատեց շուրջ տասնութ տարի՝ մինչև 2014 թվականը: Նրա մասնակցությամբ մշակվել ու իրականացվել են մարզին առնչվող բազմաթիվ շինարարական ծրագրեր, քննարկվել ճանապարհաշինական, բնակավայրերի զարգացման, քաղաքաշինական կարևոր նախաձեռնություններ:

Եթե նրա աշխատանքային կենսագրության մեջ առանձնահատուկ պատասխանատվության մի շրջան կա, ապա դա, անկասկած, 2001 թվականն է: Այդ տարի նրան վստահվեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու շինարարության կազմակերպումն ու համակարգումը:

Սկզբում թվում էր, թե դա պարզապես հերթական շինարարական աշխատանքն է լինելու: Բայց իրականում ամեն օրը նոր խնդիրներ էին առաջանում՝ անհրաժեշտ քարերի արդյունահանում, մշակման կազմակերպում, մասնագետների հավաքում, շինարարության համակարգում, ժամկետների պահպանում: Պետք էր աշխատանքներն ավարտել մինչև Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի հանդիսությունները. **«Փորձ չունեի եկեղեցի կառուցելու, բայց կազմակերպելու փորձ ունեի: Ամեն մանրուքը պետք էր լուծել...»:**

Աշխատանքները ժամանակին ավարտվեցին, և եկեղեցին օծվեց՝ դառնալով Կապանի խորհրդանիշներից մեկը:

2007 թվականին պարգևատրվեց ՀՀ վարչապետի պատվոգրով:

2014-2015 թվականներին ղեկավարել է «Մարիլա» ՍՊԸ-ն, իսկ 2016-2020 թվականներին աշխատել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ-ում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ:

Արշակ Ուստաբաշյանի կյանքում, սակայն, կա ևս մեկ նախասիրություն, որի մասին երկար տարիներ գրեթե ոչ ոք չգիտեր՝ գեղանկարչություն:

Դեռ մանկուց սիրում էր նկարել, նույնիսկ մտածել էր ճարտարապետ դառնալու մասին, սակայն կյանքի ընթացքը նրան տարավ այլ ճանապարհով: Միայն տարիներ անց, երբ աշխատանքային ծանրաբեռնվածությունն արդեն անցյալում էր, վերադարձավ մանկության սիրելի զբաղմունքին. **«Նկարելուց հոգեկան բավականություն եմ ստանում: Գրեթե ամեն օր նկարում եմ: Երբ մարդը սիրով է անում իր գործը՝ դա նրան ուժ է տալիս»:**

Այսօր, հետադարձ հայացք ձգելով անցած ճանապարհին, ավելի հաճախ խոսում է մարդկանց, քաղաքի և այն կառույցների մասին, որոնք ծնունդ են առել նաև իր մասնակցությամբ: //

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՁՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Օհանջանյան Ալբերտ Անդրանիկի

Ալբերտ Օհանջանյանն այն մարդկանցից է, որ բուհն ավարտելուց հետո բախտ չորոնեց օտար ափերում: Հասկանալի է՝ հեշտ չէր թողնել քաղաքի լայնահուն պողոտան և կրկին բռնել գյուղական ծանոթ արահետները: Բայց նաև՝ մի՞թե դժվար է վերադառնալ հայրենի ծննդավայր: Ինչևէ, նա անդամագրվեց հայրենի գյուղի կոլտնտեսությանը և իր ջանքն ու եռանդը ներդրեց այն ոտքի կանգնեցնելու: Եվ արդյունքն էլ երկար սպասել չտվեց: Եղան մարդիկ, ովքեր վերադարձան Ուժանիս, և ծխեցրին հայրենական օջախները: Սա հաղթանակի էր նման: Մի փոքրիկ, հոգսաշատ գյուղի վերածնունդ իրավամբ կապվեց նրա անվան հետ:

Երբ ստանձնեց գյուղի կոլվարչության ղեկավարությունը (1981 թվական), գյուղում 29 ընտանիք կար, 1987 թվականին դրանց թիվը հասավ 52-ի: Պետական միջոցներով գյուղում կառուցվեց չորս երկհարկանի բնակելի տուն և հատկացվեց երիտասարդ ընտանիքներին: Ի սկզբանե այն համոզումն ուներ, թե մարդը կարող է անհատնում բարիք ստեղծել, եթե իր տեղում է:

Ծնվել է 1955 թ. հուլիսի 6-ին Ղափանի շրջանի Ուժանիս գյուղում: Նախ՝ սովորել է ծննդավայրի, ապա հարևան Եղվարդ գյուղի դպրոցում, որն ավարտել է 1972 թվականին: Այնուհետև ավարտել է Ղափանի թիվ 21 պրոֆտեխնիկական ուսումնարանի հաշվապահական բաժինը՝ ստանալով հաշվապահի մասնագիտություն: 1973-74 ուստարում ընդունվել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի անասնաբուծական ֆակուլտետը և ավարտել 1979 թվականին: Ինստիտուտի ռեկտորատը բուհի շրջանավարտին գործուղում էր Կեմերովո՝ ճագարաբուծական համալիրի գլխավոր անասնաբույծ՝ բարձր աշխատավարձով: Երիտասարդ մասնագետին պարտավորվում էին ապահովել բոլոր հարմարություններով:

Նման առաջարկ ամեն նորավարտի չէին անում: Սակայն հրաժարվեց այդ ամենից և ներկայացավ Ղափանի շրջխորհրդի գործկոմ: Նշանակվեց հայրենի գյուղի կոլտնտեսության անասնաբույծ: Կարճ ժամանակում հայրենի գյուղի անասնապահության ոլորտում ներդրեց անասունների աճեցման արդյունավետ մեթոդներ, կթվոր-անասնապահների վարձատրման, խրախուսման նոր եղանակներ, աստիճանաբար ավելացան նրանց եկամուտները:

1980-ին ամուսնացավ: Ունի երեք զավակ՝ երկու որդի, մեկ դուստր, ովքեր բարձրագույն կրթություն են ստացել, և յուրաքանչյուրն իր մասնագիտությամբ է աշխատում:

1981-ին ընտրվել է Ուժանիսի կոլվարչության նախագահ, աշխատել մինչև 1987 թվականը, որից հետո Ղափանի շրջխորհրդի գործկոմի գյուղատնտեսության վարչության պետի առաջին տեղակալն էր:

1990-ին նշանակվել է Սյունիքի թռչնաֆաբրիկայի տնօրեն՝ աշխատելով մինչև 1994 թվականի կեսերը:

Այնուհետև երկու տարի զբաղվել է կոոպերատիվ գործունեությամբ:

1996 թ. նշանակվել է Կապանի մսի կոմբինատի տնօրեն. կոմբինատը երեք տարուց ավելի պարապուրդի մեջ էր: Մեծ ջանքերի շնորհիվ կարողացավ ոտքի կանգնեցնել ձեռնարկությունը: Պաշտպանության նախարարությանը միս էր մատակարարում, որը շարունակվել է մինչև 2016 թվականը:

Չուգահեռ Ալբերտ Օհանջանյանն անհատական տնտեսություն էր վարում՝ արտադրելով գյուղատնտեսական մթերքներ: Նաև հիմնեց օրինակելի այգի: Նրա հիմնած անհատական տնտեսությունում, որն ութ հեկտար տարածություն էր զբաղեցնում, 18 աշխատող ուներ: Կնշանակի այդքան մարդու ապահովել է կայուն եկամտով:

2020 թվականին անցել է կենսաթոշակի: Բայց ձեռքերը ծալած չի նստել: Շարունակում է այգեգործությամբ զբաղվել: Ցանկություն ունի կառուցել 300 քառակուսի մետր տարածքով ջերմոց, որտեղ կաճեցնի լիմոնի ծառեր, իսկ միջանկյալ տարածքներում կցանի կանաչեղենի տեսակներ:

Ժամանակին Ալբերտ Օհանջանյանի գյուղապահպանական օրինակելի գործունեությանն անդրադարձել է խորհրդային տարիներին մեր հանրապետությունում մեծ համարում ունեցող «Գարուն» ամսագիրը՝ «Ով կտա ինձ ծուխն իմ ծխանի» վերնագրով ակնարկով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԸ ԿԱՊԱՆԻ ԵՎ ԿԱՊԱՆՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1881-ի ամռանը Ռաֆֆին Կապանում էր: Այդ մասին Արտաշես Ծատուրյանը հետաքրքիր հուշ է գրի առել, որը ներառվել է «Ռաֆֆին ժամանակակիցների հուշերում» ժողովածուի մեջ: Ստորեւ ներկայացնում ենք հատված այդ հուշերից:

«… Ուխտավորի ջերմեռանդությամբ մտա ներս: Ռաֆֆին քահանայի հետ նստած սեղանի շուրջը թեյ էր խմում: Մոտեցա ու ողջունեցի: Ռաֆֆին ժպտաց ու ձեռքս սեղմելով ասաց.

– Ուրախ եմ քեզ նորից տեսնելու, նստիր:

Տեղավորվեցի դիմացի բազմոցին:

– Անհամբեր սպասում էի ձեր վերադարձին, լսելու ձեր տպավորությունները, – սկսեցի ես:

– Իմ տեսածն ու լսածը պատմելով չի վերջանա, կասեմ համառոտը. ինչպես գիտեք, ձեր գյուղից գնացի Բեխ, այնտեղից՝ Հալիձոր, Վահանավանք, Բաղաբերդ, Ձեյվա, մինչեւ Քաջարանց: Վերադարձիս այցելեցի Վաչագան, Գուտկում եւ ճակատեն գյուղերը: Ամեն տեղ էլ ջերմ ընդունելության հանդիպեցի: Ձեր ժողովուրդը շատ հյուրասեր է: Գլխավորը, որ իսկական հայ մարդիկ են, չեն մոռացել առաքինի նախնիների թողած ավանդույթները, պահպանել են սյունեցու ազատասեր ոգին: Տեսա Ղափանի յոթն ահռելի բերդերը, որոնք արթուն պահապանների նման իրենց վաղեմի վեհությամբ ասես թե հսկում են շրջակայքի վրա: Իսկ Կապանը դրանց անմատչելի կողպեքն է: Բնության այդ հրաշակերտ ամրությունները պարսպաձեւ վեր են սլանում դեպի երկինք:

Լեռների կատարներին աճել է անտառը, ասես քարից է ծլել: Ժայռերի կրծքին արծիվների հետ բույն են դրել եւ մարդիկ, որոնք գառների պես բարի են խաղաղ մարդկանց նկատմամբ եւ վագրի պես չար՝ դեպի թշնամին: Բաղաց հզոր բերդի տասներկու աշտարակները դեռ կանգուն են, պարիսպները՝ խարխլված, Կատեի եկեղեցին՝ կիսավեր: Ինձ թվաց, թե իրենց քարե լեզվով նրանք ասում էին. «Մենք դարերով պաշտպանեցինք ձեզ թշնամիներից, բայց դուք չեք պահպանում մեզ կործանումից»: Բաղաբերդի այդ պարիսպները յոթը դար իրենց գրկի մեջ պահպանել են Հայաստանի հոգեւոր մշակույթի տասը հազար ձեռագիր մատյանները: Սյունյաց Անդովկ իշխանը 4-րդ դարում այդ պարիսպների տակ ջախջախել է պարսից Շապուհ արքայի զորքերին: Այդ մեծ գրադարանը ոչնչացվել է 12-րդ դարում՝ սելջուկների ավերիչ ձեռքով. նրա անունը պահպանվել է բերդի դիմացի սարալանջի մի ավերակ բնակավայրում, որը կոչվել է Գրաթաղ:

Ես, ներողություն խնդրելով, ընդհատեցի վիպասանի զրույցը, բացատրելով, թե Գրաթաղ անունով գյուղ կա այժմ եւ հարցրի, թե ի՞նչ է նշանակում խոյակերպ քարե արձանը, ավելացնելով, որ նման արձաններ տեսել եմ Քիրս, Աջիբաջ, Փուխրուտ եւ Ավսարլու գյուղերի հին գերեզմանոցներում, եկեղեցիների մոտ:

Ռաֆֆին բացատրեց, թե Սյունիքում շատ կան այդ արձաններից, եւ դա զինվորական խորհրդանիշ է. խոյ նշանակում է ռազմիկ, ճակատ առ ճակատ կռվող, հետեւապես դրանք պատերազմում ընկած հերոսների հուշարձաններ են:

– Հետո, այդ լավ հիշեցրիք, – շարունակեց Ռաֆֆին, – ես շատ փնտրեցի Դավիթ Բեկի գերեզմանը, բայց ցավոք սրտի, ինձ չհաջողվեց այդ սրբազան դամբարանը տեսնել: Հալիձորի բերդի դարբասի առաջ միտքս գրավեց մի խոշոր դամբարանաքար, սիրտս բաբախեց հուզմունքից, բայց երբ վերծանեցի արձանագրությունը, տեսա, որ կալերցի Մահտեսի Հայրապետի գերեզմանն է, վախճանված 1651 թվականին: Գտա եւ Մելիք-Փարսադանյանի կողակցի՝ Ռեհանի դամբարանը, վախճանված 1741 թվականին: Շատ հետախուզեցի բերդի եկեղեցու ներսն ու գավիթը, նույնպես Հալիձոր գյուղի հին եկեղեցու շուրջը, դարձյալ ապարդյուն: Հետո Վահանավանքում շատ ման եկա, տեսա Սյունյաց իշխանների, հոգեւոր հայրերի շիրիմները, բայց փնտրածս չկա ու չկա: Մտածեցի, թե այստեղ մի առեղծված կա. այդպիսի կարծիք հայտնեցին եւ Բեխի ծերունիները, թե տապանաքարը թաքցված է կամ շրջված հակառակ երեսի վրա՝ գրերը թաքցնելու նպատակով: Ո՞վ էր շահագրգռված այդ բանն անելու. իմ կարծիքով կամ հարազատներն են թաքցրել Դավիթ Բեկի աճյունը՝ թշնամիների պղծումից փրկելու համար, կամ թշնամիները՝ նրա հիշատակը ջնջելու համար, որի հուշարձանը, որպես ազատամարտի դրոշ, կարող էր միշտ խանդավառել սյունեցիների ըմբոստ ոգին:

Առանց մարգարեության, համոզված եմ, որ մեզանից հետո էլ մեր հայրենասեր սերունդը կհայտնագործի այդ մեծ սրբությունը: Ես տեսա Թորոս իշխանի գերեզմանը Եղվարդում, Մխիթար Սպարապետինը՝ Խնձորեսկի բերդում: Մելիք-Փարսադանի աճյունը մնաց Ագուլիսի Թովմա Առաքյալի վանքում: Տեր Ավետիսը գնաց Երուսաղեմ՝ մեղքերի թողության համար ապաշխարելու եւ չվերադարձավ: Իսկ Դավիթ Բեկի եւ մյուս հերոսների գերեզմաններն այդպես էլ մնացին անհայտ»:

ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԸ ԿԱՊԱՆԻ ԵՎ ԿԱՊԱՆՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հրաման Ղափան-Գենուազի ռազմական ուժերին

Ղափանցիներ ենք մենք, եւ դա նշանակում է, որ էն մեր խենթ հարուածներից ընկած Օխչու ու Գեղուայ անառիկ ձորերը, որ էն մեր գոռ ուռան մաքրեց Որոտանի եւ Հաքարուի ափերը, որ էն մենք ենք, մենք, որ եօթն անգամ ուժեղ, մահից էլ ուժեղ գիտենք ատել մեր դարաւոր թշնամուն եւ եօթն անգամ չէ, կեանքից աւելի ուժեղ սիրել մեր հայրենի հողը…

Ղափանցիներ ենք մենք, եւ դա նշանակում է, որ էն մենք էինք, որ մահաշունչ ձմեռուայ կէսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մօտենում Ղափուչուղին՝ Ղափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ձիւները, մեղմացրինք բնութեան արհաւիրքը եւ Գողթան իջանք՝ յանուն Քրիստափորի սրտից զարնուած նիւթական ծնունդավայրի՝ թշնամու գիւղերի սեւ ու թանձր ծուխը բարձրացնելու…

Ղափանցիներ ենք, եւ դա նշանակում է, որ մեր հպարտ ու փառքի մէջ կորած դրօշակի վրայ հարիւրից շատ աւելի աւերուած թշնամու գիւղերի անուններ կան, որ մեր կռիւները՝ կանոնաւոր թէ անկանոն ուժերի դէմ, մի ձեւ, միայն մի ձեւ են ունեցել՝

«Ուռա՜, յառա՜ջ, հրդե՛հ»:

Զորավիգ ունենալով Աստծուն ու մեր ընտիր ռազմիկների՝ Դաւիթ-բէգի ու Թորոս-իշխանի հայրենանուէր ու վրիժակ հոգիները՝ ղափանցիներ ենք մենք՝ միշտ յաղթող ու անպարտ:

ՂԱՓԱՆ-ԳԵՆՈՒԱԶ-ԳՈՂԹԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ՝ ՆԺԴԵՀ, 1920 Թ. 13 ՅՈՒՆԻՍ, ՂԱՓԱՆԻ ՀԱՆՔԵՐ

1844 թ. մարտի 18-ին Խաչատուր Աբովյանը (Քրիստափոր Ավետիքի Աբովյան) Անդրկովկասյան ուսումնարանների տնօրենությունից ծանուցվել է, որ կառավարչի հանձնարարությամբ ինքը, որպես «գիտություններ սիրող եւ իր հայրենիքը լավ ճանաչող անձն», պետք է ուղեկցի բնապատմության պրոֆեսոր, արքունի խորհրդական Հերման Աբիխին՝ Հայաստանի երկրաբանական հետազոտություններում: Շուտով Աբիխն ու Աբովյանը մտերմացել են: Մի զեկուցագրում կարդում ենք. «… պարոն Աբիխի հետ կատարածս ճանապարհորդութեան ժամանակամիջոցը տեւեց 5 ամիս եւ 22 օր, սկսած մարտի 28-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը»: Աբիխի դիվանին քաջածանոթ Եր. Շահազիզը գրել է. «Հետո մեկնում են Գառնի եւ Գեղարդ, ապա Նախիջեւան, Ջուղա, Օրդուբադ, Ագուլիս, Մեղրի եւ պղնձահանքերը»:

Պահպանվել է Աբիխի նամակը, որում նկարագրված է ուղեւորությունը Ղափան՝ երկրաբանական նկարագրությամբ: Գիտնականն անգամ նկարագրել է Կավարտի մերձակա՝ Ղաթարի եկեղեցու խաչքարը, որի վրա արհեստավորի մուրճի պատկերն է: Աբովյանական մի գրառում. **«Պրոֆեսորն… իրեն գցեց մերձակա լեռները, իբր չար ոգիներին կախարդելու, այսինքն՝ քարատեսակներ եւ երկրաբանական այլ նյութեր հավաքելու, իսկ ինձ, ծանրաչափը ձեռքիս, թողեց բնակիչների հարցուփորձերի լաբիրինթոսում, որոնց տված իմ պատասխանները կարող են մի ամբողջ գիրք կազմել»:**

Արդ, կասկած չունեմ, որ Կապանն էլ աբովյանական վայր է:

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ

Ավետիք Իսահակյանը 1939 թ. եկել է Ղափան, հիացել նրա բնաշխարհով ու տարիներ անց մամուլում երեւացել է նրա խոսքը:

«Բնությունն այստեղ գործադրել է իր ստեղծագործական բոլոր խոլական, հուռթի կարողությունները, իր խենթությունները, իր հուժկությունը, իր անհուն սահմաններով երեւակայությունը՝ խորություններ ու բարձրություններ, վիթխարի սարեր, ժայռեր, ձորեր, քարե փոթորկումներ, մրրկումներ, ալեկոծումներ:

Անսպասելի անդունդներ, վիհեր…

Ձոր ձորի մեջ. ձորեր ձորերի մեջ. սար սարի մեջ, սարեր սարերի վրա. անդունդներ անդունդների մեջ, ժայռեր, քերծեր, ժայռեղեն թռիչքներ, ժայռեր երկնքի մեջ…

Գետեր, վիժումներ, ջրվեժներ, փոթորիկներ…

Եթե համրը ընկնի այս խոլական վայրը, աբանչացումից, զարհուրանքից, վեհությունից, մեծությունից այնպես կփոթորկվի հոգին, որ տարերային թափով պիտի պոռթկա դուրս, պիտի դրսեւորվի, արտահայտվի, եթե ոչ՝ կմեռնի. անհրաժեշտորեն պիտի խոսի եւ լեզու կառնի: Չի կարող լռել, հոգին բերնից կթռչի, պիտի անպատճառ խոսի»:

//

ԿԱՊԱՆԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Կապանա տան արժանավոր զավակ Ռաֆայել Մինասյանի քարեղեն վերադարձը

Կապանի՝ նրա անունը կրող փողոցի թիվ 14 շենքի հարևանությամբ՝ 2026 թվականի մայիսի 15-ին, բացվեց պետական ու քաղաքական գործիչ Ռաֆայել Մինասյանի կիսանդրին (նախաձեռնությունը՝ Գևորգ Փարսյանի, հեղինակ՝ Գագիկ Ալեքսանյան, քանդակագործ՝ Էդգար Ստեփանյան, հարթաքանդակների ու դիզայներական աշխատանքների հեղինակ՝ Անդրեաս Օհանջանյան):

ԿԱՊԱՆԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Բոլոր կապանցիների տունը՝ համայնքապետարանի վարչական շենքը և մերձակա պուրակը՝ վերակառուցված ու նորացված

(2026 թ. հունիսի 30-ի տոնական օրը՝ լուսանկարներում)

ԿԱՊԱՆԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Արցախյան գոյամարտում զոհված կապանցի ազատամարտիկների պանթեոնը՝ Բաղաբուրջի հուշահամալիրում

ԿԱՊԱՆԸ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

ԿԱՊԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ԴՐՎԱԳՆԵՐ ՀԻՇԱՐԺԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարվեց 1996 թ. նոյեմբերի 26-ին՝ մասնակցությամբ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 1-ինի:
Իսկ Աստծո այդ տաճարի օծումը (1.12.2001 թ.) կատարվեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ձեռամբ:



Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու նավակատիքը (1 դեկտեմբերի 2001 թ.)

ԿԱՊԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ԴՐՎԱԳՆԵՐ ՀԻՇԱՐԺԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Քանդակագործ-ճարտարապետ՝ Գևորգ Գևորգյան, քանդակագործ վարպետներ՝ Մովսես Քոթիկյան, Ռոբերտ Բալայան: Նախաձեռնության հեղինակ և աշխատանքները համակարգող՝ Սերժ Մկրտչյան:

2001 թ. դեկտեմբերի 8-ին Կապանում տեղի ունեցավ Լեռնահայաստանի սպարապետ Գարեգին Նժդեհի հուշարձանի բացումը

ԿԱՊԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ԴՐՎԱԳՆԵՐ ՀԻՇԱՐԺԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Քանդակի հեղինակ՝ Գագիկ Ալեքսանյան, ձևավորող-դիզայներ՝ Անդրեաս Օհանջանյան: Նախաձեռնության հեղինակ և աշխատանքները համակարգող՝ Գևորգ Փարսյան:

Զանգեզուրի ինքնապաշտպանության հերոս Պողոս Տեր–Դավթյանի հուշարձանի բացումը (20 օգոստոսի 2022 թ.)

ԿԱՊԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ԴՐՎԱԳՆԵՐ ՀԻՇԱՐԺԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

2023-ից՝ տարվա ընթացքում 10 օր, Կապանը՝ Հայաստանի երաժշտական մայրաքաղաք

ՀԱԼԻՁՈՐԻ ԲԵՐԴԸ՝ ՀԱՅՈՑ ԳԱՀԵՐԵՑ ԻՇԽԱՆ ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՄՐՈՑԸ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ 1720-ԱԿԱՆՆԵՐԻՆ

ՎԱՀԱՆԱՎԱՆՔԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Աստծո փառքի այս տաճարը հիմնադրվեց 911 թվականին կամ Հայոց 360 թվականին